



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2080



Յ Ա Ղ Ա Գ Ս

ԾԱՆՈԹՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԾՈՑ
ԵՒ ԱՆՋԻՆ



2080

03 AUG 2009

Պ Օ Ս Ի Ի Է Ի

Յ Ա Ղ Ա Գ Ս

Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ե Ա Ն Ա Ս Տ Ո Ւ Ծ Ո Յ

Ե Ի Ա Ն Զ Ի Ն



Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ե Ա Ց

Ա Ռ Ա Գ Ե Ն Ս. Մ. Ծ Ա Ր Ա Պ Թ Ա Ն Ե Ա Ն



Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Ի Վ Ա Ն Ս Զ. Ս. Ա Ս Տ Ո Ւ Ա Ծ Ա Ծ Ն Ի Ց Ա Ր Մ Ա Ծ

— 1876 —

ի գոյ

Հ. Արամյան

1897 յունիս 1.

Դ. Ա. Բ. Եսեն

Դարձան

05 FEB 2014

Հ Ի Բ Ի Բ Ի Բ

ԱՅՏԱՆ

ՄԱՐԿԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հ Ի Բ Ի Բ Ի Բ

ՀՐԱՄԱՆԱԻ
ՎԱՆԱՀՕՐՏ. ԽՈՐԵՆԱՑ
Ս. ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ



57282-66

Ի ՀԱՌԱՍԵՍ

ՈՐԴԻԱԿԱՆ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ

Ա Ռ

ՄԵՆԵԱՍԻՐԵԼԻ ՀԱԻՆ ԻԻՐ

Մ. ՊԵՏՐՈՍ ԱՂԱ

ՇԱՐԱՊԻԱՆԵԱՆ

ՆՈՒԻՐԷ

ԱԲԱԲԵԼ Ա. ՀԱՐԱԳԻՐԵՆԵԱՆ

Ա Շ Ա Կ Ե Ր Տ

ՎԱՐԺԱՐԱՆԻ Ս. ՂԵԻՈՆԴԵԱՆՑ

Ի ՎԱՆՍ ՅԱՐՄԱՇ

Մ. Ա. Մ. Մ. Մ.

Մ. Ա. Մ. Մ. Մ.

Ս.

պ. Բախլիկա Կ. արապի

Կոնստ

Երկրորդ անգամ Կ. արապի
Կոնստ

Երկրորդ անգամ Կ. արապի
Կոնստ

Ամենասիրելի Հայր եւ Տէր .

Ահաւասիկ, ես մի 'ի կրտսերագոյն Թո-
նանցդ քոց, Առաքել՝ որդի որդւոյն քո
Մահոտսի Անդրանկան, մատուցանեմ՝ Քեզ,
ամենասիրելի Հաւուն իմոյ զառաջին զայս
պտուղ գրաւորական վաստակոցս, գՊօսիւէի
հուշակաւոր արքեպիսկոպոսի միւրացւոյ գեր-
կասիրութիւն 'ի ՎԵՐԱՏ ԾԱՆՕԹՈՒԹԵԱՆ ԱՍ-
ՏՈՒԾՈՅ ԵՒ ԱՆՁԻՆ, զոր 'ի գաղղիական բար-
բառոյ յեղի 'ի հայ. ընկալ զսա 'ի բազմա-
վաստակ ձեռուդ քո, եւ շօշափեա՛ որպէս
երբեմն Իսահակ զԹաւ բազուկան Յակոբայ :

Ոչ պատրանօք երբէք մատչիմ գողանալ
գօրհնութիւնն 'ի Քէն, Տէր, ընծայիւս, յո-
րում խոստովանիմ՝ եծէ ստուգիւ ձեռքս
կամ բուն իմաստութիւնն Պօսիւէի է, այլ
ձայնս կամ բարբառ գրաւածոյն իմ :

Աչք քո 'ի նիւթեղէն լուսոյ աշխարհիս
առ բազմութեան ամաց Ժամանակի տկա-
րացեալ՝ եւ չկարէ հայել 'ի գործս իմ . սա-
կայն, Հայր, հոգւոյդ պայծառ է տեսու-
թիւն, եւ ընդ ճանապարհ լսելեացդ, որոյ

վառողջութիւնն դեռ եւս պարգեւէ մեզ
Աստուած 'ի մխիթարութիւն, քաղցր լիցի
ինձ եւ այլոց թողանցդ. յահախ հնչեցու
ցանել զիմաստս գրոցս :


Ընկալ, պատուական եւ 'ամենասիրելի
Հաւդ իմ, զընծայս խոնարհութեան, եւ
օրհնեա՛ զիս ընդ ամենայն թողանցդ՝ ար-
ժանի լինել ցօղոյ պարարտութեան յերկ-
նից :

Եմ ամենասիրելի եւ պատուական Հա-
ւուն իմոյ շնորհապարտ

1876 Մայիս 1

ԱՌԱՔԵԼ

Ա. ՇՅՐԱՊԻԱՆԵԱՆ



ՅԱՌԱԶԱԲԱՆ

Գործոյս հեղինակին, Պօսիւէի, վրայ
ներբող դրել չէ մտքերնիս, արդէն իսկ
յայտնի է սորա արժանիքը ասկէ յառաջ
ճարտար գրիչներէ թարգմանուած քանի
մը հատոր հեղինակութիւններով. Մենք
միայն պարտք կը համարիմք մեր այս ըն-
տրած գործոյն վրայ քանի մը դիտողու-
թիւններ ընել :

Մինչև Պաքօն և Տեքարթ փիլիսոփա-
յութիւն և աստուածաբանութիւն իրար
խառնուած ըլլալով, այն՝ որ փիլիսոփայ
էր՝ աստուածաբան ալ էր, և դարձաբար
աստուածաբանը փիլիսոփայ ալ էր : Պա-

քօնի և Տեքարթայ հետ փիլիսոփայութեան նոր թուականն սկսաւ, որուն ժամանակակից էր Պօսիւէ ալ: փիլիսոփայութիւնը բաժնուեցաւ յաստուածաբանութեանէ, կրօնքն ալ որովհետև դրութիւններէ հնարուած դժուարութիւններէն արդէն յողմած էր՝ երկուքին մէջ եղած բռնի և անբնական դաշնակցութիւնը առանց դժուարութեան լուծուեցաւ: փիլիսոփայութիւնը քաղաքէ դեռ նոր ճամբայ ելած զօրաբանակի պէս այնչափ բարկ չէր, սակայն Պօսիւէ, թէ և երկուքին անկախութեանն ալ սիրող, ծայրի պատերազմը տեսաւ: Մայրանշ յաջորդեց Տեքարթայ, բնազանցութիւնը մտաւ կրօնից մէջ, և Տեքարթի դրութիւնը թշնամի համբաւեցաւ կրօնից:

Պօսիւէ թէ և Տեքարթեան, բայց թէ կրօնի և թէ փիլիսոփայութեան ծայրայեղ շանքերուն և խոտորմանց միանգամայն ատեցող էր, եւ երկուքը իրենց բնական ուղղութեանը բերելու համար ամէն շանք ըրած է իւր բոլոր դրուածոց մէջ:

Տեքարթ մարդկային գոյութիւնը ըստուգող կնիք մը գտած էր, սա հոշակաւոր առածը՝ թէ իւրօրին, որեւէ կամ որ նոր փիլիսոփայութեան, կամ արդեան դպրոցի խորհրդանշանն է Պօսիւէ աւելի

հեռուն կ'երթար այս մի և նոյն առածով: Խորհելոյ վարողութեան վրայ հետազօտութիւն ընելով՝ գտաւ թէ մարդ զայն յիւրմէ չունի, ուրիշէ կրնայ ունեցած ըլլալ, այսինքն այնպիսի էակէ՝ որ ինքն ըստ ինքեան աննիւթ և անսպառ ըլլալով՝ կարող է աղբիւր ըլլալ աննիւթ և անսպառ սկզբան. ուստի և սղաղակեց. ես իւր օրինակս արեւն Աստուած կայ:

Այս սկզբան կամ առածին բացատրութիւնն է ահա այս դիրքը, յորում բարեյիշատակ Հեղինակը դողցեա իւր ուրիշ գործոց և ճառից մէջ ունեցած անխնայ և աներկիւղ դիրքը բոլորովին կը կորսնցունէ, վերջին աստիճանի փափկութեամբ և խնայելով կը վերլուծէ մեր ծանօթութեանց տարերքները, և կը քննէ հոգևոր կարողութիւնները: Ոչ թէ պատիր փայլմամբ՝ ձեռք առած նիւթոյն երեսը միայն ցուցնելով կ'անցնի, այլ մինչև խորը թափանցելով՝ պարզ՝ բայց կատարեալ խօսած է: Չէ մտած այնչափ տաղտկալից բարակութեան և միլիոնաւոր անօգուտ դաղալիարներու անծայր շղթայի մէջ, ինչպէս վերջին ատեններ սկովտական դպրոցները հոգեբանութեան մէջ կ'ընեն: Պօսիւէի բայլը ազատ է, և յսկզբունքէ դէպ իւրապէս կացութիւնները թէպէտ և ոտնդով՝ սակայն առանց անկման անցած է:

Բոլոր գործը հինգ գլխոց բաժնած է . առաջին երեք գլխոց մէջ մարդուս հոգւոյն և մարմնոյն և երկուքին միացման վրայ խօսելով՝ գրեթէ ճիշդ մարդակազմական փիլիսոփայութիւն մը գրած է . չորրորդ գլխով Աստուծոյ վրայ խօսած է , հիմը հոգեբանութենէ առնելով . այս ալ ճիշդ հոգեբանական աստուածաբանութիւն մ'եղած է . հինգերորդ գլխոյն մէջ մարդուս անասուններէ ունեցած տարբերութեանց վրայ խօսած է , որով մարդուս արժանապատուութիւնը հերքող զգայապաշտ փիլիսոփայից ջանքերը ցրուելէ զատ , շատ գեղեցիկ և բարոյական եղբակացութիւնն եղած է այսպիսի գործոյն՝ որուն նպատակն է՝ մեղի ճանչցունել՝ թէ մենք մարդ ենք և ոչ անասուն , և իբրև մարդ զՊատուած ճանչնալու եմք :

Այսպիսի սխրայի գործ մը իրաւամբ արժանի էր գտնուիլ ամեն աշակերտաց ձեռք , որ իմաստասիրութեան վախաք կ'ընեն , բայց՝ շատ անգամ , դժբաղդաբար , կամ տգէտ , կամ անբարեմիտ Դասախօսի ձեռք կ'յնալով՝ դրութեամբ կ'իյնան մոլորութեան մէջ : Գաղղիոյ վարժարաններու մէջ իմաստասիրութեան պարապելու աշակերտներուն առաջին անգամ այս գիրքը ձեռքերնին կ'ուտան , և իբրև մի միայն ճշմարիտ ճառ փիլիսոփայութեան կը

պատուիրեն գոց սերտել . Շատ վախաքեցայ ես ալ այսպիսի կարևոր գիրք մը հայերէնի թարգմանել գաղղիերէն լեզուն աւարտելու վերջին ժամանակներուս մէջ , և կատարեցի : Թերութիւնները համբակի են , օգուտն աղգին մանկուոյն :




Պ Օ Ս Ի Ի Է Ի

ՅԱՂԱԳՍ

ԾԱՆՕԹՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԾՈՅ

ԵՒ ԱՆՁԻՆ



Իմաստութիւնը զԱստուած եւ ինքզինք
ճանչնալն է :

Ինքզինքնիս ճանչնալէն կը վերանանք զԱս-
տուած ճանչնալու :

Մարդը կատարեալ ճանչնալու համար պարտ
է զիտնալ որ երկու մասէ կը բաղկանայ . 'ի հո-
գւոյ եւ 'ի մարմնոյ :

Հոգին մեղի խորհել , իմանալ զգալ , դա-
տել , կամել , բան մը ուրիշ բանէ , շարժում մը
ուրիշ շարժումէ որոշել կուտայ . ինչպէս , օրի-
նակի համար , յաջ թէ յահեակ շարժելու եմք :

Մարմինը երկայնութիւն , լայնութիւն , խո-
րութիւն եւ տարածումն ունեցող զանգուածը
կամ մասն է , որ մեր գործերը կատարելու կը
ծառայէ :

Ուստի երբ բան մը տեսնել ուղեմք՝ աչքեր-

նիս կը բանանք, եւ երբ բան մ'առնուլ ուզենք, կամ ձեռքերնիս կ'երկնցունեմք եւ կամ ոտք, սրունք եւ մինչեւ իսկ մեր մարմնոյ բոլոր մասը կը շարժենք՝ նոյն առարկային մօտենալու համար :

Այսան որոյ մարդուն վրայ դիտողութեան արժանի երեք բան կը գտնուի՝ որ է հոգի, մարմին եւ երկուքին միաբանութիւնը :

Մտքերնիս այս երեք բաներուն վրայ ընդերկար իմաստասիրութիւն ընել եւ անոնց ներքին պատճառները քննադատել չէ, այլ ամէն մարդու եւ իր անձին եւ ուրիշ մարդոց վրայ յաճախ տեսնուած բաներուն վրայ խորհրդածելով սրչափ ծանօթութիւն որ կրնայ ստանալ այն չափը միայն քննել եւ իմանալ :

Առաջ մեր հոգւոյն մէջ եղածները ճանչնալէ սկսինք :

ԳԼՈՒԽ Ա:

ՀՈԳԻ

Մեր հոգին իւր գործերովը կը ճանչցուի, որ երկու տեսակ են. զգայական եւ իմացական :

Զգիտցող չկայ հինգ զգայարանաց անունները՝ որք են տեսանելիք, լսելիք, հոտոտելիք, ճաշակելիք եւ շօշափելիք : Տեսանելեաց միջոցաւ լուսոյ եւ դունոց, լսելեաց միջոցաւ ձայնի, հոտոտելեաց միջոցաւ աղէկ կամ դէշ հոտերու, ճաշակելեաց միջոցաւ դառն եւ քաղցրը եւ ասոնց նման բազմատեսակ համերու, իսկ շօշափելեաց միջոցաւ ջերմութեան, ցրտութեան, պնդութեան եւ կակղութեան, չորութեան եւ խոնաւութեան զաղափարները կրստանանք :

Թնութիւնը՝ որ կը սուրեցնէ միզ թէ այս զգայարանքներն եւ անոնց գործողութիւնները հոգւոյն յատուկ են, կ'ուսուցանէ նաեւ՝ որ ամէն մէկ զգայարանք մարմնոյ մէջ իրենց յատուկ գործարաններն ու գործիքներն ունին . զոր օրինակ աչքը՝ տեսանելեաց գործարանն է, ականջը՝ լսելեաց, քիթը՝ հոտոտելեաց, լեզուն եւ քիմքը՝ ճաշակելեաց . միայն շօշափելիքն է՝ որ մարմնոյն ամէն կողմը տարածուած է, եւ ուր որ միսեր կան՝ հոն կը գտնուի :

Զգայական գործողութիւնք կամ զգայարանաց գործերը զգացումն կամ զգացողութիւն կը կոչուին : Գոյներ տեսնել, ձայներ լսել, քաղցր

եւ դառն բաներ ճաշակել՝ իրարմէ՝ շատ տարբեր զգացումներ են :

Զգացողութիւնք մեր հոգւոյն մէջ որ եւ է մարմնոց ներկայութենէն ծագումն կառնուոն՝ որ կըսուին առարկայ . կրակին ներկայութենէն է՝ որ ջերմութիւն կզգամ . ձայն չեմ կրնար լըսել՝ եթէ մարմին մը չը շարժի . արեգակն կամ ուրիշ լուսաւոր մարմիններ թէ որ ներկայ չըլլան՝ չեմ կրնար լոյս տեսնել . նոյնպէս ալ ոչ սպիտակ եւ ոչ սեւ գոյներու դաղափարներ կունենամ՝ եթէ , օրինակի համար , ճիւղը եւ կըսորածիւթը կամ թանաքը աչքիս առաջ չըլլան . վերցնել չիշղկուած կամ սրածայր մարմինները , պինդ կամ խթող բան մը չմտար : Այսպէս իմացիր ամէն ուրիշ զգացմանց համար ալ :

Զգացմունքները մեր հոգւոյն մէջ ձեւանալու համար՝ պէտք է որ մարմնական գործարանին առարկայ մը դպչի եւ տպաւորութիւն ընէ . բան մը չեմ կրնար տեսնել՝ մինչեւ որ լուսաւոր մարմնոյ մ' ուղղածիդ եւ կամ բեկեալ ճառագայթները մեր աչաց մէջ չը ցուանան . եթէ օդոյ յուղմունքը ականջիս տըպաւորութիւն չընէ՝ բնաւ չեմ կրնար ձայն լսել . ճիւղ այս է դարձեալ ներկայութիւն առարկայի ըսածնիս : Արովհետեւ սրչափ ալ մօտն ըլլամ պատկերի մը , բայց աչքերս փակած ըլլամ, եւ կամ ուրիշ որ եւ է միջանկեալ մտրմին չթողու՝ որ այն պատկերէն ցոլացած լուսոյ շառաւիղներն մինչեւ աչքերուս դան հաղորդուին , այն ատեն առարկայն ներկայ եղած չըլլար : Մի եւ նոյնը պէտք է հասկնալ ուրիշ ամէն զգայարանաց համար ալ :

Ուրեմն՝ զգացման կրնանք սահման տալ , (եթէ ըստ ինքեան այնպիսի դիւրիմանալի բանի մը սահման տրուելու հարկ ըլլայ) , կրնանք, կըսեմ , զգացումը սահմանել՝ թէ այն առաջին ըմբռնումն է զգացումը , որ կը կատարուի մեր հոգւոյն մէջ որ եւ է մարմնոց կամ առարկայից ներկայութենէն , եւ անոնց մեր զգայարանաց գործարաններուն վրայ ըրած տըպաւորութենէն :

Բայց այս սահմանը այնչափ ճիշդ եւ կատարեալ չեմ համարիր . զի թէպէտ եւ այս սահմանը զգացմանց մեղի հասնելու սովորական առիթներով աւելի բացայայտ է , քան որչափ բնութիւնը կը բացատրէ . սակայն եւ այնպէս բաւական կրնայ ըլլալ զայն մեր հոգւոյն միւս գործողութիւններէն զանազանելու :

Արդ , չենք կրնար զգացումն իմանալ առանց մարմնոց ներկայութեան եւ առանց մեր մարմնոյն այն մասանց՝ որ զանոնք զգալու յատուկ գործարաններն են . բայց , ինչպէս որ զգացումը արտաքին առարկայներու չենք տար, նոյնպէս ալ գործարաններուն չենք կրնար տալ զի ասոնց տրամադրութիւնն ալ , եթէ լաւ դիտեմք՝ առարկայներէն բնաւ տարբեր բնութիւն չունին , ինչպէս որ իրենց կարդին պիտի ցուցնենք : Ուստի զգացումներն այնպիսի բաներ են՝ որ մեր հոգւոյն կը վերաբերին , եւ միանգամայն մեր շուրջը գտնուած մարմնոց մեր մարմնոյն վրայ գործած ազդեցութիւնը , եւ իրարու հետ ունեցած յարաբերութիւնը կը ցուցնեն :

Վերը տուած մեր սահմանին համեմատ ,

զգացումը հողւոյն մէջ առաջին անգամ երևեցող. եւ առարկայից մէջ մի ներկայութեանը գրգռուող բանն է: Եւ արդարեւ աչքս բանալուս պէս առաջին անգամ տեսածս լոյսն եւ գոյներն են. եթէ բան մը չը տեսնեմ՝ մութը մնացի կըսեմ: Չեռքերս կրակին մօտեցունելուս եւ կամ սառն շօշափելուս պէս՝ կը տաքնամ կամ կը մրսիմ, եւ այլն:

Յետոյ կրնամ լուսոյ վրայ դանազան մը տածմունքներ ընել, անոր բնութիւնը հետազօտել, շառաւիղներուն անգրադարձութիւնն ու բեկբեկումը քննել, եւ մինչեւ իսկ դիտել թէ մարմնոց վրայ տեսնուած այն ամեն գոյներն՝ որք լոյսն անցնելուն պէս ցնդեցան՝ ուրիշ բաներ չէին, այլ նոյն իսկ լուսոյ դանազան ձեւացումները, այսինքն արեգակն կամ ուրիշ լուսաւոր մարմնոց շառաւիղներուն ցոլացումն ու բեկբեկումը: Բայց այս ամեն մտածմունքները լուսոյ զգալի դադախարը կամ զգացումը տեսնալնէս վերջը տեղի ունեցան իմ ներսս, եւ աչքս բանալուս պէս ներսս դառնալիք առաջին բանն է այս:

Նմանապէս տաքնալ կամ մրսիլ զգալէս դատ՝ կը դիտեմ ալ թէ՛ տաքցնող կամ մրսեցունող մարմինները դեռ ինչ պիտի պատճառէին ձեռքերուս, եթէ ետ չքաշէի. տաքը պիտի այրէր հասցունէր, ցուրտն ալ պիտի թմրեցունէր եւ մեռցունէր, եւ այլն:

Բայց կրակին կամ սառին մօտենալով չը լմնար ամէն բան. այլ եւ ներսս այնպիսի տպաւորութիւն մը կը գոյսնայ, որ ըսել կուտայ ինձի՝ թէ տաքցայ կամ մրսեցայ: զգացումն

ըսածնիս այս է:

Թէպէտ զգացումը ձեւ մ'ունենալու համար առարկայն առ ժամայն ներկայ ըլլալ պէտք է, սակայն վերնալէն ետքն ալ ժամանակ մը կը տեսէ: Չերմութիւն կամ ցրտութիւն պատճառող կրակէն կամ սառէն ձեռքս հեռի տանելէս վերջն ալ ցուրտ կամ տաք կ'զգամ ձեռացս մէջ: Պայծառ լուսով կամ արեգակով բան մը նայած ատեննիս անանկ ուժովն արպաւորութիւն մը կը ներգործի աչքերնուս վերայ, որ խփելնէս ետքն ալ առջի պայծառ գոյները կը տեսնեմք, եւ առ փոքր փոքր կըսկըսին տկարանալ, մինչեւ վերջապէս յօգս ցընդելով բոլորովին կ'անհետանան:

Մի եւ նոյնը կը պատահի նաև բարձր ձայն լսելնէս ետքն ալ՝ քաղցր եւ ախորժելի ըմպելիք մը լսմել հատցնելնէս վերջն ալ ժամանակ մը անոյջ համ մը կը թողու մեր բերնին մէջ: Բայց այս ամէնը ներկայ առարկային առաջին դպելուն շարունակութիւնը կամ տեւողութիւնըն է:

Հեշտութիւն եւ ցաւ զգայարանաց դործողութեան յաւետակից են. համեղ կերակուր կերած ատեննիս հեշտութիւն կզգամք, անհամ կամ աւրուած կերակուր կերած ատեննիս ալ ցաւ կամ տհաճութիւն:

Մեր զգայարանաց վրայ եկած մարմաջիւնը, օրինակի համար, քաղցրահամ պտուղ, բարեհամ ըմպելի եւ ուրիշ պատուական կերակուրներ ճաշակած ժամանակնիս՝ զգացած ախորժնիս հեշտութիւն կամ ցանկութիւն կըսուի:

Չգայարանաց հարկաւոր եղած մէկ զգացումը խափանուիլն ալ վիշտ կըսուի :

Այս երկուքն ալ, այսինքն, հեշտութիւն եւ վիշտ զգացումն կամ զգացողութիւն ըսուած գործողութեան տակ կ'երթան . որովհետեւ երկուքն ալ արագ եւ ազդոյ կամ ուժգին ըմբռնմունք են , որք իսկ եւ իսկ հաճելի կամ անհաճելի առարկայից ներկայութենէն մեր ներսը կը ծաղին : Լեղունիս ցօղունոյ անուշակ դիւին քանի որ կը խմենք՝ առաջին անգամ զգացած բաներնիս հեշտութիւնն է . նոյնպէս սուրբ մեր մարմինը մտնելուն կամ կտրելուն պէս մէկէն 'ի մէկ եւ սաստկապէս առաջին անգամ զգացածնիս ցաւն է :

Թէպէտ եւ հեշտութիւն եւ ցաւ սահման տալու պէտք չունեցող յայտնի բաներուն կարգէն են , որովհետեւ իրենք իրենցմէ կը հասկցուին , բայց կրնանք սահման մը տալ եւ ըսել թէ հեշտութիւնը մարդուս ընտելեան հաճոյական զգացումն է , իսկ ցաւը մեր ընտելեան հակառակ վշտարար զգացումն :

Այս երկու զգացումներն , ինչպէս նաեւ միւս ամէն զգացմունքներն ալ , գոգցես զմեզ հեշտացնող եւ կամ վիրաւորող մարմնոց կամ առարկայից ներկայութենէն կը ծաղին 'ի մեզ : Եւ յիրաւի, ցաւ կզգամք երբ մէկն զմեզ կըտրէ , խայթէ եւ կամ ճնշէ , եւ այլն , եւ դիւրութեամբ պատճառէն կ'զգուշանամք . որովհետեւ խայթողը կամ ճնշողը կըտեսնենք : Բայց ուրիշ ներքին ցաւեր ալ ունինք , ինչպէս են գլխոյ , ստամոքսի , որովայնի եւ ասոնց նման ուրիշ անթիւ ցաւեր : Քաղց ու ծարաւ կըզ-

գամք , որք նոյնպէս ուրիշ երկու տեսակ ցաւեր են : Ասոնք մեր ներսը կ'զգամք առանց արտաքին պատճառներ տեսնելու . սակայն կրնամք խորհիլ՝ թէ ասոնք ալ միւսներուն պէս մի եւ նոյն սկզբան կամ պատճառի տակ կ'երթան , այսինքն , թէ այս ցաւերն այն ատեն կ'զգամք՝ երբ մեր մարմնոյն ներքին մասերն՝ իրենց վրայ եկող որ եւ է հեղուկներու պատճառաւ խթուին կամ ճնշուին , զրեթէ յար եւ նման արտաքին մասանց վրայ տեսածներնուս : Արդ ամէն կերպ ցաւերն ալ պատճառնին մեզ ծանօթ ցաւոց պէս են՝ եւ բոլորն ալ ուղղակի զգացողութեան կը վերաբերին :

Յաւն աւելի սաստիկ է եւ աւելի երկարատեւ քան դհեշտութիւնը . որովհէտ պէտք է իմանամք՝ թէ մեր վիճակը քանի տրտում եւ թշուառ է այս կենաց մէջ :

Հեշտութիւն եւ ցաւ ըսուած բաները շրջիտելու չենք ուրախութեան եւ տրամուծեան հետ : Այս բաներն այնպիսի արագութեամբ իրարու ետեւէ կուգան , անանկ որ մէկին անունը սխալմամբ միւսոյն կուտանք : Բայց սրչափ իրարու մօտ ըլլան եւ որչափ ալ իրարու հետ շրթեկը շուտ ըլլայ , պէտք է այնչափ աւելի զգուշանալ՝ որ չը խառնենք :

Հեշտութիւն եւ ցաւ գործարանաց զպող ու ազդող մարմնոց հաւաստի ներկայութենէն կը ծաղին եւ իրենց տպաւորութիւնը մեր մարմնոյն այս կամ այն տեղը կ'իմացուի . ինչպէս համի հեշտութիւնը լեզուին վրայ , վերքի մը ցաւն ալ վիրաւորեալ տեղին վրայ : Բայց ուրախութեան եւ տրամուծեան համար այսպէս

չէ , գործարանաց վրայ սահմանեալ տեղ մը չունին : Այլ զգալի առարկայից բացակայութեանն ալ սոսկ երեւակայութեամբ կամ վրան մտածելով իսկ կը գրգռուին :

Որչափ ջանք ընենք՝ որ անոյշ հոտ մը , քաղցր ճաշակ կամ կաթուածի հիւանդութեան ցաւը երեւակայենք կամ մտքերնիս բերենք , անհնար է զգացում մը արտադրել : Երբոր կաթուածէ զարնուող մարդը զգացած ցաւը բացատրելու չէ , ախտը զիս անա կը արտմտցունէ չըսէր՝ այլ կը ցաւցունէ . նոյնպէս երբոր մէկն անուշահամ ըմպելիք մը խմէ՝ բերանիս մէջ ուրախութիւն կ'զգայ չըսէր՝ այլ հեշտութիւն : Մարդ մը՝ որ գիտէ թէ մահաբեր ախտէ մը բռնուած է , ախտէ մը՝ որ բնաւ ցաւ չըտար , անհնարին տրտմութիւն կ'զգայ , բայց երբէք ցաւ մը չզգար : Ահա հեշտութիւն եւ ուրախութիւն , կամ ցաւ եւ տրտմութիւն իրարմէ այսչափ տարբեր բաներ են :

Ուստի մենք ալ հեշտութիւն եւ ցաւ ըզգացողութեանց կարգը զրինք , իսկ ուրախութիւն եւ տրտմութիւն տենչանաց կարգը պիտի անցունեմք՝ կրից վրայ խօսելու ատեննիս :

Ուրեմն ասոնք են մեր բոլոր զգացողութիւնները . զգացմունք հինգ զգայարանաց , եւ զգացմունք հեշտութեան եւ ցաւոց : Հեշտութիւնը ամէնն ալ մի եւ նոյն սևոէ չեն եւ շատ տարբեր են իրարմէ , ոչ միայն զգայարանքները տարբեր ըլլալուն , այլ նոյն եւ մի զգայարանքի մէջ ալ զգացման տարբերութիւն կենալուն համար . նոյնը հասկնալու ենք ցաւոց համար ալ : Կէս գլխացաւին զգացումը

կաթուածի կամ որովայնի ցաւոյն՝ զգացմունքէն յանհունա տարբեր է . կան տեսակ մը ցաւեր ալ , որպիսիք են քաղցր եւ ծարաւ , որք շարունակ կը նորոգուին եւ դարձեալ կը դադրին :

Զգայարանաց ոմանք երկու գործարան ունին . ինչպէս են աչք , ականջ եւ ունչ , որ թէ միանգամայն եւ թէ առանձինն զգացողութիւն ունին . երբ մէկտեղ կը գործեն , զգացողութիւնը քիչ մ'աւելի կըլլայ . երկու աչք քան զմին աւելի պայծառ կը տեսնեն , եւ ուր է՝ որ այս տարբերութիւնը չզգար :

Զգացմանց ոմանք յայտնի են՝ թէ ուր տեղ են եւ ինչ կերպով մեզ կը հասնին . ոմանք ալ յայտնի չեն : Կաթուածի , կէս գլխացաւոց եւ կամ խթի ցաւերն զգացած միջոցնիս , գիտեմք թէ անոնք մեր մարմնոց այս կամ այն մասանց մէջ են , սակայն չեմք կրնար իմանալ՝ թէ ինչպէս եւ ինչ պատճառաւ այն հարուածը կամ վիշտը մեր մարմնոց մէջ ծագումն կառնու : Իսկ թէ ձայն մը կամ հոտ մը որ կողմէ կուգայ՝ յայտնապէս գիտենք : Գայելով կիմանամք թէ այս ինչ բանը մեզի դէմ կը դնէ , այն ինչը կըհնազանդի : Այս ինչը բան համեղ է , այն ինչն անհամ : Աչքը մանաւանդ իւր տեսած դոյներն անմիջապէս իրարմէ կորոչէ :

Ասկէց կը հետեւի՝ թէ առարկայից շարժումնու ձեւն ալ , օրինակի համար , գունաւորներն ալ մեզի զգացումն կուտան : Որովհետեւ գիտելով ինչպէս առաջին անգամ կը սպասահի՝ թէ զգացումը ուրկէ է , երբ շատ կողմերէ եւ

կէտերէ կուգան, իսկոյն տարածութիւնը կզգանք, իսկ երբ առարկայն սահմանի մը մէջ ամփոփուի եւ անկէց անդին բան մը չզգանք՝ ձեւը կիմանանք. երբ տեղերնին փոխեն՝ ինչպէս առջեւնէս բռնուած ջահը՝ շարժումը կ'իմանամք :

Այս բաներն ընդհանրապէս տեսանելեաց կը պատահին՝ որ միւս ամէն զգայարանքներէն աւելի պայծառ եւ աւելի որոշ գործարանն է :

Տարածութիւն, ձեւ եւ շարժումն ոչ թէ ըստ ինքեանց տեսանելի են, որովհետեւ օգն ալ այս բաներն ունենալով հանդերձ՝ տեսանելի չէ. գէպքը ասոնք տեսանելի կոչած է. եթէ գոյնը չըլլայ, կարելի չէ՝ որ տեսանելի ըլլան :

Աստի յառաջ կուգայ այն տարբերութիւնն իրաց՝ որով ոմանք ըստ ինքեանց զգալի են. ինչպէս գոյն, համ ալովքն հանդերձ, եւ ոմանք պատահմամբ, ինչպէս են մեծութիւն, ձեւ եւ շարժումն :

Պատահմամբ զգալի իրերը կըսուին հասարակ զգալիք. պատճառն որ մէկէ աւելի զգայարանքի հասարակաց են : Առարկայներու ձեւն ու տարածութիւնն ոչ միայն տեսանելեօք, այլ եւ շօշափելեօք կրնամք իմանալ, եւ երբ ձեռքս բռնած առարկայն ելնէ, կզգամ՝ թէ կը շարժի : Սակայն պէտք է լաւ դիտել թէ այս իրերը, ինչպէս ըսինք, զգայարանաց յատուկ առարկայները չեն :

Յերեմն զգալիքներն ալ երկուք են. հասարակ եւ յատուկ : Յատուկ ըսուածներն անոնք են՝ որք մեր զգայարանաց միոյն միայն տակ կ'իյնան, ինչպէս գոյները՝ որ տեսանելեաց միայն

յատուկ են. ձայնը՝ որ լսելեաց եւալն, իսկ հասարակ կը կոչուին անոնք՝ որ, ինչպէս քիչ մը վերն ըսինք, մէկէ աւելի զգայարանաց տակ կ'իյնան :

Հոս դիտողութեան արժանի բան մը կայ, թէ արդեօք առարկայի մը ձեւն ու շարժումը, դիմահարութիւնն ու տարածութիւնն ըմբռնելը զգայարանաց գործողութիւնն է. որովհետեւ կրնայ ըլլալ՝ որ այս հասարակ զգալիքներն ըզգայարանաց հետ հաղորդակցութիւն ունեցող ուրիշ գործողութեան մը վերաբերին. բայց չեմ ուզիր այս որոշումն ընել. բաւական կը համարիմ այսչափ միայն ըսել՝ թէ այս հասարակ ըզգալեաց ըմբռնումը զգացումներէ չը բաժնուիր : Կը մնայ զգացմանց վրայ ուրիշ երկու բան ալ դիտել :

Նախ՝ որ այս զգացմունքները թէպէտ եւ իրարմէ շատ տարբեր են, սակայն մեր հոգւոյն մէջ կարողութիւն մը կայ զանոնք մէկտեղ բերող : Որովհետեւ փորձը կուսուցանէ մեզ՝ թէ շատ մը առարկայից մեր զանազան զգայարանքներու վրայ միանգամայն ըրած տպաւորութեանց բոլորն՝ ի մի կը ձուլուին հոգւոյն մէջ, մանաւանդ այն ատեն՝ երբ տպաւորումը մէկ տեղէ մը միայն յառաջ գայ. դրօրինակ, երբ կրակին գոյնը տեսնեմ, ջերմութիւնն զգամ եւ բոցոյն ճարձատիւնը լսեմ՝ ոչ միայն գոյնը կը տեսնեմ, տաքութիւնը կզգամ, ձայնը կը լսեմ, այլ եւ կիմանամ թէ այս տարբեր տպաւորութիւնները մի եւ նոյն կրակէն են :

Այս միարար կարողութիւնը՝ թէ հետեւանք ըլլայ տպաւորութեանց՝ որոց բոլորն ալ միա-

հաղոյն մեզ հաղորդուելով՝ բնականաբար մէկ խմոր մը կըլլան հոգւոյն մէջ, եւ թէ՛ երեւակայութիւն ըսուած կարողութեան մէկ մասն ըլլայ, որոյ վրայ արդէն վարը պիտի խօսինք, այս կարողութիւնը կըսեմ՝ ինչ որ ալ ըլլայ, քանի որ մեր զգայարանքներուն դպչող առարկայներն 'ի մի կը ձուլէ՛ կը կոչուի հասարակ կամ ընդհանուր գէպո-թէ-ն, եզր մը՝ որ մեր մտքին գործողութեանց կը պատկանի, սակայն իւր բուն նշանակութիւնը վերը նշանակածնիս է ։

Նրկրորդ՝ որ սպաւորութիւններն անցնելէ վերջն ալ թէ՛ իրենց եւ թէ՛ առարկայից պատկերը կը թողուն հոգւոյ մէջ . երեւակայութիւն ըսուած գործողութիւնն աս է ։

Թող աչքիս տակ եզող այս ինչ գունով մարմինն անցնի երթայ, լսած ձայնս կըսրի, ինձի հեշտութիւն պատճառող ըմպելիքն ալ չը խմեմ, եւ վերջապէս կրակը՝ որուն դէմ կը տաքնամ, մարի ու մրսիմ . բայց ես տակաւին նոյն գոյնը, նոյն ձայնը, նոյն հեշտութիւնն եւ նոյն ջերմութիւնը կ'երեւակայեմ, թէպէտ եւ ոչ առջի չափ ուժգին, սակայն եւ այնպէս առանց ըմբռնման ընութիւնը փոխուելու ։

Ասկէց զատ թէ որ այս զգացմանց մէջ կատարեալ եւ ընդերկար ընդհատումն ալ տեղի ունենայ, կրնան դարձեալ նորոգուիլ Մի եւ նոյն այս նիշ գունով մարմինը, նոյն ձայնն եւ քաղցր համի եւ կամ անոյշ հոտի նոյն եւ մի հաճօքը ուրիշ ժամանակ թէ՛ արթուն եղած միջոցիս եւ թէ՛ քնոյ մէջ միտքս կուգան . այս ալ ոչ կամ յիշարակ ըսածնիս է ։ Մեր հոգին իւր առած ճանաչմուքն կամ գաղափարը կը պահէ

եւ կը յիշէ այնպէս, եւ այն յատկութիւններով ինչպէս որ զգայարանքնիս իրեն ցուցեր են երբեմն . միայն թէ շատ ժամանակ վրայ անցնելով չը մոռցուին ։

Նրդ՝ դիւրին է հասկնալ թէ ինչ է երեւակայութիւնը ։ Նւրաքանչիւր անգամ՝ որ արտաքին առարկայն մեր մարմնոյն վրայ ազդեցութիւն ընելէն վերջը մեզնէ կը հեռանայ, եւ անոր ըզգալի պատկերն քիչ շատ մեր մտաց մէջ կը մընայ ու յիշատակը կ'արթնցունէ մեր հոգւոյն մէջ՝ կըսուի երեւակայութիւն . զոր օրինակ, երբ առաջուց տեսած կամ լսած որ եւ է բան մտքիս մէջ կը մնայ եւ մութն եղած ատենս կամ ականջէս ամէն ձայն կտրած ժամանակ միտք բերեմ, այն ինչ իրը կ'երեւակայեմ կըսեմ, եւ ոչ թէ իրօք կը տեսնեմ կամ կը լսեմ ։

Հոգւոյն այս կարողութեան՝ որով ըսած գործողութիւննիս կը կատարուի, երեւակայութիւն անուն կուտանք ։

Առարկայ մը երեւակայեցն զգացմանէ միշտ տկար է, որովհետեւ պատկերը նախատիպին կենդանութիւնը չունենար ։

Ասկէ կրնայ իմացուիլ զգացման յատուկ եղածները . զգալի առարկայներն մեր աչաց առջեւ ներկայանալուս պէս անմիջապէս անոնց զգացումներն ուժգին կը ծաղին հոգւոյն մէջ։ Մի եւ նոյն առարկայի վերաբերող զգացողութիւնք՝ թէպէտ տարբեր զգայարանքներէ յառաջ եկած ըլլան՝ 'ի մի կը ձուլուին եւ ամենքն ալ իրենց ծագման պատճառ եզող առարկային վրայ կ'երթան կը միանան . վերջապէս այս սպաւորութիւններն ընդհատելէ վերջն ալ տակաւին

իրենց պատկերին միջոցաւ մեր մտաց մէջ կը պահուին ու կրնամք ուզած ատեննիս նորոգել կամ յիշել :

Ասկէց յառաջ եկած է ներքին եւ արտաքին զգայութեանց նշանաւոր բաժանումը :

Արտաքին կըսուի այն զգայութիւնը՝ որոյ գործարանը մեր մարմնոց արտաքին մասանց վրայ կը տեսնուի եւ արտաքին առարկայի մը իրական առաջակայութիւնը կը պահանջէ : Ասոնք են հինգ զգայարանքները . աչք , ականջ եւ այլք : Անկարելի է՝ որ մեր աչքը , ականջը եւ շօշափելիքը բան մը տեսնեն , լսեն եւ շօշափեն , եթէ իրենց զպշող արտաքին առարկայներն իրապէս ներկայ չըլլան :

Ներքին զգայութիւն կը կոչուի այն՝ որոյ գործարաններն աներեւոյթ են , եւ արտաքին առարկայից իրական առաջիկայութիւնը չը պահանջեր : Ընդհանրապէս ներքին զգայութեանց կարգը կը դասուի թէ՛ զգացմունքները ՚ի մի ամիտիով կարողութիւնը՝ որ հասարակ զգայութիւն կըսուի , եւ թէ՛ պահող եւ յիշող կարողութիւնը՝ որ երեւակայութիւն կըսուի :

Հասարակ զգայութիւն կոչելը ճիշդ չէ . որովհետեւ այն զգացումն՝ որ , օրինակի համար ըսենք , կրակէն յառաջ եկած դանազան զգացմունքներն ՚ի մի ամիտիելով՝ մէկ առարկայի վրայ կը պատշաճեցունէ՝ այն ատեն կրնայ ծագումն ունենալ՝ որ ատեն առարկայն ներկայ ըլլայ եւ արտաքին զգայարանք ալ գործեն . բայց երեւակայութիւնը՝ որ արտաքին զգայարանաց գործողութենէ դադրելէն վերջն ալ տակաւին կը շարունակէ՝ բուն կամ ներքին զգայութիւն

կոչուածն է :

Հիմայ դիւրին է լաւ մ'իմանալ թէ ինչ է մեր հոգւոյն այս գործողութեան , այն է երեւակայութեան ընութիւնը , որուն վրայ սրջափ մը սաղորութիւն ընենք՝ տակաւին քիչ է :

Տեսանելիքն եւ ուրիշ արտաքին զգայարանքները մեզնէ դուրս եղող առարկայներ կը ցուցնեն մեզ . սակայն եւ այնպէս մեր ներսն ալ կրնանք տեսնել արտաքին զգայարանաց զգացուցած կերպովն՝ մինչեւ իսկ զգայարանքնիս գործելէ դադրած ատենն ալ : Օրինակի համար . անսայ տեղ եռանկիւն մը կը գծեմ , Δ , եւ աչքով կը տեսնեմ . եթէ հիմա աչքերս փակեմ՝ դարձեալ ներքսապէս կը տեսնեմ սոյն եռանկիւնը գրեթէ նոյն գունով , նոյն մեծութեամբ եւ նոյն դիրքով՝ ինչպէս որ աչքս ցցուց . այս է եռանկիւն մը երեւակայելը :

Բայց , ինչպէս ըսի , զգացմունք եւ երեւակայութիւն իրարմէ տարբեր բաներ են . երեւակայութիւնը՝ որ զգացման տեւողութիւնն է պատկերի մը վրայ անոր չափ պայծառ չկրնար ըլլալ . զի զգացումն առարկայն իրական ներկայութեանը տեղի կունենայ , եւ ապա տակաւ առ տակաւ կը նուազի :

Երեւակայութիւնը միշտ արտաքին զգայարանաց գործողութեան հետ զուգընթաց է : Ար ատեն որ բան մը տեսնեմ՝ նոյն վայրկենին ալ կ'երեւակայեմ , եւ բաւական գրժուարին է երկուքն իրարմէ որոշելը՝ երբ դեռ աչքս տեսնելու վրայ է : Բայց անկէց յայտնի է մէջերնիս տարբերութիւն կենայն՝ որ առարկայ մ'աչքիս առջեւէն վերնայէ ետքն ալ , երեւա-

57282-66
575



կայութիւնս կրնամ շարունակել, որ արդէն տեսածս կերպիւ իւրք վերստին աչքիս առջեւ եղածի պէս տեսնել է: Աստի կրնամք ընդհանուր կերպով ըսել՝ թէ բան մ'երեւակայելը որ եւ է առարկայի մը արտաքին զգայարանաց առջեւն եղած ժամանակէն թիչ մը տարբեր թիչ մը նուազ զգացումը շարունակել է:

Ասոր համար է՝ որ առարկայ մ'երեւակայած ատեննիս՝ միշտ նոյնին մեծութիւնն եւ ձևը զգալի, յատուկ ու որոշ հանգամանքներով աչքերնուս առջեւ կը նկարեմք. ինչպէս սպիտակ եւ սեւ, պինդ եւ կակուղ, ցուրտ եւ տաք եւ այլն, այս կամ այն աստիճան:

Եթէ ուշադրութիւննիս աւելցունենք, պիտի իմանանք՝ թէ առարկայ մ'երեւակայած ատեննիս՝ վրան բան մը չենք աւելցուներ, այլ միայն զգայարանաց ցուցած իրաց վրայ աւելողութիւն կամ շարունակութիւն մը կը յատուցուի: Բայց երբեմն ալ երեւակայութիւնը ոչ միայն բան մը չը յաւելուր զգայարանաց մեր առջեւ դրած բաներուն վրայ, այլ եւ կը պակասեցունէ ալ, զգացմամբ մեր մտաց մէջ կեցած պատկերը նոյն իսկ զգացման չափ ուժ պին եւ զօրաւոր չըլլալուն համար:

Ահա այս է երեւակայութիւնը: Այս գործողութեան միջոցաւ է՝ որ հոգին իւր զգացած առարկայից պատկերները կը պահպանէ, եւ այս է վերջապէս մեր հոգւոյն երեւակայութիւն ըսուած կարողութիւնը:

Բայց պէտք չէ մոռնալ՝ որ միւս զգայարանքները արտաքին, իսկ երեւակայութիւնը ներքին է ըսելով՝ ըսել չենք ուզեր՝ թէ ասոնց

երկութիւն գործողութիւններն ալ հոգւոյն մէջ չեն կատարուիր:

Զգայարանաց ումանց արտաքին անուն տալերնիս անոր համար է, որ նախ՝ այս գործարաններն մեր մարմնոյն դրսի կողմը կը գտնուին. ինչպէս աչք, ականջ, լեզու եւ այլն. մինչդեռ երեւակայութիւն կատարող գործարանը ներսն է, եւ ոչ թէ մարմնոյն արտաքին կողմը. եւ երկրորդ, որ արտաքին զգայարանաց ձևօք գործողութիւն մը կատարելու համար, հարկ է որ մեր մարմնէն դուրս ելող եւ միշտ մեր աչաց առջեւ ներկայ գտնուող նիւթական առարկայն իրապէս մեր զգայարանաց դպի. մինչդեռ երեւակայութիւնը տեղի կունենայ՝ առարկայն թէ առաջիկայ ըլլայ եւ թէ չըլլայ, եւ թէ բոլորովին իսկ ոչնչանայ. հերիք է որ ժամանակին ըմբռնուած ըլլայ:

Չեմ կրնար տեսնել եռանկիւնը՝ եթէ իրականապէս ներկայ չըլլայ. բայց կրնամ երեւակայել աչքիս առջեւէն բոլորովին հեռանալէ վերջն ալ:

Ահաւասիկ թէ որն է ներքին զգայարանաց վերաբերեալը եւ որն է արտաքին զգայարանացը, եւ թէ մէջերնին եղած տարբերութիւնն ինչ է:

Այս ներքին եւ արտաքին, նա մանաւանդ հեշտութեան եւ ցաւոց զգացումներէն մեր հոգւոյն մէջ քանի մը շարժումներ յատաճ կուզան որ կերպ կըսուին:

Հեշտութեան զգացումը ազդոյ եւ զօրաւոր կըլլայ մեզ երբ տակաւին ներկայ է, եւ հեռանալէն վերջն ալ ուժգին իրեն կը քաշէ:

խոյ ցաւոյ զգացման արտայայտած արդիւնքը բոլորովին ներհակ է . ուստի ուր որ հեշտութիւն պատճառող առարկայ մը տեսնենք կամ երեւակայենք՝ անմիջապէս անոր կը յարի՛ր . ընդ հակառակն երբ ցաւ սուտը բան մը զգամք եւ կամ երեւակայեմք՝ կը խորչինք :

Այս պատճառաւ է որ ախորժեղի կերակուր մը՝ ցանկութիւն , եւ ընդ հակառակն անախորժ կամ դարչեցուցիչ կերակուր մ'ալ դժկամակութիւն եւ կամ տհաճութիւն կը պատճառէ մեզ . Այսպէս ամէն հեշտութիւնք եւ ամէն ցաւը նոյն եւ մի եղանակաւ փափաք կամ զգուսնք կը բերեն , եւ բանականութիւնը կարծիք չունի :

Այս բաները շարժումն հոգւոյ կը սուսին , ոչ թէ փոփոխական ըլլանուն եւ կամ մէկ տեղէն միւսը փոխադրուելուն համար , ալ մարմինը շարժմամբ բանի մը մերձենալուն կամ խորչելուն պէս , հոգին ալ իր փափաքելովը կամ գարչելով առարկայի մը դիմելուն կամ հեռանալուն համար :

Ուստի կրնամք կիրքն այսպէս սահմանել . կիրքն է շարժումն հոգւոյ , որ առարկայէ մ'ըզգացած կամ անոր վրայ երեւակայուած ցաւէն կամ հեշտութենէն ազդեցութիւն առնելով՝ անոր կամ կը փարի կամ կը հեռանայ , երբոր անօթենամ՝ փափաքելով պէտք եղած ուսելիքը կը փնտռեմ . նոյնպէս երբ կրակն այրէ՝ մեծ կիրք մը կ'ունենամ հեռանալու :

Կիրքերը սովորաբար տասն եւ մէկ հատ են , որոց սահմաններն ահաւասիկ .

ՍԵՐ . այն կիրքն է՝ որով բանի մը կը յարինք : Ախորժեղի կերակուրը կամ որսի երթալը

կը սիրեմք : Այս կիրքը կը թեւալրէ՝ որ կերասկրոյ կամ որսի դիմեմք եւ ձեռք բերեմք :

ԱՏԵԼՈՒԹԻՒՆ . սա ընդ հակառակն այնպիսի կիրք մ'է՝ որով բան մը մեզնէ հեռի կը վանեմք . ցաւը , աշխատութիւնը կ'ատում . կ'ատեմ նաեւ դեղը անախորժ համին համար . մարդ մը ինծի չարիք հասցնելուն համար , եւ բնականաբար անկէց կը հեռանամ :

ՅԱՆՎՈՒԹԻՒՆ . այն կիրքն է՝ որով մեզի սիրելի եղած առարկայն մեզնէ հեռանալէն վերջըն ալ կը փնտռենք :

ԶՁՈՒՈՒՄՆ . այն կիրքն է՝ որով ստելի եղած անձը կամ իրը մեզի չենք մօտեցուներ :

ՈՒՐՍԵՈՒԹԻՒՆ . կիրք մ'է՝ որով հոգին առաջիկայ բարւոյն վրայ կ'ուրախանայ եւ բոլորովին վրան կիյնայ :

ՏՐՏՄՈՒԹԻՒՆ . այն կիրքն է՝ որով հոգին առաջիկայ չարիքէն ամնջեալ՝ կարելի եղածին չափ կը խորչի . եւ կը նեղուի : Այսչափ կիրքերը դրդուեցու համար առարկայն ներկայ կամ բացակայ ըլլալու է : Բայց կայ ուրիշ հինգ կիրք ալ՝ որոնք յազեցուեն իրարմեմք չեն ըլլար :

ՀԱՄԱՐՁԱԿՈՒԹԻՒՆ կամ ԱՐՈՒԹԻՒՆ . կիրք մ'է՝ որով հոգին կը ջանայ ստանալը դժուարին , բայց սիրելի եղած առարկայն ձեռք ձգել :

ԵՐԿԻՂ . կիրք մ'է՝ որոյ ձեռք հոգին կը հեռանայ այնպիսի չարիքէ մը՝ ուրկից խուսափելն դժուար է :

ՅՈՅՍ . կրից այն կերպն է՝ որ մեր հոգւոյն մէջ ծագումն կառնու այն ատեն՝ երբ մեզի սի-

րելի երեւցած առարկային ստացումը թէպէտ
դժուարին, սակայն հնարաւոր է. որովհետեւ
եթէ յուսացած բաներն իս ստանալնուս վրայ
վստահ ըլլամք առանց դժուարութիւն մը կե-
նալու՝ յոյս չըլլար, այլ ուրախութիւն :

ՅՈՒՍԱՀԱՏՈՒԹԻՒՆ . ընդ հակառակին այնպի-
սի կիրք մ'է՝ որ մեր հոգւոյն մէջ կը զարթնու-
երը մեզի սիրելի եղած առարկայն ձեռք բերե-
լը անհնարին ըլլայ :

ԲԱՐԿՈՒԹԻՒՆ . կիրք մ'է՝ որով կը ջանամք
մեզի չարիք պատճառող սննձը կամ իրը վանել
եւ կամ անկէց վրէժն առնուլ :

Այս վերջին կրից հակառակն է պէտք եղած
տեղը բարիք ընելու յօժարութիւնը՝ եթէ ասի-
կայ կրից կարգը դնել պէտք ըլլայ : Բայց ասի-
կայ առաքինութիւն է, եւ ոչ կիրք, եւ առա-
քինութիւնը կրից պէս յուղմունք կամ խոռ-
վութիւն չունի :

Առաջին վեց տեսակ կիրքերը՝ որոց հա-
մար առարկայն կամ ներկայ ըլլալու է կամ
բացակայ, նախնի փիլիսոփայք ցանկան սնու-
ւանած են . իսկ վերջին հինգ կիրքերը՝ որք ա-
ռարկային առաջիկայ եւ կամ հետի ըլլալէն զը-
ժուարութիւն կրեխէն կը պատճառին, ցասու-
նաւ ըսած են :

Ցանկան կը կոչուի այն կիրքը՝ յորում կ'իշ-
խեն բաղձանք կամ ցանկութիւնք : իսկ ցա-
սանաւ կիրքն է՝ ուր բարկութիւնը կը արի :

Այս կիրքն իր նպատակին հասնելու համար
մեծ ջանից կը կարօտի, եւ պէտք է որ շատ բա-
ներու յաղթէ. բարկութեան շարժառիթն ալ ըուն
յաղթասիրութիւնն է :

Յասմական կիրքը թերեւս աւելի պատ-
շած եւ վայելուչ պիտի ըլլար արեւմտեան կեր-
տուանել : Յոյներն՝ որք կրից այս բաժանումը
ընդունելու մէջ ամենէն առաջինն եղան՝ բար-
կութիւն եւ արիութիւն նոյն եւ մի բառերով կը
բացատրեն . եւ բնական բան մ'է արիական ա-
նուանել այն կիրքը՝ որ իւր նպատակին հաս-
նելու համար հարկ է՝ որ շատ մը դժուարու-
թեանց յաղթէ : Աւ արդարեւ ցասմական եւ
արիական անուամբ այս երկու բացատրութիւն-
ները կրնամք միացունել . որովհետեւ բարկու-
թիւնը ծագումն կ'առնու արիութիւնը զրգոռ-
լու եւ զօրացնելու համար :

Ինչ որ է . ստոյգ է թէ կիրքերն երկու
կարգի կը բաժնուին . պատճառն այն է՝ որ ու-
մանց համար առարկային սոսկ ներկայ կամ
հեռաւոր ըլլալը բաւական է . իսկ ոմանց հա-
մար ալ առարկայն հետի կամ ներկայ ըլլալէն
զատ դժուարութիւն մ'ալ կ'աւելնայ մօտեցնե-
լու կամ հեռացունելու :

Սակայն դժուարութիւն ըսելով չը պիտի
հասկնանք թէ այս կրից վրայ միշտ ուշադիր
դատումն կը հաստատէ հոգին ուղածը ձեռք
բերելու համար, այլ, անոր համար որ, ինչ-
պէս իւր տեղը պիտի խօսինք, բնութիւնը՝ ըս-
տանալն դժուարին առարկայից այնպիսի յատ-
կութիւններ տուած է, որք իրենք իրենցմով
հոգւոյն վրայ տարբեր տպաւորութիւններ եւ ե-
րեւակայութիւններ կը ներդործեն :

Այս մետասան զլլատուր կրքերէն զատ կան
տակաւին ուրիշներ ալ, ինչպէս են ամօթ, նա-
խանձ, նախանձաւորութիւն կամ բարի նա-

խանձ, զարմանք, հիացումն եւ ուրիշ ասոնց նման մի քանի կրքեր. սակայն ասոնք ամէնքն ալ նոյն տասն եւ մէկ կրից տակ կ'երթան : Ամօթը մեր ունեցած բնական թերութեանց եւ ուրիշ զանազան յանցանքներու պատճառաւ այլոց արձամարհելի եւ ատելի ըլլալու երկիւղն կամ արտամոթիւնն է՝ որ մեր յանցանքը ծածկելու եւ ինքզինքնիս արդարացնելու բաղձանքին հետ կը միանայ : Նախանձն է ուրիշին ունեցած բարւոյն վրայ արտամիլ, եւ վախճալ թէ մի դուցէ ուրիշներն նոյն բարիքը ստանալով զմեզ անկէց զրկեն, կամ այլոց ժառանգած բարիքը չլինալ ձեռք բերելուս համար յուսահատիլ եւ սաստիկ յօժարութիւն մ'ունենալ առտելու այն՝ որ կարծես թէ չըթողուր՝ որ մենք ալ ստանանք : Նախանձաւորութիւնը կամ բարի նախանձը՝ որ ուրիշին ըրած մեծամեծ գործերն տեսնելով կը ծագի բարի մարդուն մէջ՝ իր մէջ կը բովանդակէ այն յոյսը՝ որով կը հաւատայ մարդ թէ ուրիշներուն գործածներն ինքըն ալ կրնայ ընել, եւ այնպիսի արիական ըզգացում մը՝ որ զանոնք ձեռնարկելու կը թելադարէ : Զարմանքն ու հիացումն է արտաքոյ կարգի բան մը տեսնելու ուրախութիւնը եւ այն իրաց պատճառներուն խորը թափանցելու բաղձանքը. եւ կամ այն երկիւղը՝ որ դուցէ այն նորանշան բանին մէջ ծածկեալ վտանգ մը կայ, եւ այն վտանգը ճանչնալու դժուարութենէն անհանդստութիւն կը պատճառի : Այսպիսի դէպքի առջև անշարժ եւ անգործ կը մնանք. հիանալ կամ ապշիլ ըսածնիս ալ այս է : Անհանդստութիւն, հողք, երկիւղ,

արհաւիրք, սոսկումն եւ սարսափ երկիւղի տարբեր արդիւնքներ եւ զանազան աստիճաններն են : Անհանդստութիւն կ'զգայ մարդ մը եթէ վնասած բարիքը չըլլնար ձեռք ձգել, եւ կամ ունեցածին վրայ վտանգութիւն չունենար : Եթէ վտանգն աւելի չափնայ՝ հողի մէջ կիշնայ, եթէ չարիքը աստիճան մ'ալ առաւելու՝ երկիւղ կ'ունենայ, եթէ երկիւղն ալ զինքը խրոտիլ եւ զարհուրեցնէ՝ կըլլայ արհաւիրք կամ սոսկումն. բայց թէ որ այնչափ խոտիլ զինքը՝ որ գրեթէ խենդ մը դառնայ, ասի ալ սարսափ կը կոչուի :

Արդ, յայտնի է թէ կիրքերն ինչ կերպով ալ ենթադրենք եւ թիւերնին սրչափի ալ հասցնենք, ամէնքն ալ վերն ըսուած տասն եւ մէկ կրից տակ կ'երթան :

Եթէ մեր ներսը անցածներն աչքէ անցունենք, կրնամք ըսել՝ թէ մեր ամէն միւս կրից ծագումն եւ կամ սկիզբը սէրն է՝ յորում կը բովանդակին միւս բոլոր կրքերն եւ անոր միջոցաւ կը գրգռուին : Բանի մը դէմ ունեցած ստաւութիւննիս՝ ուրիշի մը վրայ ունեցած սիրոյ արդիւնքն է. աստղջութիւնը սիրելուս համար է որ հիւանդութիւնը կ'ատեմ. մէկուն դէմ զայրանալս անոր համար կըլլայ՝ որ սիրած առարկայս ձեռք անցունելու արդեւք կը լինի՝ փափաք ըսուածն ուրիշ բան չէ, այլ սէր՝ որով մեր չունեցած բարիքն ունենալու կը ձրգտիմք. նոյնպէս ուրախութիւնն ալ սէր մ'է՝ որով ձեռք անցումին վրայ կը տաքնաւք : Զգուանքն ու արտամոթիւնն ալ սէր մ'է, որով մեզ նեղութիւն տուող եւ ունեցածնիս ձեռ-

քերնէս առնող չարիքէն կը հեռանամք : Արի-
ութիւնը տեսակ մը սէր է , որով մեզի սիրելի
եղած բանը ստանալու համար ամեն դժուար-
ութեանց յանձնառու կ'ըլլամք : Երկիրն ալ
սէր է՝ բոլոր կը խռովի մարդ տեսնելով՝ որ փըն-
տոած բանը կորսնցնելու վտանգին մէջ կը
դանտի : Յոյսն ալ սէր է՝ որ կարծել կուտայ
մեզ՝ թէ սիրելի եղած բանը պիտի կարենամք
ձեռք ձգել : Ասոր հակառակ , յուսահատութիւ-
նը սիրոյ այն կերպն է՝ որով չենք կրնար զմեզ
մխիթարել՝ տեսնելով որ բոլոր ունեցածնիս
ձեռքէ կ'երթայ . եւ այս կիրքն այնչափ կը վը-
հատեցունէ մեր հողին՝ որ կարծես թէ այլ եւս
կարելի չէ առջի պէս զօրանալ : Բարկութիւնը
կերպ մը սէր է , կը զրգուռի երբ ուրիշները
մեր բարիքն յափշտակել ուզեն , եւ կը ջանայ
պաշտպանել : Աերջպէս , վերցնուր սէրը , եւ
անա բնաւ կիրք չը մնար : Գիր սէրը , եւսնա
պիտի տեսնես որ ամեն տեսակ կիրք անկէ կը
ծաղին :

Ոմանք զարմանքը՝ կրից առաջինը համար-
ած են . եւ ասոր պատճառն այն է որ , կրսեն ,
նոր առարկայ մը մեզ պատահելուն պէս յան-
կարծակի կը զարթնու մեր վրայ՝ դեռ չը դիտ-
ցած թէ այն առարկայն սիրել պէտք է թէ ս-
տեղ . բայց թէ որ այս յափշտակուիլը միայն ա-
ռարկային նորութեան վրայ զարմանալ է , ոչ
յուզում եւ ոչ ալ հետեւաբար կիրք կրնայ պատ-
ճառել : Իսկ եթէ յուզմունք մը կ'աղբէ , այն
ատեն արդէն բացատրած կըքերնուս տակ կ'իյ-
նան . ուրեմն ստոյգ է՝ թէ սէրը՝ կրից ամենէն
առաջինն եւ բոլոր միւսներուն աղբիւրն է :

Ահա յայտնի կը տեսնուի՝ որ մեր անձին
վրայ թեթեւ խորհրդածութիւն մը մեր հողույն
մէջ զգացուած կրից վրայ կրնայ մեզի ծանո-
թութիւն տալ :

Սա հարկ է յաւելուլ՝ թէ կրքերն արգելք
կ'ըլլան մեզ լաւ մտածելու , եւ թէ որ չը զըս-
պուին՝ զմեզ մոլութեանց մէջ կը ձգեն : Այս ա-
մենը աւելի լաւ պիտի հասկցուին՝ կըր իմա-
ցական գործողութեանց վրայ բացատրութիւն-
ներ տանք :

Իմացական գործողութիւնք անոնք են՝ որ
զգայարանքներէ գեր 'ի վերոյ են : Աւելի որոշ
զուրցելով , իմացական են այն գործողութիւն-
ներն՝ որոց առարկայները մեզ ծանօթ մի քա-
նի պատճառներն են :

Պատճառ ըստճիս հոս ուրիշ բան չէ՝ ե-
թէ ոչ ստոյգ կամ իբրեւ ստոյգ ենթադրուած
իրաց ըմբռնումը : Մտքերնիս վարը կարգալով
պիտի հասկնաք :

Երկու տեսակ իմացական գործողութիւնք
կան , մտաց եւ կամաց :

Ասոնց երկուքին առարկայն ալ ծանօթ քա-
նի մը ճշմարտութիւններն են : Ամեն բան պատ-
ճառ ունի . բան մը չեմ ուզեր՝ մինչեւ որ ին-
չու համար ուզելս չը դիտնամ :

Չգացմանց համար այսպէս չէ , ինչպէս յե-
տադայ խօսքերով պիտի բացատրենք . բայց ա-
ռաջ իմացականութեան վերաբերեալ իրաց վը-
րայ խօսիմք :

Իմացականութիւնը Աստուած մեզի տուած
է իբրեւ առաջնորդ : Չանազան անուհներ ու-
նի այս գործողութիւնը . եթէ բան մը հնարէ

եւ կամ բանի մը խորը թախանցէ՝ Կրօնի ըստուի երբոր դատու մն կատարելով դէպ 'ի ճշմարիտը կամ բարին շարժի երթալով կ'ըսուի քան եւ դատումն :

Մարդս ուրիշ անասուններէն տարբերող ամենէն մեծ եւ ճշմարիտ յատկանիշը բանն է մարդ՝ 'ի բնականէն իւր ամեն գործքերը խելքով կ'ընէ . ուստի նա միայն է մարդ կատարեալ եւ ճշմարիտ՝ որ իւր գործքերը լաւ խելքով կրնայ կատարել :

Բանը՝ երբ դմեզ իրական չարիքէն , այն է մեղքէն կը խոտորեցնէ՝ կ'ըսուի Էթիք կամ Գեթիքոնիստիս :

Իսկ երբ խիղճը գործուած դէշու թեան համար յանդիմանէ՝ կը կոչուի Էթիք Ժողով կամ Էթիք Գեթիքոնիստիս :

Բանականութիւնը մեզի տրուած է՝ երեւակայութիւնէ եւ զգայարաններէ վեր բարձրացնելու համար . թէ որ զգայարանայ եւ երեւակայութեան կապուի եւ անոնց դերի լինի՝ մոլորեալ է , եւ արժանի չէ բանականութիւն կոչուելու :

Ահա ընդհանրապէս այս է իմացականութիւնը . բայց աւելի արդէ կը հասկնանք եթէ իւր գործողութեան ճիշդ սահմանը տամք :

Եւստիպիոս է ճշմարիտն ու սուտը ճանչնալ եւ իրարմէ որոշել՝ զոր օրինակ իմանալը , թէ ինչ է երեւակիւնը , ճանչնալ է սոս ճշմարտութիւնը թէ երեք կողմով ձեւ մ'է . կամ որովհետեւ երեւակիւն բառը՝ բացարձակապէս անոնելով ուղիղ երեւակիւն կը հասկցուի՝ ուստի երեւակիւն մ'իմանալը՝ զիմանալ է՝ թէ երեք ու-

ղիղ գծերէ վերջաւորեալ ձեւ մ'է . այս սահմանը գեղեցիկ կերպով կը ճանչցունէ մեզ իմացականութեան բնութիւնը եւ իրեն զգայարաններէ ունեցած տարբերութիւնը :

Զգայարանը ճշմարտութիւն ճանչնալու տեղի կուտան եւ ոչ թէ իրենք ճշմարտութիւնը կ'ըրոնեն :

Նրկար ծառու դոյ մը գրեթէ բոլոր ծառերը հեռագնեալ իմ աչքերուս կը մանրանան , եւ գրեթէ մանրանալն երկրորդ ծառէն կ'սկսի եւ համեմատաբար սրջալի հետանայ այնչալի կը մանրանայ : Պարզ աչօք միապազաղ , ողորկ եւ միաշար տեսած առարկայնիս դիտակը խորտուրորտ , անհարթ եւ մէկմէկէ բաժնուածի պէս կը յուցնէ մեզ : Նիտակ դաւաղան մը ջրին մէջէն կոր կերեւայ . հաւասարակշիռ շարժումն ունեցող նաւի մը մէջ նստած ատեննիս՝ ինքզինքնիս ամբողջ նաւուն մէջ դանուած բանեւուն հետ 'ի միասին անշարժ կը կարծեմք . մինչպէս նաւէն դուրս եղող առարկայ՝ երբ՝ թէ եւ ըստ ինքեան անշարժ՝ բայց այնպէս մը կերեւան մեր աչքին , որ կարծես թէ մեզմէ կը փախչին . եւ այսպէսով մեր շարժականութիւնը անշարժ իրաց , եւ անոնց անշարժութիւնը մեզ կ'ընծայեմք , մեք՝ որ նոյն միջոցին շարժուն գիրք մը բռնած եմք : Ահա այս եւ ուրիշ ասոնց նման բիւրաւոր բաներ՝ որոնց մէջ ըզգայարանք ուղղութեան պէտք ունին՝ յայտնի կը ցուցնեն մեզ՝ թէ ճշմարտութիւնը ձեռք բերելու եւ սուտը ճշմարտէն որոշելու համար մէկ ուրիշ կարողութեան մը կը կարօտեմք :

Եւ ասիկայ ոչ միայն հասարակ զգայարան

մէջ տեղի կունենայ, այլ նաեւ յասուկներուն մէջ ալ: Շատ անգամ կը պատահի որ առարկայներու վրայ այնպիսի գոյներ եւ բիծեր կը տեսնեմք՝ որք չէ թէ նոյն առարկայներէն, այլ անոնց մեզնէ ունեցած անջրպետութենէն եւ միանգամայն մեր գործարանաց այլայլութենէն յառաջ կուզան: Այսպէս դալքահար մարդու մը աչքերն ամէն բան դեղին կը տեսնեն, Գարձեալ եթէ աչքերն ընդերկար արեգակին յառենք՝ կը շլանան, եւ ասանկով թէ օդին մէջ եւ թէ ուրիշ առարկայներու վրայ այնպիսի այլ եւ այլ գոյներ կը տեսնեմք՝ որք առանց մեր զգայարանաց այս այլայլման կարելի բան չէ որ տեղի ունենան եւ տեսնուին Երբեմն ալ որ եւ է մարմնոյ օդին ծածանմամբ մեզ պատճառած ձայներու նման ձայներ կը լսեմք առանց նոյն առարկայն գոյութիւն ունենալու: Մի եւ նոյն հոտն ոմանց աղէկ եւ ոմանց անախորժ կը թուի, ձաշակներն ալ տարբեր տարբեր են, ինձի քաղցր երեւցած բանն ուրիշին դառն կ'ուզայ. շատ անգամ մենք մեղի ալ համաձայն չենք ըլլար. լեզուի տրամադրութեան նայելով մի եւ նոյն համը շատ մը փոփոխութիւններ կունենայ: Զգայարանաց այս պատրանքին մէջ գատում ընել, եւ հետեւարար ճշմարտութիւնը ճանչնալ՝ բանականութեան յատուկ է:

Այլ եւ զգայարանք իրենց գործարանաց մէջ անցածներուն վրայ բան մը չեն յայտնէր. երբ կը տեսնեմ կամ կը լսեմ, չեմ զգար ոչ ակամջիս թմրկին թրթուումը եւ ոչ ալ աչքիս մէջ եղած տեսողական ջղերուն յուզումը: Նրբ աչքերս տկարանան եւ ձաշակի արուի՝ ամէն բան

դեղին կը տեսնեմ եւ ամէն ինչ կը դառնանայ. բայց ոչ թէ տեսնելիք եւ ձաշակելիք են որ լեզուիս կամ աչքերուս խանդարմունքը կ'զգացունեն: Այս ամէնը գործարանաց վրայ կատարած խորհրդածութեանցս միջոցաւ միայն կրնամ իմանալ. որովհետեւ իմացականութեանս կը ճանչցունէ ինձ՝ թէ այս գործարաններն ինչ արդիւնք կ'արտադրեն իրենց կարգաւորեալ եւ կամ անկարգ վիճակի մէջ դանուած միջոցին:

Զգայարանքն իս նաեւ իրենց զգացումն տրուող առարկայներուն մէջ ինչ կեցած ըլլալուն վրայ ալ տեղեկութիւն չեն տար: Տաքաց կամ մրսեցայ ըսելով ինչ որ կ'զգամ՝ կրակը տաք եւ այրող է ըսելով իմացածս չէ: Տաք եմ ըսել տրուողը տարբեր զգացում մ'է՝ զոր կրակը չզգար եւ չըկրնար ալ զիտնալ. եւ այս զգացումն երբոր մինչեւ ցաւ տալու աստիճան առաւելու կ'այրիմ ըսել կուտայ:

Թէպէտ կրակն ինքնին ոչ զգացումն ունի եւ ոչ ցաւ, բայց այն զգացումները պատճառող զօրութիւն մ' ունենալը զիտեմ. սակայն այս ջերմութիւն հրոյ ըսուածը զգայարանաց միջոցաւ զգացուած չէ. այդ գաղափարը ուրիշ տեղէ մը կուզայ:

Ուտի զգայարանք միայն զգացումն կուտան. իսկ առարկայից մէջ եղած տրամադրութիւնները գատելն իմացականութեան կը թողուն: Լսելիքը ձայն միայն կը հաղորդէ ինձ. ձաշակելիքն ալ լեզին ու անոյշը: Եթէ իմացականութիւնը չըլլայ՝ բնաւ չը պիտի կարենամ գիտնալ թէ օգն ինչպէս շարժելու է որ ձայն հանէ. կերակրոց մէջ ինչ կայ որ լեզի կամ ա-

նոյշ կրնէ :

Զգայարանաց համար ըսածնիս երեւակայութեան համար ալ նոյն է որ , ինչպէս ըսինք , ժամանակ անցնելով զգացման եղծանելի կամ ցնդական պատկերները միայն կը ներկայացնէ :

Իսկ երեւակայութեան զգացողութեան վերայ աւելցուցածն ուրիշ բան չէ՝ եթէ ոչ պարզ ցնորք , որք պէտք է ուղղուին . ինչպէս կը պատահի , կամ քնոյ մէջ եւ կամ որ եւ է ամբողջման ատեն իրերը անսածններնէս տարրեր . կերպով կ'երեւակայենք :

Ահա այսպէս թէ արթուն եղած միջոցնիս եւ թէ մինչեւ քնոյ մէջ անդամ մեր մտքերն ցնորակաւ երեւակայութիւններով կը լեցուին՝ որոց վրայ իմացականութիւնը միայն կարող է դատումն ընել :

Ահաւասիկ ասոր համար է որ բոլոր վիճակները միաբան կըսեն՝ թէ միայն իմացականութեան յատուկ է ճշմարտան ու սուտը ճանչնալ , իրարմէ զանազանելը :

Նոյն իսկ իմացականութիւնն է որ իրաց բընութիւնը կը գիտէ : Աչքով մարմնոց տարածութիւնն ու շարժումը կը տեսնենք . բայց ստրածական կամ շարժուն ըլլալն ինչ է , այս քննելու իմանալ իմացականութեան գործն է :

Այս պատճառաւ մտորութիւնը միշտ իմացականութեան կը վերաբերի : Ճիշդը խօսելով զգայարանաց մէջ մտորութիւն չի կայ , իրենց պարտքը կը կատարեն . որովհետեւ ոչ միայն առարկայից , այլ նաեւ իրենց գործարանական վիճակին նայելով կը գործեն : Իսկ գործարանաց վրայ դատումն ընել եւ զգացողութեանց միջո-

ցաւ՝ հարկաւոր հետեւութիւնները հանել՝ իմացականութեան գործ է . եթէ սխալմունք պատահի՝ ինքն է մեղապարտ :

Ուրեմն կը հաստատուի՝ թէ իմացականութեան բուն գործն է ճշմարտան ու սուտը ճանչնալ եւ իրարմէ զանազանել : Նոյնպէս իմացականութիւնը՝ գիտէ թէ իրեն , երեւակայութեան եւ զգայարանաց մէջ ինչ տարբերութիւն կայ :

Սակայն իմացականութեան յատուկ գործերէն ոմանք այնչափ մօտ են զգացմանց՝ որ եթէ ուշադրութիւն չընենք՝ իրարու հետ կը շփոթենք :

Այս կարգէն է դատումը՝ որ բաղդատութեանց եւ անոնց օրէնքին վրայ կը կատարենք :

Բաղդատութիւններն եւ անոնց օրէնքը ճանչնալ բանականութեան գործ է , որ կը բաղդատէ այս ինչ բանը ուրիշի մը հետ ու վերաբերութիւններն երեւան կը հանէ :

Բանականութիւն եւ օրէնք երկու ծայրեր են : Եթէ բանականութիւն չըլլայ՝ ոչ օրէնքը կը հասկնանք եւ ոչ ալ իրաց մէջ կըրնանք դնել . օրէնքը բանականութեան ընկերն եւ յատուկ առարկայն է :

Ուստի բաղդատութիւն եւ օրէնք հասկընալ եւ վրանին դատումն ընել , զգայարաններէ վեր բան է :

Օրինակի համար . գեղեցկութիւն նկատել եւ վրան դատաստան ընել՝ մտքի գործ է . վասն զի գեղեցկութիւնը օրէնքի մը մէջ է կամ չափակցութեան եւ կարգաւորութեան մէջ :

Ասոր համար է որ 'ի բնութենէ նուազ գեղեցկութիւն ունեցող իրերն երբ կարգաւորեալ չափակցութեամբ մէկգմէկու քով դրուին, ալ աւելի գեղեցկութիւն մը կառնեն :

Ապա ուրեմն գեղեցկութեան վրայ դատումն կատարելը մտաց՝ այն է իմացականութեան կը վերաբերի . որովհետեւ գեղեցկութիւն դատելը , օրէնք , չափ եւ ճշգրութիւն դատել է . այս բաները միտքը միայն կարող է իմանալ :

Այս ենթադրութիւններէն կը հասկցուի՝ թէ մտաց վերաբերեալ բաները զգայարանաց ընծայել շատ անգամ կը սլատահի :

Երբոր մէկ գծի վրայ տնկուած կարգ մը ծառեր դիտենք , թէպէտեւ հեռին եղածները հետզհետէ համեմատաբար սղտիկ կերեւնան , բայց մենք [դատում կընենք՝ թէ ամենքն ալ հաւասար են :

Այս դատումը աչքին չը վերաբերիր , որուն նայելով ծառերը մեր աչքին իրարմէ մեծ կամ փոքր կերեւին , այլ կը վերաբերի մտքին կատարած այն ներքին խորհրդածութեան՝ որ առարկայից մէջ հեռաւորութենէն յառաջ եկած նուազումը բնականապէս ճանչնալով՝ առանց երեւութէն խաբուելու այն ամէն ծառոց բարձրութիւնը հաւասար կը դատէ :

Բայց այս դատումը՝ որ մտքին է , զգացողութեան վրայ հիմնեալ ըլլալուն կամ անմիջապէս անկէց հետեւելուն եւ կամ գրեթէ միասնական լինելուն համար զգայարանոց կ'ընծայեմք եւ կ'ըսենք՝ թէ այս ծառոց հաւասար բարձրութիւնը եւ ծառուղւոյն չափակ-

ցութիւնը տեսնողն աչքն է :

Ասոր համար է որ նոյն ծառուղին մեզի հաճոյ եւ գեղեցիկ կերեւնայ , եւ մեք այնպէս կը կարծենք՝ թէ այս գեղեցկութիւնը աչաց եւ ոչ մտաց ձեռօք կ'իմանանք , սլատառն որ աչքերնիս բանալ եւ այս հաճոյական առարկայն տեսնել մէկ կըլլայ :

Սակայն դիտեմք նաեւ թէ առարկայն մը վրայ տեսած գեղեցկութիւննիս , այսինքն , անոր ճշգրութիւնը , չափակցութիւնն ու կարգաւորութիւնը մտաց միջոցաւ միայն կրնամք ճանչնալ՝ որուն գործողութիւնը պէտք չէ շփոթել զգայարանաց գործողութեանց հետ՝ անոնց միասնութեանը համար :

Այսպէս չէնքի մը գեղեցիկ անուշը տուած ժամանակնիս՝ նոյն չէնքին իւրաքանչիւր մասերն իրարու հետ բաղդատած եւ անոնց չափակցութեան ու ճշգրութեան վրայ դատումն ըրած կըլլամք . այս դատման մէջ գաղտնի իմաստասիրութիւն կայ՝ որ խիստ արագութեամբ կատարուելուն համար չենք կրնար իմանալ :

Ուստի որչափ պնդենք թէ այս գեղեցկութիւնը աչքը կը տեսնէ կամ աչաց հաճոյական առարկայ մ'է , այս դատողութիւնը այնպիսի ծածկեալ խորհրդածութիւններէ կուգայ մեզ՝ որք իրենց՝ չափազանց արագութեան եւ զգացողութեանց հետ ունեցած անմիջական յարաբերութեանց համար իրար խառնուած են :

Այսպէս են նաեւ գեղեցկութիւնը աչքերնիս զարնուած ամէն բաներ . գեղեցիկ գոյնը գտնել տուողը այն թագուն դատումն է՝ որ մեր աչքին եւ նոյն գունոյ համեմատութեան

վրայ կը կատարենք: Նոյնպէս են ձայնի գեղեցիկ ելեւէջները, դեղեցիկ երգերն եւ ներդաշնակաւոր հնչիւններ ականջաց համար: Այն մարդիկը՝ որ ձայնի ներդաշնակութիւնն անմիջապէս կը մըռնեն՝ աղէկ ականջ ունին կըսենք, որ սխալ է, որովհետեւ այդ դատումը մտքինն է:

Այս ճշդութիւնը՝ որ ականջին կուտանք՝ իմաստասիրութեան եւ խորհրդածութեան գործըն ըլլալուն մէկ նշանն ալ այս է՝ որ արհեստով կ'ստանանք եւ կը կատարելագործենք: Մասնաւոր կանոններ կան՝ որոնք միանգամ ճանչնալնէս ետքը համեմատութեանց դեղեցկութիւնները շուտ մը կ'իմացունեն: Սովորութիւնն ալ այս բանն ընել կուտայ մեզի. որովհետեւ խորհրդածութիւններն անոնց վրայ շատնալով՝ դիւրաւ եւ մէկէն կը կատարուի: Սովորութիւնը, կըսեն, ականջաց նրբութիւն կամ փափկութիւն կուտայ, վասն զի ականջին թմբուկին զարնուած ձայներուն հետ անմիջապէս ներդաշնակութեանց գեղեցկութեան վրայ մտքին դատաստան ընելը կուգայ:

Ճիշդ այսպէս կը կատարուին նաեւ այն տեսակ դատումները կամ իմաստասիրութիւններն՝ որոց միջոցաւ առարկայներն իրարու հետ բաղդատելով՝ մեծ կամ փոքր ըլլալնին կ'իմանանք:

Ուրեմն մեր ներքը բնական երկրաչափութիւն մը կամ որ նոյն է համեմատութեանց գիտութիւն մը կայ, որ իրերն իրարու հետ բաղդատելով՝ անոնց մեծութիւնը չափել եւ ճշմարտոր առերեւութէն որոշել կուտայ:

Այս միջոցաւ է որ նկարիչը իրենց հեռանկարներովն զմեզ կը խաբեն: Առարկայն հեռաւորութեան համեմատ փոքրելով՝ հարթը՝ խոր եւ բարձր, մերձաւորը՝ հեռաւոր, եւ փոքրը՝ մեծ կը ցուցնեն: Գարձեալ այս կերպով քսան կամ երեսուն սաք երկայնութիւն ունեցող թափաբաբեմի վրայ ընդարձակ ծառուղիներ կ'երեւցունեն մեր աչաց, որոց վերջին ծառին քով եթէ մարդ մը դտնուի, առաջին ծառին մեծութեան հետ անգամ բաղդատելով՝ խիստ բարձր հսկայ մը կերեւի:

Նոյնպէս մի եւ նոյն օրէնքով պատկերահանք առարկայներուն այնպիսի ձեւ մը կուտան՝ որ նոյն պատկերով ուրիշ պատկեր կը ցուցնեն մեր աչաց: Գարձեալ սենեակի մը յատակը փոխանակ քառակուսի երեւցունելով՝ շեղանկիւն կ'երեւցունեն, պատճառն որ իրապէս քառակուսի ձեւերը հեռուանց մեր աչքին այս ձեւով, այն է շեղանկիւն կերեւին:

Այս քառակուսիներն այնպէս ուղիղ գրծուած կը տեսնենք՝ որ չենք կարծեր բնաւ թէ ասոնք այնչափ անձուկ եւ շեղ դարձուածք մ'ունենան. այս աստիճան դորաւոր է այն սովորութիւնը՝ որով մեր միտքը չափակցութեանց ճշդութեան վրայ իր դատումները կը կատարէ եւ շարունակ մի եւ նոյն օրինօք. հերիք է որ արուեստը երեւութից մէջ փոփոխութիւն մը չը մտցունէ:

Երբ իմաստասիրութեամբ հեռանկարի այս խաբէութիւնները կ'իմանանք, կըսենք՝ թէ դատումը զգայարանքնիս կուղղէ. փոխանակ ըսելու թէ դատումը ինքզինք կուղղէ, այսինքն՝

թէ ըստ երեւութիւն կատարուած դատում մը ճանօթ ճշմարտութեան մը վրայ հիմնուած դատողութեան, եւ ըստ սովորութեան եղած դատում մ'ալ խորհրդածութենէ յառաջ եկած դատման ձեռօք հ'ուղղուն :

Ահաւասիկ բացատրեցինք թէ իմաստաբարական իրողութիւնք զգացողութեան իրաց հետ չը շփոթելու համար ինչ ընել պէտք է : Բայց որովհետեւ աւելի երկիւղալի բանը երեւակայութիւնն իմացականութեան հետ շփոթելն է, պէտք է որ ասոնց երկուքին յատկութիւններն ալ ցննենք :

Ասիկայ շատ դիւրին է, բաւական է 'որ վերը զուրցուածներուն վրայ քիչ մը խորհրդածութիւն ընենք :

Առաջ ըսենք թէ իմացականութիւնն իրաց բնութիւնը կը ճանչնայ, զոր երեւակայութիւնը չը կրնար : Զոր օրինակ, եռանկիւնը երեւակայելու եւ դիտնալու մէջ յանհունս ֆտարբութիւն կայ : Եռանկիւնը երեւակայելն՝ այս ինչ այն ինչ որոշ ձեւերուն մէջէն ձեւ մը եւ իւր կողմերուն եւ անկիւններուն մեծութիւնը փոքր 'ի շատէ առջեւը բերել է . իսկ դիտնալն է անոր բնութիւնը ճանչնալ եւ առանց մեծութիւն կամ չափ որոշելու ըմբռնել թէ երեք կողմով ձեւ մ'է : Արդ, երբ եռանկեան մը համար դիտեմ կըսեմ, անոր վրայ ունեցած դադախարս ամէն տեսակ եռանկեանց կը պատշաճի, այսինքն թէ հաւասարակողմ, թէ հաւասարանկիւն եւ թէ ուրիշ կերպ, ինչ կերպ եւ մեծութեամբ ալ ըլլայ . մինչդեռ երեւակայած եռանկիւնս որոշ չափ մ'ունի եւ այս ինչ տես-

սակին կը պատշաճի :

Մի եւ նոյն դատաստանը պէտք է կատարել երեւակայած եւ իմացած բաներնուս վրայ ալ, ինչպէս մարդ մը երեւակայելը մեծ կամ փոքր հասակաւ, սպիտակ կամ թուխ գունով, կամ առողջ եւ կամ հիւանդ վիճակի մէջ մարդ մը միտք բերելն է . բայց իմանալը՝ դիտնալն է : միայն թէ բանական կենդանի մ'է 'ի բաց առեալ իւր մասնաւոր յատկանիչները :

Երեւակայելու եւ իմանալոյ մէջ ուրիշ տարբերութիւն մ'ալ կայ . իմանալը աւելի հեռուն կ'երթայ քան երեւակայելը . որովհետեւ միայն զգալի կամ մարմնաւոր բաները կրնանք երեւակայել . իսկ մարմնաւոր եւ անմարմին բաները, թէ զգալի եւ թէ անզգալի, ինչպէս Աստուած եւ հոգի, կրնանք իմանալ :

Ուստի կը մոլորին անոնք՝ որ զԱստուած եւ հոգի երեւակայել կ'ուզեն, որովհետեւ երեւակայել կարելի չեղած բան երեւակայել կ'ուզեն . այսինքն այնպիսի բաներ՝ որ ոչ մարմին ունին, ոչ ձեւ եւ ոչ, վերջապէս, ուրիշ որ եւ իցէ զգալի յատկութիւն մը : Այսպէս են նաեւ բարութեան, ճշմարտութեան, արդարութեան, սրբութեան եւ ասոնց նման բաներու դադախարսները՝ որոց մէջ նիւթական բան մը չը մտնէր, եւ մի միայն անմարմին կամ հոգեւոր իրաց կը պատշաճին, ինչպէս են Աստուած եւ հոգի, որոնք կարելի չէ երեւակայել, այլ միայն կ'իմանանք :

Եւ որովհետեւ ամէն անմարմին էակաց վերայ իմացականութիւն ըսուած գործողութեամբ միայն կրնամք դադախարս ունենալ, ուրեմն կը

հետեւի թէ իմացականութիւնը երեւակայութեանէ աւելի հեռի կ'երթայ :

Երեւակայութեան եւ իմացականութեան մէջ եղած բոլոր տարբերութիւնն ըսած սահմաններնուս մէջ է, այսինքն թէ՛ իմանալը ճշմարտորն ու սուտը ճանչնալ եւ զանոնք իրարմէ որոշել է. իսկ երեւակայութիւնը՝ որ զգայարաններէ կախումն ունի, այս յատկութիւնը չը կրնար ունենալ :

Երեւակայութիւն եւ իմացականութիւն իբրարմէ շատ տարբեր են, սակայն իրար խառնուած են : Իմացականութիւնը բոլորակին կամ եռանկեան սահման չը կրնար տալ՝ մինչեւ որ երեւակայութիւնը ձեւը առջեւ չը բերէ : Բոլորովին հոգեւոր կամ աննիւթ իրաց գաղափարին մէջ ալ զգալի պատկերներ կը մտնեն, որք իբրեւ մեր նպատակին անպէտ իրեր՝ որչափ մը քերէնէս մերժել ուղենք, դարձեալ նոյն առարկայէն անբաժան կը մնան :

Շատ անգամ ալ այնպիսի այլանդակ եւ ցընորական բաներ կերեւակայենք՝ զորս կարելի չէր կազմել, թէ որ իմացումը չօգնէր : Յուշկապարիկ, եղջերուաքաղ եւ ուրիշ ասոնց նման մտացածին ցնորքներ՝ զորս ուղենք կը բաղադրենք ուղենք կը բաժնենք, անոնց տարբեր մասանց իրարու հետ ունեցած համեմատութեանց վրայ խորհելով կընենք : Արդ կը տեսնեմք որ այս գործողութիւնը իմացման յատուկ է : Բայց սա սրչափ այս այլանդակ խառնուրդները կամ ցնորքները երեւակայութեան ընել կուտայ, սակայն գիտէ՝ թէ իրական գոյութիւն չունին՝ այլ մտացածին բաներ են :

Երեւակայութիւնը՝ եթէ պէտք եղած կերպով գործածուի իմացականութեան կ'օգնէ . ընդ հակառակն՝ եթէ չարաչար գործածուի՝ մեծամեծ վնասուց պատճառ կ'ըլլայ :

Երեւակայութիւնը լաւ գործածելը բանի մը վրայ ուշադրութիւննիս արթնցնելու համար միայն գործածելն է. զոր օրինակ, երբ բոլորակը կամ քառակուսոյ բնութիւնը փնտռած, եւ երկուքին իրարու հետ ունեցած չափակցութիւնը կամ համեմատութիւնն իմանալու համար, մի մի ձեւ մտաց մէջ նկարեմ, միտքս կ'ամփոփի եւ ուշադրութիւնս ներկայացեալ առարկային վրայ կեդրոնացնելը կը գիւրանայ :

Իսկ երեւակայութիւննիս չարաչար գործածած կըլլամք երբ վճռելը իրեն յանձնենք . ինչպէս կընեն, ընդհանրապէս, այն մարդիկ՝ որք զգալի եւ նիւթական բաներէ զատ ուրիշ ճըլմարտութեանց հաւատալ չեն ուղեր : Չարաչար կը մոլորի սի որ երեւակայութիւն եւ զգայարանք իմացման հետ չփոթէ :

Ի փորձոյ իսկ յայտնի է՝ որ տաք եւ գրգռուած երեւակայութիւնը խելքի եւ դատման վրայ կը յարձակի խեղդելու :

Ուրեմն երեւակայութիւնն եւ զգալի պատկերները միայն առարկայից վրայ ուշադրութիւն արթնցնելու համար պէտք է գործածել, պայմանաւ՝ որ միշտ բանականութիւնը գահեքէց բազմի :

Ս, յս կերպով կ'որոշուին իրարմէ երեւակայական մարդն եւ մտաւորը : Բայց նախ եւ յատուկ հարկ է բացատրել թէ ինչ կը նշանակէ բուն միտք բառը :

Միտք բառին նշանակութեան ներքեւ կիյնայ թէ երեւակայութիւնն եւ թէ իմացումն . ըսել է այն ամէն բան՝ որ մեր ներսը կը դործէ : Ուստի՛կերբ ըսեմ մտքիս մէջ բոլորակ կամ եռանկիւն կը նկարեմ, Գրք բառը հոս երեւակայութիւն նշանակած է :

Սակայն սովորաբար միտք ըսելով՝ իմացումը պէտք է հասկնալ . ուրեմն միտք եւ իմացումն գրեթէ մէկ են . թէպէտ եւ Խնայածն բառը աւելի ուղիւզ դատումն կը նշանակէ :

Արդ այս ենթադրութիւններէն կը տեսնուի՝ թէ ինչպէս երեւակայական եւ մտաւորական մարդիկ իրարմէ կը տարբերին : Երեւակայականները զգայարանաց դպած իրերը զգալի եղանակաւ իրենց աչքին առջեւ կը ներկայացնեն եւ մտաց մէջ կը պահեն . իսկ մտաւորականք ճշմարտութիւնը ստութենէ կ'որոշեն եւ վրայնին դատաստան կընեն :

Մարդոց այս կրկին յատկութիւնները խօսից եւ գործոց մէջ շատ յայտնի կը տեսնուին :

Երեւակայական մարդիկ՝ յաջողակ են նրկարագրութեանց , նկարչութեան , նմանողութեան եւ զգայարանաց ձեռօք կատարուած շատ մ' իրողութեանց մէջ : Իսկ ուղիւզ միտքը կամ ճշգրիտ եւ իրաւացի ընտրողութիւնը զօրաւոր իմաստասիրութիւն կամ դատումն կերեցունէ ոմանց վրայ , եւ վայելուչ , մեկին ու ճիշդ խօսքեր խօսել կուտայ :

Երեւակայականք կրքոտ, եռանդուն եւ կատաղի մարդիկ կըլլան . որովհետեւ երեւակայութիւնը՝ որ զօրանալով իրենց վրայ կը տիրէ՝ բնականաբար նոցա կ'ըրթը կը դրդուէ եւ կ'ար-

ձարծէ : Իսկ մտաւոր մարդիկ կանոնաւոր եւ բարեխառն կ'ըլլան , վասն զի տրամադրութիւն ունին բանականութեան ձայնին աւելի լսելու եւ անսալու :

Բոլորովին երեւակայական մարդը շատ հընարագէտ կ'ըլլայ , քանզի սուր եւ աշխոյժ յիշողութիւնն ու բուն կիրքն անոր հոգւոյն վրայ մեծամեծ շարժումն քններ կը կատարեն . Իսկ մտաւորական մարդն ընկելքը կ'որոշէ եւ գործոցը մէջ միշտ կարգ մը եւ հետեւութիւն կը պահէ : Մէկը սովորաբար իւր նպատակին հասնելու համար շատ միջոցներ կը գտնէ եւ կը հնարէ , իսկ միւսը գտած միջոցներուն վրայ գեղեցիկ ընտրութիւն կ'ընէ եւ աւելի կանգուն կը մնայ :

Թէպէտ ըսուեցաւ որ երեւակայութիւնը իմացականութեան կ'օգնէ , բայց մարդ մը հանձարեղ ըլլալու համար՝ երկուքն ալ ունենալու է : Սակայն այս դէպքին մէջն ալ պէտք է որ իմացականութիւն կամ բանը յաղթող եւ մեծարոյ լինի :

Երեւակայական եւ իմացական մարդիկ իրարմէ տարբեր ստորոգելնէս չընտեւիր՝ թէ երեւակայականք բնաւ մտաւոր չեն ըլլար , մըտաւորք ալ բնաւ երեւակայութիւն չեն ունենար :

Այս կարողութիւնները միշտ իրարմէ անբաժանելի են . սակայն երկու կարողութեանց որն որ աւելի ըլլայ մարդու մը վրայ՝ աւելի այն կարողութեան յատկութիւններովը կը ճանչցուի :

Քիչ մ'ալ սուր յիշողութեան տէր , մարդոց

վրայ խօսինք, որ մտաւոր ու երեւակայական մարդոց մէջ ուրիշ երրորդ մարդիկն են: Աւշ կամ յիշողութիւն թէ եւ բանի կամ իմացականութեան շատ կը նպաստէ, բայց երեւակայութեան կը վերաբերի. թէպէտ եւ սովորաբար աշխոյժ երեւակայութեան տէր է կըսեմք այն մարդուն համար՝ որ հնարադէտ է, եւ լաւ յիշողութիւն ունի կըսենք անոր՝ որ ուրիշներուն հնարած բաները լաւ միտք պահել դիտէ:

Իմացականութիւնը երեւակայութենէ եւ զգայարանքներէ զանազանելէս յետոյ՝ կը մնայ աշխոյժ քննել ու իմանալ՝ թէ ինչ եւ որո՞նք են իմացականութեան յատուկ եղած գործողութիւնները:

Այլ է առաջին անգամ ճշմարտութիւն մը ձեռք բերել, եւ այլ է առաջուց ճանչցուածը վերջէն միտք բերել: Ճշմարտութիւն մը երբ առաջին անգամն է՝ որ կ'իմանանք, կըսուի պարզապէս իմանալ, ըմբռնել, հասկնալ: Իսկ վերջը միտք բերելը կըսուի յիշել:

Երեւակայական կոչուած յիշողութիւնը՝ որ զգալի իրերն եւ զգացողութիւնները միայն միտք կը բերէ՝ բոլորովին տարբեր է իմացողական յիշողութենէն՝ որով բանի եւ իմացականութեան վերաբերեալ բաներն ու ճշմարտութիւնները կը յիշատակինք:

Այսպէս հոգին երկու կերպ գլխաւոր բաժանումն ունի իւր խորհրդոց, որոց ոմանք ուղղակի առարկայից վրայ, ոմանք ալ իւր եւ իւրեան բուն գործոց վրայ կըլլան խորհրդածութեան ձեռք:

Այս բացատրութիւնը մարմիններէն առնու-

ած է, որք երբ իրենց շարժման ընդդիմակաց ուրիշ մարմիններէ յետս մղուին, կ'սկսին ինքն իրենց վրայ դառնալ:

Խորհրդածութեան ձեռք միտքը դատաստան կընէ առարկայից, անոնցմէ եկած զգացմանց, եւ վերջապէս իւր եւ իրեն ըրած եւ որոշած դատմանց վրայ: Աւստի կան խորհրդածութիւններ՝ որք սոսկ առարկայից եւ անոնցմէ յառաջ եկած զգացմանց վրայ կը կատարուին, կան ալ՝ որ նոյն իսկ իմացականութեան յատուկ գործոց վրայ կըլլան. ասոնք աւելի ապահով եւ լաւագոյն են:

Սակայն այս նիւթին մէջ եթէ չգլխաւոր ուշադրութեան արժանի բան մը կայ՝ մտքին երեք գործողութիւններն են:

Նախագասութեան մէջ ուրիշ բան է՝ զինքը կազմող եզրերը դիտնալ, եւ ուրիշ է իրար բերել կամ անջատելը. օրինակի համար ստերկու նախագասութեանց մէջ. Աստուծոյ յաւիտենական է. Տարբա յաւիտենական չէ. այլ է Աստուծոյ, Տարբա եւ յաւիտենական եզրերը զատ զատ իմանալ, եւ այլ է ասոնք միացունել եւ ըսել, Աստուծոյ յաւիտենական է. կամ բաժնել ու ըսել Տարբա յաւիտենական չէ:

Եզրերը դիտնալ, օրինակի համար թէ Աստուծոյ բառը առաջին պատճառ, Տարբա բանական կենդանի, յաւիտենական բառն ալ ըսկիզբն ու վախճան չունեցող նշանակելը գիտնալն ըմբռնումն է կամ պարզ հասկացողութիւն. ասիկա մեր հոգւոյն կամ մտքին առաջին գործն է:

Արնայ ըլլալ՝ որ այս գործը բնաւ մինակ

չըլլար . եւ այս պատճառաւ ոմանք ըսեն թէ ասանկ գործողութիւն չըկայ . սակայն լաւ ու շաղրութիւն ըրած չեն՝ թէ եզրերը հասկնալը գործողութիւն մ'է , որ միշտ յառաջ է քան զանոնք իրար բերելը . թէ չէ՝ չը կրնար գիտցուիլ՝ թէ եզրերը մէկտեղ բերել կըլլայ :

Եզրերը միացունել կամ բաժանելը՝ մէկը հաստատել եւ միւսը ժխտել է : Երբոր ըսենք . Աստուած յաւիտեան է . ճարտար յաւիտեան է չէ . առաջինն մէջ եզրերաց միացումը հաստատեցինք , երկրորդին մէջ ժխտեցինք : Նախագասութիւն կամ դատումն կոչուածն այս է . որով բան մը կը հաստատեմք կամ կը ժխտեմք . ասիկա միայն մտաց գործն է :

Ասոր տակ կերթայ նաեւ իրի մը պայծառութիւնը կամ ճշգրութիւնը յայտնի չը տեսնուած ժամանակ դատումն առ կախ թողուլը . այս ալ տարակուսիլ կամ երկբայիլ ըսուածն է :

Ծանօթ կամ որոշ բանի մը ձեռք բերելու կը ջանամք , այս ալ իմաստասիրելն է , որ մտաց երրորդ գործողութիւնն է :

Իմաստասիրելն է բան մ' ուրիշ բանի միջոցաւ ապացուցանել , ինչպէս Նւկղիդէսի առածը մէկ ուրիշ առածով մ'ապացուցանել . կամ ըսել թէ Աստուած մեզքը կատէ , եւ ապացոյց տալ թէ վասն զի սուրբ է . կամ անխախտ է իւր խորհրդոց մէջ ըսել՝ ու ապացոյց տալ՝ թէ վասն զի յամենայնի անշարժ եւ յաւիտեանական է :

Խօսքի մէջ , լեան ղէ , ղէ , որովհետեւ , որեւն եւ ուրիշ պատճառական կոչուած բառեր իմաս-

տասիրութեան նշանն են : Սեկայն իմաստասիրութեան բնական շէնքը եւ ուժն երեւան բերելու կերպն է երեք նախադասութիւններ այնպէս դասաւորել՝ որ վերջինը կամ երրորդը առջի երկուքէն հետեւին . օրինակի համար . Աստուծոյ վրայ վերն ըսած երկու նախադասութիւննիս իրենց ըսեն ձեւին բերելու համար այսպէս պէտք է շարել .

Այն՝ որ սուրբ է՝ մեղք է՝ արեւ .
Աստուած սուրբ է .
Ուրեմն Աստուած մեղք է՝ արեւ :

Գարձեալ .

Նա՞ որ ըստ էութեան անգոգոնի եւ յաւիտեան է ,
բնաւ իւր խորհուրդը չը գոգեր .
Աստուած ըստ էութեան անգոգոնի եւ յաւիտեան է .
Ապա որեւն Աստուած բնաւ իւր խորհուրդը չը գոգեր :

Յայտնի է իմանալը՝ թէ երբ առջի նախադրեալները կամ նախադասութիւնները՝ որք մեծագոյն եւ փոքրագոյն կըսուի՝ ճշմարիտ ըլլան , երրորդ եզրն ալ որ է զբաւարարութեան կամ հետեւութիւն կը կոչուին՝ ճշմարիտ կըլլայ :

Սակայն միշտ նախադասութիւն մը կամ դատում մը այս կերպ չենք շիներ :

Որովհետեւ , մէկ մ'որ ասանկով խօսքը կ'երկարի , եւ մէկ մ'ալ որ առանց ասոր կրնայ իմաստասիրութիւն մը խիստ զեղեցիկ կերպով հասկցուիլ : Արեւնք , օրինակի համար , քիչ բառերով . Աստուած որ քար է՝ պէտք է որ ճարտար

Քարէ քնէ . եւ առանց դժուարութեան կիմանաւ թէ վասն զի Աստուած իւր բնութեամբը քարի է, վասն որոյ կը հաւատամք թէ մարդկային բնութեան ալ կը բարերարէ :

Գատու մը կրնայ ըլլալ կամ հաւանական եւ կարծիքական , եւ կամ ստոյգ եւ ապացուցական : Առաջին կերպը՝ այն է հաւանական դատումը տարակուսական կամ մասնաւոր եւ գիպուածոյ բաներու մէջ տեղի կ'ունենայ . իսկ երկրորդը՝ այս է ստոյգ դատումը՝ ճշմարիտ , տիեզերական եւ հարկաւոր իրաց մէջ : Զոր օրինակ երբ ձեռնարկեմ ապացուցանել . կեսար իւր հայրենեաց թշնամի էր , նպատակն էր շարունակ իւր հայրենեաց ազատութիւնն ընկճել , ինչպէս որ յետոյ յաջողեցաւ ալ . եւ թէ Բրուտոս՝ որ զկեսար խողխողեց , զիտաւորութիւնը միայն օրինաւոր հասարակապետութիւն մը կազմել էր . այս դատումները տարակուսական , մասնաւոր եւ գիպուածոյ իրաց վրայ են , ուստի եւ կը կոչուին հաւանական : Իսկ ընդ հակառակն երբ ըսեմ . մէկ գագաթի եւ կողերո՝ զրայ մոցեալ անկէններն իրարո՝ հասար են . եւ թէ ափն պեակ եւանկեան երեք անկէններն երկուսն զնրանց հասար են . այս դատումները ճշմարիտ , ընդհանուր եւ հարկաւոր են , եւ կըսուին ապացուցական :

Ապացուցութեան արդիւնք է գիտութիւնը : Ամէն ապացուցեալ իր ապացուցուած կերպին ներհակն ըլլալ անհնար է . ասոր համար է՝ որ ամէն ապացուցեալ ճշմարտութիւն՝ հարկաւոր , յաւիտենական եւ անխորիս է , որովհետեւ մարդկային խելքը յաւիտենականութեան

որ կէտին մէջ ալ ըլլայ , պիտի կրնայ այս ճշմարտութիւնն իմանալ : Այսին զի ենթադրեալ իմացականութիւնը ճշմարտութիւնը չստեղծեր , այլ կը ճանչնայ միայն . կը հետեւի ուրեմն թէ այս ճշմարտութիւնը յաւիտենական է եւ հետեւաբար անկախ ամէն ստեղծական իմացականութենէ :

Ուշադրութեան արժանի է՝ թէ կան նախադասութիւններ՝ որք ինքրենցմով յայտնի են եւ ապացուցի կարօտ չեն . ինչպէս են , Ուսողութեան մէջ . Բուրբ էր մասն մէջ է . Երկու զոգահեւան գծեր որչափ ալ որ երկարն , իրարո՝ չեն հանդիպէր բնա . Ափն կէտերէ կրնայ որեւէ մընչ կէտ գծի + աշտիլ . եւ Բարոյականի մէջ՝ թէ Պեթ + Բանահանութեան անաւ . եւ դարձեալ թէ Կարգը խառնակութենէ կամ անկարգութենէ աւելի է . եւ ուրիշ ստոյգ նման շատ մը ճշմարտութիւններ :

Այս տեսակ նախադասութիւններն ինքնին յայտնի են . վասն զի ոչ ոք կրնայ այս ճշմարտութիւնները քննելէ եւ իրենց պայմանները կամ յատկութիւններն իմանալէն յետոյ՝ չհաւատալ կամ հակառակիլ :

Այսպիսի ճշմարտութեանց համար բնաւ ապացոյց չըլինաւոր . սակայն խաւարի մէջ մընացած մարդոց կամ տղիտաց հասկցնելու համար ապացոյցներ կը գործածենք . օրինակի համար , կարգաւորութենը անկարգութենէ լաւագոյն է առածէն կ'եղրակացունեմ՝ թէ մարդու համար օրինաց համեմատ վարուելէ աւելի դեղեցիկ բան չկրնար ըլլալ . եւ ընդ հակառակն , անիշխանութենէ աւելի սոսկալի չար չըկրնար ըլլալ :

Այս ինքնադիմաբար հասկանալի նախա-
դասութիւններն՝ որ ընդհանրապէս ճշմարտու-
թիւն ապացուցանելու համար կը դործածուին,
կ'ըսուին առաջ կամ առջին սկզբունք: Առաջ-
ները յաւիտենական ճշմարտութիւններ են. ու-
րովհետեւ, ինչպէս ըսինք, ամեն ստոյգ եւ ընդ-
հանրական ճշմարտութիւն յաւիտենական է. եւ
եթէ ապացուցեալ ճշմարտութիւնք այսպէս են,
որչափ եւս առաւել անոնք՝ որք ապացուցու-
թեանց բուն հիմունքն են:

Ահաւասիկ ասոնք են մեր մտաց երբեակ
գործողութիւնները: Առաջինը կամ ըմբռնումը
բնաւ բանի մը վրայ դատումն չըներ, այնչափ
ճշմարիտը սուտէն զատելու գործ չըներ՝ որչափ
գաղափարներն իրարմէ զատելով զանազանելու
չաւիղ կը բանայ: Երկրորդը կամ դատումն՝ ճըշ-
մարիտն իբրեւ ճշմարիտ եւ սուտն իբր սուտ կ'ըն-
դունի, եւ երբէք վիճաբանութեան պէտք չու-
նի: Առարկայն պայծառ կամ յայտնի չտեսած
ատենը վրան կը տարակուսի. իսկ քննութիւնը
բանի կամ իմաստասիրութեան կը յանձնէ, որուն
միայն յատուկ է ճշմարիտը սուտէն որոշել:

Տարակոյսն ալ երկու կերպ է: Մէկ մը չը
քննած բաներնուս վրայ կը տարակուսինք, մէկ
մ' ալ խիստ շատ անգամ քննած՝ բայց չը ճըշ-
դամներնուս վրայ կը տարակուսինք: Առաջին
կերպը լուկ տարակոյսն է. երկրորդը քննեալ
կամ վրան աշխատուած տարակոյսը՝ որ յարգի
է, որովհետեւ իրն ըստ ամենայն կողմանց քնն-
ներնէս եւ պատճառները ճանչնալնէս վերջն է՝
որ կը վճռենք՝ թէ տարակուսական է:

Երբ իմաստասիրութիւն ըսուած գործողու-

թեան միջոցաւ բան մը իւր պատճառներովը
կը սովորիմք, եւ դիւրաւ կը յիշենք, կըսուի Բե-
պիւն, ասոր հակառակն ալ տգիտութիւն:

Տգիտութիւն եւ մոլորութիւն իրարմէ տար-
բեր բաներ են. մոլորութիւնն է գոյութիւն
չունեցող բանի մը հաւատալ. իսկ տգիտութիւ-
նըն է պարզապէս բան չը գիտնալ:

Երբ գիտութիւն չունեցած բաներնուս մէջ
ուրիշին վկայութեան կը հաւատամք՝ կըսուի
հաւատք. երբ սր եւ է բանի մը թէ չը քննած
եւ թէ քննելնէս վերջն ալ չեմք կրնար որոշ
վճիռ մը տալ՝ այս ալ կըսուի տարակոյս. իսկ
երբ մեր տարակոյսներուն աւելի մէկ կողմին
քան միւսին կը հակինք՝ կարծիք կըսուի, Երբոր
ուրիշի վկայութեամբ բանի մը կը հաւատամք՝
եթէ վկայութիւնը Աստուծմէ եկած է, կըսուի
աստուածային հաւատք: Աստուածային հաւատքը
բնաւ մոլորութեան ենթակայ չէ, որովհետեւ
հիմն Աստուծոյ խօսքն է՝ որ ոչ կրնայ խաբել
եւ ոչ ալ կրնայ խաբուիլ:

Կան մի քանի պարագայներ՝ յորս մարդկա-
յին հաւատքն ալ աներկբայելի է. երբ մարդոց-
մէ մեզ հասած բաներուն վրայ բոլոր մարդկա-
յին ազգը կը միաբանի առանց հակառակելու.
գոր օրինակ Բեբիւ անունով քաղաք, Եփրատ
անուն գետ, Ափլուս անունով լեռն եւ այլն կենա-
լը. կամ երբ բոլորովին վստահ եմք թէ մար-
դիկ մեզ պատմած բաներնուն մէջ չահու ակնկա-
լութիւն եւ կամ զմեզ խաբելու սր եւ է պատ-
ճառ մը չունին, ինչպէս, օրինակի համար,
Առաքեալներն՝ որք երբ յարուցեալ Յիսուսի մը
համար տուած վկայութեան պատճառաւ չար-

չարանքներ կը քաշէին , ճշմարտութեան սիրով միայն կարելի է կենօք չափ մի եւ նոյն վկայութեան վրայ հաստատուն մնալ :

Մարդկային վկայութեամբ հաստատուած ամէն բան կրնամք իբրեւ հաւանական ենթադրել եւ ոչ երբէք իբրեւ ստոյգ :

Նոյ բանն է՝ որ եւ է բանի մը հաւատարնիս մի միայն հաւանական եւ ոչ թէ բոլորովին ստոյգ պատճառներով . որովհետեւ այսպիսի պարագայից մէջ նոյն առարկաներուն վրայ գիտութիւն չունինք , այլ կարծիք միայն , որ թէ եւ ինչպէս ըսինք , այս կամ այն կողմն աւելի կը հակի , սակայն չը համարձակիր հաստատուն վճիռ մը տալու , եւ կամ առանց երկիւղի տար

Այսչափը բաւական է հասկցնելու թէ գիտութիւն , տգիտութիւն , մոլորութիւն , աստուածային եւ մարդկային հաւատք , եւ վերջապէս կարծիք եւ տարակոյս ըստածններն ինչ են :

Ամէն գիտութիւն փիլիսոփայութեան մէջ կը բովանդակի : Այս բառը կը նշանակէ «էբ ճաստութեան» զոր մարդ իւր միտքը գիտութեամբ մշակելով միայն կրնայ ստանալ : Գիտութեանց մէջ ոմանց առարկայն է սոսկ ճշմարտութեան հայեցողութիւնը . եւ այս տեսակ գիտութիւնները կըսուին փեական . ոմանք ալ գործողութեանց կ'ըբաղին . ասոնք ալ գործնական կըսուին :

Տեսական գիտութիւնք են . բնազանցութիւն , որ խիստ տիեզերական եւ բոլորովին աննիւթեղէն իրաց վրայ կը ճառէ , ինչպէս ընդհանրապէս էակը կամ գոյացութիւնը , եւ 'ի մասնաւորի Աստուած եւ իւր պատկերին համե-

մատ ստեղծուած իմացական էակները կամ հոգիները . բնագիտութիւն , որ բնութեան վրայ կը խօսի . երկրաչափութիւն , որ մեծութեանց չափակցութիւններն ու էութիւնը կ'ապացուցանէ , ինչպէս որ համարողութիւնն ալ թուոց չափն ու էութիւնը կը ցուցնէ . աստեղագիտութիւն , որ աստեղաց ընթացքն եւ անով աշխարհի տիեզերական օրէնքը , այն է իւր գլխաւոր մասանց կարգաւորութիւնը կ'ուսուցանէ . ասոնք բնագիտութեան ալ կրնանք տալ :

Գործնական գիտութիւններն են արամբանութիւն եւ բարոյական , որոց մին ուղիղ խորհել եւ միւսն բարեոք կամ ուղիղ կամուկ կը սովորեցունէ :

Գիտութիւններէ յառաջ կուգան արուեստք , որք աշխարհի վայելչութիւնն եւ մարդկային կենաց ալ մեծ դիւրութիւն կուտան :

Արուեստներուն 'ի գիտութեանց տարբերութիւնն յայնմ է՝ որ նախ արուեստք զգալի բան մը կը ցուցնեն . իսկ գիտութիւնք սոսկ իմացական գործողութիւնները կը կրթեն եւ կը կանոնաւորեն . երկրորդ՝ որ արուեստներն գիպուածոյ բաներու միայն կ'ըբաղին : Ճարտարախօսութիւնն առաջակայ կրից եւ գործոց վերայ կ'ըբաղի . քերականութիւնը՝ լեզուաց ուղւոյն եւ փոփոխական գործողութեանց . ճարտարապետութիւն՝ զանազան գրից վրայ . բայց , ինչպէս կանխաւ զուրցեցինք , գիտութեանց առարկայն յաւիտենական է եւ անփոփոխ :

Ոմանք արամբանութիւն եւ բարոյական արուեստից կարգը կը դնեն , առարկային գործնական ըլլալուն համար . սակայն ընդ հակա-

աւին ասոնց գործը լով իմացական է, որ արուեստէն գերազանց է. զի կուսուցանէ թէ ինչ կերպով իմաստասիրութիւն կամ դատունիս եւ կամեցողութիւն ուղիղ են. որ անփոփոխ է եւ գեր ՚ի վերոյ քան զընտելութիւն սովորաբար փոփոխելի իրաց :

Սակայն արուեստ բառն իրրեւ հնարագիտութիւն կամ մեթոտ ենթադրելով՝ կրնամք ըսել եւ ճշմարիտ է՝ թէ տրամաբանութեան եւ բարոյականի մէջ գործածուած հնարքները կամ ձեւերն առանց արուեստի չեն ըլլար, որ ուղիղ գատել եւ բարեք կեալ կը սովորեցունէ մեզ, թէ եւ գործնականին մէջ այնպիսի կանոններ կրնան դանուել՝ որոյ երեւոյթը կրնայ փոփոխուիլ :

Արուեստից դիւսաւորներն են քերականութիւն՝ որ ուղիղ խօսել կուսուցանէ. ճարտարաւստութիւն՝ որ անուշ խօսել կուտայ. վիպասանութիւն կամ բանաստեղծութիւն՝ որոյ միջոցաւ կարծես թէ մարդ յաստուածուստ եւ ներշնչմամբ կը խօսի. երաժշտութիւն՝ որ աստիճանայ ճշդութեամբ այնպիսի գաղանի զօրութիւն մը կուտայ ձայնի՝ որով զուրիշները կը զուարճացունէ եւ կը շարժէ : Բժշկականութիւն եւ իրեն յարակիցներն՝ որք մարդուս մարմինը լաւ կամ առողջ վիճակի մէջ կը բընեն. գործնական թուաբանութիւն՝ որ ճշդիւ եւ դիւրութեամբ հաշուել կը սովորեցունէ. ճարտարապետութիւն՝ որ հասարակաց եւ մասնաւոր շինուածներու գեղեցկութիւն եւ համեմատութիւն կուտայ եւ քաղաքներ կը զարդարէ, արքունի պալատներ եւ աստուածային տաճար-

ներ կը կառուցանէ. մեքենագիտութիւն՝ որ դանազան հնարքներու միջոցաւ ծանր մարմինները դիւրութեամբ իրենց տեղերէն կը փոփոխէ. ինչպէս են քար՝ շէնքեր կանգնելու եւ ջուր՝ մարդկային կենաց հաճոյք եւ դիւրութիւն տալու համար. արձանագրութիւն եւ նրկարչութիւն՝ որք բնութիւնը նմանցունել կուզեն, բայց կը ճանչնան թէ շատ թերի են բընութեան հետ բաղդատելով իրենց գործերը. եւ ուրիշ ասոնց նման շատ մը արուեստներ :

Ասոնք ազատական արուեստք կըսուին, վասն զի ազատ մարդու արժանի կամ յատուկ են. եւ ասոնք տարբեր են այն արուեստներէն՝ որք կերպիւ իւրիք ծառայական են, եւ զորս մեր լեզուն ձեռարուեստք եւ մեքենական արուեստ կ'անուանէ. թէպէտ այս ալ ճշմարիտ է՝ թէ մեքենական բառը աւելի վսեմ իմաստ մը կը սարունակէ իւր մէջ՝ երբ կը բացատրէ այն գեղեցիկ արուեստը՝ որ զօրութեանց օրէնքն եւ մեքենայից յօրինուածութեան եղանակները կ'ուսուցանէ : Բայց ծառայական ձեռարուեստները մեքենայներու միայն կ'ըրազին, առանց անոնց զօրութեան եւ կազմութեան վրայ տեղեկութիւն ունենալու :

Արուեստները կանոնաւորութիւն մը կուտան ձեռարուեստից. ճարտարապետութիւնը՝ կը հրամայէ որմնաշէններու, հիւսանց եւ սոցին նմանեաց. ձի մարդելու արուեստը կանոն կուտայ անոնց՝ որք դանդանաւանդ, սլայտ, սանձ եւ ուրիշ ասոնց նման գործիներ կը շինեն :

Ազատական եւ մեքենական արուեստներն իրարմէ տարբեր. բաներ են, այսինքն թէ առա-

ջիններն աւելի մտօք՝ կ'աշխատուին քան ձեռօք • իսկ միւսներն՝ որք աւելի վարժութեամբ եւ սովորութեամբ կը յաջողին իրենց գործոց մէջ քան գիտութեամբ՝ ասոնց աշխատութիւնն ալ աւելի ձեռաց կը վերաբերի՝ քան թէ մըտքին :

Նկարչութիւնը՝ որ ուրիշ ազատական արուեստներէ աւելի ձեռաց աշխատութեան կը կարօտի՝ ազատականաց կարգը դասուելուն պատճառն այն է՝ որ պատկերը՝ որ դրեթէ նըկարչութեան հոգին է՝ մտաց ընտիր գործերէն մին կը կացուցանէ • մէկ ուրիշ պատճառն ալ այս է որ նկարիչը՝ ամէն բանի նմանութիւնը պատկերացնել ուղեւուն համար՝ հարկ է որ ամէն բանի վրայ ալ հմտութիւն ստացած ըլլայ • Սոյն բանը կըսեմ արձանագործութեան համար ալ՝ որ իւր բարձրութեան կամ մեծութեան կողմանէ նկարչութենէն առաւելութիւն մ'ունի • Ինչպէս նոյն առաւելութիւնն ունի նկարչութիւնն ալ գունոց մասին :

Գիտութիւնք եւ արուեստք անա կը ցուցնեն՝ թէ մարդիկ որչափ ճարտար եւ հնարագէտ են • Մարդ 'ի ձեռն գիտութեան Աստուծոյ գործոց խորը թափանցելով եւ 'ի ձեռն արուեստից Աստուծոյ գործերը կանոնաւորելով կը ցուցնէ ճշմարտիւ թէ Աստուծոյ պատկերին համեմատ ստեղծուած էակ է, եւ կրնայ Աստուծոյ խորհրդոց վրայ մտածել, թէ եւ ոչ կատարելապէս •

Ուրեմն մարդուս ամենէն մեծ պարտքն է իւր իմացումը մշակել՝ որով միայն կրնայ զինքն ստեղծող Աստուծոյ նմանիլ • Միտք կամ իմացումն մշակելը գեղեցիկ առածներ, ուղիղ

դատումներ եւ օղտակար ծանօթութիւններ ըստանալով կըլլայ :

Նմացման ճշմարիտ կատարելութիւնն է ուղիղ դատել :

Դատելն է իւր ներսէն բանի մը համար ճշմարիտ եւ կամ սուտ է ըսել կամ վճռել • իսկ ուղիղ դատելն է խելքով եւ գիտակցութեամբ բան մը վճռել :

Ուղիղ դատումն է հարկ եղած ատեն բանի մը վրայ տարակուսիչն ալ • որովհետեւ ստոյգն իբրեւ ստոյգ՝ տարակուսականն իբրեւ տարակուսական համարել ուղիղ դատում մը կատարել է :

Ուղիղ դատամբ կրնամք մոլորութիւններէ ազատ մնալ • վասն զի մոլորութենէ խուսափած կըլլամք ոչ միայն ճշմարտութիւն մը տեսած եւ ընդունած ատեննիս, այլ եւ ճշմարտութիւն չը գտնելով մերժած ժամանակնիս ալ :

Արդ՝ ուղիղ դատելու կանոնն է առարկայի մը վրայ այն ատեն միայն դատումն ընել՝ երբ անոր պայծառութիւնը կամ ճշմարտութիւնը յայտնապէս կը տեսնեմք • եւ ասոր միջոցն ալ ուրիշ բան չէ, եթէ ոչ երկար հետազոտութիւն ընելէ վերջը դատաստան ընել :

Ասարկայի մը վրայ գիտողութիւն եւ կամ հետազոտութիւն ըրած կըլլամք՝ երբոր մեր միտքը նոյն առարկային վրայ գարձունելով՝ անոր ամէն մէկ պատճառները, դժուարութիւններն ու արդելքները լաւ մը կը քննեմք ու կ'իմանամք :

Ուշադրութիւն ըսածնիս ասիկայ է, որով մարդ զգօն, իմաստուն, մեծամեծ գործոց եւ բարձր տեսութեանց բաւական կըլլայ :

Բանի մը ուշադիր ըլլալը՝ վրան ամէն կողմանէ նային է . ո՛վ որ հաճոյարար կողմէն նայի , սրչափ երկար ատեն ալ դիտէ՝ ճշմարտութեամբ ուշ չը դնէր :

Այլ է առարկայի մը կապուելն , եւ այլ է ուշադրութիւն ընելը : Առաջինը՝ խորհուրդ եւ բաղձանք առարկային վրայ կեդրոնացնելն է , որով մարդ առարկային հաճոյական կողմէն կը պաշարուի . իսկ երկրորդը՝ ուղիղ դատումն ընել եւ դիտուած առարկայն թէ հակառակ եւ թէ ուղիղ կողմերը ճանչնալու համար հետադասելով քննելն է :

Ճշմարտութիւնը յերեւան գալէն վերջն ալ տակաւին տեսակ մ' ուշադրութիւն կայ , որ է սիրել եւ դգուել , եւ ոչ թէ քննել եւ հետադասել :

Սխալ դատման պատճառն է լաւ դիտողութիւն կամ խորհրդածութիւն չընելը , որ ուրիշ կերպով գահալէժ գատումն կըսուի :

Գահալէժ գատումն է բանի մը հաւատալ եւ վրան գատումն ընել առանց լիով ճանչնալու , որ յառաջ կուգայ հպարտութենէ , անհամբերութենէ եւ կանխակալ կարծիքներէ :

Հպարտութիւնը կարծել կուտայ մեղ թէ ամենադժուարին բաներն անդամ առանց քննութեան եւ աշխատութեան գիտեմք : Ասանկով շուտ մը գատումն կընեմք , եւ զգայարանաց կը կապուինք , ետ դառնալ չենք ուղեր . զի կը վախնանք՝ որ մի՛ գուցէ խաբուած ըլլալնիս խոստովանելու համար նուաստանանք :

Անհամբերութիւնն երկար դիտողութիւններ ընել չը տար , եւ ճանճրանալով տեսած չը տեսած ամէն բան կը դատեմք :

Կանխակալ կարծիքն երկու կերպով մոլորութեան մէջ կը ձգէ . արտաքին եւ ներքին :

Արտաքին մոլորութիւնն է այլոց մեզի պատմածներուն անմիջապէս եւ դիւրաւ հաւատալ , առանց մտքերնէս անդամ անցունելու թէ կրնայ ըլլալ՝ որ կը խաբէ եւ կամ ինքն ալ խաբուած կ'ըլլայ ուրիշէ :

Ներքինն է առանց պատճառի աւելի այս քան թէ այն բանին հաւատալու հակիլ :

Մեր մտաց ամենէն մեծ խոտորմունքն է հաւատալ այնպիսի իրաց՝ որ իրական ճշմարտութիւն չեն , եւ մենք կուղենք որ այնպէս ըլլան :

Այս սխալման պատճառը կիրքն է : Միշտ ինչ բանի որ կը բաղձանք եւ կը յուսանք՝ անոր հաւատալու յօժարութիւն մը կը գաղմբ ներսերնիս , թէ ճշմարիտ ըլլան եւ թէ չըլլան :

Շատ անգամ չենք ուղեր հաւատալ թէ իրօք պիտի պատահի այն ինչ երկիւղալի բանը . երբեմն ալ տկարութեամբ շատ դիւրաւ կը հաւատամք՝ թէ պիտի պատահի :

Բարկացողն առանց քննել ուղելու կը կարծէ՝ թէ իւր բարկութեան պատճառները միշտ ստոյգ են . ասոր համար է՝ որ չը կրնար ուղիղ գատել :

Կրից ձեռօք եղած մոլորութիւնը շարունակ կը պատահի մարդկային կենաց ամէն վայրկեաններուն մէջ , թէ ամէն օր մեր աչքին առջեւ եղող առարկայից պատճառաւ , որք կրից մի քանին գրգռելու առիթ կըլլան , եւ թէ՛ նոյն իսկ անոր համար՝ որ խառնուածքնիս կամ բնութիւննիս սովորաբար այս կամ այն կրից կը կապուի , որոց վրայ եթէ ուշադրութիւն ընենք պիտի տես-

նենք՝ որ միշտ հետեւենիս են :

Եւ որովհետեւ շարունակ ջանքերնիս այն է՝ որ բանականութիւնը մեր բաղձանքին կողմը ծնենք, ուստի իրաւունք անուն կուտանք սովորաբար այն բանին՝ որ կը յարմարի մեր բնական խառնուածքին, այսինքն, այն ծածուկ կրքին՝ որ մեր բնութեան հիմը բռնած ըլլալուն համար՝ չենք զգար :

Ասոր համար ըսինք թէ կրքերու ամենէն մեծ դէշութիւնն այն է՝ որ լաւ խորհիլ եւ հետեւաբար ուղիղ դատել չեն թողուր : Ուղիղ դատումը միայն լաւ խորհրդածութեան արդիւնք է :

Բաւձներնէս յայտնի կը տեսնուի՝ թէ ծուլութիւնն ալ կամ քննութիւն ընելու չաշխատութենէն խորշիլն ալ ուղիղ դատման մեծ արդեւքներէն մին է :

Այս յանդանքն անհամբերութեանն է . վաստն զի ծուլութիւնը քիչ մտածելիքին ալ համբերութիւն չընելով՝ կ'աճապարէ հաւատալ՝ քան թէ քննել . որովհետեւ հաւատալը շուտով կը ըլլայ, իսկ քննելը՝ երկար ատեն աշխատելով :

Խրատները ծոյլին համար միշտ երկար կուգան . անոր համար ամէն բանէ ձեռնթափ կը ըլլայ, եւ կը սովորի հաւատալ այն մարդուն՝ որ գինքը տղայի կամ կուրի տեղ զննելով կ'առաջնորդէ իրեն :

Այս պատճառներով մտքերնիս անանկ անհնարին մոլորութեանց մէջ կ'իյնայ, որ չը գիտցածը գիտնալ կը կարծէ, եւ չարաչար դատածը ողջմտութեամբ քննած եւ դատած կը համա-

րի, ոչ թէ գիտնալ ու չը գիտնալ կամ խաբուել ու չը խաբուիլ մէկ բան չըլլալը չը գիտեր . ոչ, գիտէ թէ մէկ բան չեն, գիտէ նաեւ թէ ասոնց պէս իրարու ներհակ բան չըկայ . այլ անոր համար՝ որ առանց կարեւորութիւն տալու կուզէ հաւատալ՝ թէ գիտէ չը գիտցածը :

Տգիտութիւնն այն աստիճան շատ է՝ անանկ որ նոյն իսկ մեր տրամադրութեանց վերայ ալ տեղեկութիւն չենք ունենար . ո՞վ կուզէ հաւատալ իր համար՝ թէ հպարտ, տկար, ծոյլ կամ բարկացող է . ընդ հակառակն կը կարծէ՝ թէ ամէն գործերն օրինաւոր եւ արդար են . եւ թէ պէտ այնպիսուն գիտակցութիւնը շարունակ սխալն երեսին կը դարնէ, բայց կը սիրէ աւելի գիտակցութեան ձայնին ականջ չը տալ՝ քան սխալը ճանչնալով տրտմիլ :

Այն մոլութիւնն՝ որ չը թողուր յանցանքնիս ճանչնալ, կը սուի անձնասիրութիւն . եւ այս է շողոքորթ մարդոց երես տուող մոլութիւնը :

Ո՛ր եւ է բանի վրայ ուղիղ դատումն կատարելու, այն է ճշմարտութիւնը ձեռք բերելու խոչընդոտն եղող ամէն դժուարութեանց յաղթող բան մը կայ . այս է բորբոքեալ սէր ճշմարտութեան եւ անսահման փափաք գիտութեան :

Այս ամենէն յայտնի կ'երեւի՝ թէ սխալ դատումը գրեթէ միշտ 'ի մոլութենէ կամաց յառաջ կուգայ :

Իմացականութիւնն ըստ ինքեան բան մ'իմանալու համար տրուած է մեզ . երբոր կ'իմանայ՝ ուղիղ ալ կը դատէ . որովհետեւ երբ սրխալ դատում մ'ըրած կը ըլլանք, կը հետեւի թէ

դատելիքնիս ճշդիւ չենք իմացած . եւ արդարեւ, ճիշդը զուրցելով, վրան դատաստան ընելիք առարկայն թերի իմանալը՝ իմանալ չէ . վասն զի դատումը բողոքին վրայ կըլլայ եւ ոչ մասանց :

Ապա, ամէն ըսած կերպովս իմացած բաներնիս ստոյգ են . խաբուելնուս պատճառը չիմանալնիս միայն է . եւ այն սխալը՝ որ ըստ ինքեան սխալ չէ՝ անդիտութեան կամ անձանօթութեան սխալ է :

Ճշմարիտ է այն՝ որ ինչ է, սխալ է այն՝ որ ինչ չէ :

Շատ անգամ որ ինչ էն՝ չենք կրնար իմանալ, իսկ որ չէն՝ բնաւ չեմք կրնար իմանալ :

Շատ անգամ կը կարծենք թէ իմացեր եմք, եւ ասոր համար կը մոլորիմք . սակայն իրապէս իմանալ կարելի չէ, վասն զի չէ :

Իսկ երբ իմացած կը կարծեմք չիմացածնիս, պատճառն այն է՝ որ արդէն ըսած տկարութիւններնուս համար խելքով դիտողութիւն ընել չենք ուղեր, կ'արտորամք դատելու, գահալիծարար կը դատեմք, եւ վերջապէս կը կարծեմք թէ իմացած եմք, ասանկով մոլորութեան մէջ կիցնամք :

Չըկայ մարդ՝ որ խաբուիլ ուզէ, եւ ոչ ոք պիտի խաբուէր՝ եթէ ինք զինք խաբելու պատճառներ չը վնասեր . վասն զի այնպիսի բաներ կը վնասէ՝ որք քննադատելու եւ ճշմարտութիւնը գտնելու արգելք կըլլան :

Վասն որոյ, ով որ կը խաբուի կամ կը մոլորի, նախ առարկային վրայ տեղեկութիւն ունեցած չըլլար . երկրորդ ալ ինք իւր վրայ . ու

բովնետեւ ոչ իւր առջեւն եղած՝ առարկայն քննել կուզէ եւ ոչ ինք զինքը, ոչ գահալիծարար ըրած դատումը, ոչ հպարտութիւնը, ոչ անհամբերութիւնը, ոչ ծուլութիւնն եւ ոչ վերջապէս կրքերն ու նախապաշարմունքները, որք առիթ կըլլան այնպիսի սխալ դատման :

Եւ արդարեւ ստոյգ է՝ որ եթէ իմացումը թերի կամ մոլար չըլլայ, եւ իւր առարկային միայն ուշադրութիւն ընծայէ, բնաւ մոլորութեան մէջ չլինար . զի այն ատեն կամ առարկայն պայծառապէս պիտի տեսնէ եւ տեսածն ալ ճշմարիտ պիտի ըլլայ, եւ կամ ընդ աղօտ պիտի տեսնէ, եւ մինչեւ որ ճշմարտութիւնը կամ լոյսը երեւան չը գայ, սառուղիւ տարակուսի մէջ պիտի մնայ :

Ըսուածներէն կրնամք մակաբերել եւ արդէն յայտնի իսկ է՝ թէ իմացումը սրչափ գեր ՚ի վերոյ է քան զգայարանքները :

Նախ՝ զգայարանք մոլորութեան երթակայ են ինչպէս որ պէտք է : Աչքը՝ ջուրը խորուած ուղիղ դաւազանը կամ կոր պիտի տեսնէ եւ կամ խորտակեալ, եւ սրչափ ջանք ընէ՝ չը կրնար ճշմարիտ դադախար մ'ունենալ կոր երեւցած գաւաղանին վրայ . որովնետեւ կարելի բան չէ՝ որ ինքնին իւր պատրանքը կամ մոլորութիւնը շտկէ կամ իմանայ . Ընդ հակառակին՝ իմացումը բնաւ չը մոլորիլ, միայն թէ ուշադրութիւն չը պակսի . եւ եթէ պատահի որ շուտ մը զգայարանաց եւ կամ անոնցմէ յառաջ եկած կրից հետեւելով՝ սխալ դատում մ'ընէ, դարձեալ կրնայ իւր դատումը ուղղել՝ եթէ ուղիղ կամեցողութեամբ ճիշդ եւ արթուն ուշադրութեամբ :

թիւն դարձունէ թէ իրեն եւ թէ առարկային վրայ :

Երկրորդ՝ առարկայներն որչափ չափազանց զգալի ըլլան, այնչափ ալ զգայարանք կը տկարանան եւ մինչեւ կը վտանգուին . բարձր ձայնը ականջ կը խլացնէ . չափազանց լեղին ու անոյշըն ալ նոյնպէս ճաշակելեաց կը մնասեն, մինչդեռ երկուքին բարեխառնութիւնը հաճոյք կը պատճառեն : Սոյնպէս հոտերն ալ հաճոյական ըլլալու համար պէտք է՝ որ չափաւորութիւն մ'ունենան իրենց մէջ . ամենէն աղնիւ հոտոյն չափազանցութիւնը դարչելի հոտերէ աւելի մնաս կը բերէ : Ջերմութեան եւ ցրտոյ առաւելութիւնը հաւասարապէս մեր զգայարանաց առողջութիւնը կը խանդարէ : Այն բանը՝ որ սաստիկ կը դաշի մեղի՝ զգայարանաց մնաս կը հասցնէ . եթէ աչքերնիս բաց արեգական վրայ յառենք՝ որ ամէն առարկայներէ աւելի լուսաւոր է եւ ինքն է որ միւս ամէն բաները տեսնելու կ'օգնէ, աչքերնիս կը մնասուի, եւ մինչեւ իսկ կը կուրանայ : Իսկ, ընդ հակառակն, առարկայ մը որչափ պայծառ եւ իմանալի ըլլայ, նոյնչափ ճշմարիտ ըլլալը կը ճանչցուի, եւ նոյնչափ ալ մեր իմացողութիւնը գոճ կըլլայ եւ կը զօրանայ : Ճշմարտութիւն հետազօտել կամ խուզարկել աշխատալի է, բայց հասկնալը անուշ : Ասոր համար կ'ըսէ Արիստոտէլ, թէ չափազանց զգալի առարկայները զգայարանաց կը մնասեն . իսկ կատարելապէս իմանալի իրն իմացողութեան կենդանութիւն եւ զօրութիւն կուտայ . կ'եզրակացունէ՝ թէ իմացողութիւնն . ըստ ինքեան նիւթական գործարանէ կախումն չունի, եւ ըստ

ինքեան մարմինէն որիչ է : Ասոր վրայ վերջն աւելի պիտի խօսինք :

Երրորդ՝ այն բաներն՝ որ այսօր կան եւ վաղը չեն գտնուիր, կամ ուրիշ կերպ կըլլան՝ մեր զգայարանաց վրայ այնչափ ազդեցութիւն չեն կրնար ընել . եւ որչափ ալ որ տեւեն տպաւորութիւնները՝ միշտ մի եւ նոյնը չեն ըլլար : Մի եւ նոյն բանը՝ որ այսօր իմ ճաշակելեացս հեշտարար է, վաղը կամ բոլորովին անհաճոյ կըլլայ եւ կամ առջի չափ չըլլար : Առարկայներն այլ եւ այլ ժամանակներու մէջ տարբեր կերպով կը ներկայանան մեր աչքին . առաւօտուն, ցերեկին, գիշերը, հեռուանց, մօտէն, այս կամ այն կողմէն դիտուած ատեն կերպերնին կը փոխեն : Մինչդեռ, ընդ հակառակն, միանգամ իմացուած կամ ապացուցուած բանը՝ չարունակ մի եւ նոյնը կը տեսնէ մեր իմացողութիւնը . եթէ պատահի որ այս ըսածիս հակառակը տեղի ունենայ, ասոր ալ պատճառը կամ զգայարանքնիս են եւ կամ կըքերնիս : Իմացողութեան առարկայն՝ ինչպէս ըսինք, անխորիփ է եւ յաւիտենական . եւ ասիկա կը ցցունէ իրեն թէ գեր ՚ի վերոյ քան զինքն յաւիտեան կեցող ճշմարտութիւն մը կայ, ինչպէս յառաջուց զուրցուեցաւ :

Իմացականութեան այս երբեակ՝ կատարելութիւնները պիտի ցուցնենք իրենց տեղը . որուն վրայ Արիստոտէլ սքանչելապէս խօսած է, իմացականութեան եւ անոր մեր մարմնաւոր գործարաններէն ունեցած տարբերութեանը վրայ խօսելու ատենը, զոր արդէն քիչ մը վերը համառօտիւ յիշեցինք :

Բան մը ճանչնալնէս յետոյ՝ նոյնը ուղեւու եւ որոշելու վիճակ մը կուգայ վրայնիս : Չը գիտցած բան չուզէր մարդս :

Կամբը գործողութիւն մ'է՛ որով բարւոյն կը հետեւումք եւ չարէն կը խորշումք . եւ բարին ձեռք բերելու ու չարէն խուսափելու միջոցները կընտրենք :

Օրինակի համար , առողջութեան կը ցանկամք , հիւանդութենէ կը վախճնենք . եւ որպէս զի այս փափաքնիս ձեռք բերենք , պէտք եղած ատեն դեղեր կառնենք , երակ հատանել կուտամք եւ կամ մլասափար բաներէ կը հրաժարինք՝ որչափ ալ ակտրօփելի ըլլան : Իմաստուն ըլլալ կուզենք . յաջողելու համար միջոցներ կընտրենք , որք են մատենագրութիւններ կարգալ , իմաստուն մարդոց կենակից ըլլալ , ուրիշէն ուսանիլ , կամ մեք մեզէն խուկալ , վերջապէս , շատ ասոնց նման օգտակար բաներ կընենք՝ որ նպատակնիս վաստկինք :

Վախճան կամ նպատակ կըտուի 'ի սէր անձին 'ի սպառճառս իւր անձնական բարւոյն ցանկալի եղած բանը , ինչպէս առողջութիւն հոգւոյ եւ մարմնոյ . այս նպատակին հասնելու ծառայող բանն ալ կըտուի միջոց , ինչպէս կըրթութիւն առնուլ եւ բժշկական արուեստն ուսանիլ :

Մեր բնութիւնը , ընդհանրապէս , բարին կամելու համար սահմանուած է . իսկ ամէն սեռի մասնաւոր , բարեաց նկատմամբ ալ ազատ ընտրողութիւն ունիւմք այս կամ այն մասնական բարւոյն աւելի միտելու : Չոր օրինակ , ամէն մարդ առ հասարակ երջանիկ ըլլալ կ'ուզէ , եւ

ասիկա մեր բնութեան պահանջած ընդհանրական բարին է : Սակայն ոմանք իրենց երջանկութիւնն այս ինչ բանին մէջ կը դնեն , ոմանք ալ այն ինչ . մէկ քանին առանձնակեցութեան , ուրիշներն ալ ընկերականութեան մէջ . ոմանք հաճոյից եւ յղիութեան , ոմանք ալ առաքինութեան մէջ :

Այս մասնական բարիքներն ընտրելու ազատութիւնը մարդուս ձեռքն է . եւ այս է անձնիշխանութիւն կամ ազատութիւն ըսածնիս :

Անձնիշխան կամեցողութիւնն է աւելի այս քան այն բանը որոշելու ազատ կարողութիւնը . իսկ այս կարողութիւնը գործածելը իրապէս բան մ'ընտրել է :

Արդ , անձնիշխանութիւնն այնպիսի կարողութիւն մ'է՛ որով ազատ եմք այս ինչ բանն ընել , այն ինչը չընել . զոր օրինակ կրնամ խօսիլ կամ չը խօսիլ . ձեռքս շարժել կամ անշարժ թողուլ , եւ կամ այս կամ այն կողմն երկըննալ :

Ասով յայտնի կըլլայ թէ մարդ էակն ազատ կամեցողութիւն ունի՝ եւ այս անձնիշխան կարողութիւնն 'ի գործ դրած կըլլայ՝ երբոր Աստուծոյ իւր իշխանութեան ներքեւ դրած իրաց մէջ ընտրողութիւն կընէ :

Մարդս իրի մը վրայ դեռ որոշումն չըրած կ'սկսի ընելիքին , այն է որոշելիք բանին վրայ ինքնիրեն խորհրդածութիւններ ընել . եւ այն որ բան մ'ընել կը դնէ իւր միտքը , գիտէ նաեւ որոշակի թէ նոյնը ընտրելն ալ իր ձեռքն է :

Ուստի հարկ մը չը տեսնուիր բնաւ ցուցը-
նել մարդուս թէ անձնիշխան կամեղողութիւն
ունի, միայն թէ խելագար մէկը չըլլայ. որով-
հետեւ արդէն մարդս կրնայ ինքնին իմանալ.
եւ աւելի աղէկ կ'զգայ բանի մի վրայ խորհե-
լու եւ ընտրութիւն ընելու կարողութիւնը՝ քան
թէ առարկայներ տեսնելու, ձայներ լսելու եւ
կամ դատումներ ընելու մասին ունեցած կարո-
ղութիւնը:

Բան մ'ընելու կամ չընելու համար ունե-
ցած անձնիշխանութենէն կամ ազատութենէն
կը հետեւի թէ բարի կամ չար գործելուն հա-
մեմատ արժանիք կայ գովեստի եւ պարսաւա-
նաց, վարձուց եւ պատժոց. արդիւնք կամ
ապարդիւնք ըսած բաներնիս ալ այս է:

Կաղ կամ տգեղ տղայն չենք պարսաւեր,
բայց յամառը կը սլախարակեմք եւ կը պատ-
ժենք. վասն զի կաղ կամ տգեղ ըլլալն իւր
ձեռքը չէ, բայց յամառ ըլլալն իւր ազատ կամ-
քէն կախեալ է:

Մարդ կը ցաւի այնպիսի չարիքի հանդիպե-
լուն համար՝ ուսկից խուսափիլն անհնար է եւ
դժբաղդութիւն մը կը համարի. իսկ երբ կը
զիանայ որ այն չարիքէն խորշելու կարողու-
թիւնը կայ իւր մէջ, կ'զգայ նոյն վայրկեանին թէ
յանցանքն իւրն է եւ գործելուն համար ինք
իրեն կը մեղադրէ եւ անձին դէմ բարկութիւն
կը յայտնէ:

Մեր յանցանքէն եկած այս արտմութիւնը
մասնաւոր անուն մ'ունի, որ է զղշումն կամ
սորջանք: Մարդ հիւանդ եւ կամ վատաոողջ
ըլլալուն համար չը զղշար. բայց չը գտնուիր

աշխարհի մէջ մարդ մը՝ որ իւր դործած յան-
ցանքին վրայ չ'սորջանայ:

Ասկից յառաջ կուգայ Խեղճ ըսածնիս, եւ
այն սլայծառ ծանօթութիւնը՝ զոր բոլոր մար-
դիկ ունին իրենց յանցանքին վրայ. ասիկա
մեր ազատութեան հաստատուն եւ ճշգրիտ նը-
շանն է:

Ազատութիւնն ամենամեծ բարիք մ'է.
բայց վերը ըսածներէս յատնի կ'երեւի՝ որ թէ
'ի չարն եւ թէ 'ի բարին կրնանք դործածել:

Ազատութեան բարեք դործածութիւնը
եթէ ժամանակ անցնելով սովորութեան փո-
խուի՝ կըսուի արտօնութիւն, իսկ չարաչար
կիրառութիւնը եթէ սովորական ըլլայ՝ կըսուի
մոլորութիւն:

Առաքինութեանց գլխաւորներն են Խոն-
ճութիւն՝ որ կուսուցանէ մեզ չարն եւ բարին.
արտօնութիւն՝ որ իւրաքանչիւր մարդու իր ե-
ղածն իրեն տալու անյաղթելի կամքը կը ներ-
շնչէ. այս է ազատութիւն, քաղաքացիու-
թիւն եւ բարութիւն կանոնաւորող. արտօ-
նութիւն՝ որով կը յաղթեմք այն ամէն դժուարու-
թեանց՝ որք կցորդ են միշտ մեծ գործոց եւ
ձեռնարկութեանց. Բարեխառնութիւն՝ որ կը
սովորեցունէ ամեն բանի մէջ մասնաւանդ զգայա-
կան հեշտութեանց կողմանէ չափաւոր ըլլալ:

Ո՛վ որ այս առաքինութիւնները կը ճանչ-
նայ, ասոնց ծայրայեղ մոլութիւններն ալ կը
ճանչնայ:

Մոլորութեանց գլխաւոր պատճառներն են
մեր կիրքերը, որոնք, ինչպէս արդէն ըսած ենք,
թոյլ չեն տար մեզ ճշմարտի եւ ստոյ վրայ ու-

զից՝ դատումն ընել, եւ բողոքովին դէպ 'ի ըզ-
դայական բարին կը մղեն. աստի կը հետեւի թէ
առաքինութեան առաջին եւ գլխաւոր դործն
է կիրքերնիս նուաճել, այսինքն, բանականու-
թեան կանոնին կամ օրինաց ներքեւ դնել :

Ինչպէս որ առաջուց ըսուեցաւ, հեշտու-
թիւնք եւ ցաւք՝ որք պատճառը կամ արմատն
են կրից, ոչ թէ 'ի մտաց կամ 'ի գիտակցութե-
նէ են, այլ 'ի զգացողութենէ. զոր օրինակ ու-
տելու եւ խմելու հեշտութիւնը բանականութե-
նէ բողոքովին անկախ է, եւ որովհետեւ ասոնք
խելքէ յառաջ չեն դար, ուստի դարմանալ պէտք
չէ՝ որ շատ անգամ անխելք բաներ ընել կու-
տան : Ուտելու հեշտութիւնը հիւանդը վնասա-
կար բաներ ուտելու կը շարժէ, եւ վրէժխնդրու-
թեան հեշտութիւնն ալ շատ անգամ սոսկալի ա-
նիրաւութիւններ դործել կուտայ, որոց գէշ հե-
տեւանքները կ'զգամք :

Արդ կրից շարժառիթներն են հեշտութիւն
եւ ցաւ. եւ որովհետեւ ասոնք այնպիսի զգա-
ցումներ են՝ որոց մէջ բանականութիւնը բը-
նաւ մասնակցութիւն չունի, կը հետեւի՝ թէ
ասոնցմէ յառաջ եկած կրից մէջ ալ մասն չու-
նի : Բարկութեան մէջ եզոզ մարդը վրէժխնդիր
ըլլալ կուզէ յիրաւի կամ յանիրաւի .

Սիրած բաներնիս ստանալ կ'ուզեմք թէ բա-
նականութիւնը թոյլ տայ եւ թէ չը տայ. այս պա-
րագային մէջ մարդս կառավարողը կամ առաջ-
նորդը հեշտութիւնն է եւ ոչ բանը :

Իսկ կամեցողութիւնը՝ որ բանի մը վրայ ըն-
արողութիւն կ'ընէ՝ միշտ գիտակցութենէ յառաջ
է. եւ այս կարողութիւնը բանականութեան

մտիկ ընելու համար միայն սահմանալ ըլլալուն
պատճառաւ, պէտք է որ աւելի զօրաւոր ըլ-
լայ քան զկիրս, որք երբէք խելքի չեն հնա-
զանդիր :

Այս պատճառաւ է՝ որ փիլիսոփայք ցանկու-
թիւններն երկու կարգի կը բաժնեն. մին զգայա-
կան հեշտութենէ յառաջ կ'ուզայ, եւ կը հա-
մարին զգայական, անբանական եւ ցած. միւսը՝
խելքի կանոնաց տակ կ'երթայ, եւ կը համարին
բանաւոր եւ բարձր. կամեցողութիւն ըսուածն
ալ ճիշդ այս վերջինն է :

Եւ սակայն ըսածնիս շիտթ չհասկնալու հա-
մար՝ հարկ կ'ըլլայ ըսել թէ բանականութիւնն
ալ կիրք ծնուցանելու կը ծառայէ : Խելքով կը
ճանչանք երկիւղալի վտանդն եւ նախատինքը՝
որուն դէմ կը բարկանամք. բայց ըստ ինքեան
ոչ թէ բանականութիւնն է՝ որ վտանդէ մը խոյս
տալու եւ կամ վրէժխնդիր լինելու սաստիկ բաղ-
ձանքը կը գոյացունէ, այլ առարկայից մեղ պատ-
ճառած հեշտութիւնն ու ցաւը. մանաւանդ՝ որ
բանականութիւնը, ըստ ինքեան, բուռն կիր-
քերը սանձահարելու պաշտօնն ունի :

Սակայն այս խօսքերով ես ուղիղ բանը կ'ի-
մանամ : Որովհետեւ զգայարանաց եւ անոնց
տուած հեշտութեանց անսացող բանականու-
թիւն մ' ալ կայ, որ ոչ միայն՝ կիրք չնուա-
ճեր, այլ եւ աւելի կը գրգռէ եւ կը անուցանէ :

Մարդ սուտ դատումներով ալ կը զայրանայ,
եւ զայրացման այս կիրքը վրէժխնդրութեան
բաղձանքն աւելի կը սաստկացունէ. բայց այս
դատումները կամ իմաստասիրութիւնները՝ որոնք
ճիշդ սկզբունքներէ յառաջ չեն դար, այնչափ

դատումն չեն՝ որչափ կանխակալ եւ կոյր մարքէ յառաջ եկած մոլորութիւններ :

Ասոր համար ըսինք՝ թէ զգայարանաց հետեւող բանականութիւնը ճիշդ բանականութիւն չէ, այլ մոլորական, որ ճիշդը խօսելով բան անուան ալ արժանի չէ, ինչպէս մեռած մարդը այլ եւս մարդ չէ :


Սրդ այս բացատրութիւններէն կը կարծեմ՝ թէ վայելչապէս կը հասկցուի՝ թէ ինչ է հողին եւ ինչ են անոր կարողութիւնները : Զգայական կարողութիւնները ներքին եւ արտաքին զգայաբանաց գործողութեանց եւ անոնցմէ յառաջ եկած կրից մէջ բացատրեցինք, իմացական կարողութիւններն ալ իմացականութեան եւ կամեցողութեան գործոց մէջ :

Թէպէտ եւ այս կարողութիւններուն՝ իրենց զանազան եւ բազմադիմի գործողութեանց պատճառաւ տարբեր տարբեր անուններ տուինք . սակայն ասով իրապէս իրարմէ տարբեր բաներ չեն : Որովհետեւ իմացողութիւնը նոյն ինքն հողին է՝ որ բան մը կ'իմանայ . յիշողութիւնն ալ դարձեալ հողին է, որ ո՛ր եւ է առարկայ միտք կը բերէ եւ կը յիշէ . կամեցողութիւնն ալ հողին է՝ որ բան մը կուզէ եւ ուղածին ընտրութիւն կ'ընէ :

Երեւակայութիւնն ալ հողին է՝ որ արդէն ըսած կերպովն իս պատկերացնելու գործողութեամբ առարկայներն իւր առջեւ կը բերէ :

Տեսողական զօրութիւնն ալ հողին է՝ որ բան մը կը տեսնէ : Սոյնպէս միւս ամէն կարողութեանց սկիզբն ու պատճառը միայն մեր հողին է . այնպէս որ առանց սխալի կրնամք ըսել՝ թէ

այս բոլոր կարողութիւններն ալ ըստ ինքեան ուրիշ բան չեն, այլ նոյն ինքն հողին՝ որ իւր զանազան գործողութեանց պատճառաւ տարբեր անուններ առեր է :



ԳԼՈՒԽ Բ.

ՄԱՐՄԻՆ

Մեր մարմնոյն վրայ տեսնուած առաջին բանն է գործարանաւոր ըլլալը , այսինքն , այնպիսի տարբեր բնութիւն ունեցող մասուներներէ բաղկանալը , որոց իւրաքանչիւրը դանազան պաշտօններ ունի :

Այս գործարանները մեր մարմնոյն շարժումներ ընել կուտան :

Երեք տեսակ շարժումն կայ . շարժումն 'ի վերուստ 'ի վայր , գոր ունին ամեն ծանրութիւն ունեցող մարմնոց պէս . շարժումն սննդեան եւ աճման՝ որ ունինք անկոց հետ . եւ շարժումն թեղադրեալ 'ի մասնաւոր առարկայներէ , որ ունինք կենդանեաց հետ :

Կենդանին երբեմն ծանրութեան շարժման կը հսրատակի , ինչպէս նստած կամ պառկած ժամանակ . բայց շատ անգամ ալ կընդդիմանայ , ինչպէս ոտից վրայ կեցած կամ քաղած ատենը : Մտուողը մարմնոյն բոլոր մասանց մէջ բաշխուած է , ծանր մարմնոց բնականին հակառակ . այնպէս որ կրնամք ըսել՝ թէ վերջին երկու ձեւի շարժումներն առաջնոյն հակառակ

են , եւ ասոնցմով է՝ որ տունկն եւ կենդանին ուրիշ ծանրութիւն ունեցող մարմններէն կը տարբերին :

Այս երեք տեսակ շարժմանց առանձին առանձին անուաներ տալու համար , կրնամք առաջինն անուանել բնական շարժումն . երկրորդը , աճեցական , եւ երրորդը՝ կենդանական . բայց հասկցուելու չէ թէ կենդանական շարժումը՝ աճեցական եւ աճեցականն ու կենդանականը բնական շարժումն չեն ունենար :

Կենդանական շարժումը յառաջախաղաց շարժումն ըսուածն է , ինչպէս դէպ 'ի յառաջ երթալ , յետս կոյս դալ , այս կամ այն կողմն շարժիլ կամ քայլել :

Սակայն աւելի վայելուչ է կենդանական շարժումն անունը տալ քան կամայական . որովհետեւ կենդանիներն ալ , որք ոչ բանականութիւն ունին եւ ոչ իսկ կամեցողութիւն , այս շարժումը մարդոց նման կը կատարեն :

Այս երեք շարժմանց վրայ կրնայինք յաւելուլ նաեւ ուրիշ երկու տեսակ շարժումներ ալ , որ է ուժգին շարժումն , որ սովորաբար կենդանեաց վրայ կը տեսնուի երբ քաշուին կամ խթուին , եւ ջղաձգական շարժումն : Սակայն աղէկն այն է՝ որ յառաջ յիշեալ երեք սեռի շարժումները քննելք եւ իմանամք , որոնք բնական եւ նախնական շարժումներն են :

Առաջին տեսակ շարժումն գործարանաց պէտք չունի , եւ ասոր համար է՝ որ յոյժ բնական անուանեցինք , թէպէտ եւ բժիշկներն այս անունը մի միայն սրտին թնդման կամ շարժման կընծայեն : Իսկ միւս երկու շար-

ժուճները գործարաններու կը կարօտին , եւ օրինաւորապէս կատարուելու համար՝ հարկ էր՝ որ մարմինը շատ մը մասուէնքներէ բաղկացեալ գոյացութիւն մ' ըլլար , ինչպէս որ է իրօք :

Մարմնոց մասուէնքները կամ գործարանները երկու են , ներքին եւ արտաքին :

Արտաքին մասանց գլխաւորն է գլուխը , որուն մէջ է ուղեղը . գլխոյն առջեւի կողմը կայ դէմքը կամ երեսը , որ մարմնոյն ամենէն չքնաղ եւ վայելուչ մասը կրնայ համարուիլ իրաւամբ . զիմաց վրայ կը գտնուին այն ծակտին կամ անցքերն՝ ինչպէս աչք , ականջ , եւ այլն , որոց միջոցաւ արտաքին առարկայներն զգայաբանաց կը դարնուին :

Երեսին վրայ երեւցած այս մուտքերուն կամ պատառուածքներուն կարգէն է բերանն ալ , ուրիկց կերակուրն որովայն կ'երթայ , եւ խօսքերը դուրս կելլեն : Բերանոց մէջ է լեզուն՝ որ զանազան ձեւով քմաց եւ ախաջներուն զարնուելով ամէն տեսակ ձայներ եւ հնչումներ յառաջ կը բերէ չրթունքներն ընկեր եւ գործակից առնելով : Լեզուն ճաշակելեաց գործարանն ալ է , որով կերակրոց համ կ'առնուածք : Լեզուն ոչ միայն կերակրոցն համն առնելու միջոց մ' է , այլ եւ կերակուրը բերնի մէջ կը թրջէ , կը կակղէ , եւ ախաջներուն աակ կը տանի , որպէս զի ծամենք . վերջը կուլ տալու ալ օգնութիւն կընէ :

Գլխոյն անմիջապէս ներքեւ կիցնայ վիղը , որոյ վրայ հաստատուած է գլուխն եւ պարանոցին վրայ գրեթէ իբրեւ ի վերայ առանցքի

կը դառնայ :

Յետոյ կուզան երկու ուսերը՝ որոց կցուած են բազուկները , որ ծանր եւ դժուարակիր բեռներ կը վերցունեն :

Բազկաց պաշտօնն է պխտանի կամ անպետ բաները մեր պխտոյկց պահանջման համեմատ սեղմել , հրել եւ տեղէ տեղ փոխադրել : Ձեռքերն աւելի մեծամեծ եւ նրբին գործեր կատարելու կը ծառայեն . ասոնցմով մարդիկ զանազան գործիքներ կը շինեն այնպիսի բաներ ընելու համար՝ որ եթէ ձեռքերը մինակ մնային , կարելի բան չէր որ գլուխ հանէին . զոր օրինակ , ձեռքերն ինքնիրենցմով չեն կրնար բան մը կարել կամ սղոցել . բայց ստուգիւ գիտեմք որ զանակ , սղոց եւ ուրիշ ասոնց նման բնութաւոր գործիքներ կը շինեն , որոց իւրաքանչիւրը մէկ մէկ բանի կը գործածուին : Բազուկներն եւ ձեռքերը տեղ տեղ շատ մը յօդաւորութիւններ ունին , որք կարծր ոսկերաց կըցուած ըլլալով՝ շարժումը կը զիւրացնեն եւ մեծ ու փոքր մարմինները կը սեղմեն : Մասները՝ որ հաւասար չեն , ամէնը մէկէն իրար կուզան եւ բռնածնին մէկտեղ կը սեղմեն . ճկոյթ եւ բոյթ մասներն ափն ուժով գոցելու կը գործածուին : Ձեռքերնիս մեզ կը պաշտպանեն , եւ փնաս հասցնող առարկայներուն դէմ կը դնեն : Ասոր համար մեր մարմնոյն մասանց վրայ գրեթէ տեղ չըկայ՝ որ ձեռքերնիս չը հասնին :

Ուսերէն վար կուրծքը կը տեսնուի , որուն մէջ է սիրտն եւ թոքերը . կողերն ալ կուրծքին խոռոչներն են եւ խոռոչները կը պահպանեն : Կրծոց եւ փորին մէջ տեղը կ'իջնայ ստոծանին

կամ այն միջնորմը, որուն բոլորը մեղէն՝ կեդրոնը թաղանթային է . եւ ասիկա այնպիսի պաշտօն մ' ունի՝ որ երբ կձկուի կուրծքին գոգաւորութիւնը կամ խորութիւնը կը մեծցունէ . իսկ երբ թուլնայ եւ վարէն դէպ 'ի վեր կամարածեւ բարձրանայ, գոգաւորութիւնը կը պղզտիկցունէ, եւ ասով հանդարտ կամ խաղաղ շնչառութիւն կ'ըլլայ :

Ստոծանւոյն ստորին կողմը կ'իջնայ որովայնը՝ որուն մէջ է ստամոքսը, լեարդը, փայծաղը, աղիքներն . ասանց մէջէն աւելորդները կը զատուին եւ արտաքս կը թափին :

Այս ամեն գործարանաց շեղջը հաստատուած է զիստերուն եւ սրունից վրայ, որոնք բաղկաց նման զանազան յօդուածներու բաժնուած են, եւ շարժման եւ հանդատեան գիւրութիւն կուտան :

Ոտքերը մեր մարմնոյն ամբողջ զանգուածը հաստատուն կը պահեն, եւ թէպէտ մարմնոյ մեծութեան հետ բաղդատելով խիստ փոքր կ'երեւին ոտքերը, սակայն այնպիսի համեմատութիւն կամ չափակցութիւն մ' ունին, որ կարող կ'ըլլան զիւրաւ եւ անաշխատ ամենածանր բեռներ իրենց վրայ վերցունել : Ոտից վրայ մատներ ալ կան, որք մեծ գիւրութիւն կուտան ոտքերը գեանին կցելու եւ բռնելու :

Մարմինն այնպիսի բնական գիրք մ' ունի՝ որ կանգուն կրնայ մնալ, վասն զի բնականաբար ծանրութեան այնպիսի կեդրոնի մը վրայ գումարուած է, որ իւր իւրաքանչիւր մասերը զիրար հաւասարակչութեան մէջ կը պահեն, որով մարմնոյ բովանդակ զանգուածն առանց

դժուարութեան հաստատուն կը մնայ :

Միս եւ մորթ մարմնոյն մասերը պատած են, եւ օդոյն շնասելուն դէմ կը պաշտպանեն :

Ստերն ոսկորները պատող կակուղ եւ փափուկ գոյացութիւն են, եւ նեարդ ըսուած շատ մը մանրաթելերէ բաղկացեալ եւ այնպիսի զանազան կերպերով գալարուած են՝ որ կրնան մեծ գիւրութեամբ յերկարիլ եւ կարճանալ . այս միջոցաւ մարմնոյն բոլոր մասունքները տարբեր եղանակաւ կը քարչեն, կը տարածեն, կը կորացունեն, կը շարժեն եւ կամ հաստատուն կը բռնեն : Այս է գնդերք ըսուածը, եւ աստի կը ծաղիլ գնդերաց սա՛ յետագայ կրկին բաժանումը, որք են երկայնու շնորհ, եւ կձիւղ կամ ծող շնորհ :

Գնդերք ոսկերաց քանի մը տեղերէն կը ծաղին, եւ անոնց կցուած են, բաց 'ի մէկ քանիէն՝ որ կարիք դուրս տալու կը ծառայեն, եւ իրենց կազմութիւնն ալ բոլորովին միւսներէն տարբեր է :

Գնդերաց այն մասին՝ որոյ արմատն են ոսկերք, կ'ըսուի գլուխ, եւ միւս ծայրը ձեռ կամ տուտն, եւ նեարդ ըսածն իս ալ ասիկա է : Միջավայրը կամ մէջ տեղը կը կոչուի որովայն, որ ինչպէս ամենէն մեծն, ասանկ ալ ամենէն փափուկ մասն է : Գնդերաց երկու ծայրերն աւելի զօրաւոր են. որովհետեւ մին գնդերքը հաստատուն կը պահէ, եւ միւսին ձեռօք, այն է նեարդին միջոցաւ՝ որ նոյնպէս խիստ զօրաւոր է, անմիջապէս շարժումն կը կատարուի :

Կան գնդերք՝ որք միմեանց օգնելու համար միախուռն եւ մի եւնոյն եղանակաւ կը

չարժին . այս տեսակ դնդերքներն կրնամք մըր-
ցակիցք անուանել :

Կան ուրիշ իրարու ներհակ դնդերք ալ՝
որք միմեանց հակառակ կը շարժին , այսինքն ,
ոմանց գալարած կամ կծկած ժամանակ , միւս
կողմէն ուրիշները կ'երկնանան . ասոնք ալ կըսուին
ներհակամարտ դնդերք :

Աստի յառաջ կուգայ մեր մարմնոյ իւրա-
քանչիւր մասանց շարժումը , եւ ամբողջ գան-
գուածին մէկ տեղէն ուրիշ տեղ փոխադրուե-
լու գործողութիւնը :

Իրաւցնէ շատ զարմանալի է մարդկային
մարմնոյ դնդերաց այս մեծ բազմութիւնը ,
նոցա հեշտ եւ դիւրին շարժումն եւ միան-
գամայն զօրաւոր եւ փափկաբար դնդերքը շըր-
ջապատող մորթոյն հիւսուածքը :

Ներքին մասանց մէջ ամենէն աւելի դի-
տողութեան արժանին սիրտն է , որ կուրծքին
մէջ տեղը գետեղուած է եւ այնպիսի դիրք մ'
ունի , որ մէկ ծայրը քիչ մը շեղած եւ գէպ
'ի ձախ կողմը ձուած է : Սիրտն երկու գոգած
ունի , որոց իւրաքանչիւրին կցուած են մէկ շըն-
չերակ եւ մէկ երակ , որոնք սրտէն սկսեալ
մինչեւ մարմնոյ միւս բոլոր մասերուն մէջ կը
տարածուին : Այս գոգածները՝ զորս անդա-
մադնինք սրտին երկու խոռոչները կը կոչեն ,
Տկանական Քլէարթ՝ ըսուած կարծր եւ պարարտ
գոյացութեամբ իրարմէ բաժնուած են :

Սրտին ամենէն նշանաւոր բանն է իւր ա-
նընդհատ թնդիւնը , որոյ միջոցաւ մերթ կը նեղ-
նայ եւ մերթ կը լայննայ : Ամփոփումն կամ
կծկումն եւ տարածումն կամ ընդլայնումն սըր-

տի ըսածնիս այս է : Ամփոփումն կըսուի՝ երբ
կ'ամփոփի , եւ տարածումն՝ երբ կ'ընդլայնի :
Սիրտն՝ 'ի տարածման կ'ուռննայ եւ կ'ընդար-
ձակի , իսկ յամփոփման՝ կը փոքրկանայ եւ
կ'երկայնի : Սակայն , ինչպէս փորձը կը ցուցնէ ,
սիրտն արտաքուստ ուռած ժամանակ՝ 'ի ներ-
քուստ կը նեղնայ . ընդ հակառակն՝ 'ի ներքուստ
կ'ընդարձակի՝ երբ արտաքուստ փոքրկանայ
սիրտը :

- Մարդկային մարմնոյ իւրաքանչիւր մասանց
բնութեան վրայ քաջ ծանօթութիւն ունենալ
ուզելով կենդանիներն ողջ ողջ հերձող անդա-
մադնինք կ'ապահովցնեն՝ թէ այս կենդանեաց
սրտին մէջ ծակ մը բանայնէն վերջն ալ՝ որ ա-
տեն սիրտը տակաւին 'ի թնդման կայ՝ եթէ
մէկն իւր մատը նոյն մասն մէջ մխէ , պիտի
տեսնէ որ սիրտն 'ի տարածման աւելի կ'ամփո-
փուի . եւ կը յաւելուն ալ թէ մարմնոյ մասանց
կարգաւորութիւնը կը պահանջէ եւ հարկ իսկ
է՝ որ այս այսպէս ըլլայ :

Երբոր սրտին ամբողջ գանգուածը գլխեմք,
այսինքն , այն նըբաթելերն՝ որոցմէ հիսուած է
սիրտն եւ նոյն նըբաթելից գալարման եղանա-
կը , սիրտն իբրեւ դնդերք պիտի ձանչնամք կամ՝
նկատեմք , որուն՝ ուզեղէն եկած կենսական զօ-
րութիւններն անընդհատ թնդիւն կը պատճա-
ռեն : Եւ կը պնդեն ալ թէ այս նըբաթելերն ոչ
թէ ուղղաձիգ երկայնութիւն մ'ունենալնուն
համար շարժուն են՝ այլ խոտորնակի դիրքի մը
մէջ գտնուելնուն համար , որով սիրտն ինքն իւր
վրայ գալարելով բոլորչի ուռոյցք մը կ'ունե-
նայ , եւ մի եւ նոյն վայրկենին սրտին խոռոչ-

ները չըջապատող մասերն 'ի ներքուստ սաստկապէս կը ճնշուին :

Այս ճնշումն արեան վրայ երկու աղղեցութիւն կընէ . մէկ մ'որ սաստկապէս արեան կը զարնուի , եւ ասով զայն կը տաքցունէ . երկրորդ՝ որ ուժգնութեամբ արիւնը շնչերակներուն մէջ կը մղէ , զոր յետոյ սիրտը տարածուելով երակներուն միջոցաւ կ'ընդունի :

Այսպէս արիւնն անընդհատ շրջանով կը հոսի շնչերակներէն երակներուն մէջ , երակներէն դէպ 'ի սիրտը , սրտէն ալ թոքին մէջ , ուր արիւնն օդ կ'առնու եւ ասով նոր կենդանութիւն մը կ'ստանայ . թոքէն դէպ 'ի սիրտը , սրտէն գլխոյն եւ ամբողջ մարմնոյ շնչերակներուն մէջ :

Շնչերակի արեան դէպ 'ի գլուխը բաշխուելուն պատճառաւ է որ կենսական զօրութիւն , կամ լաւ եւս է ըսել , կենդանական հեղուկը գլխոյ մէջ զետեղուած է՝ որպէս զի ջրդերուն միջոցաւ մարմնոյ իւրաքանչիւր մասանց մէջ բաշխուի : Այս կենսական զօրութիւններն 'ի ձեռն ջղաց մարմնոյ բոլոր մասանց զգացումն կը հաղորդեն , եւ շարժումը մինչեւ դնդերները կը տարածեն :

Սիրտը բաւական ջերմութիւն ունի . սակայն կենդանիներն ողջ պատողները կ'ստուգեն՝ թէ այս ջերմութիւնը նաեւ մեր մարմնոյն միւս մասանց մէջ ալ կը գտնուի նոյն չափով :

Թոքը կակուղ եւ փամիշտանման մաս մ'է՝ որ փութքի մը պէս ընդլայնելով եւ անձկանալով մեր շնչած օդը կ'առնու եւ վերստին դուրս կուտայ : Այս շարժումը շնչել եւ ընդհանրապէս

շնչառութիւն կը կոչուի :

Թոքի շարժումները կը կատարուին դնդերաց միջոցաւ , որք մեր մարմնոյն ներսը զանազան տեղերու ազուցեալ են , եւ այս դնդերաց ձեռք թոքը կը ճնշուի եւ կ'ընդլայնի :

Այս ճնշումն եւ տարածումը կ'զգամք նաեւ ստորին որովայնի մէջ , որ կ'ուռի եւ անդրէն կը խոնարհի , որ ատեն ստոծանին եւ թոքը իրար միացնող քանի մը դնդերք շարժին :

Թոքն երկու կողմով կը տարածուի կուրծքին բոլոր ընդարձակութեան մէջ , Սրտին բոլորը պատած է , որպէս զի շնչած օդով զովացընէ : Օդը դուրս մղած ժամանակ՝ սրտին ջերմութենէն յառաջ եկած գոլորշիներն ալ օդոյն հետ 'ի միասին արտաքս կը վանէ . այս գոլորշիներն եթէ դուրս չ'ելլեն՝ անտարակոյս սիրտը կը խեղդեն , Օդոյն այս զովութիւնն արիւնը թանձրացնելու եւ չափազանց անօսրութենէ պահպանելու կը ծառայէ :

Թոքն ուրիշ շատ մը պաշտօններ ալ ունի , ինչպէս պիտի իմանամք հետեւեալ դիտողութիւններով :

Չարմանալի բան մ'է՝ որ կենդանին տակաւին իւր մօրն արգանդին մէջ եղած ժամանակ բնաւ շնչառութեան պէտք չունենար . իսկ երբ դուրս ելնէ՝ կարելի բան չէ որ առանց շունչ առնելու ապրի : Ասոր պատճառն այն է՝ որ մայրն իրեն համար կ'ուտէ , կը մարսէ եւ կը ննջէ , եւ յետոյ սոյն գործողութեան սահմանուած խողովակներուն միջոցաւ իւր որովայնին մէջ գտնուած կենդանւոյն կը զրկէ այն արիւնն՝ որ անոր մարմնոյն մէջ շրջան առ-

նելու եւ զինքը մնուցանելու ամէն հարկաւոր հանգամանքներն ունի :

Կուրծքին ներքնակողմը բաւական նուրբ մորթով մը ծածկուած է՝ որուն կըսուի Զերէն Բաշալի կընոյ : ասիկա խիստ դիւրազգած է , եւ սոյն պարուտակին բորբոքմանէն կողացաւ յառաջ կուգայ :

Թոքին ստորին կողմը կիյնայ ստամոքսը՝ որ քսակի եւ կամ հովուական տիկի ձեւով պարկ մ'է , որուն մէջ կը կատարուի կերակրոց մարսողութեան գործը :

Թոքին աջ կողմն է լեարդը . ասիկայ ըստամոքսին մէկ կողմը պատած է , իւր ջերմութեամբ մարսողութեան կ'օգնէ եւ մաղձ ու արիւն իրարմէ կը զատէ . այս պատճառաւ է՝ որ ի ներքոյ կողմանէ փոքր սրուակի նման փոքրիկ խողովակ մ'ունի լեարդը , որ կըսուի ֆորէքէ ֆորէքուր լեյու : այս խողովակին մէջ կը ժողվուի մաղձն եւ անկէց աղեաց մէջ կը թափի : Այս դառն հեղուկն աղիքները խթելով յուզումն կուտայ եւ իբրեւ բնական դեղ գրեխի աղիքներուն մէջէն կղկղանք դուրս կը թափէ :

Փայծաղը լեարդին դիմացն է . տեսակ մը սպիգանման պարկ է՝ ուր արիւնը կուգայ մեծ շնչերակի մը միջոցաւ , եւ ապա երակներուն ձեռք կը տարածուի միւս ամէն մասանց մէջ , այնպէս որ ոչ ոք կարող է այս եւ ուրիշ շնչերակներէ հոսող արեան մէջ փոքրիկ տարբերութիւն մը մուծանել . թէպէտ հիւններն այս պարկին թուխ գոյնէն խաբուելով՝ սեւամաղձոտ հիւթի կամ գոյացութեան աւաղան կը հա-

մարէին . եւ այս էր պատճառը՝ որ սոյն հեղուկին կուտային այն թաղձալից տրոմութիւնները՝ որ բոլորովին սխալ է :

Լեարդին եւ փայծաղին յետին կողմը քիչ մը ներքեւով կը գանուին երկու երիկամունք , իւրաքանչիւր կողմն մէկ մէկ հատ . այս երիկամանց մէջ կը ժողվուին շնուկներն եւ կանջատին , եւ երկու փոքրիկ խողովակներու միջոցաւ միգի փամփուշտին մէջ կը լցուին . այս երկու փոքրիկ խողովակները ֆլուիդ կըսուին եւ մէջ կը կազմեն :

Այս ամէն մասանց ներքին կողմը կը զըսուին աղիքներն , որոց մէջ զանազան շրջաններով կղկղանքները կը զատուին , եւ այն բնական տեղուանք կիյնան՝ ուրկէ դուրս պիտի թորին :

Աղիքները միջնդերաց կապուած եւ զըրեթէ կարուածի պէս են : Միջնդերքը փոքր կապի ձեւն ունի .

Միջնդերքը զրեթէ բոլորակ եւ ինք իւր վրայ գալարուած պարուտակ մ'է , որուն բոլորը շուրջանակի դարձած են աղիքները :

Միջնդերաց վրայ կը տեսնուի մաղէ աւելի նրբութիւն ունեցող անհուն փոքր երակներ , որք իրենց մէջ կաթնանման ճերմակ եւ քաղցըր հեղուկ մը պարունակելուն համար կ'ախտոյն երակ կը կոչուին , որոց արդիւնքը վարը պիտի ցուցնենք :

Կաթնային երակներն սյնչափ փոքր են՝ որ միայն այն ատեն կրնանք նշմարել՝ երբ կենդանին կերակուր ուտելէն անմիջապէս յետոյ փորը բանանք դիտենք . վասն զի , ինչպէս վեր-

Ղը պիտի դուրսեցնէր, այն ժամանակն է՝ որ այս երակները նոյն ճերմակ հեղուկով կը լեցուին եւ կաթին դոյն կ'ունենան :

Միջընդերաց մէջ տեղը բաւական մեծ խաղաւարտ կամ խաղճմունք մը կայ . կաթնային երակները բոլորն ալ աղիքներէն մեկնելով՝ կուգան կը յանդին այս խաղճմունքին իրրեւ իրենց կեդրոնը :

Կերելի՛ թէ այս կաթնային երակներն իրենց մէջ գտնուած հեղուկն աղիքներէն կ'առնուն եւ սոյն այս հեղուկը միջընդերաց մէջ եղած խաղճմունքին մէջ կուգայ, ուրկէց մեր մարմնոյն միւս մասանց մէջ կ'երթայ կը տարածուի, որոց վրայ վերջերը պիտի խօսիմք :

Իւրաքանչիւր աղիք իրեն յատուկ մաշկը կամ նուրբ եւ անօսր մորթն ունի, որ կը սուրի ներքին լսողանի փորոքայ . այս թաղանթն աղիքները պատած է եւ զանազան խողովակներ կը պարունակէ իւր մէջ : Այս ագուգայնորուն մէջ կը գտնուին նաեւ այնպիսիներ՝ որոնք դէպ 'ի պորտը յանդելուն համար պրոպագանդա կը ստանան . ասոնց միջոցաւ է՝ որ մանուկը իւր մօրն արգանդին մէջ եղած ատեն արիւն եւ սնունդ կ'ընդունի : Ասկէց զատ ուրիշ պաշտօն մը չունին ընաւ այս խողովակներն եւ այնպիսի կերպով սեղմուած են, որ հազիւ հազ կրնայ մարդ նշմարել անդամատուրեանը մէջ :

Այս ամբողջ ստորին մասն՝ որոյ սկիզբը կամ արմատն ստամոքսն է, զնդերաւոր կամ նեարդապատ մեծ թաղանթով, կամ աւելի լաւ է ըսել, ասոնք կոչուած զնդերով մը

կուրծքէն դատուած է . ստոծանին բոլոր կողերուն բոլորը կը տարածուի . աջէն դէպ 'ի ձախ : Իւր գլխաւոր պաշտօնն է շնչատուութեան ծառայել . այս գործողութեան համար ? շարունակ կ'ուռի եւ կը կծկի, եւ զանազան պատճառներով կրնայ արագ կամ դանդաղ ուռիլ ու կըծկիլ :

Ստոծանին ցածցած ժամանակ աղեաց վըրայ կը յենու եւ կը ճնշէ . ասիկայ մեծամեծ պաշտօններ ունի, զորս պէտք է իրենց տեղը դիտողութեան առնուլ :

ձեղքուած կամ ծակոտկէն է՝ ստորին մասանց . մէջ տարածուած խողովակներուն մուտք տալու համար :

Լեարդ եւ՝ փայծաղն ստոծանէնց կցուած են : Երբ լեարդը սաստկապէս ցնցուի, եւ ասիկա սովորաբար այն ժամանակ կը պատահի՝ որ ատեն քրքիչ բառնանք, մի եւ նոյն վայրկենին փայծաղն ալ զինքը ճնշող հեղուկներէն կը պարզուի : Այս է պատճառն որ բարձրաձայն ծիծաղած ատեննիս մեծ հանդստութիւն մը կը դգամք :

Ահա ասոնք են կուրծքին եւ ստորին մասանց մէջ պարունակուած գլխաւոր մասերը : Ասոնցմէ զատ կան ուրիշներ ալ՝ որք նոյն մասունքներուն իբրեւ անցք կը ծառայեն :

Կոկորդին մուտքին կցուած են որկոր եւ շնչափող : Շնչափող եւ անհարթ ըսուելուն պատճառն այն է՝ որ այս շնչափողը զանազան օղակներէ բաղկացեալ ըլլալով ուղիղ անցք մը չունի :

Որկորն այն խողովակն է՝ ուրկից կերաւ

կուրը դէպ 'ի ստամոքս կ'երթայ, որ որկորին ստորին մասին երկայնունն, կամ, ինչպէս բը-
ժըլկականութիւնը կըսէ, տարածունն է:

Այս խողովակն՝ ինչպէս իւր բնական դիր-
քըն ու գործածութիւնը յայտնի կը ցուցնեն,
մինչև ստոծանիէն վար կ'երկնայ կամ կը
տարածուի:

Շնչափողն այն խողովակն է՝ որուն մի-
ջոցաւ մեր շնչած օդը թոքերուն մէջ կ'երթայ,
յորում այս շնչափողն այնպիսի անթիւ ճիւղե-
րու կը բաժնուի, որք ելթալով անդալի կ'ըլ-
լան. ասոր համար է՝ որ թոքը շնչառութեան
ժամանակ բոլորովին կ'ուռի:

Թոքը մեծ ճգով շնչափողի միջոցաւ օդը
դուրս մղելով ձայն յառաջ կը բերէ, ճիշդ այն
կերպով, ինչպէս որ երգիծնի ձեռօք որ եւ է
հնչմունք տեղի կ'ունենայ: Օդոյն հետ արտա-
քրս կը մղուին նաեւ թոքին մէջ յառաջ եկած
խոնաւութիւնները՝ զոր թփնելով դուրս կը
հանենք:

Շնչափողն իւր դրանը մէջ ունի նաեւ փոքրիկ
լեզու մը, որ կը բացուի իւր վրայէն անցնիլ ու-
ղող ամէն բանի ճամբայ տալու համար: Այս
լեզուն շատ կամ քիչ բացուելով ձայներ կազ-
մելու եւ զանազան էլեւէջներ տալու կը ծա-
ռայէ:

Այս փոքրիկ լեզուն կը փակուի բան մը
կլլած ժամանակնիս, որպէս զի կերակուրնե-
րը վերի կողմէն անցնին եւ դէպ 'ի որկորն
երթան առանց շնչափողին մէջ մտնելու, որ
միշտ պէտք է աղատ իւրայ շնչառութեան
համար. վասն զի եթէ կերակուրն չայս տեղէն,

այն է շնչափողին մէջէն անցնէր, այն ատեն
պիտի խեղդուէր. ասոր ապացոյցն այս է՝ որ
երբ շնչափողը բաց դնուելով մէջը կաթիլ
մը ջուր մտնէ, շատ կը նեղուինք եւ ամենայն
հնարիւք կը ջանամք դուրս հանել:

Այս փոքրիկ լեզուն կազմութեան եղա-
նակէն ինքնին կը հետեւի որ անկարելի բան
է մի եւ նոյն վայրկենի մէջ խօսիլ եւ միան-
գամայն բան մը կլնել:

Ստամոքսին ստորին կողմն եւ իւր խորը
դնուած ծակին վրայ գրեթէ ասոր նման ու-
րիշ փոքրիկ լեզու մը կայ՝ որ արտաքուստ
միայն կը բացուի. այս լեզուն ստամոքսէն
դուրս ելլելու կերակրէն ճնշուելով կը բացուի,
բայց անանկ ձեւով որ միանգամ ստամոքսին
մէջ մտած կերակուրը վերստին դուրս չը թո-
ղուր ելնել. այն ատեն այս կերակուրները
կ'երթան կը շարունակեն իրնեց ճամբայն դէպ
'ի հաստ աղեաց երկայնութիւնը, եւ հոն կըս-
կըսին կղկղանքը սննդական մասերէն դտուիլ:

Մեր մարմնոյն վերին եւ ամենէն բարձր
մասին, այն է գլխուն մէջ կը բովանդակի ուղե-
ղը, որոյ պաշտօնն է արտաքին առարկայներէն
ազդուած տպաւորութիւններն ընդունիլ, եւ
մարմնոյն այնպիսի շաժումներ տալ՝ որք առար-
կայի մը յարելու եւ կամ անկէց խուսափելու
համար անհրաժեշտ են:

Յառաջախաղաց շարժման (այս շարժումն
առաջուց յիշեր ենք) եւ առարկայից մէջն ե-
ղած կապը կը պահանջէ՝ որ ուր որ առարկայից
ազդեցութիւնը վերջանայ, հոն նոյն շարժման
պատճառն ու սկիզբը գտնուի:

Ուղեղն այս երկու պաշտօնները կը կատարէ • թէ պատճառ է շարժման եւ թէ սկիզբըն :

Արտաքին առարկայից ազդեցութիւնը կը կատարուի զգացողութեան ծառայող շղերուն միջոցաւ , որոց ամէնքն ալ ուղեղին կը հասնին :

Ջղերէն դէպ 'ի դնդերքը հոսող կենսական զօրութիւնները մեր մարմնոյն բոլոր անդամոց մէջ տարածուելով՝ յառաջախաղաց շարժումն ըստած գործողութիւնը յառաջ կը բերեն : Այս կենսական զօրութիւնները նախ՝ սրտէն դէպ 'ի ուղեղը կը տարուին , ուր իրենց երկրորդական կերպարանքը կամ հանդամանքը կ'առնուն • եւ երկրորդ , շղերը՝ որոց մէջ կենսական զօրութեանց ընթացքը կը կատարուի , իրենց ծագումն ուղեղէն կ'առնուն ինչպէս նաեւ միւս բոլոր շղերը :

Ուրեմն անկասկածելի է թէ կենսական զօրութեանց եւ անոնցմով եղած յառաջախաղաց շարժման պատճառը կամ սկիզբն ուղեղն է : Եւ արդարեւ ճշմարիտ է՝ թէ մարմնոյն ամէն կողմերը պատահած հիւանդութիւնք մեծ ազդեցութիւն կընեն ուղեղին վրայ , ինչպէս են կաթուած եւ անդամալուծութիւն , եւ այն ամէն հիւանդութիւնները՝ որոց պատճառն անկանոն շարժումն է , որպիսի է Չղաձգութիւնը :

Եւ որովհետեւ արտաքին առարկայից մեր զգայարանաց գործարաններուն վրայ կատարած գործողութիւններն ու տպաւորութիւնները մինչեւ ուղեղը կ'երթան կը շարունակեն , ապա հարկ եւ վայելուչ իսկ էր՝ որ ուղեղին գոյացու-

թիւնը նոյն ազդեցութիւններն ընդունիլ կարենալու համար կակուղ ըլլար , եւ պահելու համար ալ հաստատուեն : Եւ յիրաւի ուղեղն այս երկու յատկութիւններն ալ ունի իւր մէջ :

Ասկէ զատ , ուղեղն ունի նաեւ զանազան անկիւններ եւ քանհարթութիւններ , զանազան գոգածներ , որք կըսուին *խորշ* կամ *խորշ* *ուղայ* • ասոնք այնպիսի բաներ են՝ զորս անդամազնինք յայտնապէս կը ցուցնեն , բայց անոնց կիրառութիւնները կամ պաշտօնները չեն բացատրեր :

Ուղեղը փոքր եւ մեծ երկու մասի բաժնուած ըլլալուն համար կըսուի նաեւ մեծ ուղեղ եւ փոքր ուղեղ • առաջին մասը գլխոյն դէպ 'ի առջեւի կողմը կը տարածուի , իսկ միւսըն ետեւի կողմը :

Ուղղոյ այս երկու մասանց իրարու հետ ունեցած հաղորդակցութիւնը յայտնի է իրենց կազմութեան եղանակէն • սակայն վերջին քրննութիւններ դրեթէ այնպէս կը ցուցնեն՝ թէ ուղեղին առաջոյ մասը զգայարանաց գործողութիւնները կը կատարէ • այս մասին վրայ կը զըտնուին նոյնպէս եւ այն շղերն՝ որք տեսանելեաց , լսելեաց , ճաշակելեաց եւ հոտոտելեաց կը ծառայեն , մինչդեռ ուղղոյ յետին կողմէն ծագումն կ'առնուն շոշափելեաց եւ գլխաւորաբար սրտին թնդման ծառայող շղերը : Վասն որոյ խիստ սաստիկ կամ գրեթէ մահաբեր կըլլան այն վերքերն՝ որք ուղղակի ուղղոյ այս մասին կը վերաբերին , որովհետեւ այս տեսակ վշտերը կենաց սկզբան կը վնասեն :

Ուղեղն իւր բոլոր ամբողջութեամբ երկու նուրբ եւ թափանցիկ պարուտակներէ շրջապատեալ է . մին ներքին՝ որ ամէն մէկ խորշերուն մէջ անմիջական ծածկոյթն է . իսկ միւսը արտաքին՝ որ սինդ եւ թանձր է :

Արտաքին պարուտակը բիւրաւոր երակներ ունի, ասոր համար միշտ թնդիւն ունի, եւ շարունակ ուղեղին կը բախուի, որոյ մասունքներուն սաստիկ ճմլեալ ըլլալէն կը հետեւի՝ որ մէջը բովանդակեալ արիւնն եւ կենսական զօրութիւններն ալ խիստ ճնշուած եւ բախուած սիտի ըլլան : Ասիկայ կենսական զօրութեանց բաշխման եւ թերեւս բարակամտութեան մէկ պատճառն է :

Գլխացաւի առնն այս արտաքին պարուտակի սաստիկ բախիւնը կ'զգամք, եւ ուժղինցաւ կը պատճառէ :

Արդարեւ բնութեան ճարտարութիւնն անձառելի է այս մասին . որովհետեւ ուղեղին այնպիսի զիրք մը կամ կազմութիւն մը կ'ուտայ, որ առանց չափազանց եւ մեծ ցնցում մ'ունենալու այնչափ տեսակ աղբեցութիւնները կրնայ բնդունիլ : Այս մասին իւր կազմը մեծապէս օգնած է, վասն զի կակղութեամբը տպաւորութիւնը կը մեղմացնէ, եւ վրան կատարուած աղբեցութիւնն ալ պէտք եղածին չափ մեղմ կ'ըլլայ :

Չգայարանաց գործարաններուն անհնարին նրբութիւնն ալ մեծապէս օգնած է դիւրութիւն բնծայելու, որ առանց ուղեղին ծանրութիւն տալու, մեղմ եւ փափուկ կ'աղդեն ուղեղի վըրայ :

Ըսել է՝ թէ ուղեղը տպաւորութեանց երեսէն բնաւ վնաս չը կրէր . քանզի թէպէտ եւ բնականապէս խիստ ուժղին կ'ըլլան, եւ բաւական մեծ շարժումներ կը պատճառեն, սակայն եղած աղբեցութիւններն ու շարժումները ուղեղին բնութեան հետ այնպէս համաձայնած են՝ որ ուղեղին բնաւ վնաս չեն տար :

Տեղն եկած է աչքը բաղկացունող մասունքներն ալ զիտողութեան աւնուլ, որք են պարուտակ կոչուած նուրբ եւ անօտ մորթերը, զանազան բնութիւն ունեցող հեղուկները՝ որոց միջոցաւ կ'ըլլան ճառագայթից բեկբեկումները . աչքին բոլորը պատած եւ հայելի պէս զանազան եղանակներով առարկայից ներկայացնող դնդերքները, տեսողական ջղերը՝ որք կ'երթան կը յանգին ցանցակերպ պարուտակ աչաց ըսուած մաշկին՝ որն որ նուրբ եւ կակուղ թաւշանման մորթի պէս աչքին խորը պատած է, եւ մէջը թափանցիկ հեղուկ կը պարունակէ . այս ցանցակերպին առջեւի կողմը ազուցեալ է աչքին այն մասը՝ որ դեղեցիկ բիւրեղի նմանութիւն ունենալուն համար կրսուի բիւրեղակերպն աչաց :

Հարկ է խօսիլ նաեւ ականջաց ներքին եւ արտաքին կազմութեան վրայ, եւս եւ ականջաց փոքր թմբկին, այն ինքն է այն նուրբ եւ երկայն պարուտակին վրայ, որ զարմանալի կերպով չինուած պզտիկ մուրճի մը միջոցաւ օդին ծածանմունքը կ'ընդունի, եւ տպաւորութիւնը ջղաց ձեռօք ուղեղին կը տանի : Սակայն ասոր, ինչպէս նաեւ միւս զգայարանաց վերաբերեալ գործարաններուն մանրամասն նկարա-

գրութիւնը շատ երկար կըլլայ եւ մեր շտա-
ջակայ նիւթին ալ այնչափ հարկաւոր չէ :

Այս մասերէն զատ որոց ամէն մէկը մեր
մարմնոյն զանազան մասանց վրայ իրենց յա-
տուկ տեղերն ունին , կան դեռ ուրիշներ ալ՝
որ մեր մարմնոյն ամբողջ զանգուածին մէջ
տարածուած են , ինչպէս ոսկր , շնչերակ , ե-
րակ եւ ջիղ :

Ոսկորները մեծաւ մասամբ չոր եւ կարծր
են , չեն կորանար , այլ կը կոտորին կամ կը վըշ-
րին քան թէ կը ծոին : Սակայն կոտորուելէ վեր-
ջըն ալ կրնան ամրանալ . զի բնութիւնն այն-
պիսի հեղուկ մը կը թափէ՝ որ զսնունք իրար
կը միացունէ . որով առաջինէն աւելի կարծ-
րութեամբ մէկ մէկու կը փակին : Ոսկորներուն
վրայ տեսնուած ամենէն նշանաւոր բաներն են
իրենց յօդուածները , նեարդական յօդակապ-
ներն եւ այն զանազան կցորդումները՝ որոց
միջոցաւ ոսկերք կը դառնան եւ կը շարժին :
Ամենէն երեւելի ազուցումներն են ողնայարի-
նը , որ ծոծրակէն մինչեւ ողնայարին ստորին
ծայրը կ'երկարի : Սա կրկին ծինիի ձևով իրար
կցուած , եւ մէջէն անցնող խողովակներուն
մուտք տալու համար մէջ տեղը քիչ մը բացու-
ած փոքրիկ ոսկորներու շղթայաշար մ'է :
Մեր մարմինը գիւրութեամբ ծռել շտկելու հա-
մար՝ հարկաւ ողնայարը շատ մը կտորներէ
բաղկացեալ ըլլալ պէտք էր : Նթէ ողնայարը մէկ
ոսկորէ միայն բաղկացած ըլլար , ոչ կրնայինք
ծռել եւ ոչ շտկիլ :

Ոսկերաց յատուկ պաշտօնն է մարմինը
հաստատուն բռնել եւ իբրեւ նեցուկ ծառայել :

Ատոնք , այսինքն ոսկորները , մարդկային մար-
մնոյն մէջ ճիշդ այն բանը կ'ընեն , ինչ որ փայ-
տի բեկորները ատաղձեայ շինուածքի մէջ : Ն-
թէ ոսկր չըլլար , մարմինը գետին կիյնար եւ
կը պատառուէր : Ոսկորներէն ոմանք մեր մար-
մնոյն մասանց մի քանին կը պարունակեն՝ ինչ-
պէս գանկը , կամ գլխուն ոսկորն , ուղեղը կը
պարունակէ . կողերը , սիրտն ու թոքը : Ոմանք
ալ ուրիշ մասերը կանգուն բռնելու կը ծա-
ռայեն , ինչպէս բաղկաց եւ զիստերու ոսկոր-
ները՝ չոր իրենց կցուած մսերը հաստատուն
կը բռնեն :

Ուղեղը կտորներով իրարու միացած ոսկե-
րաց մէջ կը բնակի , որք ամէնը մէկէն փոքրիկ
տուփ մը դարձած են : Բայց թէ որ թոքն ալ
այսպէս ըլլար , որպէս զի կարենար կուրծքը
նեղցնող եւ լայնցնող զնդերաց շարժամբ ին-
քըն ալ շարժիլ , շատ մեծ եւ հետեւաբար կամ
շատ դիւրարեկ կամ շատ կարծր ոսկոր մը պի-
տի ունենար : Ուստի հարկ էր՝ որ կուրծքին
այս արկը շատ մը կտորներէ բաղկացած ըլլար ,
որք կըսուին կող : Այս կողերը զիրար բռնած
են մէկ հասարակաց մորթով , եւ զնդերաց ի-
րենց պատճառած շարժումներուն հնազանդելու
համար միւս ամէն ոսկորներէն աւելի դիւրա-
կոր են :

Գանկն իրեն յատուկ շատ մը բաներ ունի .
վերին կողմը կարուածք ունի , ուր քիչ մը բա-
ցութիւն կայ ուղեղէն ելած գոլորշիներն անկէ
ցնդելու , եւ պարուտակներէն միոյն , այն է
պինդ մաշկին կցուելոյն նպատակու համար :
Ունի նաեւ երկու տախտակներ՝ որ զարմանալի

ճարտարութեամբ իրարու վրայ դրուած ոսկորներու կրկին շարք մ'են, ուր կ'սպրդին շնչերակներն եւ երակներն իրենց սնունդն առնելու համար :

Շնչերակները, երակներն եւ ջղերն իրար միացած եւ մեր մարմնոյն մինչեւ ամենաչնչին մասերուն մէջ տարածուած են :

Շնչերակը եւ երակը այնպիսի խողովակներ են՝ որք արիւն ըսուած հեղուկը մեր ամբողջ մարմնոյն մէջ կը բաշխեն սնունդը պահելու համար. այս շնչերակներն ու երակներն ալ սնանելու համար ուրիշ շատ մը փոքրիկ շնչերակներ եւ երակներ ունին. ասոնց մէջ ալ այնչափ անթիւ ուրիշ երակներ կան՝ որոց որչափ ըլլալը Աստուած միայն գիտէ : Ասոնք ամէնը մի եւ նոյն օրինօք 'ի մասունս մասունս բաժանեալ՝ ջղաց հետ 'ի միասին ըսքանչելի եւ աննման հիւսկէն մը կաղմած են :

Շնչերակաց եւ երակաց վերջին ծայրերը այնպիսի գաղտուկ հաղորդակցութեան անցքեր կան, ուստի արիւնը շարունակաբար մէկէն միւսը կ'անցնի :

Արիւնը սրտէն շնչերակաց մէջ կուգայ, եւ երակներէն վերադին գէպ 'ի սիրտը կը գառնայ : Ասան որոյ շնչերակաց մուտքին եւ սրտին կողմը գտնուած երակաց բերանոյն վրայ կան մարմնոյ խողովակներուն մէջ թաղանթներ, որոց բացման եղանակը մէկ կերպ միայն է՝ եւ իրենց կաղմուորութեան համեմատ ուրիշ հեղուկներու մուտք կուտան եւ կամ չեն տար : Շնչերակներուն մաշկերն այնպիսի գոգաւորութիւն մ'ունին, որք կրնան սրտէն

ելլող կամ հոսող արիւնը իրենց մէջ ընդունիլ. իսկ ընդ հակառակն երակներուն մաշկերն այն կերպով զետեղուած են, որ արիւնը սիրտը միայն կրնան տանիլ, եւ ինքնին առանձին մը նալով չեն կրնար անմիջապէս սրտէն ընդունիլ : Շնչերակներէն եւ երակներէն քիչ անջրպետութեամբ կան նոյնպէս մի եւ նոյն բնութիւնն ունեցող թաղանթներ, որք թոյլ չեն տար՝ որ միանգամ հոսած արիւնը վերադին իւր նախորդ տեղը դառնայ. այսպէս սոյն արիւնը շարունակաբար իւր վրայ թափուած նոր արեան պատճառաւ ստիպուած է միշտ գէպ 'ի յառաջ երթալ, եւ առանց կանդ առնելու ամբողջ մարմնոյն մէջ շրջապահիլ :

Բայց, եթէ կայ բան մը որ այս շրջանին աւելի օգնէ, այն ալ շնչերակաց անընդհատ բաղխիւնը կրնայ ըլլալ, որ սրտին թնդիւնին կը նմանի եւ անկէջ իսկ յառաջ եկած է, եւ կրտուի շարժ կամ Բանդ Երակաց :

Եւ դիւրին է իմանալ թէ շնչերակները կ'ուռին սրտին թնդման պատճառաւ, որն որ իւր բաղխմամբն արիւնը շնչերակաց մէջ կը տանի : Սակայն դիտուած է նաեւ՝ որ այս շնչերակներն իրենց բաղադրութեամբ սրտին նման յատուկ թնդիւն մ'ունին :

Այս թնդիւնը կրնայ յառաջ գալ՝ կամ շնչերակաց մանրաթելերը սրտէն իրենց մէջ թափուած արեան պատճառաւ միանգամ ուռնալով, ինքնիրենց վրայ շրջան մը կատարելն, եւ կամ այնպիսի եղանակաւ շրջելն որ ճիշդ զնդերաց նման կը շարժին՝ ինչպէս որ սիրտը կը շարժի :

Ինչ եւ իցէ, չնչերակը կերպ մ'ամենու-
րեք սիրտ է, որ արիւնը բաղխելու եւ յառաջ
մղելու համար ամէն տեղ տարածուած է, զըս-
պանակի մը նման կամ, այսպէս ըսենք, սըր-
տին թնդմամբ վեր բարձրացած զնդերքի մը
պէս, որ մի եւ նոյն կանոնաւոր շարժմամբ
կը բազխէ :

Ուրեմն յայտնի կերեւի՝ թէ չնչերակն այն-
պիսի կազմուածք եւ թնդիւն ունի, որ մէջէն
արիւնը շարունակ դէպ 'ի յառաջ կ'երթայ . եւ
ոչ այսչափ, այլ եւ չնչերակն անդադար իրեն
կցեալ երակին վրայ դարնուելով՝ ինչ արդիւնք
որ իւր վրայ կ'արտադրէ, նոյնը անոր վրայ
կ'արտադրէ թէպէտ եւ ոչ հաւասար . ըսել կու-
գենք, չնչերակն երակին մէջի արեան կը դարնէ
եւ շարունակաբար թաղանթի, թաղանթ կը տա-
նի, առանց վայրկեան մը դադար տալու :

Շնչերակն անընդհատ եւ ամուր թնդիւն
ունենալուն համար, երակէն աւելի պինդ եւ
կարծր գոյացութիւն մ'ըլլալ հարկաւոր էր .
եւ դարձեալ չնչերակը սրտէն եկած արիւնը
ճիշդ իւր որպիսութեամբն, այսինքն, ջերա-
ջերմ ընդունելուն համար զօրաւոր կազմուածք
մ'ունենալու էր, որպէս զի թող չտայ՝ որ այս
հեղուկն իւր չափազանց անօսրութեամբ յոր-
դազեղ ցրուի եւ ձխաշունչ գիւնոյ պէս իւր
անօթները խորտակէ :

Ո՛րչափ զարմանալի է ընութեան իմաստու-
թիւնը . որովհետեւ ինչպէս հոս՝ նոյնպէս ամէն
տեղ մեր մարմնոյն իւրաքանչիւր մասանցն այն-
պիսի կազմութիւն տուեր է, ինչ կազմութիւն
որ պէտք էր իրենց յատուկ պաշտօնները կա-

տարելու համար :

Սրտին ստորին կողմն երկու չնչերակ եւ
խոշոր երակներ կան, որ արմատն են միւս բո-
լոր երակաց : Ամենէն մեծ չնչերակը կըսուի
արձառեբակ : Ամենէն մեծ երակն ալ կը կոչուի
Ներդաբուն : Արմատերակն արիւնը սրտէն եւ թո-
քէն զատ մեր մարմնոյն ամէն մասանց իմէջ կը
սլուէ . ներդաբունն ալ նոյն արիւնը վերստին
բոլոր մարմնոյն մէջ կը տարածէ բաց 'ի սրտէն
եւ թոքէն : Արմատերակը սրտի ձախ խոռոչէն
կը մեկնի . ներդաբունն ալ սրտին աջ կողմի խո-
ռոչը կ'երթայ կը վերջանայ . սոյն այս խոռոչէն կը
մեկնի թոքին չնչերակն՝ որ արմատերակէն քիչ
մը փոքր է եւ թոքին ամենահարկաւոր եղած
արեան մասը միայն կը տանի :

Թոքերակը սրտի ձախ խոռոչը կ'երթայ
կը վերջանայ, եւ այնպէս թոքին եւ իրմով թո-
քին մէջ շնչուած օդոյն խառնմամբ յառաջ ե-
կած չնչերակին յատկացեալ արեան միայն կ'ա-
ռաջնորդէ :

Սիրտը մասնաւոր չնչերակ մ'ունի անա-
նելու, որ արմատերակին հետ սր եւ է անմի-
ջական հաղորդակցութիւն մը չունի, եւ ա-
րիւնը սրտին ձախ խոռոչէն կընդունի : Իսկ
աննդեան յատկացեալ արեան մնացորդը մաս-
նաւոր երակով մը կը տարուի, որ նոյնպէս սըր-
տին հետ անմիջական յարաբերութիւն մը չու-
նի եւ իւր արիւնը սրտին աջ խոռոչին մէջ կը
զրկէ :

Արմատերակն եւ ներդաբունն անմիջապէս
սրտէն մեկնելէն յետոյ՝ իրենց ճիւղերէն մին
դէպ 'ի ուղեղը կը զրկեն . եւ այս պատճառաւ

է որ կենսական զօրութիւնք տոյն մասին մէջ յանկարծական փոփոխութիւն մը կ'ընդունին, որոյ վրայ արդէն խօսած ենք :

Չղերը փոքրիկ կարեր կամ մանրաթելեր են, որք ուղեղէն սկսեալ մարմնոյն մինչև վերջին մասերուն մէջ կը տարածուին :

Ուր որ Չղեր կան, հոն զգայական զօրութիւն մը կամ զգացում մ'ալ կայ. եւ ուր որ զգալոյ կարողութիւնը կը գտնուի, հոն նոյնպէս Չղեր կը գտնուին իբրև յատուկ գործարան ըզգայարանաց :

Չղաց գոգածը կամ խոռոչը պարարտ հիւթ մը լեցուած է, որ ուղեղին նման գոյացութիւն մ'է՝ որոյ մէջէն կենսական զօրութիւնք մեծ զիւրութեամբ իրենց ընթացքը կրնան շարունակել :

Սակէց յայտնի կը տեսնուի որ Չղերն երկու գլխաւոր պաշտօն ունին - նախ՝ որ ըզգացման յատուկ գործարաններ են - ուստի այս նիչ յատուկ զգացումն ունեցող իւրաքանչիւր մասանց մէջ նոյն զգացման ծառայող Չղեր կը գտնուին. զոր օրինակ աչքերը տեսողական Չղերն ունին, ականջք՝ խողական Չղեր, քիթը՝ հոտոտելու յատուկ Չղեր եւ լեզուն՝ ճաշակողական Չղեր, Այս Չղերը մեր մարմնոյն սոյն մասանց մէջ գետեղեալ զգայարանաց կը ծառայեն. եւ որովհետև չօշափողութիւնն ամբողջ մարմնոյ մէջ կը տարածուի, ուստի Չղերն ալ առ հասարակ մեր մարմնոյն իւրաքանչիւր մասանց մէջ սփռուած են :

Այն Չղերն՝ որք ուղեղէն սկսեալ ամբողջ մարմնոյն մէջ կ'երթան՝ ողնայարին քովէն կ'անց-

նին եւ անկէ բաժնուելով մարմնոյն բոլոր մասանց մէջ կը տարածուին :

Չղաց երկրորդ պաշտօնն ալ առջինէն պակաս կարեւոր չէ, որ է դնդերքները գործածութեան շարժող եւ ամէն կերպ շարժումն յառաջ բերող կենսական զօրութիւնները բովանդակ մարմնոյն մէջ տարածել :

Շօշափողութեան ծառայող այս ամենուրեք տարածեալ Չղերը մեծապէս կը նպաստեն նաև կենսական զօրութիւնները բոլոր դրնդերաց հաղորդելու. իսկ այն Չղերը՝ զորս միւս չորս զգայարանաց յատուկ գործարաններն անուանեցինք՝ այս պաշտօնը չունին բնաւ :

Դիտելու արժանի բան մ'ալ այս է՝ որ չօշափելեաց ծառայող Չղերը միւս զգայարանաց ծառայող մասերուն մէջ ալ կը գտնուին. ասոր պատճառն այն է՝ որ իրենց յատուկ ըզգացման հետ չօշափելեաց զգացողութիւնն ալ ունին : Աչք, ականջք, քիթ եւ լեզու կրնան ընդունիլ նաև այն ազդեցութիւններն՝ որոնք չօշափելիքէ միայն կախումն ունին. եւ աստի յառաջ կուգան այնպիսի ցաւեր՝ որք՝ գոյն, ձայն, հոտ եւ համ չունին :

Այս մասերն այնպիսի շարժումներ ալ ունին, որք իրենց մասնաւոր զգացողութեանց ծառայող անմիջական Չղերէն զատ ուրիշ Չղաց ալ կը կարօտին. զոր օրինակ աչաց շարժումներն՝ որ այնչափ կողմեր կը դառնան, եւ լեզուի շարժումներն՝ որ խօսակցութեան մէջ դանազան եղանակներ կ'առնուեն, բնաւ տեսանելեաց եւ ճաշակելեաց ծառայող Չղերէն կախումն չունին : Այս գործարանաց մէջ ուրիշ

բաներու ծառայող շատ մը ջղեր ալ կը գտնու-
ւին : Ինչպէս , աչաց մէջ կան շարժիչ ջղեր եւ
ուրիշներ ալ՝ զորս անդամազնութիւնը կը ցու-
ցունէ :

Մինչեւ հիմայ նկարագրուած մասերուն գը-
րեթէ ամէնն ալ փոքրիկ բացուածքներ ունին ,
որք կըսուին շաչոյէ + ժարձոյ . եւ այս ծակերէն
որոշուած շարժմամբ կամ
որոշուած ամենանուրը հեղուկներն ան-
գամ կը ցնդին եւ կը գոլորշիանան :

Հաստատուն եւ կարծր մասանց վրայ խո-
սելնէս վերջը հարկ է հիմայ հեղուկներու եւ
կենսական գորութեանց վրայ խօսիլ :

Ամբողջ մարմինը ուղղող հոսանուտ նիւթ
մը կայ՝ որ կըսուի արիւն :

Այս հեղուկին ամբողջ շեղջն ուրիշ շատ մը
հեղուկներ ունի , ինչպէս են մաղձ եւ շճուկը :
ձիշգ արիւն ըսածնիս այն հեղուկն է՝ որ կար-
միր է եւ նշարակի վրայ կը մածնու :

Այս հեղուկին պատճառաւ է՝ որ ջերմու-
թիւնն ամբողջ մարմնոյն մէջ կը տարածուի եւ
կենդանի կը պահէ : Ասկէց կառնուն իրենց
անունըը մեր մարմնոյ իւրաքանչիւր մասերն ,
այնպէս որ եթէ կենդանին այս անդեան միջո-
ցաւ շարունակ չը դարմանուի , անտարակոյս
կ'ոչնչանայ :

Բնութեան ամենամեծ գաղտնիքներէն մէ-
կըն է գիտնալ՝ թէ արիւնն ինչպէս կը տաքնայ
սրտին մէջ :

Արնամբ մտածել՝ թէ արիւնը սրտին չա-
փագանց ջերմութեամբ կը տաքնայ եւ կը տա-
րածուի , ինչպէս որ ջուրն արդէն տաք անո-

թի մէջ կը տաքնայ :

Իսկ եթէ սրտին տաքութիւնն՝ որ մեր մար-
մնոյ մեւս մասերուն ունեցած ջերմութենէն
աւելի չէ՝ անբաւական է այս բանին , կրնամք
յաւելուլ երկու բան ալ . նախ՝ թէ արիւնը կամ
բոլորովին եւ կամ մասամբ իւրիք շարժման մի-
ջոցաւ տաքցող հիւթերու նման նիւթէ բաղ-
կացած է . եւ արդէն կը տեսնուի՝ որ արիւնը
գրեթէ բոլորովին խառնուած է մաղձին հետ ,
որ ջեռնոյ խիստ ընդունակ նիւթն է , եւ թե-
րեւս կրնայ ըլլալ՝ որ արիւնն ինքնին իւր յա-
տուկ ընութեամբ ջերմութեան այս հանդա-
մանքն ունենայ , այնպէս որ շարունակ 'ի շարժ-
ման գոլով , ինչպէս որ իրօք ալ այսպէս է ,
նախ 'ի սրտէ եւ ապա 'ի շնչերակաց նշանաւոր
ջերմութեան աստիճան մը կ'ստանայ :

Երկրորդ՝ կրնամք ըսել՝ թէ սրտին մէջ ա-
րեան բորբոքում մը կայ :

Բորբոքումն կըսուի որ եւ է նիւթոյ կամ
բանի մը եռալով , այն է իւր ներքին մասանց
ընդարձակելովը , ուսելուն :

Այս եռացումը տեղի կ'ունենայ ուրիշ նիւ-
թոյ խառնմամբ՝ որ բորբոքած նիւթոյն մա-
սանց մէջ կը մտնէ եւ կը տարածուի . եւ այն
մասերն 'ի ներքուստ արտաքս մղելով՝ մեծ
չրջան մ'ընել կուտայ անոնց : Այս է պատճա-
ռն որ քիչ մը խմորը բոլոր գանդուածը կը
խմորէ կամ կ'ուռեցնէ :

Արնամբ , ուրեմն մտածել՝ թէ սիրտն արեան
մէջ զինքը բորբոքելու կարող նիւթ մը կը խառ-
նէ , եւ կամ առանց հեռուն երթալու կրնանք
ըսել՝ թէ շնչերակը սրտին դէպ առ ինքն մղող ա-

ըրևան ընդունելէն վերջը՝ սրտին մէջ մնացած մի քանի մասերն իբրև խմոր կը ծառայեն այն նոր արեան՝ զոր երակը քիչ մը վերջը սրտին մէջ կը տանի, ինչպէս որ թթուած փոքր մի խմորը նոր զանդուածը կը խմորէ և կ'ուռեցնէ :

Ուրեմն թէ այս պատճառներէն միայն մին բաւէ, եւ թէ ամէնը մէկէն հարկ ըլլան եւ կամ դուցէ թէ մարդոց անձանօթ ուրիշ դաղտնիք մ'ալ ունենայ բնութիւնը, սակայն եւ այնպէս ճշմարիտ է թէ արիւնը սրտին մէջ աւելի կը տաքնայ, եւ այս ջերմութիւնն է՝ որ կենաց յարատեւութիւն կուտայ : Որովհետեւ սառուցեալ կամ պաղած արիւնէն բնաւ կենսական զօրութիւններ չը կրնար յառաջ դալ, եւ ասանկով շարժումը կը դադրի եւ բնականաբար կենդանին կը մեռնի :

Արիւնը պէտք է՝ որ միջակ թանձրութիւն մ'ունենայ. վասն զի երկու կողմանէ, այսինքն թէ անսորութեան եւ թէ թանձրութեան կողմանէ չափազանցութիւնը մեծ չարիքներ կը պատճառեն մեր մարմնոյն :

Արիւնն երբեմն արտաքոյ կարգի կ'եռայ, եւ երբեմն ալ յանշափա կը թանձրանայ. եւ աւիկայ այն ատեն կը պատահի՝ երբ արեան մէջ ուրիշ հեղուկ մը խառնուի :

Քանի որ փորձը կը ցուցնէ՝ թէ փոքր մի խմորը բոլոր զանդուածը կը խմորէ կամ կ'ուռեցնէ, եւ թէ շատ անգամ մի միայն կաթիլ մը հեղուկը իրմէ շատ մ'աւելի քանակութիւն ունեցող ուրիշ հեղուկ մը կը յուզէ եւ կ'եռացնէ, ապա հարկ մը չը կայ կարծելու թէ արիւնը

բոլորովին թանձրացնելու եւ բորբոքելու ընդունակ մեծաքանակ հեղուկ մը կայ :

Այս է պատճառն՝ որ կաթիլ մը թոյն արեան մէջ մտնելով՝ բոլոր արիւնը կը սառեցնէ եւ մահ կը պատճառէ : Նոյնպէս դիւրին է հաւատալ թէ օտար բնութիւն ունեցող կաթիլ մը հեղուկը կրնայ բոլոր արիւնը բորբոքել :

Ուստի ոչ թէ ամէն անգամ արեան մեծ քանակութիւնն՝ այլ եռացումն է՝ որ արիւնն երակներէն դուրս կը մղէ եւ մեր քթէն արեան հոսումն եւ ուրիշ նմանօրինակ դէպքեր յառաջ կը բերէ. եւ այս վէրքն ոչ թէ վերստին արիւն հասանելով կը բժշկուի, հապա արիւնը դովազնելու եւ հանդարտեցնելու կարող դեղ մը գտնելով :

Արդէն ըսած եմք՝ թէ արիւնն անընդհատ ընթացք մ'ունի սրտէն դէպ 'ի չնչերակները, չնչերակներէն՝ երակներն եւ երակներէն վերստին դէպ 'ի սիրտը, սրտէն ալ դարձեալ չնչերակաց մէջ, եւ միշտ մի եւ նոյն եզանակաւ քանի որ կենդանին սղջ է :

Այսպէս չնչերակաց եւ երակաց մէջ գանուած արիւնը միեւնոյն է, այս տարբերութեամբ՝ որ չնչերակին արիւնը սրտէն մեկնելէն անմիջապէս վերջն աւելի տաք, աւելի նուրբ եւ աւելի զօրաւոր կըլլայ, մինչդեռ երակաց մէջ եղած արիւնն աւելի չափաւոր եւ թանձր է : Արիւնը երակաց մէջ չափաւորեալ ջերմութիւն մը միայն կրնայ ունենալ. եւ եթէ այս արիւնն երակներուն մէջ անշարժ մնար, պիտի թանձրանար եւ չը պիտի կրնար ջերմութիւն առնելու համար դէպ 'ի սիրտը վերադառնալ :

Շնչերակի արիւնը սա յատկութիւնն ալ ունի՝ որ երբ երակը ծակի կամ խայթուի, կը տեսնեմք որ մէջի արիւնն ալ առատութեամբ եւ տարբեր եղանակաւ դուրս կը ցայտի. ասոր պատճառը շնչերակին իւր բնական բաղախնըն է :

Ամէն տեսակ հիւթ, ինչպէս մաղձ, աւիշ կամ շիճուկ, արեան հետ 'ի միասին մի եւ նոյն խողովակներուն մէջ կը հոսին եւ անտի մարմնոյն մի քանի մասանց մէջ կը բաժնուին առջի ըսած կերպովնս : Այս հեղուկներն իրենց յատուկ բնութեան եւ տարբեր կազմութեան կամ, այսպէս ըսենք, ծակոտիկներութեան համեմատ տարբեր հանդամանքներ ունին :

Ընդհանրապէս այս հեղուկէն յառաջ կուգան եւ կը կազմուին լորձունք, մէղ, քրտինք, երակաց քով դոնուած աւշալից անօթներուն պարունակած ջրերն եւ ստամոքսին խաղձմանց ջրերն՝ որք մարտդութիւնը դիւրացնելու կը ծառայեն, եւ վերջապէս, այն արտատուքներն ալ՝ զորս բնութիւնը աչքին ետեւի կողմը դրսուած քանի մը խողովակներուն մէջ լեցուցած է՝ որ աչքերը բանան :

Կենսական զօրութիւններն արեան ամենէն աւելի կենդանի եւ շարժուն մասն են, եւ մարմնոյն իւրաքանչիւր մասերն 'ի գործողութեան կը դնեն :

Երբ այս զօրութիւնները չափազանց աչխատութեամբ սպառին, ջղերը կը թուլան, ամեն բան կը մեղկանայ. կենդանին կը թմբրի կամ կը քնանայ եւ կը հանգչի այն աչխատութենէն կամ գործէն, որով շարունակ կ'ըբաղեր

արթուն եղած միջոցին :

Արիւնը եւ կենսական զօրութիւնք հանապաղ կը նուազին եւ միշտ նորոգութեան պէտք ունին :

Գիւրին է իմանալ՝ թէ կենսական զօրութիւնք իստատ նուրբ եւ յուզեալ ըլլալուն համար մարմնոյն ծակախփներէն կանցնին եւ իրենց բնական յուղմամբը կը ցնդին :

Նոյնպէս գիւրին է հասկնալ՝ թէ արիւնն որչափ որ սրտին մէջ երթայ եւ վերստին ետ դառնայ, այնչափ ալ յետոյ կը գոլորչիւանայ : Սակայն արեան ցրուելուն մասնաւոր պատճառ մը կայ, զոր սննդէն կը քաղենք :

Պէտք է որ մարմնոյն մասերը փոքր ինչ պնդութիւն ունենան : Բայց եթէ չափաւոր կակղութիւն մ'ալ չունենային, շարժիլը գիւրին չըլլալով՝ գործելու ալ յարմար պիտի չըլլային եւ պիտի չըծուէին : Մարմնոյն մասերն ըստ բաւականին կակուղ ըլլալով կենսական զօրութիւնք ալ կը ցնդին եւ կ'սպառին՝ թէ իրենց յատուկ ջերմութեան եւ թէ զիրենք շրջապատող մարմնոց շարունակաբար յուղման պատճառաւ :

Ասոր համար է՝ որ անկենդան մարմինը ոտակ իր մէջ դոնուած ծղոյն շարժմամբ կ'ապականի եւ կը նեխի. որովհետեւ այս կերպով ծածանեալ օդը նոյն մեռեալ մարմինը արտաքուստ շարժելով եւ իւր անօսրութեամբ նոյն մարմնոյն ծակախփներուն մէջ մտնելով զայն կապականէ եւ կը քայքայէ : Մի եւ նոյն բանը պիտի պատահէր կենդանի մարմնոյն ալ՝ եթէ հետզհետէ մտնելով չըզարմանուէր :

Մտերու եւ մարմնոց միւս մասանց այս նո-

րողութիւնը՝ գլխաւորաբար վերքերուն բժշկու-
թեան մէջ կը տեսնուի . վասն զի վերքերը
կը գոցուին եւ մի եւ նոյն ժամանակ անմիջա-
կան նորոգութեամբ նոյն վիրաւորեալ մասանց
տեղն ուրիշ մտեր կուգան :

Այս նորոգութիւնն երակաց մէջ հոսող ա-
րիւնը կը կատարէ , որոյ ամենանսրբէ մասերը
մարմնոյն ծակտիքներէն արտաքս ցնդելով իւ-
րաքանչիւր անդամներուն վրայ կը կաթին եւ
անոնց վրայ փակչելով մարմինը կը նորոգեն :

Ասով է՝ որ մարմինը կ'աճի եւ կը յարա-
տեւէ , ինչպէս որ տունիկերն ու ծաղիկներն ալ
կ'աճին եւ հաստատուն կը մնան անձրեւաց
կաթիլներով : Արիւնը միշտ կենդանին անուցա-
նելու եւ դարմանելու ծառայելով՝ վերջապէս
ինքն ալ պիտի սպառէր՝ եթէ նորոգութիւն
մը չստանար :

Բնութիւնն այս նորոգման եղանակը հո-
դացած է , կերակուր եւ միանգամայն այնպի-
սի կարողաւորեալ գործարաններ տալով՝ որոց-
մով արիւնն եւ անով ամբողջ մարմինը կը նո-
րոգուի :

Կերակուրը կ'սկսի նախ 'ի բերանն յանգող
խաղճմուկներուն միջոցաւ բերնին մէջ կակ-
ղիլ : Այս ջղերը կերակուրը կը կակուղցնեն եւ
այնպէս կընեն՝ որ դիւրաւ մը կը հալի, եւ կը
մանրուի 'ի ձեռն ծամելեաց . ասիկա մարտողու-
թեան սկիզբն է :

Կերակուրն որկորոյ միջոցաւ բերնէն դէպ
'ի ստամուքս կ'երթայ , ուր վրայն կը հոսին ու-
րիշ խաղաւարաններէ կաթած զանազան տեսակ
ջրեր , որք նոյն իսկ ստամուքսին մէջ մեծ թի-

ւերէ կը բաղկանան : Այս ջրոց եւ լեարդի
ջերմութեան պատճառաւ կերակուրը ստամուք-
սին մէջ գրեթէ կրակի վրայ դրուած պոյտի
պէս կ'եփի : Ստամուքսն ջուրերը զօրաւոր ը-
լալուն համար՝ գործողութիւնը մեծ դիւրու-
թեամբ կը կատարուի . որովհետեւ կերակուրը
մանրելու գորութիւն ունին , եւ այնպիսի մա-
նրը մասուկներու կը բաժնեն՝ որ առջի կեր-
պէն բոլորովին կը տարբերի :

Մարտողութիւն ըսուած գործողութիւնն
այս է՝ որ ուրիշ բան չէ , բայց եթէ կերակու-
րը կենդանւոյն հետ բաղադրելու համար ընդու-
նել ստամուքսին մէջ եւ փոփոխել :

Մարտուած նիւթն սպիտակ եւ լոյժ հեղուկ
մը կը դառնայ , որ մասաց կըսուէ :

Մասացն ստամուքէն ստորին աղեաց մէջ
կ'երթայ եւ հոն անդական մասունքը միւս մա-
սերէն կը զտուին : Զտումը բոլոր աղեաց երկայ-
նութեամբը կը շարունակուի : Այս գործողու-
թիւնը կը կատարուի ստոծանւոյն աղեաց վրայ
շարժելովն եւ չնչառութենէ յառաջ եկած ա-
նրնդհատ ճնշմամբ . վասն զի այս կերպով ա-
ղիքները ճնշուելով իրենց մէջ եղած հեղուկը
կ'ափպիլ իւր մտաքին վրայ գտնուած բոլոր
ծակերուն մէջ հոսիլ , այնպէս որ աղեաց կցու-
ած կաթնային երակները սոյն շարժմամբ շա-
րունակ լեցուն կը մնան . բայց , որովհետեւ
չափազանց նուրբ են , ուստի ամենէն կակուղ
մասերը միայն կընան ընդունիլ՝ որք աղիքնե-
րուն ճնշումէն մղուելով՝ սոյն կաթնային ե-
րակաց մէջ կուգան եւ հոն կը կազմնն այն
ճերմակ հեղուկն՝ որով այս երակները կը լե-

ցունն եւ կը դունաւորուն , մինչդեռ ամենէն մեծ երակը մի եւ նոյն ճնշման զօրութեամբ իւր ճամբան կը շարունակէ աղիքներուն մէջ , մինչեւ որ կղկզանքները դուրս թափուին : Ուրովհետեւ հաստ աղեաց մէջ իրարմէ հեռու գետեղուած քանի մը թաղանթներ կան՝ որք հաւասարապէս կ'արդելուն նոյն նիւթը շուտով վեր ելնելէ ու իջնելէ . եւ նաեւ ոմանք 'ի վերուստ 'ի վայր որդնաձեւ շարժում մ'ալ ունին , որով նիւթը կ'ստիպուի մասնաւոր ճամբայ մը բռնել :

Աթիւնային երակաց հեղուկը բնութիւնը կը պատրաստէ կենդանւոյն սննդեան համար . իսկ մնացորդն աւելորդ մասն է , որ իբրեւ մրուր արտաքս կը թափուի , եւ այս պատճառաւ թորմունք կամ կղկզանք կըսուի :

Այսպէս լոյծ նիւթը թանձրէն եւ սննդական մասն ալ աւելորդէն կըզտուի գրեթէ զինին խաղողէն կամ իւզը ձիթապտղէն հանուելու պէս , կամ բարակ ալիւրն եւ թեփը մաղէն անցնելով կամ հեղուկ մը քամոցէն անցնելով զտուելու պէս :

Աղիքներն իրարու վայ գալարուն եւ օձապտոյտ շրջան ունենալով՝ ստամոքսին մէջ մարսուած նիւթը բաւական ժամանակ աղիքներուն մէջ կը մնայ , եւ շնչառութեան համար անհրաժեշտ եղող ամէն կերպ դիւրութիւն կուտայ , եւ սննդական մասն այնչափ կը դռէ , որ բնաւ սնուցանող տարերք մը չը կորսուիր :

Աղիքներուն այս մանուածոյ շրջանին եւ ներքին կարգաւորութեան համար է՝ որ շատ անգամ կենդանին միանգամ կերակուր առնելէն վերջը բաւական ժամանակ կրնայ դիմանալ .

որովհետեւ սնուցիչ նիւթը կատարելապէս զրտուելու համար երկար ատենի կը կարօտի . եւ այս պատճառաւ կերակրոց բաշխումը կը յարատեւէ , եւ չը թողուր որ շատ անօթեաննք :

Ստուգուած բան է՝ թէ բոլորովին ուղղորդ աղիք ունեցող կենդանիները , ինչպէս է դայլը , գրեթէ ամէն վայրկեան անօթի են :

Կը հետեւի՝ թէ այս կարգի կենդանեաց աղիքներուն մէջ մարսեալ կերակուրը քիչ ժամանակ կը մնայ , եւ ստոր համար ուտելոյ պէտքն ստիպողական եւ յաճախ կըլլայ :

Ինչպէս աղիքները շնչառութեամբ ճնշուելով կաթնային երակաց մէջ արդէն ըսած հեղուկնիս կը քաշեն , նոյնպէս երակներն ալ ճրնչուելով սոյն հեղուկը միջէնդերաց մէջ գանուած խաղճմունքին մէջ կը մղեն , ուր կը վերջանան աղիքները . ուստի մի եւ նոյն ճնշումը դանտնք այնպիսի աւազան մը կը տանի՝ որ կըսուի Բէքէէ աւազան , յանուն աւազանը գտնող ժամանակակից անուանի անդամազննի : Ասկէց կերակուրն երկայն խողովակի մը մէջ կ'անցնի՝ որ նման պատճառիս համար Բէքէէ Խողովակ կը կոչուի :

Այս խողովակը գէպ 'ի ողնայարին երկայնքը տարածուելով՝ կերթայ կը յանդի վզէն քիչ մը վարը գանուած երակին՝ որ կըսուի երակք Ներոյ աւոյ . այս երակէն ալ սրտին մէջ կ'երթայ , եւ հոն բոլորովին արեան կերպարանք կ'առնու :

Գիւրաւ կը հասկցուի՝ թէ ինչպէս մամագըն այս երակին մէջ կը բարձրանայ , եթէ մի-

այն դիտենք որ սոյն Բեքէէ Խաչատուրի վրայ մէկ մէկէ հետի այնպիսի թաղանթներ կը գտնուին՝ որք հեղուկը վար իջնել չեն թողուր, եւ շարունակաբար դէպ 'ի վեր կը մղուի, թէ կաթնային երակաց յորդութենէն եկած նիւթին պատճառաւ, եւ թէ թոքին շարժմամբ՝ որ այս հեղուկը վեր կը բարձրադունէ զինքը պարունակող անոթը կամ խողովակը մղելով :

Շնչառութիւնն սրչափ բաներու կը ծառայէ՝ բացայայտ չենք դիտեր: Շնչառութիւնը սրտին եւ արեան զովութիւն կուտայ. սրտին ջերմութենէն յառաջ եկած գոլորշիներն իր ետեւէն քաշելով դուրս կը մղէ. ձայն եւ խօսք կազմելու օդ կը ժողովէ. ծծած օդովը կենսական զօրութեանց բաղմանալուն կը նպաստէ. մամայն աղիքներէն կաթնային երակաց, անկէց ալ միջնդերաց դեղձին, եւ ապա Բեքէէ Խաչատուրի կամ Խոչատուրի մէջ, եւ հուսկ յետոյ անրակին ներքեւ եղած երակները կը տանի, եւ շարունակ աղիքները ճնշելով կըղկզանաց արտաթորումը կը դիւրացունէ :

Այս է ահա անիկ զրեթէ մեր մարմնոյն կազմաւորութիւնն եւ մասանց պաշտօնները, որոց մէջ ամենէն գլխաւորներն են սիրտն ու ուղեղը, որ միւս ամէն մասանց վրայ կ'իշխեն :

Այս երկուքին ազդեցութիւնն ամբողջ մարմնոյ մէջ կը տարածուի : Ախրաբ մարմնոյն մնունդ տուող արիւնն իւր ամէն մասերուն մէջ կը սփռէ. ուղեղն ալ կենսական զօրութիւնները կը բաշխէ բովանդակ մարմնոյ մէջ, որով մարմինը կը շարժի :

Բնութիւնն առաջնոյն, այսինքն, սրտին շնչեղակներ եւ երակներ տուած է, որպէս զի անոնցմով արիւնը բաշխուի. իսկ երկրորդին կամ ուղեղին ալ ջղեր տուած է՝ կենսական զօրութիւնները մատակարարելու համար :

Տեսանք որ կենսական զօրութեանց գործողութիւնը սրտէն կ'սկսի, որ արիւնը բախելով աւոր ջերմութիւն տալէ յետոյ, իւր ամենանուրբ մասերը դէպ 'ի ուղեղը կը դրկէ. ուղեղն ալ զանոնք կատարելագործելէ յետոյ, կը հաղորդէ սրտին այն կենսական զօրութիւնները՝ որք իւր թնդիւնը յառաջ գալու անհրաժեշտ միջոցներն են :

Այսպէս ամբողջ մարմինը գործածող այս երկու գլխաւոր մասերը փոփոխակի միմեանց կ'օգնեն. որովհետեւ եթէ սիրտը չըլլար՝ դէպ 'ի ուղեղն արիւն չէրթալով ուղեղը չը պիտի կրնար ունենալ կենսական զօրութիւնն կազմող տարերքը. նոյնպէս ալ սիրտն եթէ ուղեղին միջոցաւ կենսական զօրութիւն չառնէր՝ չը պիտի կրնար շարժիլ :

Այս երկուքին փոփոխակի իրարու օգնելուն մէջ որը յառաջ է, գիւսարին է որոշել. հասկնալու համար հարկ է կենդանւոյն սկզբնական կազմակերպութիւնը դիտել :

Սաղմը, այսինքն, կազմուելիք կենդանին, ուրիշ արդէն կազմեալ եւ ողջ կենդանիներէ կը սերի, որոց մէջ արիւն եւ կենսական զօրութիւն կենալուն համար կրնան նոր սկսող կենդանւոյն ալ հաղորդել :

Գիտեմք՝ որ սաղմը մօր արիւնով կը սնանի. ուստի կրնամք մտածել՝ որ այս արիւնը նորա-

կերտ փոքրիկ կենդանուոյն սրտին մէջ երթալով կը տաքնայ, եւ սրտին բնական ջերմութեամբ կը տարածուի. եւ թէ այս նուրբ արիւնը սրտէն ուղեղը կ'երթայ, ուր արդէն ըսած կերպովն իս իր կենսական զօրութիւնները կը կազմուին. եւ թէ 'ի ձեռն ջղաց դէպ 'ի սիրտն եկող այս կենսական զօրութիւնները սրտին առաջին բախիւնը յառաջ կը բերեն. յետոյ շարունակ կը բախէ դրեթէ նման ժամացուցի ճօճանակին՝ որ առաջին անգամ ճօճուելով մինչեւ վերջը կը շարունակէ :

Կրնանք դարձեալ մտածել, եւ այս աւելի հաւանական է՝ որ կենդանին կենսական զօրութեամբ լեցուն սերմերէ նկարուած ըլլալով ուղեղն իւր նախնական կազմակերպութեամբ կրնայ ունենալ այնչափ զօրութիւն՝ որչափ որ հարկաւոր է սրտին առաջին թնդիւնը յարուցանելու, ուրկէց կախումն ունին միւս ամէնքը :

Ինչ որ է. քանի որ նորակերտեալ կենդանին գոյութիւնն ուրիշ կենդանիէ կ'առնու, ապա դիւրին է իմանալ թէ շարժումն ալ մէկէն միւսը կը հաղորդուի, եւ թէ այն առաջին զօրութիւնը՝ ուրկէց կամեցաւ Աստուած որ միւս ամէնքը կախումն ունենան՝ միանգամ շարժելով սոյն շարժումը մինչեւ վերջը կը յարատուէ :

Մեր մարմնոյն մէջ ստորագրած մասերնէս զատ մարդկային մտաց ծանօթ եւ անծանօթ ուրիշ շատ մը մասունքներ ալ կան. բայց այնչափս բաւական է իմացնելու՝ թէ այնչափ փափուկ եւ իմաստութեամբ գործարանաւորեալ մարմնոյ զարմանալի կազմակերպութիւնն եւ

գործողութիւնները կատարող գլխաւոր զօրութիւններն ինչ են :

Առողջութիւն ըսելով կ'իմանամք մարմնոյն լաւ վիճակի եւ բնական կարգաւորութեան մէջ գտնուիլը : Ընդ հակառակն, հիւանդութիւնն է ամբողջ մարմնոյ եւ կամ իւր մասանց ոմանց խանդարմունքը :

Եթէ մեր մարմնոյն յօրինուածութիւնն այնչափ խախտի՝ որ բնական պաշտօնները բոլորովին դադրին՝ մահը կը հետեւի : Ասիկա ճիշդ այն ժամանակ կը պատահի՝ որ ատեն երկու գլխաւոր մասերն, այն է սիրտն ու ուղեղը բոլորովին անկար ըլլան գործելու, այսինքն երբ սիրտն այլ եւս բախելէն դադրի, եւ ուղեղն այլ եւս կենսական զօրութիւնները դէպ 'ի սիրտը տանելու անժանօթ գործը չը կրնայ կատարել :

Որովհետեւ, թէպէտ եւ մեր մարմնոյն միւս մասերը՝ որք կենաց համար հարկաւոր են, գործելէ դադրած ժամանակ՝ կը տկարացունեն, բայց բոլորովին չեն մեռցուներ. մինչդեռ երբ սիրտն ու ուղեղը բոլորովին գործելէ դադրին, անմիջապէս կը մեռնի մարդ :

Արդ, ընդհանրապէս երեք բան կրնան այս երկու մասանց մէջ գործողութիւնը դադրեցունել : Նախ՝ եթէ իրենք իրենց գոյութեան մէջ խանդարուին, կամ երբ իրենց կազմութեանը մէջ շփոթութիւն իյնայ :

Նրկրորդ՝ երբ կենսական զօրութիւնները՝ որք գրեթէ մեր մարմնոյն հողին են՝ բոլորովին պակօին : Նրրորդ՝ երբ այս կենսական զօրութիւններն անպակաս եւ պատրաստ գտնուած ատենն ալ, ուրիշ պատճառներով ուղեղէն սիր-

ար, արտէն ալ ուղեղը հոսելէ արդիւրոյն :

Գրեթէ այս պատճառներէն մէկն անգամ կրնայ ամբողջ մեքենայն դադարեցունել : Որովհետեւ կամ զսպանակը կը խորտակի, ինչպէս, եթէ երգիւնին մէջէն խողովակներն եւ աղօրեաց մէջէն անիւներն եւ երկանաքարերը պակսին . կամ շարժիչ զօրութիւնը կը դադրի, եթէ անիւր դարձունող ձորակը հոսելէ դադրի, եւ երգիւնին մէջ օդ մզող փութքը պատռի . եւ կամ թէ շարժիչ զօրութիւնն եւ թէ շարժեալ մարմինն աղէկ վիճակի մէջ գտնուին՝ բայց մին միջանկեալ մարմնոյ պատճառաւ միւսին վրայ գործելէ կ'արգիլուի, ինչպէս երբ երգիւնին մէջ ինկած օտար մարմին մը չը թողու՝ որ իրեն մէջ հողմ մտնէ եւ ջուրն ու անիւները պէտք եղած դիրքին մէջ գտնուին, բայց գլխաւոր տեղերէն միոյն մէջ միջանկեալ մարմին մ'իցնայ, եւ շարժումն արգիլէ :

Մոյնպէս ալ մարդկային մարմնոյն անհամեմատ յարգարուն : Եւ ճնաշխարհիկ մեքենայն կը մեռնի, եթէ գլխաւոր զսպանակները խորտակուին՝ կամ խանգարուին . եթէ շարժիչ զօրութիւնն այլ եւս չը կենայ . կամ եթէ զսպանակները լաւ վիճակի մը մէջ գտնուին եւ կենսական զօրութիւններն ալ պատրաստ ըլլան, բայց մասնաւոր պատճառներով շարժելէ արգիլուին :

Եթէ դէպքն այնպէս բերէ՝ որ ուղեղը կամ սիրտը մասամբ խիւր վնասուին, եւ մանրաթելերուն շարքն ընդհատի, եւ կամ առանց ատոնց վնաս մը գալու՝ եթէ ուղեղը չափազանց կակղանայ կամ պնդանայ, կամ թէ նը-

մանապէս սրտին մանրաթելերը բոլորովին պնդանան կամ թուլան, այն ատեն այս երկու զօրութեանց գործողութիւնը, որոցմէ կախումն ունի բոլոր շարժումը, կը դադրի, եւ բոլոր մեքենայն անշարժ կը մնայ :

Մոյնպէս երբ ուղեղն ու սիրտն առողջ ըլլան, բայց կենսական զօրութիւնները պակսին, մեր մարմնոյն զսպանակներն ալ գործելէ կը դադրին, շարժիչ զօրութիւնը չը կենալուն համար . նմանապէս եթէ յիշեալ զօրութիւններն ըստ պատշաճի պատրաստ գտնուին, բայց խողովակներն՝ ուսկէց պիտի անցնին՝ կամ անձուկ ըլլան եւ կամ ո՞ր եւ է նիւթով մը լեցուած ըլլալով՝ մուտքն ու ճամբան փակուի, չեղածի պէս կըլլան : Այսին զի ուղեղն ու սիրտը՝ որոց գործողութիւնն ու հաղորդակցութիւնը մեզի կեանք կը պատճառեն՝ անզօր կը մնան, շարժումն իւր սկզբան մէջ կը դադրի, ամբողջ մեքենան կը կործանի եւ չը կրնար կանդուն մնալ :

Այս է ահա մահ ըսուածը, եւ ասոր մերձաւոր տրամադրութիւնն ալ կըսուի հիւանդութիւն :

Այսպէս արեան այն ազականութիւնը՝ որով արիւնը կենսական զօրութեանց լաւ նիւթը հայթայթելէ կ'արգիլուի, մեր մարմնոյն հիւանդութիւն կը պատճառէ : Եւ եթէ քնական ջերմութիւնը կամ արեան չափազանց թանձրանալուն համար բոլորովին շիջանի, եւ կամ իւր չափազանց անօսրութեամբ ցրուի, եւ բընաւ կենսական զօրութիւններ չը դրկէ՝ մեռնիլըն անհրաժեշտ կըլլայ : Այն կերպով կրնամք

սահման մը տալ ու ըսել՝ թէ մահն է քարարածն շարժման յարեան եւ 'ի սրտի :

Հիւանդութեանց պատճառաւ մեր մարմնոյն մէջ ինկած խանդարմանէն կամ ապականութենէն զատ՝ կան կրքերէ յառաջ եկած ուրիշ անկարգութիւններ ալ՝ որ ճիշդը դուրցելով տեսակ մը հիւանդութիւններ են : Այս ամէն մէկ խանդարմունքները բացատրել խիստ երկար ըլլալով՝ բաւական կը համարինք սա միայն նշանակել՝ թէ ընդհանրապէս չըկայ կիրք մը՝ որ կենսական զօրութեանց եւ անոնցմով սրտին եւ արեան մէջ փոփոխութիւն կամ խանգարմունք չը մտցունէ : Եւ սա կը հետեւի արտաքին առարկայներէ ուղեղին վրայ եկած սաստիկ ազդեցութենէն :

Ասկէց , հարկաւորաբար , սա յառաջ կուգայ՝ որ կրքերէն ոմանք կենսական զօրութեանց սաստիկ գրգռումն կամ յուզմունք կուտան , ոմանք ալ կը մեղմացունեն : Հետեւաբար կրքեր կան՝ որ պատճառ կ'ըլլան նոյն զօրութեանց սրտին մէջ առատ կամ քիչ հոսելուն : Այն կրքերը՝ որ կենսական զօրութեանց յորդելուն պատճառ են , ինչպէս բարկութիւն եւ արիւթիւն , նոյն զօրութիւններն առատութեամբ մեր մարմնոյն զանազան մասանց մէջ կը տարածեն , եւ ամէն կողմերէ ներս դուրս կը մղուին զանոնք : Իսկ այս զօրութիւնները խափանելու եւ կասեցնելու կը ծառայեն տրտմութիւն եւ յուսահատութիւն՝ որ կենսական զօրութիւնն 'ի ներքս կը սեղմեն խնայելով գործածելու պէս :

Այս պատճառաւ է՝ որ սրտին եւ երակաց

բախիւններէն ոմանք խիստ յամր եւ ոմանք խիստ արաղ , ոմանք անորոշ եւ անհաւասար եւ ոմանք ալ չափաւոր կըլլան . այս առթիւ արեան մէջ տարբեր փոփոխութիւններ եւ , հետեւաբար կենսական զօրութեանց մէջ ալ նորանոր այլայլութիւններ տեղի կ'ունենան : Երբ մարմնոյն արտաքին անդամներն ալ տարբեր տրամադրութիւններ կ'առնուն : Երբ մարդ մէկէն թշնամանուի եւ կամ հարուածի , անմիջապէս ուղեղը բաղկաց եւ ձեռաց մէջ աւելի կենսական զօրութիւն կը ղրկէ , եւ ասոր համար է՝ որ մարդ բարկացած ժամանակ աւելի զօրաւոր կ'ըլլայ : Բարկութեան մէջ դընդերք կը սնդանան , ջիղք կը պրկին , ձեռքը կամ բուռը կը փակուի , մարմնոյն ամեն մասերը թշնամին ջախջախել կուզեն եւ մարմինը գոգցես բոլոր ծանրութեամբ կը պատրաստուի վրայ յարձակելու : Երբ բարի բան մը ձեռք բերելու կամ ընդ հակառակն վերահաս չարիքէ մը խուսափելու հարկ ըլլայ , կենսական զօրութիւններն առատութեամբ զտարուին եւ սրունից մէջ կը վազեն , որպէս զի շտապաւ փախչիմք : Ասանկ ատեն մեր մարմնոյն բովանդակ շեղն իւր չափազանց աշխուժութեամբ նոր զօրութիւն զգենլով՝ թեթեւանդամ մարմին կը փոխուի . այս պատճառաւ է՝ որ բանաստեղծն Ապողոնի եւ Գարնեայ վրայ խօսած ժամանակ կըսէ « առ երկիւղի արագութեամբ կը վազէ » : Եթէ տարօրինակ ազդակ մը մեղի դարնուի , բնականաբար այն գողղիւնը մեր ականջին հասած կողմէն կը հեռանամք , եւ որպէս զի գիւրաւ կարենանք փախչիլ՝ աչքերնիս

նոյն կողմը կը դարձնեմք . նոյնպէս ալ հարուածն ընդունենէն անմիջապէս վերջը ձեռքերնիս դարնուած կողմին վրայ կը տանիմք ցաւոց պատճառը մերժելու՝ եթէ կարելի է : Ահնսական զօրութիւնները կրից ատեն այսչափ կաղմ եւ պատրաստ են շարժման պէտք ունեցող անդամոց ձեռնտու ըլլալու :

Մեր մարմնոյն ներքին մասանց յուղումն արտաքին տրամադրութեան վրայ մեծ փոփոխութիւն կը բերէ . ինչպէս , երբ արիւնը յորդութեամբ դէմքերնուս վրայ հոսէ՝ երեսնիս չափազանց կը կարմրի , իսկ եթէ բոլորովին երթայ՝ այն ատեն ալ կը դեղնիմք . այսպէս բարկութեան մէջ մարդուս աչքերը կրակ կը դառնան , երեսները կը կարմրին . իսկ ընդ հակառակըն երկիւղի մէջ մարդ կը գունատի : Ուրախութիւն եւ յոյս՝ կարծես թէ մարդուս դիմաց քաղցրութիւն եւ մեղմութիւն կ'ուտան եւ ճակատնուս վրայ պարզութիւն կը տարածուի : Ընդ հակառակն ըարկութիւն եւ տրտմութիւն մեր դիմաց դաժանութիւն եւ տխուր ու կատաղի կերպարանք կ'ուտան : Չայնն ալ տարրեր փոփոխութիւններ կը կրէ . որովհետեւ արիւնն եւ կենսական զօրութիւնը որչափ նուազ կամ աւաւել յորդութեամբ հոսին դէպ 'ի թոքը , եւ թոքը յուղող դնդերքն եւ կամ շնչափողը , այնչափ ալ մեր մարմնոյն սոյն մասերն ալ եւ ալ կերպով ընդարձակուելով կամ ճնշուելով մերթ որտաագոյ ձայներ կը հանեն , եւ մերթ բարակ , երբեմն խառնաչփոթ ձայներ , երբեմն երկար հեծեծանքներ եւ երբեմն ալ ընդմիջական հա-

ռաշանքներ :

Արտասուաց համար ալ այսպէս պէտք է իմանալ՝ որ ժամանակ արտասուաց աղբիւրն եղող խողովակները չափով մը ընդարձակին եւ կամ ճնշուին : Երբ արիւնը պաղի , եւ այս պատճառաւ թանձրանայ , յամր ընթացիւք կերթայ . դէպ 'ի ուղեղը , եւ պէտք եղած զօրութիւնները չը մատակարարեր . եւ կամ ընդ հակառակն , եթէ սովորականէն աւելի շարժի եւ ջերմանայ , աւելի զօրութիւն կը հայթայթէ եւ ասանկով մերթ սարսուռ , եւ մերթ ջգաձգութիւն , եւ երբեմն նեղութիւն եւ թուլութիւն տեղի կ'ունենան . երբ դնդերքներն թուլնան , այն ատեն մարդ կ'ղդայ թէ լյնալու մօտ է . կամ գլուխը ծածկող մորթին մանրաթելերն դնդերաց պաշտօն վարելով եւ չափազանց պըրկուելով՝ մորթն ինք իւր վրայ գալարի եւ մազերը քստմնին , սոսկումն ըսուած շարժումը յառաջ կուղայ : Բնադէտներն ամէն այս փոփոխութիւններն առանձին առանձին կը բացատրեն . բայց մեզի համար բաւական է՝ որ ընդհանրապէս անոնց բնութիւնը , պատճառներն , արդիւնքներն եւ նշանները նշանակելով անցնիմք :

Արքերը սոսկ մարմնոյ մէջ նկատելով արեան եւ կենսական զօրութեանց արտաքոյ կարգի յուզմունքն են . որոյ պատճառն են այնպիսի առարկայներ՝ որոցմէ կամ խուսափել հարկ է եւ կամ ձեռք բերել :

Վասն որոյ կրից պատճառն է առարկայի մը ուղեղին վրայ կատարած սաստիկ աղբեցութիւնը եւ կամ շարժումը :

Ասիէց յառաջ՝ կուգայ արեան եւ կենսական զօրութեանց՝ գրգռուելը, որոյ բնական արդիւնքն է մարմինն այնպիսի տրամադրութեան մէջ դնել՝ որով կարենայ առարկայի մը յարիլ կամ խուսափել. բայց այս արդիւնքը շատ անգամ դիպուածով խախտուած է .

Կրից արտաքին նշաններն, ինչպէս նաև արդիւնքն են արտասուք, աղաղակ եւ ուրիշ աչքի եւ դիմաց եւ ձայնի զանազան շարժումներ :

Որովհետեւ 'ի բնութենէ՝ այնպէս է՝ որ ոմանց կրքերն այլոց վրայ աղդեցութիւն կը նեն, օրինակի համար, միոյն տրտմութիւնը միւսին գութը կամ վշտակցութիւնը կը շարժէ, կամ երբ մէկը բարկութեամբ ուրիշին չարիք հասցնելու ըլլայ, նոյն ասին դիմացինն ալ պատրաստ կըլլայ ինքզինքը պաշտպանելու եւ ազատելու եւ այլն. ուստի հարկ էր՝ որ իւրաքանչիւր կիրք ոչ միայն ներքին, այլ եւ արտաքին նշաններ ալ ունենային եւ ուրիշներն ալ այս նշանները կարենային իմանալ :

Բնութեան մէկ գործն է՝ որ մեր դիմաց վրայ դնդերաց եւ ջղաց անհնարին բազմութիւն մը կը տեսնուի, որոց պաշտօնն է մի միայն զանազան կերպով երեսին բոլոր մասերը պրկել եւ հոն կրքերն իրենց շարժման ներքին շարժմանց հետ ունեցած գաղտնի համեմատութեամբ դժագրել :

Ար մնայ քննել նաև մարմնոյն իւրաքանչիւր մասանց համակերպութիւնը՝ որով փոփոխակի միմեանց կ'օգնեն եւ ամբողջ մարմինը կը պահպանեն : Երբոր մարդ մէկ կողմի վրայ

իջնայ, դլուխը, վիզն եւ բովանդակ մարմինը հակառակ կողմը կը հակին. եւ դլուխնիս չը ջախջախուելու համար՝ ձեռքերնիս դլուխնուս առջեւ կը բերեմք եւ զարնել ուզող հարուածին դէմ կը բռնեմք : Ըմբշամարտութեանց մէջ մարդ արմուկն իբրև վահան դէմքին առջև կը բռնէ. արտեւանտնքները կը փակուին՝ աչքը պաշտպանելու համար : Երբ մէկն ուժգնակի մէկ կողմ հակի, մարմինը հաւասարակչութեան մէջ մնալու համար միւս կողմը կը դառնայ, եւ որպէս զի անկման առաջին անոտ եւ կամ մեղմով իջնայ, տարբեր կերպերով կը տատանի. նոյնպէս երբ մարդ մէկ կողման վրայ ծանր բեռ մը կրէ՝ միւս կողմն իբրև հաւասարակչութիւն կը դորձածէ : Աջ ձեռքը ջրոյ դոյլ մը տանող կինը ձախ ձեռքը կ'երկրնցունէ եւ դէպ 'ի նոյն կողմը կը հակի. ուսին վրայ բեռ վերցնողն ալ դէպ 'ի առջևեւ կողմը կը ծռի. եւ դլխուն վրայ բեռ մը դրուած ասին՝ մարմինը բնականաբար ուղիղ դիրքի մը մէջ կը բռնէ ինքզինք : Ալ երջապէս մարդկային մարմնոյ հաստատուն եւ կանգուն մնալու համար, ամէն միջոց եւ դիրք կը դորձածուի, այնպէս որ մեր մարմնոյն իւրաքանչիւր մասունքները մի եւ նոյն ծանրութեան կեդրոնն ունին, զոր այնչափ ուղիղ կը բռնեն մարդիկ՝ որպէս թէ մեքենագիտութեան տեղեակ ըլլային :

Կրնամք յաւելուլ ասոր վրայ նաև վերը նշանակած կրից մի քանի արդիւնքներն ալ. վերջապէս յայտնի է թէ մեր մարմնոյն բոլոր մասերն այնպիսի տրամադրութիւններ ունին՝

որ փոփոխակի իրերաց կ'օգնեն եւ իրենց ամ-
բողջ զանգուածը պահպանելու համար միմեանց
կը զուգընթակցին : Առանց մեր գիտնալուն ,
եւ առանց մտածելու , մեքինադիտական օրի-
նաց համաձայն շատ մը կանոնաւոր եւ զօրեղ
չարժումներ կ'ըլլան մեր վրայ , մանաւանդ՝
որ եթէ մտածեմք շատ անգամ շարժումը կը
խափանուի :

Մեր աչաց բիւբերն այնպիսի պատշաճ կեր-
պով կը բացուին կամ կը կարկամին , որ մերթ
չատ լոյս կը տեսնեմք եւ մերթ քիչ . աչքը
կը տափկանայ եւ կ'երկայնի հեռուէն կամ մօ-
տէն առարկայ նշմարելու պիտոյից համեմատ .
հազազին մէջ գտնուած փոքրիկ պատառուած-
քը ձայնի ատփճանի կաղմութեան չափով կ'ըն-
դարձակի եւ կը նեղնայ , զանազան հնչմունք-
ներ հանելու յարմարութիւն ունի . բերանը եւ
լեզուն պէտք եղած կերպով կը շարժի . փոք-
րիկ մանուկն իւր ծծմօր ստինքներէն անուցա-
նող հեղուկը ծծելու համար մինչեւ քնոյ մէջ
իւր շրթանց եւ լեզուին այնպիսի ուղղութիւն
կուտայ՝ որպէս թէ ծծիչ ջրհաններու արու-
ւեստը գիտնար : Այս աստիճան կը ցուցնէ մեզ
բնութիւնը՝ թէ այս բաները մեր ուշադրու-
թեան պէտք չունին :

Բայց այսքան ճշգրիտ եւ համեմատական
չարժմանց մէջ մեր կողմանէ ճարտարութիւն
եւ արուեստ չըկայ , այլ Աստուծոյ կը պար-
տիւք՝ որ մարմնոյն իւրաքանչիւր մասերն այս-
չափի գեղեցիկ կարգադրեր է :

Ըսածներէս յայտնի կ'երեւի թէ հոգի եւ
մարմին իրարմէ ինչ տարբերութիւն ունին .

կը մնայ մի միայն ասոնց իրարմէ տարբեր հան-
գամանքները քննել եւ իմանալ :

Հոգւոյն յատկութիւններն են լսել , տեսա-
նել , ճաշակել , զգալ , երեւակայել , հեշտու-
թիւն եւ ցաւ , սէր եւ ատելութիւն , ուրա-
խութիւն եւ տրտմութիւն , երկիւղ եւ յոյս
ունենալ . փոտանիլ , ուրանալ , տարակուսիլ ,
դատել , խորհիլ եւ քննել , հասկնալ , սահմանել ,
լուծել , կամել եւ չը կամել , եւ ուրիշ ամէն
սկզբունքէ կախումն ունեցող բաներ , զորս
որոշակի կրնամք իմանալ արտաքոյ մարմնոյ ,
'ի բաց առեալ այն մարմինները՝ զորս հոգին
իւրեւ առարկայ եւ գործի կը նշմարէ :

Մեր հոգւոյն այս գործողութեանց իրարմէ
ունեցած տարբերութիւնը ցուցնող հաստատուն
նշանն այս է՝ որ մէկը միւսոյն հետ չենք շփո-
թեր : Տարակոյսը՝ փոտահութիւն , ուրանալը՝
հաստատել , դատելն՝ զգալ չենք սեպեր բնաւ .
դարձեալ յոյսը՝ յուսահատութեան հետ չենք
շփոթեր բնաւ , ոչ երկիւղը՝ բարկութեան
հետ , եւ ոչ ալ լսելքով ապրելու կամքը՝ կը-
րիւք եւ զգայարտնօք տպրելու կամաց հետ :
Ահա ասոնք են հոգւոյն սեփական յատկութիւն-
ները :

Իսկ մարմնոյն որակութիւններն , այսինքն
մտրմինը բաղկացնող մասերն են շատ քիչ տա-
րածական ըլլալ , շուտ կամ ուշ յուզուիլ , բա-
ցուիլ կամ դոցուիլ , լայննալ կամ ճնշուիլ ,
կարծրանալ եւ կակղիլ , միանալ կամ անջատիլ ,
թանձրանալ կամ անօտարանալ , եւ առաձգիլ
այս քան յայն կողմը : Այս բաները մարմնոյն
յատուկ են , եւ անոր սնունդ , աճումն , նուա-

զունն, շարժումն եւ դադար կուտան :

Կարծեմք՝ թէ այսչափը բաւական է իմա-
նալու հոգւոյ եւ մարմնոյ բնութիւններն եւ
անոնց իրարմէ ծայրէ ծայր տարբերութիւնը :

ԳՂՈՒԽ Գ.

ՄԻՈՒԹԻՒՆ ՀՈԳԻՈՅ ԵՒ ՄԱՐՄՆՈՅ

Աստուած երկու այսչափ իրարմէ տարբեր
բնութիւններ սերտիւ միացուց, Աստուածու-
թիւնն ալ կը պահանջէր այս բանը, որպէս զի
աշխարհիս մէջ ամէն տեսակ էակներ գտնուէին,
լոկ մարմնեղէններ առանց հոգւոյ, ինչպէս են
երկիր, ջուր եւ ասոնց նման ուրիշ բաներ .
եւ հոգեղէններ՝ որ մարմին չունենային նման
Աստուծոյ, ինչպէս են հրեշտակը . մարմնով մի-
ացեալ հոգեղէններ ալ, ինչպէս են բանա-
կան հոգին՝ որ իբրեւ վերջինն իմացական ա-
րարածներուն մէջ պէտք էր իւր բաժինն ու-
նենար, կամ աւելի բնական պատշաճութեամբ
մարմնոյ հետ միացեալ ամբողջութիւն մ'ըլ-
լար :

Մարմինն իբրեւ գործարանաւոր մի ամ-
բողջութիւն է իւր մասանց իրարու հետ ունե-
ցած համեմատութեամբն ու չափակցութեամբ .
այնպէս որ կրնամք զայն միայն մէկ գործի չա-
նուանել, ինչպէս որ վինը կամ երգիծինն ալ
այս պատճառաւ մէկ գործի կը կոչուի : Ուրկէց
կը հեռուի թէ բանական հոգին իւր ամբողջու-

Թեամբը մարմնոյ հետ միանալ պէտք է . որովհետեւ հոգին մարմնոյ հետ միացած է իւր լըրուութեամբն իբր 'ի կատարեալ գործարան :

Մեր խորհրդածութեան առարկայ պիտի ըլլայ հոգւոյ եւ մարմնոյ այս դարմանալի միութիւնը : Այլ թէպէտ այս միութեան գաղտնեայ խորը թափանցել դժուարին է մարդկային մտայ համար եւ թերեւս անհնարին իսկ , սակայն նախասացեալ իրաց մէջ անոր մի քանի հիմնական բաները տեսնուած են :

Ըսած ենք արդէն թէ հոգին երկու տեսակ գործողութիւն ունի . զգայական եւ իմացական . որոյ ոմանք մարմնական գործարանաց շարժմանէն եւ յուզուելէն կախումն ունին . ոմանք ալ 'ի վերոյ են քան զմարմին եւ մարմինը կառավարելու համար ծնած են : Որովհետեւ յայտնի է՝ թէ հոգին իւր զգացողութեանց պատճառաւ ենթակայ է մարմնական տրամադրութեանց , նոյնչափ եւ յայտնի է թէ հոգին կամաց հրամայելով եւ մտայ առաջնորդելովը բազուկ , սրունք , գլուխ եւ բոլոր մարմին կը շարժէ :

Եթէ մարդկային հոգին սոսկ իմացական ըլլար , անչափ 'ի վերոյ պիտի ըլլար քան զմարմին՝ որ չը պիտի կրնայինք ձեռք բերել . բայց որովհետեւ զգացական է , այսինքն , կցորդ է մարմնոյ եւ անոր համար զայն պահպանելու եւ պաշտպանելու պարտական է , ուստի այս կողմանէ մարմնոյ հետ միանալ պարտաւորուած է , կամ աւելի ճիշդն իւր բոլոր էութեամբը . զի թէպէտ եւ գործողութիւններն որոշ են , բայց ինքն իւր էութեան մէջ անբաժանելի է :

Քանի որ հոգին զգացական է՝ այս կողմանէ մարմնոյ հպատակ է . որովհետեւ մարմնոյ շարժումները հոգւոյն վրայ ազդեցութիւն կընեն , եւ զգացմունք՝ ոմանք անհաճոյ եւ ոմանք հաճոյական հոգւոյն կասուած են :

Ասկէց կը հետեւի թէ հոգին՝ որ անդամներն եւ ամբողջ մարմինն իւր կամօքը կը շարժէ՝ մարմինը կը կառավարէ իբրեւ սերտիւ իրեն հետ միացեալ բանի մը պէս , ազդեցութիւն կընէ իւր վրայ եւ չափազանց զգայուն ցաւ եւ հաճոյք կը պատճառէ իրեն :

Արդ հոգին իւր կամեցողութեամբը միայն կրնայ շարժել զմարմինը , որ , բնականաբար , մարմնոյ վրայ բնաւ իշխանութիւն չունի , ինչպէս մարմինն ալ բնաւ հոգւոյն վրայ չ'ունի , եւ չը կրնար ոչ երջանիկ եւ ոչ թշուառ ընել : Իրարմէ այսչափ տարբեր երկու գոյացութիւնները չը պիտի կրնային մէկմէկու վրայ ամենափոքր ազդեցութիւն մ'ընել , եթէ հոգւոյ եւ մարմնոյ արարիչ Աստուածն իր գերագոյն կամօք փոփոխակի իրարմէ կախումն ունենալու պայմանին մէջ դրած չըլլար զիրենք : Ասիկայ տեսակ մը ակն յայտնի , մշտնջենաւոր եւ ընդհանուր հրաշք է՝ որ հոգւոյն բոլոր զգացմանց եւ մարմնոյ կամաւորական շարժմանց մէջ յայտնի կը տեսնուի :

Միութիւն հոգւոյ եւ մարմնոյ ըսուածն աս է , որ գլխաւորաբար երկու իրողութիւններով կրնանք տեսնել :

Առաջինն այս է՝ որ մարմնոյն տարբեր շարժմանցն համեմատ հոգւոյ մէջ զանազան խորհուրդներ եւ զգացումներ տեղի կ'ունենան .

երկրորդ՝ թէ, փոխադարձաբար, հոգւոյ մէջ պատահած մի քանի խորհրդոց եւ զգացմանց պատճառաւ նոյն ատեն մարմնոյն վրայ ալ շարժումներ յառաջ կուգան. օրինակի համար. երբ մարմինը կտրուի, այսինքն մարմնոյ մտերը մէկ մէկէ բաժնուին, որ 'ի մարմնի պատահած շարժումն է, ներսէս ցաւ կ'ղգամ, որ, ինչպէս տեսանք, հոգւոյն մէկ զգացումն էր. նոյնպէս երբ հոգիս կամի որ ձեռքերս շարժու մըն ընեն, մի եւ նոյն վայրկենին ձեռքերս իրապէս կը շարժին:

Այս երկու իրողութեանց առաջնոյն արդիւնքն զգայական ըսուած գործողութեանց մէջ կ'երեւի, յորս հոգին մարմնոյ հպատակ է. իսկ երկրորդն իմացական գործողութեանց մէջ կը տեսնենք՝ յորս հոգին մարմնոյն վրայ կ'իշխէ:

Ասոնք կարգաւ քննենք. տեսնենք նախ եւ առաջ թէ մարմնոյ շարժումները հոգւոյն ինչ կը պատճառեն, եւ ապա տեսնենք՝ թէ մարմնոյ մէջ հոգւոյն խորհրդածութեանց պատճառաւ ինչ բաներ տեղի կ'ունենան:

Նախ՝ սոս ըսենք՝ որ ամէն զգացումն կամ զգացողութիւնն անուանածնիս, ըսել կ'ուզեմ գունոյ, ձայնի, յոռի կամ լաւ ճաշակի, ջերմութեան եւ ցրտոյ, քաղցի եւ ծարաւոյ, հեշտութեանց եւ ցաւոց ըմբռնումներն զգալի առարկայներուն մեր մարմնական գործարանաց վրայ ազդելէն եւ շարժելէն յառաջ կուգան: Սակայն թէ ինչ միջոցներով կը կատարուի այս գործողութիւնը, լաւ իմանալու համար՝ հարկ է շատ մը հաստատուն եւ ճշգրիտ բաներ ենթադրել:

Նախ՝ թէ ամէն զգացումն արտաքին առարկայից մեր՝ գործարաններուն վրայ կատարած նիւթական եւ իրական ազդեցութենէն կամ դպչելէն յառաջ կուգայ, որ անմիջապէս կամ սկզբնաբար առարկայէն է:

Արդէն շօշափելեաց եւ ճաշակելեաց համար դպչելը յայտնի կամ անմիջական է: Բնաւ համ մը չենք կրնար առնել՝ մինչեւ որ լեզուի եւ կամ բերնի չը դպցունենք. ոչ իսկ կրնանք շօշափել՝ մինչեւ որ մարմնոյ մէկ տեղին չը դըպցնենք: Թէպէտ եւ արեգակն ու կրակը հեռուանց մեղի ջերմութիւն կը պատճառեն, բայց եւ այնպէս նոյն առարկայից մեր մարմինը շօշափող օգոյն վրայ ազդեցութիւն մ'ընելէն վերջըն է՝ որ ազդեցութիւնը մեղի կը հաղորդուի. նոյնպէս իմացիք ցրտութեան համար ալ: Շօշափելեաց վերաբերեալ այս երկու զգացումներն ալ արտաքին մարմնոց՝ մերոյն մերձենալէն կամ դպչելէն յառաջ կուգան:

Հաւատալ պէտք է՝ թէ ինչպէս շօշափելիք եւ ճաշակելիք առարկայից իրական մերձեցումը կը պահանջեն, մի եւ նոյն բանը կը պահանջեն ուրիշ զգայարաններ ալ, թէպէտ եւ ոչ ասոնց չափ: Փորձն ալ կը ցուցնէ ասիկայ նոյն իսկ տեսանելեաց մէջ՝ յորում առարկայից դըպչելու մարմնական գործարանաց ցնցել կամ շարժելը շօշափելեաց եւ ճաշակելեաց չափ չէ: Երբոր արեւուն նայինք, անմիջապէս կ'ղգամք՝ թէ արեւուն ուղիղ ճառագայթները կրնան մեր աչաց մլաս տալ, աչքը բաղկացնող մասերը սաստիկ շարժելով: Արեգական ճառագայթներն երբոր մեր աչաց բերեղակերպին վրայ ամփո-

փութելով՝ շարժումն յառաջ դայ, այս շարժումը կիզելէ բնութիւն մ'ունի, այսինքն թէ երբ մարդ աչքերն յառած ուժով եւ ընդերկար արեգական նայի՝ տեսանելեաց գործարանը կ'այրի եւ կը կուրնայ: Թէպէտ այս ճառագայթները մեզի կտորուելով եկած (ատեն աչաց այնչափ վնաս չեն հասցներ, սակայն ազդեցութիւնն շատ անդամ սաստիկ կըլլայ. նոյն իսկ սոսկ սպիտակ գունոյ արգասիքն զգալ կուտայ մեզ՝ թէ գոյները մեզի շարժում մը տալու համար մեր կարծածէն աւելի զօրութիւն ունին. զի սպիտակ գոյնը սաստիկութեամբ կը զարնուի տեսողական ջղաց, եւ մինչեւ իսկ կը վիրաւորէ: Ասիկայ աւելի այն մարդոց վրայ կը տեսնենք՝ որք ճիւնապատ դաշտերու մէջէ ճանապարհորդութիւն ըրած ժամանակ այս սպիտակութենէն չը վնասուելու համար՝ կ'ստիպուին աչքերնին գունաւոր ապակիով մը ծածկել եւ իրենք գիրենք պաշտպանել, ապա թէ ոչ՝ պիտի կուրնային: Խաւարն ալ ինչպէս նաեւ սեւութիւնն ալ նոյն արդիւնքը կընէ մեր վրայ, այսինքն աչք կը կուրացնէ, բայց ուրիշ եղանակաւ, այն է երբ տեսողական ջղերն՝ երկար ժամանակ լուսոյ նոյն իսկ առ 'ի շեղ ճառագայթներէն զուրկ մնալէ յետոյ՝ մէկէն 'ի մէկ պայծառագոյն լուսոյ առջեւ ելլեն՝ այնպիսի տեղ՝ ուր ամէն ինչ սպիտակ է. կամ երբ մարդ առանց աչքը գործածելու՝ երկար ատեն բոլորովին խաւարակուռ տեղ մը փակուած կենայ, աչքերը կը տկարանան, կը թարշամին, եւ ասանկով անշարժ եւ առարկայից միջոցաւ ցընջում մ'ընդունելու անկարող վիճակի ենթակայ

կ'ըլլան: Ամէն ոք կ'ըզայ դարձեալ՝ թէ չափազանց սեւն աչաց մեծ տկարութիւն կը պատճառէ. այս երկու գլխաւոր գունոց զգալի արդիւնքէն կրնամք գուշակել միւս բոլոր գունոց արդիւնքն ալ:

Գալով ձայներուն, օդին ծածանմունքն եւ անկէց ականջի հասած թնդիւնն այնպիսի յայտնի իրեր են՝ որոց վրայ ոչ ոք կրնայ տարակուսիլ: Ամպերը ցրուելու համար խոշոր զանգակներ՝ կը հնչեցունենք. շատ անգամ մեծամեծ աղաղակներ այնպէս կը ճեղքեն օդը՝ որ մինչեւ օդոյ մէջ գտնուած թռչունները վար կ'իյնան. երբեմն ալ սոսկ ոււմբին յառաջ բերած հողմը՝ կրնայ թռչուններ գետին ձգել: Եւ ո՞վ կրնայ տարակուսիլ՝ թէ ականջները ձայնէ կը շարժին, մինչդեռ կը տեսնենք՝ որ մեծամեծ շէնքեր իսկ կը տատանին եւ կը դողան: Այս կերպով կրնամք իմանալ նաեւ աւելի նուրբ եւ փափուկ մասանց վրայ ազդեալ տատանման կամ ցնցման համար ալ:

Յիշոյն այս ծածանմունքն այն աստիճան յայտնի եւ զգալի է՝ որ մարմնոյ միւս մասանց վրայ ալ կ'ազդէ: Երգիտնի եւ կամ քնարի եւ այլ գործեաց ձայներէն մարմնոյ վրայ եղած տպաւորութիւնն ամէն մարդ գիտէ. գիտէ նաեւ թէ ձայները տարբեր կացութեան մէջ դրուած մատանց ծայրերովը կ'զգացուին, եւ թէ ականջներն 'ի բնէ իսկ այս ազդեցութիւնն ընդունելու բուն գործիքն ըլլալուն համար՝ 'ի հարկէ մատներէն աւելի զօրաւոր կերպով տպաւորութիւնը կրնան ընդունել:

Այլ եւ այլ հոտերուն արդիւնքը՝ անգանց

վրայ ըրած ազդեցութիւններովը կ'իմանամք. ապա թէ ոչ, շան հոտոտելեօք որսին անցած տեղերն յուզելով՝ ետեւէ երթալը չը սլիտի տեսնենք, եթէ նոյն կենդանիէն ելած մի քանի գոլորչեաց կամ հոտերուն մնացորդները չը կենային: Գարձեալ, երբոր անոյշ հոտեր կամ բովիճայներ ծխեմք, կը տեսնեմք՝ որ ծուխն ամբողջ սենեկին մէջ կը տարածուի, եւ մշուշը մեզ հասածին պէս հոտը կ'զգամք: Գիտնալ պէտք է թէ ամէն տեսակ հոտաւէտ մարմնոց ծուխերը թէպէտ անզգալի՝ բայց գրեթէ նոյն եւ մի եղանակաւ, կը բարձրանան, եւ ասոր համար է՝ որ մեր ուղեղին մէջ գէշ աղէկ արդիւնքներ կ'ունենան. որովհետեւ անտեսանելիներն տեսանելի առարկայներով դատել սովորուել ենք:

Ճշմարիտ է ուրեմն՝ թէ մէն մի զգացմունք արտաքին առարկայներուն գործարանաց վրայ ըրած մարմնական եւ իրական ազդեցութենէն յառաջ կուգան, եւ թէ, ինչպէս արդէն ըսինք, այս ազդեցութիւնն անմիջապէս կամ սկզբնաբար առարկայէն կուգայ:

Շօշափելեաց եւ ճաշակելեաց համար ազդեցութիւնն անմիջապէս առարկային կ'ըլլայ, այսինքն, մարմինները մեր այս գործարանաց իրական դաշիլ կամ մերձեանալ ունին. իսկ ուրիշ զգայարանաց համար սկզբնաբար առարկայէն կուգայ, ուր առարկայից մերձեցումը թէպէտ անմիջական չէ, բայց կատարուած շարժումն օդոյն մէջէն շարունակելով՝ մինչեւ մեզի կուգայ կը հասնի:

Փորձով ալ կրնանք ըսածնիս հաստատել:

Միջանկեալ մարմինն աչքիս առջեւի պատկերը թոյլ չը տար տեսնելու. երբ միջոցը թափանցիկ է՝ առարկայներն զանազան կերպով կը ներկայանան. ջուրն՝ որոյ բնութիւնն է ուղիղ գիծը բեկանել՝ շիտակ դաւազանն աչքիս կոր կը ցուցնէ: Բաժակները կամ ապակիներն ինչ կերպով որ գունաւորուած եւ քանդակուած ըլլան, այնպէս ալ դոյներնին, մեծութիւննին եւ ձեւերնին կը փոփոխեն. առարկայն կը մեծնայ, կը սղտիկնայ, գլխիվայր կը շրջի, կանգուն կը մնայ եւ կամ կը շատնայ: Հարկ է ուրեմն որ նախապէս՝ նոյն իսկ առարկային վրայ բան մ'սկսի, եւ ասիկա աչքին համար արեղական կամ ուրիշ լուսաւոր մարմնոց ճառագայթից ցումունքն է. երկրորդ՝ սոյն ցուքը՝ որ առարկայից վրայ կ'սկսի պէտք է որ մի եւ նոյն կերպով օդոյն մէջէն շարունակաբար մինչեւ աչքերնուս դայ հասնի. արդ ասկէ յայտնի է՝ թէ մեր վրայ եղած ազդեցութիւնն սկզբնաբար առարկայէն կուգայ:

Սոյնպէս հասկնալու ենք՝ նաեւ ձայնական մարմիններէ յառաջ եկած օդոյն ծածանման եւ հոտ բուրեցնող գոլորչիներուն կամ ծուխերուն համար ալ: Չայն հանող հնչական մարմինը՝ հարկ է որ լսելեաց շարժումն տայ. եւ արդէն ձայնը՝ տակաւին չը դադրած՝ երբ մեր մատներուն ծայրով մեղմիւ իմն ականջնիս շօշափենք՝ կ'զգամք իսկոյն թէ տատանումն մը կայ ականջաց մէջ՝ որ ձեռքերնիս աւելի ուժով սեղմած ժամանակնիս կը դադրի: Հոտաւէտ մարմինէն ելած շոգին պէտք է որ հոտոտելեաց մէջ երթայ. սակայն թէ որ օդոյն ծածանումն տուող մար-

մինը վերնալով դալիք աատանունն ալ դադարի , ոչ հոտ կրնան առնուլ եւ ոչ ձայն լսել :

Ուրեմն զգացմանց մէջ , միայն մարմնոյ մէջ եղածը դիտողութեան առնելով , երեք բան կը գտնենք . առարկայ , միջոց եւ գործարան . ինչպէս աչք եւ ականջք :

Բայց որովհետեւ այս գործարանները շատ մասունքներէ կը բաղկանան , ուստի դիտնալու համար՝ թէ բնականապէս զգացմանց սահմանեալ գործին ո՞րն է , ուրիշ բան պէտք չէ՝ այլ մտածել միայն թէ մեր մարմնոյն մէջ ջիղ կոչուած մանրաթելեր կան՝ որոց ծաղումն ու արմատն ուղեղն է , եւ անտի սկսեալ ամբողջ մարմնոյն մէջ տարածեալ են :

Պէտք է մտածել դարձեալ՝ թէ բնութիւնն իւրաքանչիւր զգայարանաց յատուկ ջղեր սահմանած է . տեսանելիք , հոտոտելիք եւ ճաշակելիք առանձինն զատ զատ ջղեր ունին . եւ որովհետեւ շօշափելիքն ամբողջ մարմնոյ մէջ կը տարածուի , ուստի մեր մարմնոյն բոլոր մասերուն մէջ սփռեալ ջիղք ալ կան : Վերջապէս չը կայ բնաւ զգացումն մ'ուր ջղեր չը կենան . ջղային մասունքներն աւելի զգալի են . Այս պատճառաւ է՝ որ փիլիսոփայք կը միաբանին ըսելու՝ թէ զգայարանաց յատուկ գործարանը ջիղն է :

Սակէց զատ տեսանք՝ որ ջղերն բոլորն ալ դէպ ուղեղը վերջաւորեալ են , եւ ուղեղէն իրենց եկած կենսական զօրութիւններով լի են . ասոր համար է՝ որ քնացած ժամանակնիս ջղերնիս ըստ մասնէ պրկեալ կը մնան : Այս ենթադրութիւններէն դիւրին կ'ըլլայ որոշել այն ճշգրիտ

չարժումն՝ ուրիկէց կախումն ունին զգացմունք եւ , մէկ խօսքով , այն ամէն բաները՝ որ զգացման պաշտօնին եւ բնութեան կը վերաբերին , ըզգացման , կըսեմ , որ կը ծառայէ հոգւոյ եւ մարմնոյ միանդամայն :

Ըսածնիս պիտի բացատրենք յետագայ երկոտասան առաջարկութիւններով՝ որոց առաջին վեց հատերով պիտի ցուցնենք՝ թէ զգացումը ջղերուն շարժմանէն կախումն ունի , իսկ միւս վերջին վեցերով պիտի բացատրենք այն պաշտօնը՝ զոր հողին զգացման վրայ կը կատարէ , եւ այն վարժութիւնը՝ որուն հողի եւ մարմին կ'ունականան զգացման միջոցաւ :

Ա. ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ . Ջղերը մեր զգայարանաց բախուող արտաքին առարկայներէ կը ցնցուին :

Շօշափելեաց վրայ անոր համար չենք տարակուսիր՝ որովհետեւ արտաքին առարկայները մեր մարմնոյն անմիջապէս կը հպին . եւ այս առարկայներն էրբոր շարժին , անհնար է՝ որ չը ցնցեն ջղերնիս՝ որ մարմնոյն ամէն կողմը տարածուած են : Մեր շուրջի տաք կամ ցուրտ օդն ալ այս արդիւնքն ունի . Յայտնի է՝ թէ ջերմութիւնը մեր մարմնոյն մասերը կ'ընդարձակէ , իսկ ցուրտը կը սեղմէ . այս երկուքն ալ առանց ջղերուն ցնցելու չեն կրնար ըլլալ : Սոյնը կը պատահի նաեւ միւս զգայարանաց վրայ ալ , յորս , ինչպէս տեսանք , անհնար է՝ որ գործարանաց այլալուծիւն չը պատահի երբոր տաքաւորութիւնը գայ , ուստի կերակրոց մզեալ հիւ-

Թը լեզուին յատուկ ջիւերը կը շօշափէ եւ կը
ցնցէ, ձայնական մարմնոց թրթումունքէն յառաջ
եկած օդոյ ծածանումն՝ լսելեաց ջիւերը, հոտա-
ւէտ մարմիններէն ելած գոլորշիներն ալ՝ հո-
տոտելեաց ջիւերը, արեգական եւ կամ ուրիշ
որ եւ է լուսաւոր մարմնոց ուղիղ կամ կոր ձա-
ռաղայթներն ալ՝ տեսանելեաց ջիւերը. ապա թէ
ոչ՝ արեգական մինչեւ իսկ սպիտակ գունոց
ներդործած ազդեցութիւնն այնչափ սաստիկ չը
պիտի կրնար ըլլալ: Վերջապէս, ամէն որ եւ է
զգացմանց մէջ առ հասարակ ջիւերն առարկայէ
կը դարնուին. եւ հարկաւ այսքան պիտի մանրա-
թելերն կրնան չը ցնցուիլ՝ երբոր զօրութիւն մը
սաստկապէս իրենց կը զարնէ:

Բ. ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ. Առարկայից մեր ըզ-
գայարանաց բախմանէն յառաջ եկած ջրաց
այս ցնցումը մինչեւ գլխոյն եւ ուղեղին մէջ
կ'երթայ կը շարունակէ:

Պատճառն որ ջրերը մինչեւ ուղեղն հասած
են, որով եկած ազդեցութիւններն ու շարժու-
մը դրսէն ներս կը տանին: Կերպով մ'ասոր
օրինակը պարանի եւ կամ ուժգին պրկուած
թելին շարժման վրայ կը տեսնենք, որոյ մէկ
ծայրը շարժել կարելի չէ՝ առանց նոյն վայրկենին
միւս ծայրն ալ շարժուելու: Հերիք է որ պարանին
մէջ տեղը շարժումը խափանող արգելք մը չը
կենայ:

Մեր մարմնոյն ջրերն ալ այս պարանին կամ
թելին նման են. սա տարբերութեամբ՝ որ ջիւք
անհամեմատ նուրբ եւ միանգամայն կենսական

զօրութեամբ, այն է անօտը շողով մը լեցուն
են, որ շարունակ հոսելով ջրերն այնչափ պիտի
կը բռնէ՝ որ ամենաչնչին ազդեցութեամբ մը կը
ցնցուին եւ ազդեցութիւնը գլխոյն եւ անկէ ի-
րենց արմատին կը հասնի:

Գ. ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ. Զգացումը ջրաց
այս ցնցումէն կախումն ունի:

Դժուար չէ հասկնալը: Որովհետեւ ջրերն
զգայարանաց յատուկ դործարանն են, հարկաւ
զգացմունքն ալ ասոնց վրայ կատարուած
ազդեցութենէն կախումն ունի:

Ասկէց օձ կը հետեւի բնականաբար՝ թէ
երբոր ջրերը ցնցուին՝ հարկաւ զգացողութիւնն
յառաջ կուգայ, եւ կը տեսնէ այնչափ՝ որչափ որ
ջրաց ցնցումը շարունակէ, եւ թէ, ընդ հակա-
ռակն, ջրերը ցնցել չը կրցող շարժումները չեմք
զգար. ասիկայ փորձն ալ կը ցուցնէ:

Նախ, տեսանք՝ որ ամէն զգացողութիւն
առարկական շօշափման եւ հետեւաբար ջրաց
ցնցման հետեւանքն էր:

Նրբեմն ալ առանց որ եւ է արտաքին ա-
ռարկայ մը մեր ականջաց դպչելուն ձայներ կը
լսենք՝ որ ուրիշ բանէ չը կրնար յառաջ գալ,
բայց միայն անկէց՝ որ չը գիտեմ ինչ ներքին
պատճառաւ ականջին թմրուելը կը ցնցուի, եւ
ասոր համար է որ մեր ականջաց ջրերուն զա-
նազան եղանակաւ շօշափուելուն համեմատ
զանգակաց բարձր կամ ցած ղօղանջիւններ,
քիչ կամ աւելի ստուար բզզիւններ կը լսեմք:

Նման պատճառաւ կը տեսնեմք՝ որ երբ մէ-

կըն աչքերնուս եւ կամ գլուխնուս զարնէ, այս շարժման առթիւ լուսոյ ցուքեր կը ցայտին մեր աչքերէն. եւ անոր պատճառն ուրիշ բան չէ, եթէ ոչ նոյն հարուածներէն ջրաց մէջ տեղի ունեցած ցնցումը նման այն ցնցման կամ շարժման՝ ուրկից կախումն ունի բնականապէս լուսոյ ըմբռնումը:

Այս ըսածիս՝ ստուգութեան ապացոյց կըրնան ըլլալ այն փոփոխական գոյները՝ որ միշտ կը տեսնենք՝ երբոր ժամանակ մ'առատ լուսոյ եւ կամ զանազան գոյներով ներկեալ առարկայի, նա մանաւանդ խիստ պայծառ գունոց վրայ երկայն ատեն նայելնէս վերջը՝ աչքերնիս գոցենք:

Տեսողական ջրաց ցնցումը սաստիկ ըլլալուն համար, առարկային հեռանալէն վերջն ալ բաւական ժամանակ ազդեցութիւնը կը մընայ՝ թէ եւ խիստ տկար կերպիւ. այս կերպով առան կամ պայծառ լուսոյ ըմբռնումն երթալով կը նուազի եւ կանուշայ. եւ այն առարկայն՝ որ զմեզ շրջոյց իւր բազմազունեան փայլքովը՝ հեռանալէն վերջն ալ նոյն շրջապոլսիներէն մնացորդ կը թողու:

Այս գունոց օդոյն մէջ ծածանելուն, առ փոքր փոքր տկարանալուն եւ վերջապէս ցընդելուն պատճառն այս է՝ որ ներկայ առարկային պատճառած ազդեցութիւնն այլ եւս դադարած ըլլալով՝ ջրաց մէջ մնացած շարժումն այնչափ անկայուն է՝ որ երթալով կը նուազի եւ ապա բոլորովն կ'ընդհատի:

Մի եւ նոյն բանը կը պատահի ականջաց ալ, երբ բարձր ձայն մ'առնելով՝ նոյն իսկ

օդոյն ծածանումը դադրելէն վերջը անոր փոքրիկ զգացումը կը պահէ:

Սոյն այս պատճառաւ է՝ որ ցուրտ օդոյն մէջ մեր նախկին ջերմութիւնը բաւական ատեն կը շարունակէ, ինչպէս որ ցրտութիւնն ալ տաք օդոյն մէջ. որովհետեւ առարկային ներկայութենէն ջրաց վրայ կատարուած ազդեցութիւնը տակաւին կայ:

Ենթադրելով, օրինակի համար, թէ կրակին մեր ձեռաց եւ անոր մէջ գտնուած ջրեւրուն պատճառած այլայլութիւնը կամ ազդեցութիւնն այնպիսի մեծ շարժում մը տայ մեր մարմնոյն իւրաքանչիւր մասանց՝ որ վերջապէս իրարմէ բաժնէ եւ յաճիւն դարձունէ, եւ թէ, ընդ հակառակն, ցրտոյ ձեռքերնուս վրայ ըրած տպաւորութիւնն այնպէս մը ճնշէ մեր ձեռաց մատուցներն՝ որ անոնց շարժումը դադրեցունէ եւ վերջապէս կատարեալ թրմբութիւն պատճառէ, դարձեալ, այս այլայլութեան տեսելուն չափով՝ ցրտոյ եւ ջերմութեան զգացումն ալ կը շարունակէ, նոյն իսկ երբ զմեզ սառեցնող եւ կամ այրող օդերէն հեռանամք:

Բայց որովհետեւ մեր գործարանաց վրայ այս ազդեցութիւնը՝ կատարող առարկայից մեզնէ հեռանալէն վերջը՝ ազդեցութիւնն ալ կը տկարանայ եւ այս գործարաններն տակաւառ տակաւ իրենց նախկին բնութեան կը փոխուին, ուստի զգացողութիւնն ալ կը նուազի՝ Միշտ այս այսպէս կը ըլլայ:

Կաթուածէն եւ կամ խիթէն առթեալ ցուցոց այնքան ընդ երկար տեսելուն պատճառը

կսկծեցուցիչ հեղուկին շարունակաբար նորոգութիւնն է, որ նոյն վիշտերն յառաջ կը բերէ եւ անդադար կը խայթէ եւ շարաչար կը նեղէ մեր մարմնոյն այն մասերը՝ որք մէջերնին ջիղ պարունակելնուն համար զդայուն են։ Նօթութեան եւ ծարաւոյ ցաւն ալ նմանօրինակ պատճառէ յառաջ կուգայ, այսինքն թէ կամ կոկորդը ցամքելով՝ կ'անձկանայ եւ ջրդերը կը կարկամեցնէ, եւ կամ կերակրոց մարսողութեան համար ստամոքսին տակը գտնուած մասններէն ստամոքսին մէջ վազող հալիչ հեղուկն ստամոքսին հակառակ գործելով՝ ջրդերը կը խայթէ, մինչեւ որ կերակուր ուտելով՝ անօնց այնպիսի նիւթ մը տանք՝ որով կարող ըլլայ իւր առջի գործողութիւնը վերստին կատարել։

Իսկ վէրքի մը ցաւը հարուածն ընդունելէ բաւական ժամանակ վերջը՝ տակաւին ըզգալնուս պատճառն ուրիշ բան չէ՝ բայց միայն նոյն հարուածին մեր մարմնոյն վիրաւորեալ մասին վրայ ըրած սաստիկ տպաւորութիւնն եւ անակընկալ պատահարներն են՝ որոցմով ջղաց մարմանը կամ խայթը կը շարունակէ։

Ուրեմն, ստոյգ է՝ թէ զգացումը կ'արթննայ մարդուս մէջ ջղերու շարժմամբ, որոյ շարունակութեամբն ալ սոյն զգացումը բաւական ատեն կը տեսէ։ Ճշմարիտ է դարձեալ՝ թէ ջղաց ցնցումն չը տուող շարժումներն անզգալի են։ Մարդս չզգար բնաւ թէ ինչպէս կ'աճի, եւ չը գիտեր երբէք թէ ինչ կերպով կերակուրը մեր մարմնոյն իւրաքան-

չիւր մասանց հետ կը դանգուի եւ անոնց կը միանայ. որովհետեւ այս շարժման մէջ սր եւ է կերպ ջղաց ցնցում մը տեղի չ'ունենար բընաւ. ասիկայ ալ աւելի դիւրաւ պիտի կրնամք հասկնալ երբ մտածենք՝ թէ կերակուրներն սրքան յամբ եւ անզգալի կերպով մեր մարմնոյն մասանց մէջ կ'սպրդին։

Այս երբորդ առաջարկութիւննիս հետեւեալներով աւելի եւս պիտի բացատրենք եւ հաստատենք։

Գ. ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ. Զգացող ջղերուն ցնցումը բոլոր մարմնոյ մէջ կը տարածուի, այսինքն թէ ցնցումը ջղաց մէկ ճայրէն միւսը եւ մինչեւ ուղեղին կեղւոնը հաղորդական է։

Ասիկայ փորձը կը ցուցնէ մեզ, Ասոր համար է՝ որ մարմնոյ մէկ մասունքը կտրելու ատեն, որպէս զի շարժումը մեղմիւ հաղորդուի ուղեղին և ցաւը նուազ զգալի ըլլայ, նոյն մասին վերի կողմը սնդադոյնս կը կապենք։ Եթէ կտրելի ըլլայ ջղաց շարժումը մէջ տեղէն բոլորովին դադրեցունել՝ այն ատեն ուղեղը բընաւ զգացումն չը կրնար ունենալ։

Կը տեսնեմք դարձեալ որ քնոյ մէջ մեր մարմնոյ վրայ կատարուած մեղմ շօշափումներն չենք զգար. պատճառն որ ջղերն թուլցած ըլլալով իրենց վրայ ցնցում մը չըլլար, եւ կամ թէ եւ ցնցում մը տեղի կուեննայ, բայց այնչափ թեթեւ՝ որ չը կրնար մինչեւ ուղեղն հաղորդուի։

Ե. ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ . Թէպէտ եւ հարկ է որ գլխաւորաբար ուղեղին մէջ գտնուած ջղերն ցնցուին, որպէս զի զգացումն յառաջ գայ, բայց հոգին, որովհետեւ մեր մարմնոյ ամբողջ զանգուածին մէջ ներկայ կը գտնուի, իր առած զգացումը մեր մարմնոյն այն մասին կամ ճայրին կ'ընծայէ, յորում արտաքին առարկայն ներգործութիւն ըրած է:

Օրինակի համար, առարկայ տեսնելը աչքի կուտանք, ճաշակը՝ լեզուին եւ կամ քմաց. երբ մատիս ծայրը վիրաւորի՝ մատս կը ցաւի կըսեմ, առանց անգամ մտածելու թէ ես ուղեղ ունիմ, որուն վրայ ազդեցութիւն կըլլայ:

Այս պատճառաւ է՝ որ շատ անգամ այն մարդիկներն՝ որոնց ոտքը կը կտրին, հիւանդութիւնը կամ ցաւը ոտքին վրայ կզգան եւ ոտքերնիս կը մարմաջի ըսելով՝ փայտ դարձած ոտքերնին կը քերեն. որովհետեւ ոտից եւ սրունից հետ հաղորդութիւն ունեցող ջիղը՝ ուղեղին մէջ ցնցում մ'ընդունելով՝ այնպիսի զգացում մը տեղի կուենայ՝ զոր հոգին կտրեալ մասին կուտայ, որպէս թէ նոյն մասը տակաւին իրապէս կայ, եւ հարկաւ այս այսպէս պիտի ըլլայ. որովհետեւ թէ եւ սրունքը իւր մէջի ջղերովը կտրուած է, սակայն ջղաց այն մնացորդ մասը՝ որ ուղեղէն անբաժան է՝ տակաւին կարող է առջի շարժումները յառաջ բերել. ուղեղն ալ նոյն շարժումներէն պատճառեալ ազդեցութիւնը կ'ընդունի՝ թէ յատկապէս այս բանիս համար կազմուած ըլլալուն եւ թէ անոր համար որ

հոգին սովոր է նման շարժումները մեր մարմնոյն մասանցն ընծայել, Քանի որ սրունից յատուկ ջիղն կենսական զորութեանց եւ կամ հեղուկներուն պատճառաւ ցնցուելով՝ այնպիսի շարժում կ'արտադրէ՝ ինչպէս որ կընէր սրունքը մարմնոյն վրայ եղած ատենը, ապա յայտնի է՝ թէ այս ջիղը նման զգացում մը պիտի յարուցանէ՝ ի մեզ, եւ թէ մեք եւս սոյն զգացումը մեր մարմնոյն այն մասին կուտանք՝ առ որ սովոր էր բնութիւնը պատշաճեցունել:

Սակայն ջղաց այս մասը՝ որոյ սկիզբն ու արմատն ուղեղին մէջն է՝ այլ եւս առարկայներէ սովորական ազդեցութիւնը չընդունելով՝ անըզգապապէս եւ ժամանակ անցնելէ վերջը՝ կը կորսնցունէ այն յատկութիւնը՝ զոր յառաջ ունէր իւր սովորական շարժմամբ: Այս ըսածիս կը նպաստեն նաեւ այն խորհրդածութիւնները՝ որոց միջոցաւ գիտեմք թէ նոյն մասերը չունիմք:

Ինչ որ ալ ըլլայ, այս փորձը կը հաստատէ՝ թէ հոգւոյն զգացումը ջղաց ցնցումէն կախումն ունի՝ երբ այս ցնցումը մինչեւ ուղեղն հաղորդուի. փորձը կը ցուցնէ դարձեալ թէ այս զգացումը բնականաբար մարմնոյն այն արտաքին մասանց կը պատկանի՝ յորում ուրիշ անգամ առարկայից եւ միանգամայն ջղաց շօշախման գործողութիւնը կատարուած է:

Զ. ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ . Մեր զգացմանց ումանք առարկայ ունին եւ ոմանք չունին:

Զգացմանց այս տարբերութիւնը՝ որոյ վր-

րայ հողւոյ վրայ խօսած գլխոյն մէջ արդէն քիչ մը ճառեցինք՝ իւր կարեւորութեան պատճառաւ արժանի է տակաւին ուրիշ մի քանի բացատրութիւն ալ աւելցունելու : Բան մը լաւ իմանալու համար՝ պէտք է աւելի մեր յատուկ փորձառութեանը դիմենք :

Ամէն անգամ՝ որ 'ի ներքուստ ջղաց ցընցում մը տեղի կունենայ, օրինակի համար, մեր ներքը կազմուած սր եւ է հեղուկ մը՝ մարմնոյ մէջ մասին վրայ կը թափուի եւ հոն ցաւ կը պատճառէ, այս զգացումը առարկայի չենք տար եւ չենք գիտեր ալ թէ ուսկից է :

Յօդացաւը ձեռքերնուս կը զարնէ կամ կը հիւանդացունէ. դառն հեղուկ մ'աչքերնիս կը կսկծեցունէ. այս շարժմանց հետեւանքն եւ զող ցաւոյ զգացումն առարկայ չունի :

Վասն որոյ ընդհանրապէս այն ամէն ըզգացմանց մէջ՝ որ մարմնոյ ներքին մասանց կը պատկանին՝ արտադրող առարկայ չենք տեսներ կամ գտներ, ինչպէս են գլխոյ, ստամոքսի եւ փորոտեաց ցաւերը. նօթի կամ ծարաւ եւ դած ատեննիս մարմնոյ մի քանի մասանց վրայ ցաւ կ'զգամք իրաւցնէ, բայց այս աստիճան ազդոյ զգացման մ'առարկայն չենք կրնար տեսնել, որովհետեւ բոլոր կատարուած ցնցումը ներսն է :

Ընդ հակառակն, երբ ջղաց ցնցումը արտաքուստ պատճառի, այն ատեն մեր ընդունած զգացումն ալ միշտ արտաքին առարկայ մը կունենայ : Մեր բոլորի մարմինները աչքերնուս զանազան գոյներով գրուագեալ կերեւին. լաւ կամ գէշ ճաշակ կը յատկացու-

նենք կերակրոց, արգիլուածը կ'զգայ նաեւ թէ արգիլող մը կայ, հարուածուողը կ'զգայ՝ թէ հարկանող բան մը կայ, նմանապէս կ'զգամք արտաքին առարկայներէ եկած ձայներն ու հոտերը եւ այլն :

Ասիկայ թէ եւ ամէն զգացմանց համար ալ այսպէս է, բայց ոչ նոյն յատակութեամբ կամ եղանակաւ. որովհետեւ որոշակի չենք գիտեր, օրինակի ազգաւ, թէ ուրկից կուգան ձայն եւ հոտ, մինչդեռ գունոց եւ ուղղակի աչքի առարկայ եղող լուսոյ սր տեղէ գալուն վրայ գիտութիւն կունենամք : Արդ ասոր պատճառն այս է՝ որ տեսողութիւնը ուղիղ գծի մը մէջ կը կատարուի, եւ թէ առարկայները շիտուած կողմէն միայն կը ներկայանան մեր աչաց. մինչդեռ ձայն եւ հոտ ամէն կողմէ անխտիր եւ շատ անգամ ալ օդոյն մէջ ձեւացեալ կոր զրծերով կուգան կը հասնին մեզ, եւ հետեւաբար չենք կրնար որոշակի եւ հաստատապէս գիտնալ թէ սր կողմէն կուգան :

Առարկայից նկատմամբ ալ դիտել արժան է թէ՛ թէ պէտ ազգայարանաց ոմանց գործարանները կրկին են, սակայն դարձեալ սովորաբար մէկ առարկայ միայն կը տեսնեն : Սովորաբար ըսի. որովհետեւ կը պատահի երբեմն՝ որ երկու աչքերն առարկայները կրկին կը ցուցնեն. բայց թէ ինչ կերպով՝ անաւասիկ :

Նրբ գործարանաց բնական կացութիւնը կամ զիրքը փոփոխենք, օրինակի համար, երբ որ աչքերնիս այնպէս մը խփենք, որ տեսողական ջղերն զանազան կերպերով բախուին, առարկայն կրկին եւ տարբեր տեղեր կերեւի,

Թէպէտ եւ մին քան զմիւսը աւելի մթին : Բայց երբ երկու աչքն ալ իրենց բնական դիրքին մէջ գտնուին՝ երկու աչաց ջղերն ալ մի եւ նոյն եղանակաւ ընդունելով առարկային ազդեցութիւնը՝ մէկ առարկայ եւ հետեւաբար մէկ զգացումն միայն կը ներկայացունեն հոգւոյն , ինչպէս որ մի եւ նոյն ձայնի աստիճանին վերայ յարգարուած կրկին լարեր՝ երբ նոյն եւ մի վայրկենին շօշափուին՝ մէկ ձայն միայն կը հասցունեն մեր ականջին : Ասոր պատճառն յայտնի է . որովհետեւ երկու ջղերն ալ մի եւ նոյն կերպով բախուելով՝ առարկային հետ նոյն եւ մի յարաբերութիւնն կունենան , եւ հետեւաբար նոյն առարկայն բողբոլին մի կը ցուցնեն առանց գունոյ , գրից եւ ձեւոյ կողմանէ : փոքրիկ տարբերութիւն կենալու :

Ուրեմն այս պայմանին կամ դէպքին մէջ իրարմէ տարբեր երկու զգացումներ ունենալ բացարձակապէս անկարելի է . ինչու որ իրենց կատարեալ նմանողութիւնն եւ մի եւ նոյն առարկային հետ ունեցած միակերպ յարաբերութիւնը թոյլ չեն տար հոգւոյն՝ որ անոնց մէջ տարբերութիւն մտցունէ . ընդ հակառակն այս զգացումներն իբրեւ ըստ ամենայնի միմեանց համաձայն իրեր՝ պէտք է որ հոգւոյն մէջ 'ի մի ձուլուին : Այս գործարանաց կրկին եւ իրարու զուգընթաց ըլլալէն սոսմիայն կրնամք հետեւցունել թէ երկու գործարանաց ձեռօք ստացուած զգացումն աւելի զօրաւոր եւ ազդոյ կըլլայ քան մի գործարանի միջոցաւ միայն եղածը . այնպէս որ՝ ինչպէս փորձն ալ կը ցուցնէ , երկու աչք 'ի միասին մէկ աչքէ շատ

մը լաւ եւ յստակ կը տեսնեն :

Անոն այս էր զգացմանց եւ անոնց տարբերութեանց վրայ կատարելիք գիտողութիւննիս , զգացմանց կրսեմ՝ որը հոգւոյ եւ մարմնոյ միանգամայն կը պատկանին եւ երկուքին մրցակցութենէն կախուան ունին , Հոգւոյն թէ իւր եւ թէ իրեն հետ միացեալ մարմնոյն նկատմամբ ըզգացմանց վրայ վարած գործողութեան անցնելէ յառաջ՝ վայելուչ եւ մինչեւ հիմայ ըրած բացատրութիւններնիս ամփոփել եւ վրայնին համառօտ խորհրդածութիւն մը յաւելուլ :

Եթէ առջի ըստածններն աղէկ հասկցուեցան , տեսանք՝ որ ամէն զգացմանց մէջ շղթայաբար իրար կցուած շարժում մը կայ՝ որ առարկայէն կսկսի եւ ուղեղին վրայ կը վերջանայ :

Հարկ չը կայ շօշափելեաց եւ ճաշակելեաց վրայ խօսելու , որոց վրայ առարկայից ազդումն անմիջական է , եւ այն այնչափ զգալի՝ որ անհնար է ուրանալ : Բայց միւս երեք զգայարանայ համար այսպէս չէ . աչքն զգացումն առնելու համար հարկ է՝ որ առարկային վրայէն ճառագայթներ ցոլանան , լսելեաց համար ալ՝ պէտք է որ ձայնական մարմինը թրթռայ , եւ հոտոտելեաց համար ալ հարկ է որ հոտաւէտ մարմինէն գոլորչի մը ցնդի կամ ելնէ :

Արդ ահաւասիկ շարժում մը՝ որ առարկայէն կ'սկսի , սակայն գրեթէ ոչ ինչ կ'ըլլայ այն՝ եթէ առարկային ու մեր գտնուած միջոցին մէջ չը շարունակէ :

Այս էր պատճառը՝ որ նշանակեցինք յառաջուց թէ հոգմն , ջուր եւ ուրիշ միջանկեալ

խիտ եւ անթափանցիկ մարմիններ առարկայներն եւ անոնց բնական արդիւնքը խափանելու համար ինչ բաներ կրնան ընել :

Ենթադրենք թէ մէջ տեղը չը կայ այնպիսի բան մը՝ որ շարժումը մեզի հասնելու արդելք լինի . բայց այսչափը բաւական չէ . որովհետեւ եթէ աչքս գոցեմ կամ ականջս եւ ունչս խընում, առարկայներէն ոչ ինչ չը կրնար ինձի դալ, ոչ ցոլք ճառագայթից, ոչ օդոյ թրթրումունք, եւ ոչ հոտոյ ցնդական գոլորչիք : Ապա ուրեմն նոյն այն շարժումն՝ որ առարկայէն ըսկսելով կ'երկարի եւ կը տարածուի՝ հարկ է որ մինչեւ մեր գործարանացն հասնի : Եւ, ինչպէս արդէն տեսանք, այս շարժումը ջղաց երկայնութեամբը մինչեւ ուղեղը կ'երթայ կը հաղորդուի :

Շղթայաբար եւ շարունակ իրար անցած շարժմանց այս չորս պայմաններն անհրաժեշտ են զգացման համար, առանց ասոնց անհնար է ըզգացումն հասնիլ մեր հոգւոյն :

Սակայն Աստուծոյ կամ բնութեան գաղտնիքն է՝ թէ ինչպէս շղթայաշար շարքով մ'զգացումն կ'ըլլայ, այն է ջիղը ցնցուելով զգացումն ուղեղին կ'երթայ, եւ թէ ինչպէս զգացումն այն տեղին կ'ընծայուի, ուրկից որ շղթայն կամ շարքն սկիզբն կ'առնու, այն է առարկայէն :

Ասով դիւրին պիտի ըլլայ իմանալ՝ թէ ըզգացմունք ինչ կ'ընեն մեզ, եւ թէ ինչ օգուտ յառաջ կուգայ ասոնցմով թէ հոգւոյ եւ թէ մարմնոյ :

Ուստի պէտք է՝ որ չորս բան մտքերնիս

պահենք զգացմանց վրայ, այսինքն թէ ինչ կըլլայ առարկայն, միջոցին, գործարանաց եւ, վերջապէս, մեր հոգւոյն մէջ, այն է առ հասարակ զգացողութեան, որոյ պարագայներն են միւսները :

Ա. ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ. Թէ ինչ որ կըլլայ ջղաց մէջ, այսինքն այն ցնցումն՝ ուրկից յառաջ կուգայ զգացումն, ո՛չ զգալի է եւ ո՛չ ծանօթ :

Բան մը տեսած կամ լսած եւ կամ ճաշակած ժամանակնիս թէ ինչ կ'ըլլայ մեր մարմնոյն կամ ջղաց եւ ուղեղին մէջ, ոչ կ'զգամք եւ ոչ ալ կերպով մը տեղեկութիւն ունիմք . չենք գիտեր անգամ թէ ուղեղ եւ ջիղ ունինք . Բոլոր գիտցածնիս սա է՝ որ առարկայից ներկայութենէն զանազան զգացումներ կ'արթնան 'ի մեզ, ինչպէս հեշտութեան կամ վշտաց, գէշ կամ աղէկ ճաշակի եւ այլն զգացումները : Այս գէշ կամ լաւ ճաշակը մեր գործարանաց, այն է ջղաց շարժումներէն կախումն ունի . սակայն այս գէշ կամ աղէկ ճաշակ ըսածնիս չ'զգացուենք մեզ՝ թէ ինչ կըլլայ ջղաց մէջ : Ասոր վրայ ինչ որ գիտեմք՝ 'ի բանականութենէ կամ 'ի դատմանէ է, զգացողութեան չը վերաբերիր, եւ բնաւ այս կողմանէ օգուտ մը չ'ունի :

Բ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ . ո՛չ միայն չեմք զգար ջղաց մէջ տեղի ունեցած ցնցումը, այլ նաեւ չը գիտեմք բնաւ թէ առարկայից մէջ ինչ բան կայ՝ որ կրնայ ջղաց ցնցումն

տալ . չեմք՝ գիտեր . դարձեալ թէ Ենչ կըլլայ մէջ տեղը , ուսկից առարկային ազդեցութիւնը մեզի կը հասնի :

Փորձառութիւնը կ'ուսուցանէ այս բանն ալ : Տեսանելիքը մեզի չը պատմեր թէ ինչպէս առարկայից միջոցաւ մեր վրայ լուսոյ դանազան ցոլացումները կ'իջնան , չ'իմացուներ բնաւ թէ ինչո՞ւ առարկայն կամ միջոցը թափանցիկ կամ անթափանց պէտք է ըլլան լուսոյ ցոլացումն եւ բեկրեկումն եւ ուրիշ նմանօրինակ բաներ պատճառելու համար . չ'զգացունէր դարձեալ թէ սպիտակ եւ ուրիշ գոյներ ինչպէս այնքան սաստկութեամբ ջղերնիս կը ցնցեն . Լսելիքը՝ չ'ըզգացունէր մեզ ոչ օդոյն ծածանումները եւ ոչ ձայնական մարմնոց թրթռումները . եւ այս բանիս վրայ տեղեկութիւն չը պիտի կրնայինք ունենալ՝ եթէ արդէն գիտցած չըլլայինք կամ խորհրդածութեան կամ մեր բոլոր մարմնոյն ցնցման եւ կամ ականջաց մէջ տեղի ունեցած ցաւոյն միջոցաւ . ինչպէս կը պատահի երբ մեր մօտէն թնդանօթ մ'արձակուի . բայց ըսել է թէ այսպիսի պարագայներու մէջ շօշափողականին միջոցաւ կ'ընդունինք ազդեցութիւնը : Հոտտելիքը բան մը չ'ըսեր մեզի հազորցած դ'որշիներուն համար , նոյնպէս ալ ճաշակելիքնիս մեր լեզուին վրայ քամուած հիւթերուն համար բան մը չ'են յայտնե՞ր՝ թէ ինչպէս կ'ըլլայ՝ որ այս առարկայներն հեշտութիւն կամ ցաւ , քաղցրութիւն կամ կծուութիւն կամ դառնութիւն կը պատճառեն : Վերջապէս , շօշափելիքը չ'ուսուցանէր մեզ բնաւ թէ ինչ

պատճառաւ ջերմութիւն կամ ցրտութիւն մեր մարմնոյն ծակափքները կ'ընդլայնեն եւ կը սեղմեն , եւ թէ ինչպէս ամբողջ մարմնոյն՝ նա մանաւանդ՝ ջրաց այսքան տարբեր շարժումներ կը պատճառեն :

Ջրոյ եւ կամ ուրիշ լոյծ մարմնոյ մէջ ընկղմած ժամանակնիս՝ այս ընկղմումն անոր համար կ'զգամք՝ որ մեր մարմնոյն միայն մէկ մասին վրայ զգացած ջերմութիւննիս կամ ցրտութիւննիս երթալով կը տարածուի . բայց թէ ինչ է պատճառը՝ որ լոյծ մարմնը մեր առջեւ տեղի կուտայ , զգայարանք ասոր վրայ բան մը չ'են պատմեր բնաւ :

Չգայարանք չ'են ըսեր նոյնպէս թէ ինչո՞ւ համար է՝ որ կան մարմիններ՝ որ ընդդիմահար են՝ եւ եթէ լաւ զխողովութիւն ընենք՝ այսպիսի ատեն ինչ որ կ'զգամք ցաւ միայն է , որ սկիզբն ու ծագումն կ'առնու կարծր եւ նողորկ մարմնոց մեզի պատահելէն . որովհետեւ այս առարկայից պնդութիւնը մեր յոյժ կակուղ եւ փափուկ մարմնը կը վերաւորէ :

Ջուր եւ ուրիշ խոնաւ մարմիններ մեր մորթին վրայ կը կռուին եւ նոյն միջոցին զգացում մը կ'ըլլայ հոն , բայց զգայարանք չ'են իմացուներ մեզ նոյն մարմնոց անօսրութիւնը՝ որով կարող կ'ըլլան մեր մորթը թանալ եւ փակել . զգայարանք չ'են ըսեր նոյնպէս՝ թէ ինչո՞ւ համար չ'որ մարմինները փոշի դարձած ատեննիս միայն այս արդիւնքը կը կատարեն՝ ի մեզ . եւ ոչ իսկ ջրոց կաթիլներուն եւ փոշւոյն մէջն եղած տարբերութեան պատճառը՝ զոր կ'զգայ մարդ՝ երբ նոյն մարմիններն իւր

ձեռաց վրայ կռուին : Այս ամէնն անհնար է շօշափելեաց ձեռք ճշդապէս իմանալ . վերջապէս , մեր զգայարանքներէն եւ ոչ մին կրնայ գէթ կարծել թէ ինչ պատճառաւ արտաքին առարկայներէ կը շօշափուի :

Այս ամէն ըսուածներն որպէս զի լաւ հասկընամք , ուրիշ բանի հարկ չըկայ , եթէ ոչ պարզ բացատրութեան մը : Սակայն մարդ ինքնին ասկիայ որոշակի եւ ճշդիւ կրնայ ընել՝ եթէ ուղէ զգայարանաց եւ իմացականութեան մէջ եղած տարբերութիւնն իմանալ՝ որոց գործողութիւնները շատ կը շփոթէ մարդ :

Գ. ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ . Զգալու ատեննիս միայն զգացումը կ'իմանամք , եւ երբեմն ալ այն բանը՝ որ առարկայ կը կոչենք :

Զգացմանէն յառաջ եկած բաներուն համար հարկ չըկայ ազացոյց տալու՝ զգալու՝ ատեննիս՝ թէ կ'իմանանք : Ամէն մարդ իւր ըզգացմանց վրայ համոզուած է , եւ զգացողին հարկ չըկայ ազդարարելու՝ թէ անա կ'զգայ : Զգացմունքէն ուրիշ բան մը կայ՝ որով կը ճանչնամք զգացմունքը , զի զգացմունքն իւր վրայ չը խորհրդածեր , եւ իւր վախճանն ու սահմանն եղող առարկային վրայ միայն գործ կ'ընէ :

Վասն որոյ , զգացողութեան բուն գործն է առարկայներն իրարմէ զանազանելու մասին մեզի օգնել : Եւ արդարեւ զմեզ շօշափող կամ չըրջապատող իրերն իրենց ներգործած զգացմանց միջոցաւ կրնամք իրարմէ տարբերել . եւ առարկայ-

ներու վրայ ծանօթութիւն ստանալու բնական կարգն է այս :

Բայց , այսու ամենայնիւ , արդէն ըսածներնէս յայտնի կը տեսնուի՝ թէ զգացմունք առարկային վրայ խոր տեղեկութիւն չեն տար : Զենք զիտեր՝ թէ առարկայի մը բաղադրիչ մասունքներն ինչ եւ որոնք են . ինչ է մէջերնին եղած կարգը , եւ ինչ պատճառաւ լուսոյ ճառագայթները մեզ , կը հաղորդեն , գոլորշիներ կը հանեն եւ օդոյն մէջ զանազան շարժումներ կը կատարեն՝ որով զանազան ձայներ յառաջ կուզան եւլն : Սա միայն գիտենք՝ որ մեզնէ դուրս եղող առարկայներէ ծագումն կ'առնուն , որոց վրայ այսչափ մը միայն տեղեկութիւն ունիմք՝ որ իրենց ներկայութենէն գործողութիւն մը տեղի կ'ունենայ մեր ներսը , որուն զգացմունք կըսենք :

Այսպիսի ըմբռնում մը կամ ծանօթութիւն մը մեզի , կարծես , բան մը չ'ուսուցանէր . սակայն զգայարանաց միջոցաւ շատ բաներ կ'ուսանիմք եւ անաւասիկ թէ ինչպէս :

Գ. ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ . Զգացմունք կ'ուսուցանեն հոգւոյն՝ թէ իւր հետ միացեալ մարմնոյն պահպանութեան համար ի՞նչ բանի ջանալ եւ ի՞նչ բաներէ խուսափիլ հարկ է :

Փորձն ինքնին կ'ապացուցանէ՝ թէ զգացմանց գործածութեանէն ինչ օգուտ կելլէ . եւ գրեթէ բնութիւնն իւր օգուտներուն համար պարզեւած է . սակայն հետեւեալն ալ պէտք

է դիտնայ :

Ե: ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ . Չգացմանց միջոցաւ ստացած ճանօթութիւնն իս անկատար եւ գողցես ոչ ինչ պիտի ըլլար, եթէ բանականութիւնը գործակից չընէինք :

Այս երկու առաջարկութիւնները միանգամայն կը բացայայտուին եւ կը պարզուին, եւ ասոր համար ալ բաւական է ինքզինքն ըննելը .

Յաւը կ'զգացունէ՝ թէ մեր ամբողջ մարմինն եւ կամ մասունքներէն մին անկանոն ընթացքի մը մէջ կը գտնուի . հողին ալ կը փութայ հիւանդութիւն պատճառող բանէն խուսափիլ եւ կամ դեղ ճարել :

Ուստի հարկ էր որ, ինչպէս կանխաւ ըսինք, ցաւն արտաքին պատճառներու եւ մեր մարմնոյն շնասուած մասին ընծայենք . որովհետեւ այս միջոցաւ պիտի դիտնայ հողին դեղը հիւանդացեալ մասին կամ տեղւոյն վրայ դնել :

Նոյն բանը պէտք է խմանալ հաճոյից համար ալ . ուտելու կամ խմելու հեշտութիւնը կ'ստիպէ՝ որ պէտք եղած կերակուրները տանք մարմնոյ, եւ այս բանիս համար մարմնոյն այն մասերը միայն գործածել կուտայ մեզ՝ յորս ճաշակի հաճոյքը կ'զգամք :

Որովհետեւ իրերն այնպէս մը կարգաւորուած են՝ որ մարմնոյ նպաստաւոր բաները բնականաբար հաճոյք կը պատճառեն եւ շնասակարներն ալ ընդ հակառակն ցաւ, անանկ որ հեշտութիւն եւ ցաւ կը յօժարեցնեն զհողին այն ամէն բանի՝ որ մեր մարմնոյն կը վերաբերին ,

եւ կ'ստիպեն՝ որ մարմնոյն պահպանութեան հարկաւոր բաները ջանայ ձեռք բերել :

Այսպէս մարմնոյն սնունդի եւ կամ զովանալու պէտք ունեցած ժամանակ՝ հողւոյն մէջ ցաւ մը յառաջ կուգայ, որոյ քաղց եւ ծարաւ անունները կուտանք . եւ այս ցաւը կը բռնադատէ ուտել եւ խմել :

Այս ցաւոյ կ'ընկերանայ նաեւ հեշտութիւնն ալ՝ որ բանի մը կը հաւանեցնէ . որովհետեւ թո՛ղ զի նօթութեան եւ ծարաւոյ ցաւերուն դաղբաժ ատեն՝ հեշտութիւն կ'զգամք, հապա նաեւ ուտել եւ խմել ինքնին մասնաւոր հեշտութիւն մ'ալ ունին, որ նոյնպէս կը գրբդէ մարմնոյն պէտք եղած բաները վնասելու :

Այս կերպով է՝ որ հեշտութիւն եւ ցաւ կ'ուսուցանեն հողւոյն ինչ որ կը պարտի մարմնոյն . եւ այս ուսումը հարկաւոր է, միայն թէ բանականութիւնը գահերէց բազմի : Այնպէս զի հեշտութիւնն ըստ ինքեան խարէական է . եւ եթէ հողին առանց բանականութեան անսալու ինքզինքն անոնց յանձնէ՝ շարունակ կը մոլորի ոչ միայն ուղղակի հողւոյն պատշաճօղ իրաց մէջ, ինչպէս երբ հողին հաճոյից հետեւելով՝ առաքինութիւն չը գործէ բնաւ, այլ նաեւ մարմնոյ վերաբերեալ բաներու մէջ ալ . որովհետեւ շատ անգամ ուտելու եւ խմելու հեշտութիւնն անժամանակ այնչափ ուտել խրմել կուտայ, որով մարդ անձնական առողջութիւնը կը կորսնցունէ :

Ար գտնուին նաեւ այնպիսի իրեր՝ որք 'ի սկզբան չափազանց ցաւ կը պատճառեն մեզ, եւ սակայն յետոյ մեր հիւանդութիւնը կը դարմանեն :

Վերջապէս, մեր ներսն եղած ամէն տեսակ զգացմունք մէջ մէկ բան կը սովորեցունեն: Ինչու որ իւրաքանչիւր տարբեր զգացմունք բնականաբար առարկայից մէջ զանազանութիւն մը կը դնէ: Արդ այսպէս ուրիշ է դեղին գոյնը եւ ուրիշ կանաչը. այլ է ճաշակելեաց դառնութիւնն պատճառող բանն եւ այլ քաղցրութիւն. դարձեալ տարբեր է ցուրտ զգալն եւ տարբեր է ջերմութիւնն: Իսկ եթէ 'ի սկզբան այս կերպ զգացմունք պատճառող առարկայն յետոյ սկսի մէկ ուրիշ տեսակ զգացմունք մ'ալ ազդել, աստի կը հետեւցունենմ' թէ նոյն առարկային վրայ փոփոխութիւն մ'եղած է: Եթէ յառաջուց պազ երեւցած ջուրը քիչ մը վերջը տաք գայ, պատճառն այս է որ կրակի վրայ դրուած է այս ջուրը: Առարկայները զանազանել ըսածնիս ապիկայ է. բայց այս զանազանութիւնն ոչ թէ 'ի ձեռն առարկայից, այլ անոնց մեր զգայարանաց վրայ արտադրած արդիւնքներովն է որ կ'իմանամք, ինչպէս արտաքին նշանով մը: Այս նշանին միջոցաւ հողին իւր շուրջը զըտնուած առարկայներն իրարմէ զանազանելով՝ կը դատէ կամ կը գիտնայ՝ թէ՛ այս բաներն երբ մարմնոյ կը վնասեն եւ երբ չեն վնասեր:

Սակայն տակաւին այեւք է որ բնականութիւնն այս դէպքին մէջ ալ զմեզ ուղղէ. ասպ թէ ոչ մեր զգայարանքներն այս կողմանէ ալ զմեզ կը խաբեն: Որովհետեւ մի եւ նոյն հեռաւորութեան մէջ տեսնուած առարկայն փոքր կ'երևայ երբ դայն քիչ մ'աւելի հեռուէն նկատեմք. ընդ հակառակն մեծ՝ երբ մօտն ըլլալ ենթադրեմք. օրինակի համար, լուսինը հորիզոնին վրայ եղած ժա-

մանակ աւելի մեծ կ'երեւնայ մեզ, եւ խիստ փոքրը՝ եթէ հորիզոնէն շատ մը վեր բարձրանայ. թէպէտ եւ երկու դիրքին մէջ ալ լուսինը պէտք է որ ճշդապէս մի եւ նոյն անկեան տակ ըլլայ, այսինքն նոյն եւ մի հեռաւորութեան մէջ: Օգոյն մէջ ուղիղ էրեւցած գաւազանը ջրոյ մէջ կոր կ'երեւի: Մի եւ նոյն գաղջ ջուրը ձեռքս տաք եղած ատեն պազ կուգայ, իսկ երբ ձեռքերս մրսած ըլլան՝ ընդ հակառակն տաք: Կանաչ գունով ապակւոյ մը մէջէն ամէն բան կանաչ կը տեսնուի. սոյնպէս երբ դեղին մաղձն աչացս մէջ տարածուած ըլլայ, ամէն առարկայ դեղին կ'երեւի. եւ եթէ սոյն այս հեղուկն, այն է մաղձը լեղուիս վրայ գայ՝ այն ատեն ամէն բան դառն կը թուի. երբ տեսանելեաց եւ լսելեաց ծառայող ջղերն 'ի ներքուստ՝ շարժուին՝ կայծեր, այլ եւ այլ գոյներ, խառնաչփոթ ձայներ եւ զօղանջիւններ յառաջ կուգան՝ որք զգալի առարկայէ մը կախումն չ'ունին բնաւ. այս տեսակ ցնորքներն անթիւ են:

Ուրեմն ասկէց յայտնի է՝ թէ մարկային հողին շատ անգամ մոլորութեան մէջ պիտի լցնար, եթէ առանց բնականութեան խորհուրդ հարցունելու զգայութեանց միայն հաւատք ընծայեր: Սակայն հողին զգայարանքներէն յառաջ եկած մոլորութիւնները կրնայ ուղղել. ամէն նոր զգացմունք առնելուս խելքով կ'իմանամք՝ թէ փոփոխութիւն մը տեղի ունեցաւ կամ առարկայի մէջ կամ այն միջոցին՝ ուստի այս առարկայն կը նշմարենք, եւ կամ մեր զգայարանաց վերաբերեալ գործարաններուն մէջ: Առարկայից մէջ երբ փոփոխութիւն մը կրեն,

ինչպէս , որ ատեն պաղ ջուրը տաքցած ըլլայ եւ կամ երբ 'ի սկզբան կանաչ տերեւները չորնալով՝ դեղինին : Միջոցին մէջ՝ երբ այս միջոցն առարկային բնական գործողութիւնը կամ պաշտօնն ալայլէ , ինչպէս , երբ ջուրն իւր մէջ գըտնուած գաւազանէն մեր աչքին եկած ճառագայթից ուղիղ գիծը բեկանէ : Զգայարանաց վերաբերեալ գործարանաց մէջ՝ երբ իրենց վրայ թափուած հեղուկներուն եւ կամ ուրիշ նմանօրինակ իրաց պատճառաւ մեծ այլայլութիւն մը կրեն :

Սակայն եւ այնպէս եթէ պատահի՝ որ մեր զգայարաններէն ունաք զմեզ պատրեն , կըրնամք առանց գժուարութեան այս յոռի կամ սըխալ գատումն ուղղել միւս զգայութեանց եւ բանականութեան ձեռօք . զոր օրինակ , ջրոյ մէջ եղած գաւազանը մեր աչաց կոր կ'երեւնայ . բայց թող որ եթէ գաւազանը ջրին մէջէն հանուի , տեսանելիքն սխալին կ'ուղղեն 'ի ձեռն շօշափելեաց՝ որ սովորութենէ գիտէ թէ ուղիղ մարմիններն ինչ ձեւ կ'ունենան եւ 'ի ձեռն բանականութեան՝ որ մեզի կը ցուցնէ՝ թէ անհնար է՝ որ ջուրը մի եւ նոյն ատեն գաւազան մը ծռէ . այս երկուքը կրնան զմեզ ուղղել : Այլ թէ պատահի՝ որ ամէն բան ճաշակելեացս դառն եւ տեսանելեացս դեղին երեւի , բանակա նութիւնը կը ցուցնէ ինծի թէ 'ի սկզբան այսքան իրարմէ տարբեր բնութիւն ունեցող առարկայներու մէջ կարելի բան չէ՝ որ այսպիսի միակերպութիւն մը տեղի ունենայ . եւ այսպէսով կարող կ'ըլլամ իմ գործարանացս այլայլութիւնը ճանչնալ եւ կը ջանամ զանոնք իրենց

բնական կացութեանը վերածել :

Ապա մեր ամէն մէկ զգացմունքները մեզի շարունակ տեղեկութիւններ կուտան՝ նոյն իսկ զմեզ խաբէութեան մէջ ձգած ժամանակնին ալ , եւ ասանկով մեր երկու առաջարկութիւնները կը ճշմարտին :

Զ. ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ. Զգայարանք բանականութեան կ'օգնեն , ո՛չ միայն մեր մարմնոյ պիտոյքն իմանալու , հապա նաեւ բոլոր բընութեան վրայ ճանօթութիւն ստանալու մասին :

Մարդկային հոգին ինքնին յաւիտենական ճշմարտութեան սկզբունքները , խորհրդածելութեաններն եւ հետեւութիւններ հանելու արուեստն ունի : Այսպիսի շնորհքով զարգարուած հոգին արգարեւ այնպիսի մարմնոյ մը հետ միացեալ կը գտնուի՝ որ այս անհուն տիեզերաց հետ բաղդատելով գրեթէ ոչնչի հաւասար է . սակայն այս ամենադոյզն մասն , այսինքն մարմինը , տիեզերաց ընդարձակութեան հետ իւր յարաբերութիւններն ունի : Այս մարմինն այնպիսի կազմակերպութիւն մ' ունի՝ որ թէ եւ ամենանուրբ մանրաթելերէ բաղկացեալ՝ սակայն այնպիսի արուեստով մը կարգաւորուած է՝ որ ամենազօրաւոր շարժումներն անգամ անոր մանրաթելից յիշատ մը չեն կրնար հասցունել , եւ ասոր հետ մէկտեղ ամենափոքր շարժում մ'ալ իւր աղղեցութիւնը կը կատարէ անոր վրայ . այնպէս որ արեղական եւ լուսնի եւ յանուսն անջրպետութեամբ հեռի եզոց ա-

մենամեծ աստղերու նշանաւոր ազդեցութիւնս ներն իսկ աչքի միջոցով կուգան։ Կը հաղորդուին մեր մարմնոյն : Արդ հողուոյ եւ մարմնոյ միութիւնն այնպիսի մեծ եւ հոօր ձեռքի մը գործ է, կամ այնպիսի դեղեցիկ կարգ մ'եւ վայելուչ համեմատութիւն մը կայ մէջերնին, մինչ զի հողին՝ որ միշտ գահերէց պէտք է բազմի, իւր զգացմանց միջոցաւ իրեն հետ միացեալ մարմնոյն մէջ, եւ շուրջը գտնուած առարկայներու եւ մինչեւ անգամ անսահման հեռաւորութեանց մէջ եղած իրաց վրայ ծանօթութիւն կ'ստանայ։ Որովհետեւ այս զգացմունքներն, ինչպէս արդէն ըսած ենք, կամ միջոցի եւ կամ դործարանաց ձեռօք առարկայից այս կամ այն տրամագրութեանց հետ յարաբերութիւններ ունին․ ապա մեր հողին իրաքանչիւր զգացմանց միջոցաւ նորանոր բաներ կը սովորի, որոցմէ ոմանք իւր մարմնոյն պիտոյից կամ դոյութեանը կը ծառայեն, շատերն ալ բանի մը չեն գար։ Վասն զի ինչ օգուտ ունի մարդկային մարմնոյն, օրինակի համար, այն զարմանալի աստեղաց անհունութիւնը՝ որք զիշեր ժամանակ մեր աչաց այն աստիճան փայլուն եւ պայծառ կ'երեւին։ Մարդկային հողին մի միայն իւր մարմնոյն նպաստաւոր բաները գիտած ատենն անգամ այս կերպով ուրիշ շատ մ'իրեր ալ 'ի յայտ կը բերէ, այնպէս որ այն փոքրիկ մարմնոյ միջոցաւ՝ յոր ինքն հողին ամիտիեալ է՝ ամէն բանի կ'գբազի, կամ, այսպէս ըսեմ, կը տեսնէ որ ամբողջ տիեզերք իւր մարմնոյ մէջ կը դրօշմուի, ինչպէս որ արեւուն շրջանը կամ ընթացքն արեգական ժամացուցին վրայ կը նկարուի։ Ապա այս մի-

ջոցով նշանաւոր իրաց վրայ տեղեկութիւններ կ'առնու, որպիսիք են արեգական ընթացքը, ծովու ջուրց մակընթացութիւնն ու տեղատուութիւնը․ կենդանեաց, անկոց եւ հանքային նիւթերու սկիզբը կամ ծաղումը, աճումն եւ անոնց զանազան յատկութիւնները, եւ ուրիշ մեծ ու փոքր անթիւ անհամար իրեր՝ որք չըթթայաբար իրար անցած են եւ որոց իւրաքանչիւրն ալ առանձին առանձին կրնան իրենց Արարիչը պատմել ամէն անոնց՝ որոց հետադատութիւնը զօրաւոր է։ Հողին այս մանր մուկը բաներու միջոցաւ կը կազմէ բնական պատմութիւնը՝ որոյ առարկայն են մեր զգայարանաց տակ ինկած բաները․ եւ խորհրդածութեան ձեռօք կը գիտնայ թէ այս բոլոր իրերն որչափ կանոնաւորեալ են։ Այսպէս այս իրերն իրարու կը պատշաճեցնէ, կը չափէ կը չափչփէ, կը կշռէ, 'ի քնին կ'առնու ներհակն ու միարանը, շարժման եւ դադարման կամ հանդստեան արդասիքները, կարգը, չափակցութիւններն ու համեմատութիւնները, մասնական եւ ընդհանրական պատճառներն, այսինքն այն պատճառները՝ որ մասերը կը շարժէ, եւ այն Պատճառը (Աստուած) որ զամենայն յիւրում կարգի կը պահէ։ Արդ հողին իւր մէջ ունեցած տիեզերական սկզբանց զգայարանաց ձեռօք սովորած մասնաւոր բաները միայնելով՝ ընութեան մէջ շատ մը բաներ կը տեսնէ, եւ դիտէ այժմէ դեռ չը տեսածներն աւելի դեղեցիկ են․ այսքան հարկաւոր է եղեր ջիղեր ունենալնիս, որ 'ի հեռուստ ազդուելով եւ ազդեցութեան միջոցաւ զգացմունքներ առնլով՝ դիւրու-

Թիւն կ'ունենայ հողին շատ մ'իրաց վրայ գիտութիւն ստանալու :

Ահա այս է զգացմանց ջղերուն շարժման հետ ունեցած բնական հաղորդակցութեան վրայ կատարելիք գիտողութիւննիս . հարկ է այժմ իմանալ թէ երեւակայութիւն եւ կիրք մեր մարմնոյն որ շարժումներէն կախումն ունին :

Սակայն նախ եւ յառաջ նշանակել արժան է թէ երեւակայութիւն եւ կիրք կը գոյանան կամ լոկ զգայարանաց ձեռօք եւ կամ Բան եւ Կամք շփոթուելուն համար : Վասն զի շատ սնդամ յայտնապէս բան մ'երեւակայելու կ'զբաղինք եւ յաճախ ալ կը պատահի՝ որ մի քանի կրքեր չափազանց կը դրդուին եւ կը զօրանան . օրինակի համար , արիութիւն կամ բարկութիւն շարժառիթներուն սաստկութեան չափով զօրաւոր կ'ըլլան :

Երեւակայութիւն եւ կիրք՝ որովհետեւ մեր կամելոյն աւելի կը դրդուին եւ կը զօրանան , մեր կամելոյն ալ կը տկարանան : Կրնամք կամաւոր ուշադրութեամբ մեր ցնորական երեւակայութեան շփոթ խորհուրդները հաստատուն պահել . եւ դարձեալ կամեցողութեան եւ բանի զօրութեամբ կարող եմք մեր կրից յախուողն ընթացքը խափանել :

Եթէ երեւակայութիւն , կիրք , բանակաւորութիւն եւ ընտրողութիւն իրար խառնուած մտածելու ըլլանք , զգայական եւ իմացական գործողութիւններն իրար պիտի շփոթենք եւ այսպէսով երկոցուն արդիւնքներն ալ կատարելապէս չը պիտի կրնանք գիտնալ : Իրար խառնելու չենք : Եւ , ինչպէս լաւ իմանալու

համար թէ կատարի՝ ձիերն ինքնիրենց մնալով ինչեր կ'ընեն , պէտք է անստնձ եւ անկառավար նկատել . այսպէս ալ իմանալու համար թէ կիրք եւ երեւակայութիւն ինչեր կ'ընեն , պէտք է նկատել բոլորովին զգայարանաց եւ ինքնիրենց յանձնուած անբան եւ անստնձ վիճակի մէջ :

Արդէն իսկ գլխաւոր մասը կամ հողին ալ շարունակ յօժար է երեւակայութեան եւ կրից հետեւիլ . ուստի ասոնց վրայ աւելցուր հողոյն անտարբեր մնալէն յառաջ եկած արդիւնքներն իսկ : Ասանկով կրնանք հասկնալ թէ երեւակայութիւն եւ կիրք ըստ ինքեան ինչ բաներ կըրնան ընել , եւ թէ մարմնոյն տրամադրութեան նայելով կրքերն ինչ աստիճան կը զայրանան :

Եւ նախ երեւակայութենէն սկսինք . սա զգացման հետեւանքն ըլլալուն համար՝ հարկ է որ մարմնոյն իւր մասանց միոյն մէջ ընդունած ազդեցութիւնը մէկ ուրիշ մասի մը մէջ ընդունած տպաւորութեան կապուած ըլլայ . եւ թէպէտ մեր ուղեղին գործարանաւոր կազմութիւնն այս ղէպքին մէջ տեղի ունեցած հանգամանքները չ'ուսուցանեն մեզ , սակայն եւ այնպէս հաստատապէս կը հաւատամք թէ ուղեղին մէջ բան մը կ'ըլլայ , որով հողին ազդումն կ'առնու , հրամանաւ Աստուծոյ , այս կամ այն գաղափարէն : Սա միայն գիտնալ պէտք է՝ թէ ուղեղը բոլոր ջիղերուն սկզբնակէտն է , եւ թէ զգալի առարկայներէ առաջ եկած ջղային ցնցումը կ'երթայ կը վերջանայ ուղեղին վրայ :

Աւելի դիւրին պիտի ըլլայ հասկնալ՝ եթէ գիտնամք ուղեղին ամբողջ գոյացութիւնն եւ կամ իւր մասունքներէն մի քանիին այնպիսի

մանրաթելերէ բաղկացեալ ըլլալը, որք թէ պէտ
քնութեամբ իրարմէ տարբեր՝ սակայն ամենքն
ալ ջլաց հետ հաղորդակցութիւն ունին. ասոր
անդամազննութիւնը չը հակառակիր քնաւ, ընդ
հակառակն մարմնոյ միւս մասանց իրարու հետ
ունեցած համեմատութիւնը հաւատալ կուտայ
այս բանին :

Որովհետեւ առաջին հայեցուածով անյօդ
եւ միակերպ չեղջ մ'երեւցող մտերն եւ դնդեր-
ներն երբոր կտրելու ըլլանք, զուգահեռական
մանրաթելերու կծիկ մը պիտի գտնենք: Մորթն
եւ ուրիշ պարուտակները նմանապէս ամենա-
նորք թելերէ բաղկացած են. այս մանրաթե-
լերն այնպիսի հիւսկէն մ'ունին՝ որոց ամէն մէ-
կըն յատուկ յատուկ պաշտօն կը վարեն, եւ
մարմնոյն պահանջած կակղութիւնն ու պնդու-
թիւնը կուտան :

Ստուգիւ՝ բնութիւնը մեծ խնամք ունե-
ցած է ուղեղին կազմութեան վրայ՝ որ կենդա-
նական զօրութեանց գլխաւոր գործին ըլլալով՝
'ի հարկէ իւր կազմութիւնն ալ դերազանց ճար-
տարութիւն պիտի ունենար :

Ուստի հարկաւ շատ մը նրբաթելերէ պիտի
բաղկանար, որք կենսական զօրութեանց յոր-
դութեամբ եւ իրենց անընդհատ շարժմամբ միշտ
լաւ տրամադրութեան մէջ պիտի ըլլան, այն-
պէս որ կարող ըլլան առանց դժուարութեան
շարժիլ եւ կրկնիլ ջլաց ցնցուելուն համեմատ :

Մեռելոյն ուղեղին մանրաթելերն որոշ չը
տեսնելուս պատճառն ուղեղին աւելի կակղե-
լուն եւ կենսական զօրութիւնը պահող բնական
ջերմութիւնը դադրելուն համար է :

Արդէն իսկ մարմնոյն միւս մասանց հիւ-
սուածքն անգամ՝ որ աւելի հաստ, աւելի պինդ
եւ իրարմէ որոշ որոշ է՝ անոնք անգամ դը-
ժուարութեամբ կ'իմացուին, այն ալ ոչ թէ բո-
լոր նրբութեամբը :

Բնութիւնն այնչափ ճարտարութեամբ մար-
միններն այնքան նուրբ եւ փոքր մասերու բաժ-
նած է՝ այնպէս որ ոչ արուեստը կրնայ նման-
ցունել եւ ոչ ամենասուր աչքերն իսկ կրնան
մանրամասնաբար նկատել՝ որչափ մեծ խոշո-
րացոյցներ ալ գործածենք :

Այս ենթադրութիւններէն յայտնի կ'երեւի՝
թէ ջլաց առարկայներուն միջոցաւ ընդունած
ազդեցութիւնը կամ տպաւորութիւնը հարկա-
ւորաբար մինչեւ ուղեղը կը հաղորդուի. եւ ո-
րովհետեւ զգացումը ջլաց ցնցմանէն կախումն
ունի, ուստի երեւակայութիւնն ալ ուղեղին
վրայ կատարուած ցնցումէն յառաջ կուգայ :

Հետեւաբար երեւակայութիւնն զգացման հե-
տեւանքը կրնամք համարել, ինչպէս որ ուղե-
ղին շաժումը ջլաց ցնցման հետեւանքն է. Եւ
ինչպէս ուղեղին մէջ եղած ազդեցութիւնը ջը-
ղաց ազդեցութեան նման ըլլալու է, այսպէս
ալ կը տեսնեմք՝ որ երեւակայութիւն ըսածնիս
ուրիշ բան չէ, եթէ ոչ զգացման պատկերը կամ
կերպարանքը :

Ինչպէս ջիղք ուղեղէն աւելի արագ եւ զօ-
րաւոր կերպով կ'ընդունին շարժումը, ասանկ
ալ զգացումն երեւակայութեանէ աւելի փափուկ
եւ զգայուն է :

Երեւակայութիւնն զգացմանէ աւելի տեւա-
կան է, եւ հարկաւ առանց պատճառի չէ :

բայց պատճառն ինչ է չը գիտենք . եթէ ուղե-
զին մէջն է , ուրեմն ուր եւ ինչպէս . եւ կամ
եթէ մէկ անգամ արդէն դադափարն առնող
հողուոյնունակական կարողութեան մէջ է , եւ կամ
ամենակարող արարչին սահմանադրութեան մէջ ,
ասիկայ որոնելն ալ անօգուտ է , որովհետեւ
անհնար է գիտնալ :

Վարձեալ կըսուի թէ ուղեղն արտաքին ա-
ռարկայից ազդեցութիւնները գիրաւ կարենալ
ընդունելու համար բաւական կակուղ , առած
ազդեցութիւններն ալ պահելու համար բաւա-
կան թանձր ըլլալով՝ դրեթէ մոմի վրայ եղած
գրօջմի պէս հաստատուն եւ տեւական նշաններ
կը թողու վրան , որով առարկայները միտք կը
բերուին կամ կը յիշուին : Սակայն բաւական է
լաւ քննել այս կարծիքը , մէկէն պիտի տեսնենք
եւ իմանանք՝ թէ որչափ վայրապար , յանդու-
ղրն , եւ , թէ ըստ մասնեայ եւ թէ ըստ բոլորին ,
անկարելի բան է այս :

Այլ եւ այլ զգայութեանց ձեռք միանգա-
մայն եկած ազդեցութիւնները դրեթէ ուղեղին
մէջ նոյն եւ մի տեղը կ'երթան կ'ամփոփուին .
պատճառն որ զանազան առարկայից մի եւ նոյն
մարմնոյ վրայ կատարած ազդեցութիւնները մի-
այն մէկ տեղ կ'ունենան :

Օրինակի համար . ըսենք թէ Նիքիոյ անա-
պատներուն մէջէն անցած ժամանակ առիւծի
մը պատահելով՝ անոր ահռելի կերպարանքը
տեսայ , իւր սոսկալի մոնչիւնն ականջս հա-
սաւ , կամ թէ ըսենք , ճիրաններէն հարուած մը
ալ առի , եւ յետոյ մէկն եկաւ ազատեց զիս :
Այս երեք իրարմէ տարբեր զգայարանաց միջո-

ցաւ մէկ առիւծի մ'երեք զօրաւոր ազդեցու-
թիւնները կը կատարուին ուղեղիս մէջ . բայց
որովհետեւ այս դրեթէ 'ի միասին եկող երեք
կարգի ազդեցութիւններն ալ մի եւ նոյն տեղը
կ'երթան կը հաղորդուին , ամէնքն ալ մէկ պի-
տի ըլլան , հետեւապէս առաջին անգամ այս
առիւծը տեսած եւ իւր մոնչիւնը լսած ատենս՝
կատաղի կենդանին իմ երեւակայութեանս մէջ
մէկ ամբողջ մը պիտի ըլլայ :

Սակայն զործն այսչափով չը հատնիր , տե-
ղրն ալ երեւակայութիւնս կը բռնէ՝ ուր յառա-
ջին անգամ այսպիսի սոսկալի առարկայի պա-
տահեցայ : Անհնար է որ տեսնեմ այն անապա-
տի հովիտը , ուր առիւծն ինձի պատահեցաւ ,
եւ չը խռովիմ ու չը սոսկամ :

Այս կերպով մի եւ նոյն ժամանակ զգայա-
րանաց վրայ ինկած ազդեցութիւնները բոլորը
մէկէն մէկ առարկայ կըլլան , որ ուղեղին նոյն
եւ մի տեղոյ վրայ ազդելով՝ հոն իւր յատուկ
ձեւը կ'ունենայ : Ուստի , օրինակի համար կ'ը-
սենք , պէտք չէ զարմանալ երբոր տեսնենք՝
որ կատուն վրան բոժոժներ կապուած գաւա-
ղանով ձեռուելէն վերջը , միայն բոժոժին ձայ-
նը բաւական կ'ըլլայ զինքը փախցունելու , զի
բոժոժները գաւաղանի վրայ կապուած ատեն
ազդեցութիւն ըրած էին իւր ուղեղին նոյն եւ
մի տեղոյն վրայ :

Երբոր ուղեղին տպաւորութիւն կամ կնիք
ընդունած տեղերը կամ շարունակաբար դէպ 'ի
գլուխն ելլող գոլորշիով , կամ կենդանական
զօրութեանց ընթացքով , եւ կամ ուրիշ ուր եւ
է պատճառաւ յուզուին՝ առարկայները մաքին

մէջ կը ժողովուրին . ասոր համար է որ արթուն
եղած ժամանակնիս շատ մը զանազան խոր-
հուրդներ կ'ունենամք՝ որոց մէջ բնաւ կարգ
չը կենար , եւ քնոյ մէջ ալ այնքան սնտախ ե-
րեւակայութիւններ կ'ունենամք , որ ստուգու-
թեանց տեղ կը դնենք :

Եւ որովհետեւ ուղեղը , ինչպէս յառաջուց
ըսինք , շատ մ'ամենանուրը մասերէ բաղկա-
ցեալ եւ միանգամայն կազմ եւ արագաշարժ ու
կենսական զօրութիւններով լի ըլլալուն պատ-
ճառաւ անընդհատ շարժում մ'ունի , եւ գար-
ձեալ թէ գոլորշեաց եւ կենդանական զօրու-
թեանց դէպ 'ի գլուխը բարձրանալուն չափով
անհաւասար եւ անկանոն շարժումներէ կը
գրգուռի , աստի կը հետեւի՝ որ մեր միտքը
խառնաշփոթ խորհուրդներով պիտի լեցուի՝ ե-
թէ 'ի չափու չը պահենք եւ ուշադրութեամբ
չ'ամրացունենք :

Սակայն եթէ այս խորհրդոց մէջ շարք մը
կայ , պատճառն այն է՝ որ առարկայներուն
թողած հետքերն ուղեղին մէջ կարգ մը կը պա-
հեն :

Շատ մը չփոթ խորհուրդներ մաքերնիս
բերող գրգռման մէջ սա օգուտները կան , որ
մեր ուղեղին մէջ հետք ունեցող առարկայները
կարգով առջեւնիս կ'ելլեն , որով հետքերը կեր-
պով մը կը նորոգուին , եւ հողին ալ իրեն հա-
ճելի երեւցածները նորէն ձեռք կ'առնու եւ վը-
րայն ուշադրութիւն կը կապէ :

Շատ անգամ ալ կենսական զօրութիւններն
այնպիսի ուժգնութեամբ եւ խուռն բաղմու-
թեամբ ուղեղին մէկ կողմը կը դիմեն՝ որ ու-

ղեղին միւս մասերն անշարժ կը մնան զիրենք
գրգռող կամ շարժող զօրութիւններ չը կենսա-
լուն համար . ասով մի քանի առարկայներ մեր
մաքէն կը վրիպին եւ մէկ երեւակայուած բան
մը կարող կ'ըլլայ միւս ամէն խորհուրդները
գաղղեցնել :

Այս բանը կը պատահի սաստիկ կիրք ելած
եւ երեւակայութիւննիս տաքցած ատեն , այ-
սինքն երբ առարկայի մը հետ այնպէս ուժով
մը կը կապուինք՝ որ չենք կրնար զատուիլ . ինչ-
պէս , կը տեսնեմք նկարչաց եւ մատենագրաց՝
նա մանաւանդ բանաստեղծներու վրայ՝ որոց
գործն երեւակայութեան սաստկութենէ կա-
խումն ունի :

Ս, յս ջերմութիւնը կամ վառութիւնը՝ որ
երեւակայութեան կուտանք՝ իրաւցնէ ուղե-
ղին մէկ գործն է , որ սովորաբար այն ատեն
կը պատահի , երբ կենդանական զօրութիւննե-
րըն իրենց բնական ջերմութեան պատճառաւ
յորդութեամբ հոսին եւ ուղեղը տաքցունելով՝
ուժղին գրգռութիւն կամ շարժում մը սան-
ուղեղն ինչպէս մէկէն 'ի մէկ չը տաքնար , այս-
պէս ալ մէկէն 'ի մէկ ջերմութիւնը չ'անցնիր :

Ուղեղին յուզմանէն , եւ այս յուզմանէն
պատճառեալ խորհուրդներէն յառաջ կուգան
կրքերն եւ կը շարժին մեր մէջ , եւ այն ամեն
բաղձանքներն՝ որք 'ի կրից դուրս կ'ելլեն :

Արից մէջ երկու տեսակ մարմնական կամ
նիւթական շարժումներ կան . ոմանք կըսուին
ներքին , ինչպէս են կենսական զօրութեանց
եւ արեան շարժումները , ոմանք ալ արտաքին՝
որք են օտից , ձեռաց եւ ամբողջ մարմնոյն շար-

ժուճմաները , որոց միջոցաւ առարկային՝ կը մերձենանք կամ կը հեռանանք . կրքերու բուն դործը կամ արդասիքն ասիկա է :

Այս ներքին եւ արտաքին շարժմանց, այն է կենսական զօրութեանց եւ արտաքին անդամոց շարժման միութիւնը կամ կապը յայտնի է . որովհետեւ մեր մարմնոյն անդամները չեն շարժիր , մինչեւ որ դնդերք կանխաւ չը շարժին . այսպէս ալ դնդերք չեն շարժիր , մինչեւ որ կենդանական ողիններն չը շարժին եւ չ'ուղղուին :

Ընդհանրապէս կենդանեաց շարժումները հարկաւ ուղեղին վրայ կատարուած ազդեցութենէն յառաջ կուգան . վասն զի այս շարժմանց բուն նպատակն է կենդանին առարկայներուն մերձեցունել կամ հեռացունել :

Ասոր համար է՝ որ քնութիւնը սա երկուքը, այսինքն առարկայից ազդեցութիւններն ու շարժումը միացունելու համար ուղած է՝ որ առարկային վերջին ազդեցութիւնը հասած տեղէն՝ այն է ուղեղէն՝ շարժման առաջին ճօճումն սկսի, եւ անոր համար ջղերը մինչեւ ուղեղը հաղորդած է , որպէս զի ասոնց միջոցաւ , որ դործարաններ են , առարկայից բախումն ընդունին , եւ դնդերաց մէջ կենսական զօրութիւններ տանին եւ շարժեն , որուն յարմարութիւն ունին խոզովակ ալ ըլլալու համար :

Յրդ առարկայից տպաւորութեան եւ մարմինը տեղէ տեղ տանող շարժմանց մէջ եղած կապէն դիւրաւ կը հասկցուի՝ թէ սաստիկ տրպաւորութիւն ընող առարկայն շարժելու տրամադրութիւն կուտայ մարմնոյն , եւ շարժելու

համար կը ցնցէ կամ կ'երերէ :

Թէ ինչպէս ուղեղն արտաքին առարկայներէ ազդեցութիւն , շարժումն եւ տպաւորութիւն կ'ընդունի , ասոր վրայ երբոր մասձենք , իսկոյն պիտի իմանամք՝ թէ այս շարժմանց պատճառաւ անցքեր կան՝ որ բաց պիտի ըլլան , անցքեր ալ կան՝ որ դոց . որով կը պատահի՝ որ շարունակաբար սաստկութեամբ ուղեղին մէջ շրջաշրջող կենսական զօրութիւններն աւելի այս քան այն տեղւոյ մէջ կը կատարեն իրենց շրջանը կամ ընթացքը . հետեւաբար աւելի այս ինչ քան թէ այն ինչ ջղաց մէջ կը հոսին . եւ յետոյ սիրտը , դնդերք : եւ վերջապէս ամբողջ մեքենայն միապէս շարժելով եւ ցնցուելով՝ բընութեան մեր մարմնոյն եւ առարկայից մէջ դրած համաձայնութեան եւ անհամաձայնութեան համեմատ դէպ 'ի առարկայն կը մղուի , կամ կը խորչի :

Այս ամէն շարժումները կանոնաւորող Աստուծոյ իմաստութիւնը այնպիսի կազմակերպութիւն տուած է մեր ուղեղին՝ որ մարմինն իրեն հաճոյ երեւցած առարկային յարի եւ վնասակար եւ անհաճոյ առարկայներէն խուսափէ :

Ապա յայտնի է՝ թէ մարմնոյն հողի տալ ուզողը , պատշաճութիւնը տեղն երթալու համար՝ հարկաւ հողւոյն բաղձանքներն ալ պիտի միացունէ հողւոյ եւ մարմնոյ միաբանեալ գաղտնի տրամադրութեան հետ , որ մարմինն այս կամ այն կողմ կը շարժէ . որովհետեւ , արդէն տեսանք՝ որ բաղձանքներն այն են հողւոյն համար՝ ինչ որ են զարգացական շարժումները մարմնոյն համար . եւ թէ այս բաղձանաց

միջոցաւ է՝ որ մարդկային հողին այս կամ այն առարկային կը հակի կամ կը հեռանայ :

Տես թէ ինչ զարմանալի է հողւոյ եւ մարմնոյ համեմատութիւնը : Ձգացման դիմաց ջրաց ցնցումն կայ, երեւակայութեան դիմաց ուղեղին տպաւորումը : Իսկ սիրոյ կամ ատելութեան դիմաց կրից ատեն մարմնոյն ընդունած դաղտնի դողդողումը, որով առարկայի մը կը յարի կամ կը խորշի :

Հողւոյ եւ մարմնոյ այս համեմատութեան վերջին արդիւնքն իմանալու համար դիտել պէտք է միայն՝ թէ մարմինը մեծամեծ կրից մէջ ինչ տրամադրութիւններ կ'առնու, եւ դարձեալ թէ մեր հողին սրչափ յօժարափոյթ է իւր հաճոյքները կամ բաղձանքները մարմնոյն ընծայելու :

Մարդու մարմինը չափազանց բարկացած ժամանակ բոլորովին կը նետուի թշնամւոյն վերայ, հողին ալ որ զգալապէս կը տադնապի՝ իւր բոլոր խորհուրդները նոյն նպատակին կը դարձունէ :

Ընդ հակառակն, երկիւղն իրեն մնաս հասցնող առարկայներէն հեռանալ եւ խուսափիլ կ'ուզէ եւ մարդ այսպիսի ատեն աւելի կ'արագէ իւր ընթացքն ու կը խուճապէ : Բնականաբար ասիկայ չը պիտի կրնար ընել մէկը, եւ թէ երկիւղն այն աստիճան սաստկանալով զինքը տկարացնէր եւ թուլցնէր : Եւ, որ աւելի զարմանալին է, հողին իսկոյն այս վիճակին յարմար զգացումներ կ'ստանայ եւ մարմնոյն տրամադրութեան համեմատ փախչիլ կ'ուզէ :

Երբ սոսկում մ'այնչափ սաստիկ պաշարէ՝

որ արիւննիս սառի եւ մարմիննիս թուլնայ, նոյն ժամանակ տեսեր ես՝ որ հողին ալ տկարութիւն կամ թուլութիւն կ'զգայ, մեր քաջասրտութիւնն ու զօրութիւնն այնչափ կը նուազի՝ որ փախչելու անդամ ոյժ չհնք ունենար :

Խիստ վայելուչ էր հողւոյ եւ մարմնոյ միութեան՝ որ շարժման դժուարութիւնն եւ սոյն շարժումը կատարելու տրամադրութիւնը հողւոյն մէջ պատասխան ունենար, ուրկէց է՝ որ յառաջ կուգան վնասութիւն, թախծութիւն եւ յուսահատութիւն :

Սյաքան դժնդակ կրից եւ սրամութեանց դէմ՝ որ մինչեւ ուրախութեանց մէջ մտած է, իրեւ շնորհք տրուած է մեղ յոյսը՝ որ չը թողուր չարիքն զգալու : Յուսոյ մէջ կենսական զօրութիւններն ուժգնութիւն մը կ'առնուն, քաջասրտութիւնն ալ կ'առաւելու : Երբ յոյսը պակսի՝ մեր ամբողջ մարմինը կը թուլնայ եւ այնպէս մը կ'զգամք՝ որպէս թէ անդունդ մ'ինկանք :

Ինչպէս ըսինք, կիրքը՝ նկատելով թէ ըստ վիճակին իւրում որ 'ի հողւոյ եւ թէ ըստ յարաբերութեանն՝ որ ընդ մարմնեղէնս, կրնամք սանմանել՝ թէ բաղձանք է կամ ատելութիւն՝ որ հողւոյն մէջ ծագումն կ'առնու, որչափ որ մարմինն յարմարութիւն ունի՝ ի ներքուստ հողւոյն հետ 'ի միասին այս կամ այն առարկային յարելու կամ խորշելու : Եւ մարմնոյ մէջ այն տրամադրութիւնն է՝ որ կրնայ հողւոյն մէջ սր եւ է առարկայի վրայ սէր եւ ատելութիւն արթնցունել :

Կրից մէջ հողի եւ մարմին այս վիճակն ունին : Բայց այս ալ ճշմարիտ է՝ որ առաջին շարժիչը մերթ հողուոյն խորհուրդն է եւ մերթ մարմնոյն տրամադրութենէն յառաջ եկած շարժումը :

Որովհետեւ ինչպէս կրքերն զգացման կը հետեւին եւ զգացմունք ալ մարմնոյն տրամադրութեան՝ որոցմով մեր հողին բան մը կ'ըզգայ, այսոյէս ալ կրքերը պէտք է որ մարմնոյն տրամադրութիւններէն կախումն ունենան, որպէս զի մարմինը շարժամար ցնցուի դեռ հողին իւր բաղձանօք նոյն շարժման յարելու չըյօժարած :

Համառօտ ըսել, հողին զգացման, երեւակայութեան եւ կրից վերաբերեալ իրաց մէջ կըրաւոր է, եւ պէտք է զիանալ միշտ՝ թէ ինչպէս որ զգացմունքը ջրաց ցնցումէն յառաջ կուգայ, երեւակայութիւնն ալ՝ ուղեղին վրայ ներգործեալ տպաւորութենէ, այսպէս ալ սէր կամ ատելութիւն՝ ծագումն կառնուն այն տրամադրութենէն՝ զոր մարմինը կ'ունենայ խորշելի կամ փարելի առարկայներէն :

Չգացմունք եւ ասկէ կախեալ ամէն բան հողուոյն տրուած է՝ որ ասոնց ձեռք հողին մարմնոյն պիտոյքները հայթայթել յօժարի, եւ հետեւաբար պէտքերն ալ մարմնոյն կարեացը համապատասխան դան :

Ըսածներու համոզուելու համար բաւական է ամենէն բնական հեշտութիւններէն միոյն՝ ուտելու պիտոյքին կամ հաճոյից վրայ խօսելը : Անճաշակ մարմինը ճաշակելու եւ սնանելու պէտք ունի . հողին ալ սսոր կը ցանկայ .

մարմինն այս պէտքը հողալու խոտված է . հողին ալ նօթութեան ստիպողական կամ տալնապիչ ցաւը կ'ըզգայ : Աերակուրները մեր աչքին զարնուելով եւ հոտոտեղեաց ազդելով՝ զգայարանաց ջղերուն ցնցումն կուտան . որչափ զգացմունք կան ուտելու յարակից՝ ամէնքնն ալ կը գրգռուին, այսինքն ունչք աչք ջրային ցնցումն կ'առնեն, որով առարկայն կամ կերակուրն ուղեղին մէջ կը դրոշմուի եւ ուտելու հաճոյքն իսկոյն երեւակայութիւննիս կը գըրգռէ : Աերակուրն ուղեղին վրայ ազդելուն համար կենսական զօրութիւնները մարմնոյն այն ամէն մասանց մէջ կը դիմեն՝ որք աննդեան կը ծառայեն, բերաններնուս մէջ տեսակ մը ջուր կուգայ, որ, ինչպէս գիտեմք, կերակուրը կակղելու, հիւթը մղելու եւ կլանել տալու յատկութիւնն ունի . ստամոքսին մէջ ուրիշ ջրեր ալ կը թափուին եւ կսկծեցունեն, մարսելու պաշտօն ունեցող ամէն բան կը պատրաստուի, եւ հողին արգէն մօօք ուտել կ'ըսկըսի :

Ասկէ առնելով ոմանք կըսեն՝ թէ ցանկութիւնը մարսողութիւն կը դիւրացունէ, ոչ եթէ ցանկութիւնն ինքնին կերակուրները կըրնայ մանրել, եփել ու մարսել, այլ վասն զի այնպիսի ժամանակ կ'արթննայ՝ յորում մարսողութեան պատրաստութիւնները կ'ըլլան :

Երբ տեսնեմք անսուղ մէկը՝ որ երկար ժամանակէ 'ի վեր կերակուր կերած չէ, պիտի տեսնենք՝ թէ ինչ կընէ ներկայ առարկայն, եւ թէ ինչպէս այն մարդուն ամբողջ մարմինը ջանք կընէ կերակուրն յափշտակել եւ կլանել :

Ուրեմն մեր մարմինը կրից մէջ, օրինակի համար, սաստիկ նօթութեան կամ բարկութեան ժամանակ, լարուած աղեղան մը կը նըմանի՝ որոյ բոլոր կազմուածքը կը ձգտի նեան արձակելու։ Կրնամք ըսել՝ թէ ինչպէս օջայիտի վիճակի մէջ գտնուած աղեղն ինքնին չը կըրնար լարուիլ նեան արձակելու, այսպէս ալ բարկութեան մէջ մարդուն մարմինը չէ՝ որ լիճնամբն կ'ուղէ զարնել։ Որովհետեւ մարմինն այս տեսակ շարժման մէջ դնողը ուղեղը, ջիւք եւ դնդեքք են, ինչպէս որ միւս կրքերն ալ իրենց յատուկ գործողութեան կը թելադրեն։

Եւ նոյն իսկ մարմնոյն այս պայմանին մէջ գտնուած ժամանակ՝ երբոր մեր հոգւոյն մէջ բիւրաւոր երեւակայութիւններ եւ բաղձանքներ երեւան կ'ելլեն, ոչ այնչափ խորհրդածութեանց նայիլ պէտք է, սրչափ ուղեղին շարժմանցը, ուսկէց անոնք կախումն ունին։ Վասն զի այս շարժումներուն միջոցաւ է՝ որ մեր մարմնոյ մէջ գտնուած անցքերը կը բացուին, կենսական զօրութիւնները կը հոսին, որով ջիւք եւ դնդեքք կը լեցուին, եւ ամբողջ մարմինը կը շարժի։

Այս դէպքին մէջ հոգւոյն խորհրդածութեանէն աւելի ուղեղին շարժմանց յարգ ընծայելնուս պատճառը սա է՝ որ կրից մէջ, ինչպէս կը դիտենք, հոգին կրաւոր է, եւ մարմնոյն տրամադրութեանց մէջ գահերէց չէ, այլ միայն կը նպաստէ։

Ատոր համար է՝ որ այս տեսակ կրից մէջ սր եւ է գատումն կամ խորհրդածութիւն չը մտներ։ Ղի կրքերուն մէջ բան մը կը տեսնենք՝

որ յառաջ է քան դամենայն դատումն եւ խորհրդածութիւն, որ կենսական զօրութեանց ուղեղութեանէն կախումն ունի, որով քանի մը շարժումներ կը կատարուին մեր վրայ։

Եւ, ինչպէս վերը տեսանք, կրքերն առարկայից ներկայութեան կամ հեռաւորութեան չափով եւ զանոնք ձեռք բերելու դիւրութեան կամ դժուարութեան համեմատ կը զանազանին բայց խորհրդածութիւն մը մէջ ինչպիսի չէ՝ որ առարկայն ներկայ կամ հեռի, դիւրին կամ դժուար կը համարինք։ Ղի առարկայից ներկայութիւնն, ինչպէս նաեւ հեռաւորութիւնն իրենց յատուկ հանգամանքներն ունին՝ որ գործարանաց եւ ուղեղին վրայ կը դրոշմուին։ ասկէց յառաջ կուզան բոլոր մարմնոյ պատշաճ տրամադրութիւններն եւ հոգւոյն ալ ըստ այնմ զգացումներն ու բաղձանքները։

Սակայն, ճշմարիտ է՝ որ վերջէն եկած խորհրդածութեանց միջոցաւ կրքերը կը զօրանան կամ կը տկարանան, բայց խնդիրն ասոր վրայ չէ։ Ուրիշ բան չեմ դիտեր հոս, բայց միայն հոգւոյ եւ մարմնոյ կիրք ազդող նախնական ազդեցութիւնը։ Բաւական կը համարեմ միայն քննելն իբրեւ աներկբայելի բան՝ թէ մարմինը կրից ձեռք յօժարակամ է այս ինչ եւ այն ինչ շարժումներն յառաջ բերելու, եւ մի եւ նոյն ժամանակ հոգին ալ բոլորովին նոյն շարժման կը հաւանի։ Ասկէց յառաջ կուզան այն ջանքերը՝ զորս հոգին կը գործածէ, երբ պէտք ըլլայ մարմնոյն յօժարած կամ հաւանած բաներէն առաքինութեամբ խորշել։ Այսչափով յայտնի կը տեսնուի թէ հոգին այսպիսի տոհմ մարմնոյ

հետ որքան կապակցութիւն ունի եւ թէ հողւոյ եւ մարմնոյ իրարու հետ ունեցած համակրութիւնը մինչեւ որ աստիճան կը տարածուի :

Մինչեւ հիմայ անոր վրայ խօսեցանք՝ թէ հողին որ բաներու մէջ մարմնոյն շարժմանց կը հնազանդի . հիմայ ալ՝ պիտի խօսինք՝ թէ մարմինը հողւոյն խորհրդոց երբ կը հետեւի :

Հոս է մարդու ազնուական կողմը . զգայական գործողութեանց մէջ , ինչպէս տեսանք , հողին մարմնոյն ենթակայ կամ հպատակ է , իսկ իմացական գործողութեանց մէջ՝ որ վարը պիտի խօսինք , հողին ոչ միայն աղատ է , այլ եւ կը տիրապետէ մարմնոյն :

Վայելուչ է՝ որ հողին գերիշխան ըլլայ . որովհետեւ մեր ազնիւ մասն է , եւ հետեւապէս իշխելու համար սահմանեալ է :

Յիրաւի կը տեսնեմք՝ որ հողին հրաման մը ըրածին պէս մեր անդամներն իսկոյն կը շարժին եւ մարմիննիս ալ անոր ուղած տեղը կ'երթայ :

Հողւոյն գերիշխանութիւնը կամ հրամատարութիւնը շատ արագ գործելու ունակութիւն մը դառնալուն համար այնչափ չենք զարմանար . սակայն եթէ քիչ մը խորհրդածեմք չափէն աւելի պիտի զարմանանք :

Ձեռքերնիս շարժելու համար հարկ է , ըսած ենք , նախ՝ ուղեղն եւ ապա կենսական գորութիւնները , ջիղերն ու գնդերները գործի շարժել . սակայն այս ամէն մասանց մէջէն միայն մէկը ծանօթ է մեզ , այն է ձեռքը : Մեր մարմնոյն միւս բոլոր մասանց եւ մինչեւ իսկ մեր ձեռաց շարժումն տուող ներքին զսպանակ-

ներուն վրայ ալ առանց բնաւ ծանօթութիւն ունենալու շարունակ կը գործեն . հերիք է՝ որ կամենանք : Այսպէս հասկցիր կամաց ներքեւ ինկած միւս ամէն անդամոց համար ալ , երբ իմ խորհուրդներս բացատրել կ'ուզեմ , անմիջապէս պէտք եղած բառերը բերնէս կը թռչին առանց գիտնալու՝ թէ նոյն խօսքերը կազմելու համար լեզուս եւ շրթունքներս , ինչպէս նաեւ ուղեղս , թոքերս եւ շնչափողս ինչպէս շարժելու եմ . որովհետեւ բնականաբար չեմ գիտեր անգամ թէ այս բաներն ունիմ արդեօք , եւ թէ ստանալու համար գիտնալու եմ թէ ոչ :

Բան մը կլանել ուղած ժամանակս շնչափողս անպատճառ կը փակուի , առանց իմ մտածելուս եւ առանց իսկ գիտնալու՝ թէ արդեօք շնչափող ունիմ , եւ թէ ինչ է գործը :

Եթէ հեռուանց բանի մը նայիմ աչքիս բերբերը կը լարուին . ընդ հակառակն՝ երբ մօտէն նայիմ կը սեղմուին . բայց չեմ գիտեր բնաւ՝ թէ բիրը կրնայ այս շարժումն ընել , կամ թէ այս շարժումը ճշդապէս մեր մարմնոյն որ մասանց մէջ տեղի կ'ունենայ :

Մեր մարմնոյն մէջ ասոր նման , լոկ կամենալէ յառաջ եկած բիւրաւոր շարժումներ կը կատարուին , առանց մեր գիտնալուն թէ ինչպէս եւ ինչ պատճառաւ կ'ըլլան , եւ թէ արդեօք իրական են :

Շնչառութեան շարժումը զարմանալի է՝ որ ուղեղով կը դադարեցնենք եւ կ'երկարածեմք , ինչպէս խօսելու ատեն պէտք կ'ըլլայ : Սակայն քնոյ մէջ ալ մի եւ նոյնը կըլլայ երբեմն առանց մեր կամելուն :

Այսպէս մեր մարմնոյն շատ մասերու շարժութեաները հրաշալի դադարութեամբ, առանց բնաւ մեր դիտնալուն կըլլան, եւ կամքէ կախումն չունին: Նրբ սոսկ ծանօթ բան մ'ընել մտքերնիս դնենք, օրինակի համար, ուղեներ խօսիլ, նայիլ, քայլել եւ այլն, կը տեսնես՝ որ անմիջապէս կենսական զօրութեանց, ջրաց եւ դնդերաց բիւրաւոր անձանօթ զսպանակները եւ մինչեւ ուղեղն իսկ, որմէ յառաջ կուգան միւս բոլորը՝ կը շարժին, որպէս զի ուղածս ընեն: Սա միայն ծանօթ է. կամքը դործեց, եւ այսչափ մը միայն դիտեմք՝ որ բան մ'ընել ուղածնուս պէս անմիջապէս արդիւնքն յերեւան կուգայ:

Այս ամէն շարժութեաներէն զատ՝ որոց սկիզբը կամ ծագումն ուղեղն է, նոյն իսկ ուղեղին վրայ ալ անմիջական իշխանութիւն կը բանեցնենք. որովհետեւ երբոր ուղեմք առարկայի մը վրայ ուշադրութիւն ընել, կրնամք ընել՝ ինչպէս որ փորձը կը ցուցնէ, առանց ջղերնիս ցնցուելու:

Ուշադրութեան ձեռօք մտաց մէջ կամաւ ուղածնիս կը պահենք, եւ երբոր ուղեմք մըտքերնիս կը բերենք կամ կը յիշենք. այս՝ բանն ընելու այնչափ դիւրութիւն կամ դժուարութիւն կ'ունենամք՝ որչափ որ կը ներքէ՝ ուղեղին լաւ կամ յոռի տրամադրութիւնը:

Որովհետեւ մեր մարմնոյն միւս ամէն մասանց պէս ուղեղն ալ հոգւոյն հպատակելու համար յատուկ տրամադրութիւն մը կը պահանջուի, ասկէց յայտնի է՝ թէ հոգին մարմնոյն վրայ իշխելու յարմար սահմաններ ունի:

Ուրեմն, հոգին իրապէս մարմնոյն հրամայելու համար, պէտք է որ մարմինը միշտ լաւ լինակի մէջ գտնուի, եւ իւր բոլոր մասունքներն ալ բարւոք տրամադրութիւն մ'ունենան: Այսն զի մարդս քալել ուղեւից չը կրնար քալել՝ եթէ սրունից մէջ այնպիսի հեղուկ մը վազած ըլլայ եւ կամ կենսական զօրութիւնը ըսպառելով, ամբողջ մարմինն այն աստիճան տըկարանայ՝ որ կամեւն անօգուտ կ'ըլլայ: Սակայն մարմնոյ մասանց մէջ այնպիսի արդեւքներ ալ կան՝ որոց զօրաւոր կամքը կրնայ յաղթել, որ արդիւնք է հոգւոյն մարմնոյ վրայ ունեցած տիրապետութեան, որով հոգին կ'արձակէ այն գործարանները՝ որ չէին գործեր եւ կամ արգիլուած էին. ինչպէս կը պատմեն Արեստի համը որդւոյն համար՝ թէ տեսնելով՝ որ իւր հայրը պիտի խողխողեն՝ լեզուն կը բացուի եւ բարձր 'ի ձայն կ'աղաղակէ ըսելով՝ զգուշացէք, թագաւորին անձին ձեռք մի՛ դնէք: Ահա, ինչպէս կը տեսնուի, այս օրինակին մէջ իւր հայրն ազատելու կամքէն յառաջ եկած մեծ ջանքը մինչեւ համը լեզուն կը ցաւ բանալ:

Ուրեմն անտարակուսելի է՝ թէ մարմնոյն մէջ հոգւոյն խորհուրդներէն շարժութեան յառաջ կուգան, որով հոգի եւ մարմին միացման վիճակին մէջ իրենց յատուկ արդիւնքներն ունին:

Բայց որպէս զի ամէն խորհրդածութիւն կատարած ըլլանք՝ պէտք է տեսնենք՝ թէ ինչ կընէ մարմինն եւ ինչ տեսակ դեր կը խաղայ մտաւորական գործողութեանց, այն է խմացա-

կանութեան եւ կամեցողութեան մէջ :

Նախ՝ քայտ է գիտնալ թէ իմացականութիւնը որ նոյն է ըսել ճշմարտութիւն ըմբռնելու կարողութիւնը, զգացման կամ երեւակայութեան պէս ուղեղին այս կամ այն մասին կամ ջղաց ցնցուելէն յառաջ չդար :

Ըսածիս պիտի համոզուինք՝ եթէ իմացականութեան այն երբակի յատկութիւնները քրննեմք, որոց վրայ Ա. դիւտոյն մէջ խօսեցանք, յորում իմացումը գեր 'ի վերոյ էր քան զդայարանս եւ քան զամենայն ինչ՝ որ զգայութիւններէ կախումն ունին :

Որովհետեւ հոն բացատրեցինք՝ թէ զգացումը միայն առարկային ճշմարտութենէն կախումն չ'ունի, այլ եւ միջոցին եւ մեր գործարանաց տրամադրութենէն, զի ասոնք առարկայն բոլորովին տարբեր կը ներկայացունեն մեզի : Ուղիղ դաւադանը ջրոյ մէջէն կոր կ'երեւի, արեգակն եւ աստեղք չափազանց փոքր կ'երեւան որ այնպէս չեն : Պատճառներ մէջ բերելով՝ որչափ պնդենք՝ թէ կարելի բան չէ՝ որ ջուրը յանկարծ ուղիղ դաւադանը ծռէ, եւ թէ երկիրքը փոքր երեւցող աստղը անհամեմատ մեծ է քան զերկիրս, ասով ոչ դաւադանը կը շտկուի, եւ ոչ աստղերը մատնաչափ կը մեծնան : Ասիկայ կը ցուցնէ՝ թէ ճշմարտութիւնն զգայարանաց չը տիրեր, եւ զգացմունք մարմնոյն տրամադրութեանց մէկ հարկաւոր հետեւեանքն են, եւ այս տրամադրութեան վեր չեն կրնար ելնել :

Իմացումն ալ, եթէ զգացման պէս ըլլար, կը մոլորէր : Ուրեմն սխալելով եւ դատելի ա-

ռարկային վրայ պէտք եղածին չափ ուշադրութիւն չըդնել ուզելով է որ կը մոլորինք : Աման զի հոգին ուղղակի ճշմարտութեան կողմը դատնալուն եւ միայն անոր առջեւ խոնարհել որոշելուն պէս՝ միայն ճշմարտութեան տպաւորութիւնը կ'ընդունի, այնպէս որ ճշմարտութիւնը յայտնի տեսնելուն պէս՝ կը փարի, որոշ չըտեսնելուն պէս՝ դատումը կը կախէ եւ հաստատուն վճիռ չը տար. եւ այս երկու պայմանին մէջ ալ միշտ մոլորութենէ ազատ մնացած կըլլայ, կամ անոր համար՝ որ ճշմարտութիւնը ճանչցած է եւ կամ անոր համար՝ որ դոնէ կը գիտնայ՝ թէ տակաւին չէ կրցած դանել :

Այս սկզբունքով, ամենազգալի առարկայներն որչափ որ դժուարին եւ անտանելի են, ընդ հակառակն, ճշմարտութիւնը՝ որչափ խոր մտաւորական ալ ըլլայ՝ այնչափ աւելի հաճոյական եւ սիրելի կըլլայ : Որովհետեւ զգացմունք մարմնական գործարանէ կախեալ ըլլալուն համար, չափազանց զօրաւորը՝ գործարանի վրայ չափազանց ազդելով անտանելի կըլլայ, ինչպէս կը պատահի՝ երբոր արեգակն ուղղաձիգ ճառագայթն աչքերնուս վրայ իյնայ, կամ բարձր ձայնը ականջներնուս հասնի, այնպէս որ կ'ստիպուինք աչքերնիս խփել եւ ականջներնիս ինուլ : Աւժգին կամ զօրաւոր երեւակայութիւնն ալ նոյնպէս չատ կը յողնեցունէ, ինչոր առանց ուղեղը սաստիկ ցնցելու չըլլար : Եթէ իմացականութիւնն ալ այսպէս մարմինէ կախումն ունենար՝ մարմինը ամենազօրաւոր՝ այն է ամենաստոյգ եւ հանրաձայնօթ ճշմարտութիւններէ միշտ պիտի վնասուէր, ուրեմն բացայայտ

և Ե պայծառ ճշմարտութեանց մարմնոյն չը վնասելէն զատ հեշտութիւն և հանգստութիւն պատճառեւն ուրիշ բանի համար չէ, այլ անոր համար՝ որ իմացականութեան մէջ չը կայ այնպիսի մաս մ'որ սաստկապէս բախուի և կամ զօրաւոր շարժումն ընդունի, մարմինն է՝ որ կրնայ վնասուիլ. մեղմով և դիւրութեամբ կը միանայ իմացման հետ ճշմարտութիւնը, և անոր մէջ կատարեալ համապատասխան վիճակ կը գտնէ, հերիք է՝ որ արդէն ըսած պատճառներնուս համար ապականեալ չըլլայ:

Այլ և՛ եթէ ճշմարտութիւնն հետադասելը տարժանելի ալ ըլլայ, շուտ մը կրնամք դիմնալ՝ թէ ուրկէց է դժուարութիւնը. այսու ամենայնիւ չը կայ բնաւ բացայայտ ճշմարտութիւն մը՝ որ մեղի վնաս մը հասցունէ, և ողջամիտ հոգին որչափ անոր նայի, այնչափ ալ աւելի կը զուարճանայ:

Ասոր համար է դարձեալ՝ որ մարդկային հոգին որ ատեն որ ատանց կրից և երեւակայութեան անսալու՝ ճշմարտութեան վարի, միշտ մի և նոյնը կը գտնէ: Կարելի չէր այսպէս ըլլալը՝ եթէ ճանաչումը շարունակ գրգռուող ուղեղէն և միշտ փոփոխական մարմնէն կախումն ունենար:

Այս պատճառաւ է՝ որ զգայարանք շատ անգամ կ'այլայլին, ինչպէս ուրիշ տեղ ապացուցինք: Որովհետեւ միայն ճշմարտութիւնը չէ՝ որ զգայարանաց մէջ կը գործէ, այլ իրենց գործարանաց զրայ պատահած ամէն շարժումներէ կը յուզուին. մինչդեռ իմացականութիւնն ըստ ինքեան միայն ճշմարտութեան ազդեցու-

թիւնը կ'ընդունի և շարունակ ալ մի և նոյն կը տեսնէ:

Որովհետեւ դնենք թէ, օրինակի համար, մի քանի պայծառ և ծանօթ ճշմարտութիւններ, ինչպէս սա՛ թէ Ոչ ոք ինքնագոյ է, կամ թէ՛ Անի Բանի Դէլ պէտք է Բանականութեան անսալ և այլ ասոնց նման դեղեցիկ սկզբունքներ. առջի բերան ասոնց վրայ խորհրդածութիւն չենք ընել, բաց երբ ճիշդ ուշադրութիւն ընեմք, պիտի տեսնեմք իսկոյն՝ թէ այս ճշմարտութիւնները միշտ մի և նոյն ըլլալով՝ ոչ կ'այլայլին և ոչ կը նուազին: Արդ ասիկայ յայտնապէս կը ցուցնէ՝ թէ սոյն ճշմարտութեանց ծանօթութիւնն որ և է փոփոխական կարգաւորութիւններէ կախումն չունի բնաւ և զգացման պէս այլայլելի գործարանի կապուած չէ:

Ասոր համար զգացումն՝ որ առարկային և մեր գործարանաց առ ժամայն գործակցութեանէն կը ծագի, կայծքարին ու սողպատին իրար շփուելովն յառաջ եկած կայծերէն աւելի արագութեամբ, վաղվաղակի անցնող բաներ միայն կը ցուցնէ. ընդ հակառակն իմացականութեան տեսած կամ իմացած բաներուն ամէնն ալ անանցանելի են. որովհետեւ նա կապուած է միայն ճշմարտութեան՝ որ յաւիտեական է:

Ուստի իմացականութիւնն անհնար է մարդկային մարմնոյ այլայլութեանց արդիւնք տեսել, և ոչ ալ հետեւաբար իմացումն այս կամ այն գործարանին կապեալ՝ որուն շարժելէն կախումն ունենայ:

Սակայն դիտել արժան է նաև՝ որ առանց երեւակայութեան և զգացման բան մը չենք

կրնար իմանալ . որովհետեւ ստոյգ է թէ հոգին մարդ էակը կազմող տարերքներուն հետ միացած ըլլալուն համար , չը կրնար առանձին գործել , ըսել կուզեմ՝ չը կրնար խորհիլ եւ բանի մը վրայ ծանօթութիւն ստանալ առանց մարմնոյ , ոչ ալ իմացական մասը կրնայ գործել առանց զգայական մասին :

Եւ արդէն մարմնոց կամ արտաքին առարկայից բնութեան մէջ գոյութիւն մ'ունենալնին զգայութեանց ձեռք միայն ճանչցած եմք . զի եթէ հիմայ վնասուել եւ իմանալ ուզենք՝ թէ զգացմունք ուստի յառաջ կուգան , անպատճառ պիտի գտնենք միշտ թէ մեր դործարանաց վրայ ազդեցութիւն կատարող մարմին մը կայ , եւ ասիկայ ասպացոյց մ'է՛ . թէ նոյն մարմինները գոյութիւն մ'ունին :

Եւ արդարեւ տիեզերաց մէջ իրապէս մարմիններ կենալը եղելութեան խնդիր է , որոյ վրայ զգայարանաց միջոցաւ ծանօթութիւն ըստացած եմ ինչպէս ուրիշ եղելութեանց վրայ : Առանց զգայարանաց օգնութեան չը պիտի կըրնայինք երբէք գիտնալ՝ թէ կան արդեօք արեւդակ եւ կամ թէ աշխարհի վրայ այս ոք մարդ գոյութիւն ունի թէ ոչ :

Եւ , որ աւելին է , երբ մարդկային հողին անմարմին իրաց՝ այն է Աստուծոյ եւ անոր կատարելութեանց վրայ կ'ըրադի , գաղափար առնելու համար անոր գործերը կը նկատէ կամ խօսքը կը լսէ , եւ կամ , վերջապէս , իւր զգայութեանց վրայ ազդեցութիւն մը կ'ընդունի :

Մարդ էակն իւր կենաց առաջին օրերը՝ յորս կամ բնաւ իմացականութիւն չ'ունենար ,

որ անկախ է 'ի մարմնոյ , եւ կամ նուազ կըլլայ՝ լոկ զգացմունքներ միայն ունենալուն համար՝ 'ի մանկութենէ սկսեալ զգալոյ եւ երեւակայելոյ անչափ յաճախ սովորութիւն կ'ունենայ , որ կենաց ամէն վայրկեաններուն մէջ միշտ կը գտնուին , եւ չենք կրնար բողբոլիլն ինքզինքնիս ազատել :

Այս պատճառաւ է՝ որ միշտ եւ գրեթէ միշտ որ եւ է առարկայի վրայ խորհրդածութիւն չենք ընել՝ մինչեւ որ անոր անունը մտքերնիս չը բերենք . ասիկայ կը ցուցնէ՝ թէ մեր զգայարանքները բախող իրերն՝ ինչպէս առարկայից անուանք , մեր իմացական գործողութեանց հետ կապակցութիւն մ'ունին :

Ոմանք կը հարցունեն՝ թէ կարելի է որ մարդս այս աշխարհի մէջ ամէն տեսակ զգալի պատկերներէ սրբեալ դուռ իմացական գործողութիւն ունենայ : Ասիկայ այնպիսի հողիներու կրնայ պատանիլ , որք մեծամեծ հայեցողութեանց բարձրանալու եւ երկար ժամանակ իրենք զիրենք զգայութիւններէ հեռացունելու մասնաւոր կըթութիւն ըրած են . սակայն այս վիճակը խիստ հազուադէպ է . եւ մեր պարտքն իմացման սովորական եղած իրաց վրայ միայն խօսիլ է :

Փորձը կը ցուցնէ՝ որ իմացական գործողութեանց մէջ միշտ այնպիսի զգալի իրեր կը մտնեն , զորս նոյն իսկ իմացումը կը գործածէ աւելի եւս դէպ 'ի իմացական առարկայներ բարձրանալու համար :

Արդ՝ իմացանք՝ թէ երեւակայութիւնը բնականաբար իմացականութեան կ'օգնէ , հե-

բիք է՝ որ թոյլ չտանք՝ իշխելու : այլ սահմանաւոր պահենք :

Տեսանք դարձեալ՝ թէ մեր հողին զգայաբանաց ձեռօք ստացուած իրաց վրայ ծանօթութիւն առնելով՝ զգայութիւններէ վեր կը բարձրանայ , նոյն իրաց բնութեան եւ աշխարհի կարգին վրայ ինքնիրեն զարմանալով : Սակայն դեր ՚ի վերոյ են քան զզգայարանս այն օրէնքներն ու սկզբունքներն՝ որոց միջոցաւ մարդկային հողին զգալի առարկայներու մէջ այնքան մեծամեծ ճշմարտութիւններ կը տեսնէ . զգայութիւնք գողցես նման են այն մարդուն՝ որ իրերն իմացականութեան առջեւ կը ներկայացնէ . սա ալ անոր կը նմանի՝ որ անոնց վրայ դատումն կ'ընէ :

Ուրեմն մեր հողւոյն մէջ գործողութիւն մը կայ , իմացական գործողութիւնը՝ որ ստուգիւ եւ բտտ ինքեան մարմնոյ հետ կապակցութիւն չունի ընաւ . թէպէտ անուղղակի կերպով մեր մարմնէն կախումն ունեցած կըլլայ՝ զգալի պատկերներ ու զգացմունքներ առջեւն առնելու ժամանակ :

Կամեցողութիւնն ալ ասկէ պակաս անկախ չէ . ինչպէս կը տեսնեմք արտաքին անդամոց եւ ամբողջ մարմնոյն վրայ իրեն ունեցած տիրապետութեան ձեռօք :

Կ'զգամ թէ մեծ դիւրութեամբ ձեռքս անշարժ թողուլ կամ դայն վեր վար , յաջ կամ յահեակ տարածել ուղելու կարողութիւնը կայ ներսս , այնպէս որ սոսկ կամեցողութիւնս է՝ որ սոյն գործողութիւնը կատարելու կը զրգէ զիս :

Որովհետեւ դիտեմ՝ թէ ձեռքիս շարժում մը տուած ժամանակս՝ անով որ եւ է բան մը առնելու , բառնալու , կամ այս ինչ առարկային մերձենալու եւ անկէջ հեռանալու նպատակ մը չունիմ ընաւ . այլ բոլոր նպատակս է ձեռքըս շարժել եւ ուզած առեմս անշարժ թողուլ :

Այս պայմանին մէջ իմ անդամոցս վրայ կատարեալ ազատութիւն մ'եւ իշխանութիւն մը կը բանեցունեմ , զորս ուր որ ուղեմ եւ ինչպէս որ ուղեմ կը դարձունեմ :

Եւ որովհետեւ դիտեմ՝ թէ այս անդամոց շարժմանց ամէնն ալ ուղեղէն կախումն ունին , ուստի հարկաւ մարմնոյս անդամներուն վրայ ունեցած այս իշխանութիւնս առաւելապէս նոյն ուղեղին վրայ ալ կը տարածեմ :

Ուրեմն պէտք է որ մեր կամեցողութիւնն ուղեղին վրայ իշխէ՝ քան թէ անոր շարժմանց եւ ապաւորութեանցն անսայ :

Մարմինը չը կրնար ընտրել թէ ուր կ'երթայ , բայց կ'երթայ ուր որ քշուի . եւ եթէ մարմին միայն ունենայի եւ կամ կամքս զգացման պէս մարմնոյ շարժումներէն կախումն ունենար , ոչ միայն ինքնիշխանութիւն , այլ եւ ազատութիւն չը պիտի ունենայի :

Ազատ չեմ ներկայ առարկային ըրած աղդեցողութիւնն զգալու կամ չզգալու : Թէ եւ կըրնամ եւ ազատ եմ աչքերս փակել կամ այս եւ այն կողմը նայիլ , բայց աչքերս բանալու առեմ , երբոր զգացմունքն՝ որ հարկաւորաբար նիւթական աղղեցողութիւնէ յառաջ կուզայ , ուղեմ արդելուլ՝ չեմ կրնար , ազատ չեմ :

Մարմնոյս եւ անդամոցս վրայ գործածած

աղատութիւնս կը ցուցնէ՝ թէ ուղեղն իշխանութեանս տակն է, եւ հոգւոյն գլխաւոր բնակարանը կամ ապաստանարանն ալ ուղեղին մէջն է :

Որովհետեւ, եթէ հոգին բոլոր անդամոց մէջ ներկայ ալ լինի, եւ զամէնն իւր հնազանդութեան տակ դնէ, սակայն եւ այնպէս իւր անմիջական իշխանութիւնը մեր մարմնոյն այն մասին վրայ կը տարածէ՝ ուսկէ՞ց յառաջ կուզան հետըզհետէ ամէն շարժմունք, այսինքն է ուղեղը :

Հոգին ջղաց բովանդակիչ մասին տիրելով իւր շարժմանցը տէր կըլլայ, կամ, այսպէս քսենք, բոլոր մարմնոյն շարժելու կամ կասեցնելու երասանակն իւր ձեռքը կ'առնու :

Ուրեմն մարկային հոգին՝ թէ ամբողջ ուղեղն իւր անմիջական իշխանութեան տակն առնու եւ թէ անոր մէկ գլխաւոր մասը միայն, եւ անտի միւս մասանց վրայ իշխանութիւն տարածէ, դարձեալ իւր բուն կայարանն ուղեղն է, եւ անոր ձեռք մարմնոյն բոլոր շարժումները կ'ուղղէ :

Այս է զարմանալին՝ որ մեր հոգին բնականարար ոչ իւր իշխանութեան ներքեւ գտնուող ուղեղը կ'զգայ, եւ ոչ ալ մարմնոց միւս մասերը շարժելու եւ կամ անշարժ թողլու համար ուղեղին ինչ ընելը՝ չը գիտեր անդամ թէ իրեն այս բացարձակ իշխանութիւնն ուստի է : Սա միայն գիտեմք՝ որ հոգւոյն իշխանութիւն մը տրուած է, մարմնոյն ալ օրէնք մը՝ որուն համեմատ կը հպատակի :

Պէտք է՝ որ կամքը մարմնոյն շարժող անդամոց վրայ իշխէ. որովհետեւ անով է՝ որ

մարդ շատ մը բաներու կը տիրապետէ, որոնք իրենք իրենց մնալով չը պիտի հպատակէին :

Մտունդն է միայն որ ամէն բանէ աւելի դողցես կամաց ներքեւ չ'իջնար. եւ սակայն այս ալ կամաց տակ կ'իջնայ հոգւոյն ուղած եւ խելքին չափած կշռովը :

Նոյն ինքն ստամոքսն ալ կամքէն կ'ընդունի իւր կանոնը. որովհետեւ բնականաբար այնպիսի կազմուածք մ'ունի՝ որ սովորութեան կը հպատակի :

Հոգին այս միջոցներով քունն ալ կը կանոնաւորէ եւ խելքին կը հնազանդեցնէ :

Մարմնոյն անդամները ծանր եւ տաժանելի աշխատութեանց մէջ դնելով անոնց զօրութիւն կուտայ, աշխատութեանց կ'ընտելացունէ եւ օրինաց հնազանդեցնելը հաճոյք կը համարի : Այսպէս հոգին մարմնն իրեն կը հպատակեցունէ եւ խմացական գործոց ծառայելու յարմար վիճակի մէջ կը դնէ : Ճշմարտ սրբոց կեանքը ըսածիս ապացոյց է :

Հոգին իւր իշխանութիւնը հաեւ երեւակայութեան եւ կրից վրայ կը տարածէ, որք ամենէն աւելի անհնազանդ բաներն են :

Երեւակայութիւն եւ կիրք արդէն ստարկայներէ ծագումն կ'առնուն. մենք ալ արտաքին շարժմանց վրայ ունեցած մեր կամաւոր իշխանութեամբն առարկային կը մօտենանք կամ կը փախչինք :

Կիրքերը դործնականին մէջ արտաքին շարժումներէ կախումն ունին. բարկանալու համար բաւական է առիթ մը տալ, փախչելու համար բաւական է երկիւղալի պարտազայ մը միտք բերել :

սակայն կամքն է՝ որ կ'արգիլէ ձեռքը զարնելէ եւ ոտքերը փախչելէ :

Քարկուծեան մէջ, ինչպէս տեսանք, ամբողջ մարմինը պատրաստ կըլլայ զարնելու, աղեղէն նետը նետուելու պէս : Առարկայն իւր աղդեցութիւնը կընէ, կենսական զօրութիւնները կը հոսին, սիրտը սովորականէն աւելի սաստիկ կերպով կը բախէ, արիւնն ուժգնութեամբ կը վազէ, եւ առատ ու բուռն զօրութիւններ կը զրկէ . ջլէք եւ զնդերք սոյն զօրութիւններով կը լեցուին, կը պրկուին, բուռները կը սեղմուին եւ բազուկն ամրանալով պատրաստ կը լինի հարկանելու . սակայն տակաւին սանձը թուլցնելու պէտք կայ . հարկ է որ կամքը թոյլ տայ մարմնոյն յառաջ երթալու՝ սպա թէ ոչ շարժումն անկատար կը մնայ :

Կնչ որ ըսինք բարկութեան համար, նոյնը հասկցիր նաեւ երկիւղի եւ ուրիշ կրից համար ալ՝ որք մեր մարմինն այնպիսի հաճոյական շարժմանց մէջ կը դնեն՝ որ միայն կամաց եւ խելքի հզոր զօրութեամբը կրնամք սանձահարել :

Այս բոլոր շարժումները՝ որոց մարմինն այս աստիճան հակամէտ է, ինչպէս, օրինակի համար, հարկանելու շարժումը, գրեթէ մարմնոյն լոկ տրամադրութեամբը պիտի ըննային, եթէ վերջին կապը թուլցնել հոգւոյն վերապահեալ չը լինէր :

Սոյն բանը կը պատահի շնչառութեան մէջ ալ . արթուն եղած միջոցնիս կրնամք արգելուլ կամօք . սակայն լոկ մեր մարմնոյն տրամադրութեամբը կըլլայ երբոր հոգին թոյլ կու-

տայ որ բնականաբար գործէ, ինչպէս քնոյ մէջ :

Յիրաւի կրից, օրինակի համար, բարկութեան մէջ կը պատահի երբեմն՝ որ կենսական զօրութիւններն ու արիւնն այնպիսի արագութեամբ կը յուզուին՝ որ բազուկը կը թուլնայ դեռ վրայն չը խորհած : Այս ատեն մարմնոյն տրամադրութիւնը յաղթող կը հանդիսանայ . եւ նախապաշարեալ կամքն ուրիշ բան չընէր, այլ միայն նայիլ առանց իրեն ուղեղուն եղած շարեաց վրայ :

Բայց այս տեսակ շարժումները շատ քիչ կը պատահին, եւ գրեթէ բնաւ չը պատահիր այն մարդոց՝ որ 'ի մանկութենէ սովորած են իրենք իրենց լիչսելու :

Կամքը ոչ միայն կրից վերջին թափը կամ արդիւնքը խափանելու զօրութիւնն ունի, այլ եւ սկսած ատենն իսկ խափանելու կամ բարեխառնելու, որ միտ զնելով կըլլայ . այսինքն կամքը մասնաւոր առարկայներու կապելով, որ կամ սանձէ, եւ կամ չըսաստկացունէ, որպէս զի կարենայ առաջնն առնուլ :

Մտադրութիւնն այսպէս զօրաւոր է եւ կը տիրէ ուղեղին եւ նովաւ բոլոր մարմնոյն, եւ մինչեւ իսկ հոգւոյն երեւակայոց կողման, եւ հետեւաբար կրից եւ ցանկութեանց վրայ . տես թէ որչափ մեծ բան է :

Արդէն դիտած ենք՝ որ գլուխը չափազանց կը սեղմուի՝ երբոր բանի մը վրայ չափազանց ուշադրութիւն կապենք, որմէն յայտնի է՝ թէ ուշադրութիւնն ուղեղին վրայ մեծ ներգործութիւն ունի :

Ուշադրութիւնը կամքէ կախումն ունի . եւ քանի որ ուղեղն ուշադրութեան կը ծառայէ , ուրեմն ուղեղն ալ կամաց իշխանութեան տակ կը ծառայէ :

Ըսածնիս լաւ հասկցուելու համար դիտել հարկ է՝ թէ խոկումը մեր հոգւոյն մէջ կը ծագի երբեմն ուղեղին բնական գրգռմանէն , եւ երբեմն ալ կամաւոր ուշադրութեան ձեռք :

Արդէն ըսեք ենք՝ թէ ուղեղին գրգռումնքը մէկ մասէն միւսը կանցնի : Այսպիսի ատեն մեր խորհուրդները կենսական զօրութեանց ընթացքին պէս խառնաշփոթ կըլլան , երբեմն այս գրգռումնքը միայն մէկ մասին մէջ տեղի կ'ունենայ , որով խորհուրդներնիս հարստատուն եւ հոգինիս ամփոփ կըլլայ , ուղեղն ալ այս միջոցին աւելի ուժգին բայց միաձեւ կ'ամրանայ :

Այս ատեն կ'ըզամք՝ թէ մտադրութիւննիս օստակացաւ , սակայն բուն մտադրութիւնն այս չէ . մտադրութիւն կըսենք անոր՝ որով առարկայ մը կորոշեմք կամաւորապէս վրան մտածելու համար :

Եթէ՛ այս մտադրութիւնը չ'ունենայինք , բնաւ մեր խորհրդոց եւ դիտողութեանց չէինք կրնար տիրել . այլ լոկ ուղեղին գրգռմանէն յառաջ եկած պիտի ըլլային . այն ատեն աղատութիւն ինչ ըսել է չը պիտի դիտնայինք , մեր հոգին կամ միտքը յամենայնի մարմնոյ ձեռքը գերի պիտի ըլլար , ընդդէմ խելքի՞ եւ հասարակ փորձառութեան :

Ասոցմով կը հասկցուի թէ ինչ է մտադրութիւն ըսածնիս , այսինքն թէ ինչ է մըս-

քերնիս կամաւորապէս առարկայի մը կապելը :

Սակայն պէտք է յաւելուլ նաեւ թէ առարկայն կուղենք իմացականութեան միջոցաւ քննել , այսինքն նախ խորհրդածել կամ դատումն ընել եւ ապա նոյն բանին մէջ ճշմարտութիւնը վնտուել : Որովհետեւ ինքզինք հաճոյական երեւակայութեան յանձնել եւ անկէջ հեռանալ չուզելը մտադրութիւն ընել չէ . մըստադրութիւն ըլլալու համար հարկաւոր է կամել , իմանալ եւ դատել :

Ուրեմն իմաստասիրութիւն եւ խորհրդածութիւն մտադրութենէ կ'սկսին , իսկ սա ալ դիտելու եւ իմանալու կամքէն :

Այս ալ ստոյգ է՝ որ ուշադիր ըլլալու համար առաջին ընելիք բաներնիս է անոր բնական արդելքները , այսինքն մտաց ցրումը եւ հոգւոյն մէջ վեր ելած խառնաշփոթ խորհուրդները բոլորովին ջնջել . որովհետեւ անկարելի բան է ցրուեալ մտք ուշադիր ըլլալ :

Անօգուտ խորհուրդները մտքէ ցրելու համար՝ հարկ է ուղեղին բնական գրգռումը բարեխառնել : Զի քանի որ ուղեղին գրգռումը տեւէ չեմք կրնար առարկայի վրայ մտադրութիւն կապել :

Մեր հոգւոյն տիրապետութեան առաջին դործն է առարկայի մը ուշադիր եղած ! ատեն ուղեղին բնական գրգռումը նուազել կամ ամօքել :

Եւ , ինչպէս արդէն տեսանք , այս բանիս համար հարկ չէ որ հոգին ուղեղին վրայ ծախօթութիւն ունենայ կամ անոր վրայ դործելու

մտադրութիւնն ընէ . հերիք է որ կամի անմիջապէս իրմէ կախումն ունեցածը , այն է ուշադրութիւնը ընել : Ուղեղը եթէ սաստիկ զրզրուում մը չունի , ընականաբար կը հնազանդի եւ մարմնոյն լոկ հողիէն ներքնակարգեալ ըլլալուն պատճառաւ կը հանդարտի :

Բայց որովհետեւ դէպ 'ի ուղեղը հոսող կենսական զօրութիւնները սովորաբար կը ջանան շարունակ գրգռել , ուստի ուղեղին շարժումը չը կրնար ընդհատիլ առանց ջանից :

Այս պատճառաւ է՝ որ ուշադրութեան առջեւ դժուարութիւններ կ'ելլեն , եւ երբեմն կը թուլացունեն :

Նոյնպէս ուղեղն անդադար զինքը միտք գորշեաց եւ կենսական զօրութեանց ձեռքը խիստ անկանոն շարժումն կ'ընէ , եւ այսպէսով մեր խորհուրդները բոլորովին կը ցրուին . այս մըտաց ցրումը այլանդակ հետեւանքներ ունենալէ զատ աշխատեցուցիչ ալ է : Ուստի հարկ է ուղեղին այս անկանոն շարժումները սանձել բուն իսկ իւր հանդատեան համար :

Վերջուր արդեւքները՝ կը վերնայ նաեւ մտաց ցրումը . որով եւ հողին կը հանդարտի եւ խառնաչիտթ կամ այլանդակ երեւակայութիւններն ուղիղ դատումն եւ հայեցողութիւն կը դառնան :

Սակայն պէտք չէ հասկցուի թէ հողին հարկ է որ ամէն երեւակայութիւն եւ զգալի պատկերներ մէկ դի ընէ . որովհետեւ , արդէն ալ ըսած ենք , հողին դատումն եւ իմաստասիրութիւն կատարելու համար ասոնց օչնութեան կը կարօտի :

Հողին անխտիր՝ ամէն տեսակ զգալի պատկերներ չը մերժելէ զատ , կը ջանայ նաեւ յիշել այն պատկերները՝ որ իւր խնդրոյն կը պատկանին եւ կատարելիք իմաստասիրութեանը կ'օգնեն :

Բայց քանի որ այս զգալի պատկերներն ուղեղին վրայ կատարուած ազդեցութենէն կախումն ունին , եւ այս ազդեցութիւնները մեզ չեն կրնար դալ մինչեւ որ ուղեղը շարժում մը չ'ընդունի , ինչպէս արդէն նշանակած ենք , ապա հարկ է եզրակացունել՝ թէ հողին կրնայ երբոր ուղէ չէ թէ մինակ ուղեղը հանդարտեցունել , այլ եւ ուղած ատենը զրգռել առարկայները միտք բերելու համար : Ֆորձը կը ցուցնէ՝ դարձեալ թէ տէր եմք՝ երբ կամենամք յիշողութեան յանձնած բաներնիս միտք բերել : Թէպէտ եւ այս իշխանութիւնն իւր սահմաններն ունի եւ այս քան այն իրաց մէջ մեծ է , բայց անոնց վրայ իմաստասիրութիւն ընելու համար մինչեւ մէկ աստիճան թեւադրութիւն պէտք է : Այս ալ հողւոյն անշարժականութեան մէկ պատճառն է , եւ թէ ուղեղը որչափ հանգիստ ըլլալ պէտք է դատման ժամանակ : Որովհետեւ երբ ուղեղը զրգռուի եւ յուզուի , այնչափ չը հպատակիր հողւոյն եւ որոշեալ ժամանակներու մէջ պէտք եղած գաղափարները հողւոյն առջեւ բերելու համար հարկաւոր շարժումները չը գործածեր :

Այն մարդոց ուղեղը շատ կը տանջուի՝ որ դժբաղդարար այս երջանիկ հաստատամտութիւնը չունին . վասն զի մինչդեռ ուղեղը , բնականաբար , կենսական զօրութեանց պէս ազատ

եւ անստոյգ շարժումն պիտի ունենար, նախ երկայն ժամանակ բունի պիտի դադրի, եւ ապա կանոնաւորապէս պիտի շարժի. աս բանը շատ կ'աշխատցունէ ուղեղը :

Որովհետեւ երբ ուղեղը թուլնայ, եւ կենսական զօրութեանց բնական շրջանին հող չը տանի, գրեթէ շատ մը կենսականները մարմնոյն մէջ սխալ կը շրջին, որ նոյնպէս յամբ եւ թոյլ կ'ըլլան. մինչդեռ մարդ դատում մը կատարելու ատեն առարկայներն զգալի կերպով իւր առջեւ ներկայացնելու է, որ անհնար է առանց ուղեղը սաստկապէս շարժելու :

Դատումն կամ իմաստասիրութիւնն ընելու համար հարկ է այնպէս սաստիկ շարժել ամէն կողմերէ՝ որ երթալով դժուարութիւնն սպառի. Մեր հողին դատման օգնող դանազան դաղափարները միտք բերելէ աւելի միշտ մէկ դիւսաւոր առարկայի կը կապուի. այնպէս որ ուղեղին ընդհանրական դրդումը կը հանդարտի, դիւսաւոր առարկային վրայ միայն դիտողութիւնն ընելով՝ հաստատապէս կը պրկուի եւ կը ձգտի, եւ երկրորդական կամ օժանդակ առարկայները յիշելու համար շատ մը կողմերէ սաստկապէս կը ցնցուի կամ կը շարժի :

Այսքան զօրաւոր եւ կանոնաւոր շարժումներն ըլլալու համար շատ կենսական զօրութիւններ պէտք են. դուրսն ալ ասոնցմով այնքան կը զօրանայ, որ մարմնոյն միւս մասերը կը ծիրին, կը ծնդին :

Աստի յառաջ կուգայ ընդհանրական խոնջութիւնը եւ ուշադրութիւնն իս թուլցնելու անհրաժեշտ հարկը :

Բնութիւնն այս հարկը հողացեր է մարդուն քուն տալով՝ մանաւանդ դիշերը՝ յորում բոլոր ջիղերը կը թուլնան, դպացմունք կը դադրին եւ ուղեղն ու ամբողջ մարմինը կը հանգստանան : Ընչպէս բուն հանգստեան ժամանակը դիշերն է, այսպէս ալ մտադրութեան ժամանակը ցերեկն է, որ մերթ աւելի եւ մերթ քիչ ըլլալով երբեմն ուղեղը կը ձգտէ եւ երբեմն ալ կը հանդարտեցունէ :

Տես թէ իմաստասիրութեան, այսինքն, ճշմարտութիւնն հետազօտելու մէջ, որ այնչափ աշխատալի է ըսինք, ուղեղին ինչ կ'ըլլայ. բայց այս աշխատանքն ուշադրութենէն յառաջ չը դար, այլ երեւակայութիւններէ, որ խուռնընթաց կը գիմեն եւ ուղեղին մէջ մեծ շարժումն կը պատճառեն :

Սակայն, երբոր ճշմարտութիւնը ձեռք բերենք՝ իսկոյն ամէն աշխատութիւն կը դադրի, հողին ալ՝ իւր գիւտէն յափշտակեալ, ինչպէս սովորաբար կը պատահի աչաց դեղեցիկ բան մը տեսնելու ատեն, չուղեր բնաւ զատուիլ, վասն զի ճշմարտութիւնն ինքնին անհիտիտ է միշտ եւ հանապաղ :

Երբոր ճշմարտութիւնը պայծառ կերպով ծանօթ ըլլայ՝ երեւակայութիւնը կամ քիչ կը դործէ կամ բնաւ չը դործեր. ասոր համար է՝ որ այսօրիսի ատեն բնաւ աշխատութիւն չենք ըզգար, կամ շատ քիչ կ'զգանք :

Որովհետեւ ճշմարտութիւնն հետազօտելու կամ խուզարկելու ատեն, յորում քննութիւն կը կատարենք բազդատելով, ընդգիմադրելով, համեմատելով եւ ուրիշ ասոնց նման բաներ ընե-

լով՝ որոյ համար հարկ է շատ մը զգալի գաղափարներ միտք բերել, երեւակայութիւնը չափազանց կը դործէ. բայց երբ փնտռած կամ հետազօտած բաներնիս ձեռք բերենք, հողին կարելի եղածին չափ երեւակայութիւնը կը դադրեցնէ եւ միայն կը հայի ճշմարտութեան վրայ, եւ այսչափ կը ըլլայ ուշադրութիւն ընելը:

Իմացականութեան այս դործողութիւնը որչափ զգալի գաղափարներ շատ ունենայ, այնչափ ալ խաղաղ կ'ըլլայ. ասկէ կ'երեւի՝ թէ իմացման դործը կամ իմացումն ինքնին աշխատութիւն կամ նեղութիւն չունի իւր մէջ:

Սակայն երբեմն աշխատողունել կը պատահի. որովհետեւ իմացման վրայ մնալու համար հարկ է երեւակայութիւնը կասեցունել եւ հետեւաբար կենսական զօրութեանց բուռն ընթացից հակառակ կամ դէմ ուղեղը սանձի տակ բռնել:

Ուստի հայեցողութիւնն ըստ ինքեան որչափ հանդարտիկ կամ անորոշելի ըլլայ, մարմինն ասուն մը յուզեւելուն պատճառաւ կը ակարանայ եւ չը դիմանար:

Մարմնոյ հանապաղորդեան եւ բազմադիմի պէտքերն այնչափ զանազան աղղեցութիւններ կրնն եւ այնպիսի տարբեր խորհուրդներ կ'արթնցնեն մեր մտաց մէջ, որոց չ'անսալն անկարելի է, այնպէս որ հողին կ'ստիպուի իւր հայեցողութիւնը կամ հետազօտութիւնը թողուլ:

Վերը ըստաճներէն կը հասկցուի՝ թէ ուշադրութեան մեր մարմնոյ վրայ ներդրած առաջին արդիւնքն ինչ է: Ուղեղը կայ՝ որ, որչափ ընդհանուր գրգռմունքը փրէ մարմնոյն մէջ, հողոյն կը հպատակի առարկայ մը դիտած

ատեն, իսկ հողոյն դէպ 'ի ուղած կողմն երթալու համար ալ վերստին թելադրութեան կը կարօտի:

Մտադրութեան ուրիշ երկրորդական արդիւնքն է՝ որ կրից վրայ կը տարածուի, զոր պէտք է քննել: Բայց առաջ սոսկ մտադրութեան յատկացեալ կարեւոր բան մը կայ՝ զոր պէտք չէ մոռնալ: Այն առարկայն՝ որոյ վրայ կ'ըբարդիմք հիմայ կամաւոր ուշադրութեամբ, մեր կամաց հակառակ երկար ժամանակ զմեզ իրեն կը կապէ. որովհետեւ իրենց յատուկ ընթացք մ'ունեցող կենսական զօրութիւնները չեն կրնար դիւրութեամբ եւ անմիջապէս իրենց ընթացքը դադրեցնել:

Ուստի մտադրութիւննիս կրնայ ըլլալ կամաւոր եւ ակամայ. բռնի զբաղեցնող առարկայն շատ անգամ այնպէս կը զուարճացունէ ըզմեզ, որուն կամաւ անձնատուր կ'ըլլամք, նոյպէս ալ փափաքանօք կամ մտադրութեամբ ընտրած առարկայնիս վերջէն տարժանելի զբաղումն կը դառնայ:

Եւ ինչպէս ուղեղին բնական գրգռմունքը կամաց հակառակ շատ մը խորհուրդներ մտքերնիս կը բերէ, այսպէս ալ հողոյն կամաւոր ուշադրութիւնն ուղեղին վրայ մեծ աղղեցութիւն կը ներդործէ: Առարկայից մեր ուղեղին մէջ թողած հետքերն ուշադրութեամբ աւելի խոր կը սպաւորուին եւ ուղեղն աւելի կը զբըզբօի:

Հողի եւ մարմնի իրարու հետ ներդաշնակութեամբ կամ համեմատութեամբ միացեալ ըլլալուն համար, խորհրդոց եւ ուղեղին վրայ

կատարուած ազդեցութեանց մէջ ընականաբար այնպիսի կապակցութիւն մը տեղի կունենայ, որով երկուքն ալ իրարմէ անբաժան կը մնան: Ուստի երբ վառվառուն եւ սուր երեւակայութիւնը հոգւոյն իւր վրայ ըրած ուշադրութեան միջոցաւ ուղեղին մէջ շարժում մը պատճառէ, ուղեղն այս շարժման նորոգուելուն չափով վերստին կը կենդանացնէ եւ գրեթէ առջի պէս կը զօրացունէ այն ամեն խորհուրդները՝ որք առաջին անգամ նոյն շարժման առիթ տուած էին:

Ասոր համար պէտք է հոգ տանիլ՝ թէ մարդ իւր կամօքն ինչ տեսակ երեւակայութիւններով կը լեցուի, եւ յիշել թէ այս երեւակայութիւններն, ուղեղն չուզենք, վերջէն յաճախ պիտի նորոգուին ուղեղին ու կենսական զօրութեանց ընական գրգռմամբը:

Իայց հարկ է նաեւ եզրակացնել թէ իրերը մեզնէ հեռացունելով եւ ուշադրութիւննիս՝ որուն վրայ կ'իշխեմք, ուղղելով՝ կրնամք անոնց (իրաց) ուղեղին վրայ գործած ազդեցութեանցը սիրել եւ հնազանդեցունել:

Ուղեղին վրայ գործուած մեր այս իշխանութեան ձեռօք կրնաիք կրքերնիս նուաճել, որ գլխովին ուղեղին տրամադրութենէն կատուան ունին. այս է ուշադրութեան ամենէն գեղեցիկ մէկ արդիւնքն ալ, այսինքն կիրք նուաճել:

Եւ ասիկայ խմանալու համար ալ հարկ է քննել թէ ինչ տեսակ իշխանութիւն կրնամք ունենալ կրից վրայ:

Նախ, ստոյգ է՝ թէ ուղղակի չենք իշխել

կրից, ինչպէս կրնեմք բազկաց եւ ձեռաց համար. չենք կրնար մեր բարկութիւնը ցածցնել կամ եւ եւս սաստկացունել այնպէս՝ ինչպէս որ ձեռքերնիս կը շարժենք կամ չենք շարժեր:

Երկրորդ, ինչպէս արդէն ըսած ենք, այս ալ յայտնի է՝ թէ մարմնոյն արտաքին անդամաց վրայ ունեցած իշխանութեան ձեռօք՝ կրից վրայ ալ կրնամք իշխել, բայց ոչ ուղղակի. ուրովնետեւ կրնամք անով թէ այն կրից պատճառ եղող առարկայները մեզնէ հեռացունել եւ թէ արդիւնքնիս խափանել:

Ուստի գիտ զգուեցնող ատելի առարկայն կը խորշիմ, եւ երբ բարկութեան կիրքը գրգռուած ըլլայ՝ կրնամ բազուկս իրեն չը հրահանդեցունել, որոյ պէտք ունի գոհ ըլլալու համար:

Սակայն ասիկայ ընելու համար կամք եւ զօրաւոր կամք պէտք է. Շատ դժուարին բան է կրից թելադրութեան հակառակն ընել. վասորն զի կիրք ելած ատեննիս հոգին մարմնոյ յօժարութեանց ետեւէ այնչափ սիրով կ'երթայ, որ գրեթէ չը կրնար դիմադրել: Վասն որոյ, այնպիսի միջոց մը փնտռենք՝ որով կարենանք կրքերն հանդարտեցնել կամ չափաւորել եւ կամ սկսած միջոցին առաջքն առնուլ, այն միջոցն է բարեխառն կամ դաստիարակեալ մտադրութիւնը:

Որովհետեւ առարկայն ուղեղին վրայ սաստիկ ներգործելով կիրքը յառաջ կուգայ, այս ներգործութեան արդիւնքը խափանելու միակ եւ զօրաւոր միջոցն է մտադրութիւննիս ուրիշ առարկայներու կապել:

Արդարեւ, ինչպէս տեսանք, մտադիր հոգին այնպիսի վիճակի մէջ կը բռնէ ուղեղը՝ որով կենսական զօրութեանց ընթացքը ճշդիւ կը սահմանէ, եւ այսպէսով կրից ազդեցութիւնը կը կտարէ, որք մարմնոյն միւս մասանց մէջ զօրութիւններ գրկելով՝ բոլոր մարմնոյն վերայ դէշ յեղափոխութիւն մը պիտի յարուցանէին :

Վասն որոյ ճշմարիտ կը խօսին անոնք՝ որ կըսեն թէ կրից ամենէն աւելի բնական դարմանն է մտքերնիս կամ հոգինիս կարելի եղածին չափ ներկայ առարկայներէն հեռացունել . եւ ասիկայ 'ի գլուխ ամենելու ամենէն զօրաւոր եւ ազդու միջոցն է ուշադրութիւննիս ուրիշ առարկայներու վրայ հաստատել :

Աստանօր գիտել արժան է թէ մասնաւոր առարկայի կողմը դարձած յուզեալ մտքերը գրեթէ գետերու կը նմանին, որոց ընթացքն աւելի զիւրին է դարձունել քան թէ խափանել :

Ասոր պէս, մարդ իւր խորհուրդներն աւելի ուրիշ առարկայներու վրայ դարձունելով կը յաջողի կիրքը զսպել քան ուղղակի հոսանքին զիմադրելով :

Այս պատճառաւ է՝ որ շատ անգամ զօրաւոր կըքով մ'ուրիշ կիրք մը կը նուաճենք, ինչպէս, օրինակի համար, հպարտութիւնը կամ կռուոյ կիրքը սիրոյ կրից կը յաղթէ : Նրբեմն ալ աղէկ է՝ որ մարդ մեղանչական կիրքերը խափանելու համար ինքզինք անմեղ կրից յանձնէ :

Կիրք սանձելու միջոցներէն մէկն ալ կենսակից ընտրած մարդոց մէջ լաւ ընտրութիւն ընե-

լըն է : Շարժող բանն իւր բոլորը կը ծաւալի . եւ մոլի կամ անտաւոր մարդոց հետ խօսելէն եւ գործելէն աւելի վտանգաւոր բան չը կայ կիրք շարժելու : Ընդ հակառակն, խաղաղ եւ հեղ մարդոց կենսակցութիւնը կարծես թէ մասամբ իւրը զայրացկոտութենէ կ'ազատէ, եւ գոցեա անոր խաղաղասիրութիւնը մեղ կը հաղորդուի, միայն թէ այս հանգարտութիւնն անզգայական եւ անախորժ չ'ըլլայ : Մեր շարժունութիւնը էր պահանջէ զգացումն եւ աշխոյժ . բայց միանգամայն ալ հիմնովին հաստատութիւն,

Վերջապէս կրից մէջ պէտք է մտքերնիս հանդարտ բռնել որ եւ է կերպ արգելքներու դէմ գնելով, եւ աւելի պաշտպանողական գիրք բռնել քան յարձակողական . այսինքն յուզեալ մտքի առջեւ իմաստասիրական հակադրութիւններ չ'ըլլար . որովհետեւ մարդ նոյն իսկ կրից զիմադրելով իմաստասիրութիւն ըրած ատեն՝ 'ի հարկէ անոնց առարկայն միտք կը բերէ, անոնց հետքերն եւ եւս կը տպաւորէ, եւ այսպէսով աւելի միտքը կը գրգռէ քան կը հանդարտեցունէ :

Իմաստութեան ամենէն մեծ գործն է կրից առջեւն առնուլ . Ուստի հարկ է մտքերնիս հանձարեղ զիտողութիւններով կրթել, եւ 'ի մասն կութենէ սկսեալ պարկեշտ զրազումներ տալ, որպէս զի կրից առարկայներն իրենց պատրաստ տեղն ունենան, կենսական զօրութիւնները մասնաւոր ընթացք մը բռնեն, ուղեղն ալ հաստատուն մնայ :

Որովհետեւ բնութիւնը կամ Աստուած ուղեղը առարկայներով զրազելու եւ միանգամայն

կամաց հպատակելու յարմար վիճակի մը մէջ դրած ըլլալով կանուխէն տրուած արամադրութիւնը վրան կ'իշխէ : Ուրեմն, եթէ մեր հողին յաճախ սովորութիւն ընէ ուշադրութեան վրայ իշխելու եւ բարի առարկայներու միայն կապելու, պիտի իշխէ նախապէս ուղեղին, անով կենսական զօրութեանց ընթացքին եւ ասոնցմով ալ, վերջապէս, կրքերէ պատճառեալ շարժմանց :

Սակայն, պէտք է գիտնալ թէ ճշմարիտ ուշադրութիւնն այն է՝ որ առարկայն ամբողջութեամբ կը նկատէ : Քերի կամ կէս կըլլայ ուշադրութիւնը՝ երբոր մեզի սիրելի եղած առարկայն, ինչպէս չափազանց սիրած կիրքերնիս, իւր հաճոյական կողմէն միայն կը նրկատենք, առանց ուրիշ գովելի հանդամանացը նայելու : Ուրեմն, հարկաւոր է առարկայի մը վրայ լաւ եւ երկայն ատեն մտածել, ինչու որ եթէ թողումը կրից որ իրենց ազդեցութիւնները ներգործեն ուղեղին վրայ, յանկարծ ուշադրութիւննիս կը խանգարեն, եւ վերստին կուգայ, բայց անազան : Վասն զի թէպէտ եւ հողին մարմնոյ վրայ կ'իշխէ, բայց կարողութիւնները չափաւորեալ եւ սահմանափակ են, այնպէս որ բազկաց, ձեռաց եւ ուղեղին վրայ չը կրնար լիովին իւր իշխանութիւնը կամ կամքը կատարել :

Ուստի, ինչպէս տեսանք, եթէ հողին մեր մարմինը չափազանց նեղը ձգէ՝ փասս կուտայ, եւ հարկաւ ստիպուած է մարմնոյն խնայել :

Շատ անգամ մարմնոյ մէջ այնպիսի սաստիկ շարժումներ տեղի կունենան՝ որոց չը կըրնար իշխել մարդու հողին, ինչպէս որ կա-

ռաւար մը կատաղի ճիւղերը չկրնար նուաճել թէ եւ բերանին սանձեր դնէ :

Երբ այս կերպ արամադրութիւնը հաստատուն եւ մշտնջենաւոր է՝ կըսուի յիմարութիւն. իսկ եթէ պատճառ մը ունենայ եւ տենդի պէս ժամանակ անցնելով վերջանայ՝ կըսուի ցնորք կամ բանդագուշանք :

Յիմարութեան եւ ցնորից մէջ սովորաբար երկու բան կը պատահի. կամ ուղեղը հաւասար անկանոնութեամբ բոլորովին զրգռուած կըլլայ, որով կատարեալ խօշամոռութիւն տեղի կունեննենայ, եւ այսպիսի վիճակի մէջ գտնուող մարդուն խորհրդոց եւ խօսքերուն մէջ կարգ չը դրուիր, եւ կամ ուղեղին մէկ մասը միայն վերաւորուած կըլլայ, եւ այն ատեն յիմարութիւնը մասնաւոր առարկայի մը միայն կը կապուի, ինչպէս են այն մարդիկներն՝ որոնք շարունակ իրենք զիրենք թատրի կամ օրսորդութեան մէջ ըլլալ կ'երեւակայեն, եւ ուրիշ շատեր՝ որք մի քանի առարկայներէ բխուած իմաստասիրութեամբ եւ չնչին հետեւողութեամբ՝ միւս առարկայից վրայ ալ կը խօսին, մինչեւ իսկ իրենց մոլորութեան պատճառ եղող իրաց վրայ ալ :

Ասոր պատճառն այն է՝ որ ուղեղին մէկ մասին մէջ միայն այնպիսի ազդեցութիւն տեղի կունենայ, որ անցաղթելի է՝ ի հողուոյ, եւ միւս ամենուն կըտիրէ եւ իւր պաշտօնները կը տարածէ միւս ամեն առարկայից վրայ :

Յիմարին ուղեղի գրգռումն այնչափ սաստիկ կ'ըլլայ՝ որ մինչեւ արտաքուստ կը տեսնուի դիմաց՝ նա մանաւանդ աչաց վրայ : Աստի կը հեռաւի՛ թէ ամեն զօրաւոր կիրք տեսակ

մը յիմարութիւն է . որովհետեւ այս տեսակ կըր-
քերն ուղեղին մէջ այնպիսի շարժումներ կը յա-
րուցանեն , որոց վրայ հողին չ'իշխեր : Ասոր
համար յիմարութեան ամենէն սովորական պատ-
ճառը կրից չափազանցութիւնն է :

Այսպէս հասկցիր նաեւ երազոց համար ալ՝
որք տեսակ մը ցնորք են : Քնոյ մէջ ուղեղը
ինքնիրեն յանձնուած է , եւ բնաւ ուշադրու-
թիւն ըսած բաներնիս չունի . վասն զի արթնու-
թիւն ըսելը մտաց ուշադիր ըլլալն ըսել է , որով
հողին կարող կ'ըլլայ իւր խորհրդոց տիրապե-
տել :

Տեսանք որ ուշադրութիւնը մեր ուղեղին
ամենէն մեծ աշխատութիւն կը պատճառէր եւ
քուններնիս մեղկողն ալ այս աշխատութիւնն էր :

Ասկէց երկու բան յառաջ կուգայ . նախ՝
որ երեւակայութիւնը երազներու մէջ իշխող է ,
եւ առարկայները բոլորովին կերպարանափոխ
կը ներկայացնէ մեզ եւ շատ անգամ ալ կար-
գաւորեալ , որուն պատճառները արդէն երեւա-
կայութեան վրայ խօսած ժամանակնիս յայտ-
նած ենք . երկրորդ՝ որ մեր երեւակայութեան
մէջ անցած դարձած իրերը մեզ ճշմարիտ եւ
իրական կը թուին , որովհետեւ յայնմ ոչ ու-
շադրութիւն կայ՝ եւ ոչ իսկ հետեւաբար ըն-
տրողութիւն :

Մարդկային հողին այն ատեն ճշմարիտ եւ
վայելուչ վիճակի մէջ կը գտնուի՝ երբ ուղեղին
շարժմանց կը տիրէ , եւ ինչպէս ուշադրու-
թեան միջոցաւ հողին ուղեղը կը կասեցնէ իւր
գրգռմանէն , այսպէս ալ գլխաւորաբար պէտք
է որ ուշադրութեամբ ինքնղինքը իշխան եւ

տէր կարգէ ուղեղին վրայ . օակայն ասոր մէջ
ալ 'ի մանկութենէ սկսելու է կրթութիւնը եւ
չը թողուլ երբէք՝ որ ուղեղը այնպիսի զօրա-
ւոր ազդեցութեանց մէջ գտնուի՝ որ ժամա-
նակ անցնելով անյաղթելի ըլլան :

Ինչպէս տեսանք՝ մեր հողին եթէ կամբը
եւ բնականաբար կամաց հպատակութեան ներ-
քեւ գտնուածները լաւ գործածէ՝ կրնայ ամեն
բան կանոնաւորել եւ հրահանգել :

Արեջապէս մարդս խելացի մտածելով ,
պարկեշտ ապրելով , չափաւոր ուտել խմելով ,
կարողութիւնները խելօք գործածելով կրնայ ինք
իր վրայ իշխել այս մահկանացու վիճակին նե-
րելուն չափով :

Կը կարծեմ թէ հողւոյ եւ մարմնոյ եւ ա-
նոնց միութեան վրայ ըրած խորհրդածութիւն-
նիս բաւական եղան ինքզինքնիս մեզ ճանչցու-
նելու :

Եթէ հողւոյն մէջ չեմք կրնար տեսնել՝ թէ
ինչո՞ւ մարմնոյ հետ միացած է , պէտք չէ զար-
մանալ , որովհետեւ գոյացութեանց խորը չենք
գիտեր :

Սակայն եթէ հողւոյ եւ մարմնոյ միութեան
հիմը չենք գիտեր , գէթ բաւական տեղեկու-
թիւն ունիմք անոր վրայ այն երկու արդեանց
եւ անոնցմէ հետեւած գեղեցիկ կարգաւորու-
թեան միջոցաւ՝ որոց վրայ արդէն խօսեցանք .
որովհետեւ նախ կը տեսնեմք՝ որ հողին եւ
մարմին կատարեալ ընկերութիւն մ'ունին իրենց
մէջ :

Երկրորդ կը տեսնեմք՝ որ այս ընկերու-
թեան մէջ գլխաւոր մասն , այն է հողին գահե-

րէց կը բազմի, եւ մարմինը կը հնազանդեցունէ. բազուկ, սրունք եւ մարմնոյ միւս ամեն անդամները, եւ մէկ խօսքով, բովանդակ մարմինը հոգւոյն հրամայելովը կը շարժին :

Աչք, ականջ հոգւոյն ուղած կողմը կը դառնան, ձեռքերը կը կատարեն նորա հրամանը, լեզուն անոր խորհած եւ ուղած բաները կը խօսի, զգայարանք դատելի առարկայներն իրեն առջեւ կը բերեն . այսչափ բանի համար անոնոց պէտք ունի . կերած կերակուրնիս մարսելու եւ կենսական դորութիւնները պէտք եղած տեղը զրկելու ծառայող մասունքները մեր արտաքին անդամներն եւ ամբողջ մարմինը հոգւոյն հպատակելու պայմանին մէջ կը դնեն :

Այս է մարմնոյն լաւ արամադրութիւնը :

Եւ արդարեւ մարդուս մարմինն այն ատեն առողջ վիճակ կ' ունենայ, երբ կարող կ'ըլլայ հոգւոյն հրամանները կատարելու . ընդ հակառակն հիւանդ եղած կ'ըլլայ, երբ մեր մարմինը այն աստիճան տկարանայ եւ ուժէ իյնայ՝ որ չը կարենայ այլ եւս կանգնիլ եւ մեր ուղած շարժումները կատարել :

Մարդկային մարմինը կրնանք անուանել այնպիսի գործի մը՝ զոր հողին իւր կամաց համեմատ իւր պէտքին կը գործածէ . եւ ասոր համար է՝ որ Պղատոն մարդուս սահման մը տալ ուղեկով կըսէր. « մարդս մարմինը գործածող հողի մ'է » :

Ասկէց կ'եղրակացունէր յիշեալ փիլիսոփայն հոգւոյ եւ մարմնոյ մէջ եղած չափազանց տարբերութիւնը, որովհետեւ մեծ զանազանութիւն կայ գործածողին եւ գործածելոյն մէջ :

Ուրեմն, մեր հողին՝ քանի որ բազուկն ու ձեռքերն իրեն հաճոյ եղած կերպովը կը գործածէ, ամբողջ մարմինը իրեն կը ծառայեցունէ, ուղած տեղը կը փոխադրէ, իրեն հաճոյական վտանգին մեջ կը նետէ. եւ միչեւ անդամ կը կործանէ ալ, անտարակոյս մարմինէն գեր'իջերոյ ընտրութիւն մ'ունենալու է, որ ըիւր կերպերով եւ տիրաբար իւր նպատակներուն կը ծառայեցընէ զայն : Ուստի մարմինը հոգւոյն գործիք անուանելով խաբուած չենք ըլլար : Պէտք չէ զարմանալ երբոր կը տեսնենք՝ որ մարմինն անկանոն վիճակի մէջ գանուած ատեն հողին չք կրնար պէտք եղած կերպով իւր հրամանները կատարել : Աշխարհի ամենէն ճարտար ձեռքն գրչով գէշ գիր կը գրէ անպատճառ : Եթէ գործաւորի մը ձեռքէն գործիքն առնես իւր բնական ճարտարութիւնը կամ ստացած հմտութիւնը միթէ կրնայ ցուցնել : Սակայն մարդկային մարմնոյ եւ սովորական գործիքներուն մէջ յանհունս տարբերութիւն կայ : Թէ որ նկարչի մը վրձինը եւ կամ արձանագործի մը գրիչը կտարես, իրենց գործիքներուն ընդունած հարուածները չեն զգար բնաւ, բայց հողին մարմնոյ վնաս հասցնող ամէն բան կ'զգայ, նա մանաւանդ հաճոյք մ'ալ կ'զգայ, երբ իւր սննդեան հարկաւոր բաները տաս :

Ուրեմն մարդկային մարմինը դրսէն գործածուելու սոսկ գործիք չէ, եւ ոչ իսկ նաւ մ'է զոր հողին կը կառավարէ նաւապետի մը պէս : Այսպէս պիտի ըլլար եթէ հողին լոկ իմացական ըլլար . բայց որովհետեւ զգայական ալ է, ապա ստիպուած է մասնաւոր եղանակաւ մը իր մարմնոյն վերաբերեալ իրաց գոր-

ծակից ըլլալ եւ կառավարել ոչ իբր օտար կամ վարձուոր, այլ իբրեւ բնականաբար իւր հետ սերտիւ միացած մէկը: Համառօտ ըսել, հողի եւ մարմին 'ի միասին առնելով մէկ ամբողջ մը կը կացուցանեն եւ հողւոյ եւ մարմնոյ մասանց մէջ կատարեալ եւ հարկաւոր հաղորդակցութիւն կայ:

Այսպէս ամէն կենդանական գործողութեանց մէջ կը դանեմք այնպիսի բաներ՝ որք հողւոյ եւ մարմնոյ միանդամայն կը պատշաճին. այնպէս որ՝ մարդս իւր անձին վրայ հարկ եղած ծանօթութիւնն ստանալու համար, հարկ է ամէն գործոց մէջ հողւոյն վերաբերեալ բաները մարմնոյ վերաբերածէն զանազանել, եւ նշանակել թէ՛ իրարմէ այս աստիճան տարբեր բնութեամբ երկու գոյացութիւններ ինչպէս փոփոխակի միմեանց կ'օգնեն: Ընտրողութիւն մը կրնայ, ինչպէս որ պէտք է, դիւրանալ յաճախ խորհրդածութիւններ ընելով: Աւ որովհետեւ մարդ չը կրնար այնչափ ինքզինք բոլորովին հարկաւոր խորհրդածութեանց տալ, եւ ոչ իսկ կատարելապէս հողին մարմինէն զանազանել, վասն որոյ մինչեւ հիմայ հետազօտած գործողութիւններնս վերստին քննել կամ դիտել հարկաւոր է:

Շարժում մը կատարած ժամանակնս մարմնոյն վերաբերած բանն է ուղեղին մէջ տեղի ունեցած ցնցումը, որ յառաջ կուգայ կենսական գործութեանց, ջղաց եւ վերջապէս կամ բոլոր մարմնոյն եւ կամ իւր մասանց մի քանիներուն, ինչպէս, օրինակի համար, բազկաց կամ ձեռաց շարժմանէն: Իսկ հողւոյն կողմանէ եղածն է՝ շարժում տալու կամբք եւ աւելի այս քան այն կողմն երթալու կամ նպատակը կամ խոր-

հուրդը:

Խօսակցութեան մէջ մարմնոյ՝ պաշտօնն է ուղեղին գործելը՝ ուսկից սկիզբն կառնու ամբողջ մարմնոյ գործողութիւնն: Եւ, օգը անցունելու համար թոք եւ շնչափող շարժել եւ նոյն օգը շրթանց եւ լեզուին զարնել: Իսկ հողւոյն գործն է խօսել եւ խորհածը բացատրելու դիտաւորութիւն ունենալ:

Եթէ լաւ դիտենք, պիտի տեսնեմք՝ որ մարդկային կամաց հրամանէն յառաջ եկած ամէն շարժումները կրնան բացարձակապէս առանց անոր ալ կատարուիլ: Ինչպէս շնչառութիւնն՝ որ մասամբ իւրիք կամքէ՝ կախումն ունի, քնոյ ժամանակ առանց կամքի ալ կ'ըլլայ: շատ ան դամալ կը պատահի որ քնացած ատեննսիս այնպիսի բառեր կը յօդենք կամ այնպիսի շարժումներ կրնենք՝ որ ուղեղին գրգռման օտակ արդիւնքը կրնան համարուիլ, որոց մէջ կամբք մասն չունի բնաւ: Կրնամք մտածել դարձեալ թէ սոսկ օդին ծածանմանէն ձայներ կրնան կազմուիլ, ինչպէս կը տեսնուի արձագանգներու մէջ:

Այս դիտողութիւնները մեծապէս կը նըպաստեն քննելու եւ իմանալու թէ շարժմանց, նա մանաւանդ խօսակցութեան մէջ ինչ բան կը վերաբերի հողւոյն եւ ինչ բան մարմնոյն: Տեսնենք՝ թէ այս տարբերութիւնը միւս գործողութեանց մէջ ալ կայ: Տեսանելեաց մէջ մարմնոյն յատուկ եղած բաներն ասոնք են, աչքերնս բաց պէտք է ըլլայ, որ արեգական ճառագայթներն առարկային մակերեւութէն ուղիղ գծով մեր աչաց մէջ ցոլանան, եւ ճառագայթը աչաց հեղուկներուն մէջ բեկանի եւ ա-

առարկայները փոքրիկ ձեւերով աչաց խորը նը-
կարուելն եւ դրոշմուելն, տեսողական ջիղերն
չարժին, վերջապէս՝ հարկ է որ շարժումը մին-
չեւ ուղեղը երթայ հասնի: Իսկ հոգւոյն յա-
տուկ եղածն է զգացողութիւն, այսինքն, լու-
սոյ եւ դուռնոց ընթացումը եւ այն հաճոյքը՝ զոր
կ'զգամք աւելի այս՝ քան թէ այն ինչ հաճոյատու-
տիլ առարկայներու վրայ նայելէն:

Լսելեաց մէջ՝ մարմնոյ կողմանէ եղածն այս
է՝ որ օդին ուր եւ է ծածանմունքը կուգայ ա-
կանջին թմբուկին կը դարնուի եւ լսողական ջի-
ղերն ալ այս ազդեցութիւնը մինչեւ ուղեղին
կը հաղորդեն:

Հոգւոյ կողմանէ է՝ ձայնի ըմբռնումը, ներ-
դաշնակութեան հաճոյքը, այն նեղութիւնը կամ
դժկամակութիւնը՝ զոր կ'առթեն մեզ դէշ, ա-
նախորժ եւ աններդաշնակ ձայներ, եւ զանազան
խորհուրդներ, որոնք կը ծաղկին խօսելու ատեն:

Ճաշակելեաց եւ հոտոտելեաց մէջ՝ կերա-
կուրներէն քամուած եւ լորձանց հեա խառ-
նուած հիւթը լեղուին ջղերը կը ցնցէ, ծաղիկ-
ներէ եւ կամ ուրիշ հոտաւէտ մարմիններէ բու-
րած գոլորշին ոնգանց ջղերը կը բախէ եւ այս
ամեն շարժումները ջրաց արմատին՝ այն է ու-
ղեղին կը հաղորդուին, ահա ասոնք մարմնոյն կը
վերաբերին. իսկ հոգւոյն են լաւ կամ գէշ ձա-
շակաց եւ ախորժ կամ դարշ հոտոց ընթանումը:

Շօշափելեաց մէջ՝ մեր մարմնոյն մասունք-
ները կամ ջերմութեամբ կը տարածուին, եւ կամ
ցուրտէն կը ճնշուին, շօշափած մարմիննիս կամ
իրենց խոնաւութեամբ մեր մարմնոյն վրայ կը
կուռին եւ կամ դիւրաւ կ'երթան չոր ըլլալ-

նուն պատճառաւ: մեր մարմինը կամ կարծր
մարմիններէ կը խոցուի եւ կամ սրածայր ա-
ռարկայներէ կը խզուի. դառն եւ շնասակար
հեղուկ մը կը ձգուի ջրային մասանց վրայ, եւ
իւր զանազան շարժումներով կը կսկծեցունէ,
կը ճնշէ եւ կը պատառէ, ջղերն իրենց երկայնու-
թեամբն մինչեւ ուղեղը կը ցնցուին. մարմնոյ
պատշաճող իրերն ասոնք են: Իսկ հոգւոյն կը
պատկանին ջերմութեան եւ ցրտոյ, վշտաց եւ
հաճոյից զգացումները:

Վշտաց մէջ բարձր աղաղակներ կը հանենք,
դէմքերնիս կ'այլալի եւ աչքերնէս կ'սկսին ար-
տասուք հոսիլ: Սակայն ոչ այս աղաղակները
ցաւ են, ոչ արտասուք եւ ոչ իսկ դիմաց այ-
լայլութիւնը, այլ ցաւը հոգւոյն մէջն է՝ որ այս
պատճառաւ սաղտուկ եւ հակառակ զգացումն
կ'ունենայ:

Նօթութեան եւ ծարաւոյ մէջ մարմնոյն
կողմանէ տեսած բաներնիս են ստամոքսը զկը-
ծեցունող ջրերն, եւ կոկորդնիս ցամքեցունող
գոլորշիները. իսկ հոգւոյն է մարմնոյն մասանց
այս անկարգութիւններէն պատճառեալ վիշտն
զգալը, եւ կերակուր կամ ջուր առնելով դար-
մանելու փափաքելը:

Երեւակայութեան եւ յիշողութեան մէջ
մարմնոյ կը վերաբերին ուղեղին վրայ կատա-
րուած ազդեցութիւնները, սոյն ազդեցութեանց
ուղեղին մէջ թողած հետքերն եւ զանազան կող-
մերէ ուղեղին ցնցումն տուող կենսական զօրու-
թեանց գրգռումները. իսկ հոգւոյ կը վերաբերին
այն ամեն խառնաշփոթ խորհուրդներն, որք ա-
պա բոլորովին կը ջնջուին, կամաց գործերը՝ որ

յիշողութեան բաներ կը յանձնէ , եւ յետոյ պահանջելով երբ ուզէ ետ կ'առնէ :

Իսկ դալով կըքերուն , բարկութեան մէջ կենսական զօրութիւնները կը գրգռուին , սիրտը կը շարժի միշտ շարունակական բախմամբ , արիւնը կը ջերմանայ , դնդերք կը պրկին , բազուկներն ու ամբողջ մարմինը կը պատրաստուին յարձակելու . բայց տակաւին այս չէ բարկութիւն ըսածնիս , զի այս ամենը մարմնոյ միայն կը պատկանին . բարկութեան մէջ հողւոյն գործն է վրէժխնդրութեան բաղձանքը : Այսպէս ալ երկիւղ ըսածնիս ոչ արեան մէկ կողմ երթալն է , ոչ մեր մարմնոյն մասերուն ցրտութիւնը , ոչ դիմաց գունատութիւնը եւ ոչ իսկ սրունից եւ ոտից արագ արագ փախչելու պատրաստութիւնը , ինչու որ այս ամենը երկիւղին մեր մարմնոյն մէջ պատճառած բաներն են միայն . իսկ հողւոյն մէջ տեղի ունեցածն է այն զգացումը՝ որով կը ջանայ ծանուցեալ վտանգէն խուսափել . այսպէս պէտք է հասկնալ միւս ամէն կրից համար ալ :

Այս ըրածներուս վրայ խոկալով եւ ընտելանալով՝ զգացմունք , երեւակայութիւնն եւ կիրք կամ բնական ցանկութիւնք կրնամք զանազանել նիւթական շփումներէ եւ տրամադրութիւններէ : Եթէ ասիկայ ընէ մարդ , իմացական գործերը զգայականներէն որոշելու մասին՝ գտուարութիւն բնաւ չը կրեր , որք մարմնոյ հպատակ չըլլալէ զատ՝ անոր շարժմանց վրայ կ'իշխեն եւ միայն զգայարանաց հետ ունեցած կապակցութեան պատճառաւ մարմնոյ հետ հաղորդակցութիւն ունին , այսու ա-

մենայնիւ գեր 'ի վերոյ են՝ միշտ քան զգայարանս :

Մարմնական շարժումները զգացողութենէ եւ կըքերէ զանազանել պէտք է ըսինք . ասոր վրայ թերեւս հարցնող ու ըսող ըլլայ թէ ինչպէս կարելի է տարբերութիւն մուծանել այսպիսի իրաց մէջ՝ որք իրարու ամենամերձ յարաբերութիւն ունին եւ գրեթէ իրարմէ անբաժան կ'երեւին . օրինակի չհամար , պիտի զուրցեն՝ թէ ինչպէս կրնամք բարկութիւնը՝ արեան եւ կենսական զօրութեանց գրգռմանէն որոշել , ինչպէս զգացումը շղաց ցնցմանէն եւ կենսական զօրութիւններէն զանազանել , քանի որ այս շարժումը կեցած ատեն զգացումն յառաջ կուգայ եւ առանց սոյն շարժման զգացումն ունենալ կարելի բան չէ , Թերեւս զըտնուին այնպիսիներ ալ՝ որոնք հարցունեն թէ ինչպէս կարելի է՝ որ հաճոյք եւ վիշաք հողւոյն վերաբերին , մինչդեռ զանոնք մեր մարմնոյն մէջ կ'զգամք , ոչ ապաքէն կտրուած մատիս մէջ է որ ցաւ կզգամ կամ քմաց մէջ է որ ճաշակի հաճոյքը կ'զգամք . այսպէս միւս ամէն զգացմանց համար ալ : Ասոր պատասխանը շատ դիւրին է . որովհետեւ մեր խնդրոյն նիւթ եզոյ շարժումն՝ որ սոսկ տեղական փոփոխութիւն է , յանհունս տարբեր է զգացումն ըսած բաներնէս՝ որ է բան մ' ըմբռնել : Ուրեմն այս իրերը կրնամք իրենց բնական պատկերներովը իրարմէ որոշել , զի ասոնք բոլորովին իրար խառնուած չեն եւ զօրս մոլորութեամբ միայն կարելի է մէկմէկու հետ շփոթել :

Վիրաւորեալ ձեռքի կամ բազկի մը մասանց

բաժանումը նոյնը ըսել է ինչ որ կը պատահի ղիակի կամ մեռեալ մարմնոյ վրայ , եւ այս բաժանումը ցաւ չըկրնար ըլլալ բնաւ :

Այսպէս պէտք է դատաստան ընել նաեւ մեր մարմնոյն միւս աման շարժմանց վրայ ալ : Արեան բորբոքումը ուրիշ հեղուկի բորբոքմանէն բնաւ տարբերութիւն չ'ունի . Չղաց ցնցումը՝ պարանի ճօճմանէն տարբեր բան մը չէ , եւ ոչ իսկ ուղեղին շարժումը՝ ուրիշ մարմնոյ մը շարժմանէն . դալով կենսական զօրութեանց՝ ասոնց ընթացքն ալ ուրիշ գոլորշւոյ մը ընթացքէն բնաւ չը տարբերիր . որոյնտեւ կենսական զօրութիւնք ջիւք եւ մանրաթելք՝ յորոյ բաղկանայ ուղեղը՝ իրենց նրբութեանը համար մարմին չեն չենք կրնար ըսել . եւ գիտեմք ալ թէ՛ իրենց արագ եւ նուրբ շարժումը սոսկ տեղական փոփոխութիւն մ'է եւ ոչ այլ ինչ . եւ ասիկա ինչպէս փորձը կըցուցնէ ըզպալէ եւ բաղձալէ շատ տարբեր բան է :

Ասիկայ պիտի ճանչցուի զգացմանց մէջ իրերն իրենց սկզբանց մէջ նկատելով :

Զգացմանց մէջ շղթայաբար իրար անցած շարժում մը նշանակեցինք՝ որ առարկայէն կըսկըսի , միջոցին մէջ կը շարունակէ , գործարանաց կը հաղորդուի եւ վերջապէս կ'երթայ դէպ 'ի ուղեղը կը յանդի եւ հոն իւր ազդեցութիւնը կը կատարէ :

Գլուրին է խմանալ թէ շարժում մը առարկայէն ինչ եղանակաւ որ՝ կ'սկսի , այնպէս ալ միջոցին մէջ կը տեւէ եւ ճիշդ նոյն կերպով մօր մարմնոյն ներքին եւ արտաքին գործարանաց կը հաղորդուի , բայց միշտ իւր մէջ համեմատութիւն կամ չափ պահելով :

Ըսել կուզեմ՝ թէ միջոցին եւ գործարանաց զանազան կարգաւորութեան համեմատ այս շարժումը կրնայ քիչ շատ փոփոխութիւն կրել , ինչպէս կը պատահի ճառագայթներու բեկբեկման մէջ , եւ երբ այն օղը՝ ուստի ձայնական մարմնոց շարժումը պիտի հաղորդուի զգայարանաց՝ 'ի ձեռն հոգմոց տարուբերի կամ ծածանի . սակայն այս տարբերութիւնը գրեթէ միշտ առարկայէն մեզ հաղորդուած ազդեցութեան համեմատ կ'ըլլայ , եւ այս չափին համեմատ ներքին եւ արտաքին գործարաններն ազդեցութիւն կ'ընդունին :

Արդ այսպէս մարմնական գործարանաց արբամադրութիւնը ըստ ինքեան զմեզ շօշափող առարկայից մէջ գտնուած արամադրութեան հետ նոյն եւ մի բնութիւն ունի , ինչպէս մտին վրայ կատարուած ազդեցութիւնը նոյն է կնքոյ վրայ եղածին հետ :

Եւ արդարեւ ինչ է տպաւորութիւնը , եթէ ոչ մտին վրայ կատարուած շարժումը , 'ի ձեռն որոյ ստիպուած է իւր վրայ դրուած կնքոյն հաղորդուիլ : Նոյնպէս ալ մեր գործարանաց վրայ կատարուած ազդեցութիւնն ինչ է , եթէ ոչ առարկայէն թեղադրեալ շարժմանէն մեր գործարանաց հաղորդուած շարժումը :

Կը տեսնեմք՝ որ ձեռքս ծանր ու կարծր մարմնն է մը ճնշեալ կը զիջանի եւ իւր վրայ ծանրացած մարմնոյն շարժման համեմատ՝ կը խոնարհի , եւ սոյն այս շարժումը զինքը ընդունելու պատրաստ բոլոր մասանց մէջ կը շարունակէ :

Ամէն մարդ գիտէ՝ թէ ձայն պատճառող շարժումը՝ հնչական մարմնոյ ծածանումն է ,

ինչպէս որ վինի թելին նման ճօճումն տեղի կ'ունենայ օդոյն մէջ, եւ երբ ապա մեր ականջին թմբուկը եւ լսողական ջիղերը եւ ուղեղը ցնցուին՝ սոյն ցնցումը վինի թելին ճօճումէն բնաւ տարբեր չէ, այլ ճիշդ նոյն ցնցման շարունակութիւնն է :

Եւ որովհետեւ այս բոլոր ազդեցութիւնները ըստ բնութեան մի, կամ աւելի ճիշդը, առարկայէն սկսող նոյն եւ մի ցնցման շարունակութիւնն են, ուստի, ինչպէս ծաղրելի կըլլայ ըսել՝ թէ ականջին թմբուկին ճօճումը եւ ջղաց կամ մեր մարմնոյն միւս մասանց ցընցումը՝ զգացմունք է, այսպէս ալ նոյնչափ ծաղրական է օդոյն եւ կամ ձայնական մարմնոց ծածանմունքը զգացմունք համարելը :

Ուրեմն ուղիղ դատած կ'ըլլանք երբոր առարկայէն սկիզբն առնող եւ մինչեւ ուղեղը հաղորդուած մարմնական ազդեցութեան շարունակութիւնը իբրեւ առարկային կապուած բան համարինք, եւ ինչպէս որ զգացմանց եւ առարկային մէջ տարբերութիւն կը դնենք, այսպէս ալ պէտք է նաեւ զգացումը առարկայէն յառաջ եկած շարժմանէն եւ ազդեցութենէն տարբեր դիտել : Ուրեմն զգացմունքն այնպիսի բան մ'է՛ որ այս ամէն բաներէն վերջը ուրիշ առարկայի մը մէջ կը բարձրանայ, այսինքն, ոչ եթէ մարմնոյն այլ հոգւոյն մէջ :

Այսպէս պէտք է հասկնալ նաեւ երեւակայութեան եւ անկէց յառաջ եկած բաղձանաց համար ալ : Համառօտ ըսել, մարդ որչափ մարմններն՝ այսինքն յերկայնութիւն, ՚ի լայնութիւն եւ ՚ի խորութիւն տարածուած իրերն

չարժէ եւ զանոնք որչափ նրբացնէ՝ որ մինչեւ անգամ այլ եւս անբաժանելի մնան, եթէ իրենց բնութիւնն ալ այս բանին ներէ, տակաւին ոչ մի զգացմունք եւ կամ բաղձանք չեն կրնար յառաջ բերել : Որովհետեւ վերջապէս մարմին մը թող արագաշարժ ըլլայ, ասկէ անդին չկըրնար անցնիլ : Թող որչափ ալ կուզէ բարակ ըլլայ, դարձեալ բարակ ըլլալու սահմանէն կամ ամենանուրբ ծակէ մը անցնելէն աւելի բան մը չկրնար ըլլալ : Բայց թող զգայ, թող փափաքի, ամենեւին կարելի բան չէ :

Ասոր համար է՝ որ հոգին իւր զգացմունքը, երեւակայութիւններն եւ բաղձանքները գիտէ : չըզիտեր թէ ուղեղը, ջիղք եւ կենսական զօրութիւնք նուրբ թէ թանձր, երանգ թէ դանդաղ են : Չըզիտեր անգամ՝ թէ այս բաները բնութեան մէջ գոյութիւն ունի՞ն : Աղէկ գիտեմ՝ խիթի կամ կէս գլխացաւոց պատճառած վիշտը կ'զգամ, նոյնպէս ալ բան մը կերած կամ խմած ատենս հաճոյք մը կ'զգամ եւ որոշակի կը ճանչնամ այս հաճոյքը կամ վիշտը, բայց չը գիտեմ՝ թէ ուղեղին շուրջը պատած պարուտակ մը կայ եղեր, որոյ ջղերն դառն հեղուկով մը կ'զվծին, թէ լեզուիս մէջ տեսակ մը ջիղեր կան եղեր, որոնք կերակրոց մէջէն քամուած հիւթերէն կը շարժին : Չեմ գիտեր եւ ոչ իսկ թէ կենսական զօրութիւններ ունիմ եղեր, որք ուղեղին մէջ չըջան մը առնելով, ջղաց մէջ կը թափուին զանոնք պրկելու համար եւ անտի դնդերաց մէջ կը տարածուին : Ասկէ կ'երեւի՝ թէ զգացումն եւ մարմնական գործարանաց այս տրամադրութիւններն

իրարմէ որոշ բաներ են . որովհետեւ մին պայ-
ծառապէս կիմանամք , իսկ միւսը ոչ այնչափ
պայծառ :

Արդ յայտնի է թէ աւելի մեր հողւոյ վե-
րաբերեալ իրաց վրայ ծանօթութիւն ունիմք
քան մարմնոյ , քանզի առանց մեր դիտնալուն
չատ մը շարժումներ տեղի կ'ունենան մեր մար-
մնոյն մէջ , սակայն չ'ունիմք զգացում մը՝ որ
մեր միտքը չը դիտնայ :

Արեւին , եղբակացունեմք ու ըսեմք՝ թէ
ջղաց ցնցումը զգացումն չը կրնար ըլլալ բնաւ ,
արեան բորբոքումը կարելի բան չէ՝ որ բազ-
ձանք ըլլայ . արեան ցրտութիւնը՝ որ կը պատահի
երբ իւր մէջ գտնուած կենսական զօրութիւն-
ները դէպ 'ի սիրաը դիմեն , ատելութիւն չը
կրնար ըլլալ . միով բանիւ մարդ խաբուած կըլ-
լայ , երբ որ մարմնական խանգարումներն ու
տրամադրութիւնները զգացմանց , երեւակայու-
թեան եւ կրից հետ չ'իջնի :

Այս բաներն իրացունէ իրար միացած են ,
բայց մի եւ նոյնը չեն բնաւ . որովհետեւ իրար-
մէ յանհունա տարբեր են ըստ բնութեան , ինչ-
պէս յիշե՛ն զգալ չէ , այսպէս ալ զգալն յի-
շել չէ :

Այսպէս ալ մեր մարմնոյն մէկ մասը կը ցա-
ւի ըսելով , ոչ թէ ցաւը մարմնոյն մէջն է ,
այլ վասն-զի այս մասը կամ մարմինը բոլորովին
ջղային ըլլալով , չը կրնար վերաւորուիլ առանց
ջղերը սաստիկ ցնցուելու , առ որ բնութիւնը
միացուցած է ցաւոյ փախուի զգացումն :

Եւ եթէ զգացումը սովորաբար մեր մար-
մնոյն վնասեալ մասին կը պատկանի , ինչպէս , օ-

րինակի համար , ձեռքիս զարնուած ատեն ցաւն
ալ մարմնոյս այն մասին մէջ կ'զգամ . սակայ
ազդեցութիւն մ'է , որով կը դիտնամք՝ թէ վիշտ
պատճառող վէրքը ձեռացս մէջն է եւ ոչ թէ
ապացոյց մ'է թէ զգացումը՝ որ հողւոյն միայն
կը պատկանի՝ մարմնոյն ալ է , Նրաւցնէ սրունք-
ները կտրուած հանուած մէկը կը կարծէ՝ թէ նոյն
մասանց մէջ ցաւ կ'զգայ , ինչպէս յառաջ , բայց
ոչ եթէ անոր համար՝ որ իրօք ցաւ կ'զգացուի
այնպիսի մասի մը մէջ՝ որ այլ եւս չկայ՝ այլ թէ հո-
գին՝ որ միայն ցաւ զգացողն է , ցաւը կը տանի
նոյն այն տեղը՝ ուր որ տանելու սովորութիւն
ունէր :

Այսպէս մեր մարմնոյ ինչ շարժում որ
տանք եւ ո՞ր կողմ որ դարձունեմք զայն , այսին-
քըն , այս շարժումը թէ արագ ըլլայ եւ թէ դան-
դաղ , թէ շրջանաւոր եւ թէ ուղիղ գծի վրայ ,
թէ ամբողջ մարմնոյ վերաբերի եւ թէ անոր
մասունքներէն միոյն միայն , դարձեալ չենք
կրնար երբէք բան մը զգալ , չենք կրնար նոյն-
պէս ոչ երեւակայել , ոչ դատել եւ իւրաքան-
չիւր իրաց եւ մեր բնութիւնը իմանալ , ոչ կըլ-
նադատել եւ ընտրողութիւն ընել , ոչ կըլից դէմ
դնել , ոչ մեր անձին հրամայել , եւ ոչ , վերջապէս ,
սիրել բան մը այնպիսի կերպով՝ մինչեւ անոր
սիրոյն համար մեր կեանքը վրայ տալ :

Արեւին , մարմնոյն բոլոր զանգուածէն , եւ
զայն գրգռող կենսական զօրութիւններէն եւ
ասոնց ձեռօք մարմնոյն ընդունած ազդեցու-
թիւններէն ու շարժումներէն դեր 'ի վերոյ զօ-
րութիւն մը կայ մարդկային մարմնոյ մէջ : Այս
զօրութիւնը հողւոյն է , կամ լաւ եւս է ըսել , նոյն

ինքն հողին է, որ թէպէտ մարմինէն խիստ գերազանց ընութիւն մ'ունի, սակայն եւ այնպէս անոր հետ սերտիւ միացած է այնպիսի վերին դոբութեան ձեռք՝ որ երկուքին ալ, այսինքն, թէ հողւոյն եւ թէ մարմնոյն արարիչն է :

ԳՂՈՒԽ Գ.

ՅԱՂԱԳՍ ԱՍՏՈՒԾՈՅ

ՈՐ ՀՈԳԻՈՅ ԵՒ ՄԱՐԲՆՈՅ ԱՐԱՐԻՉ ԵՒ ՆՈՑԱ

ԿԵՆԱՑ ՏԵՐՆ Է

Աստուած՝ որ հողին ու մարմինը՝ ստեղծած եւ երկուքը սերտիւ իրար միացուցած է՝ իւր այս գեղեցիկ գործոյն մէջ ինքնին կը ճանչցուի :

Ո՛վ որ քիչ շատ մարդը ճանչնայ՝ հարկաւ մեծադոյն խորհրդոյ գործ պիտի համարէ, եւ դատէ թէ այսպիսի գործ մը առանց խորին լուստութեան կարելի չէ մտածել եւ յերեւան անել :

Ինչ բան՝ որ կարգ, կատարեալ չափակցութիւն եւ ինչ ինչ արդիւնքներ արտադրելու յարմար միջոցներ կը ցուցնէ իւր վրայ, կը ցուցնէ նաեւ որոշ եւ յայտնի վախճան մը, եւ, հետեւաբար, սահմանեալ նպատակ, կանոնաւորեալ իմացականութիւն եւ կատարեալ արուեստ կ'ունենայ : Բոլոր ընութեան մէջ բացայայտ է այս : Բնութեան ամէն մէկ շարժմանց մէջ այնպիսի ուղղութիւններ եւ մասանցը՝ մէջ

այնպիսի համեմատութիւններ կը տեսնեմք , որ չեմք Արքայն ուրանալ՝ ու ըսել՝ թէ մէջն արու-
 ւեստ չը կայ : Արդ, եթէ սոսկ այս ուղղութիւնը
 եւ ներդաշնակութիւնը տեսնելը առանց արու-
 ւեստի չէ , հապա որչափ եւս առաւել բանի
 մը մէջ ասոնք հաստատելը : Ասոր համար է՝ որ
 տիեզերաց մէջ ամէն տեսած բաներնուս պատ-
 ճառը փնտռելու եւ իմանալու հետաքրքրու-
 թիւն կ'ունենանք : Այս աստիճան կ'ղղամք՝ թէ
 ամէն բան բնականաբար ուրիշի մը հետ պատ-
 շաճողութիւն կամ համեմատութիւն եւ վախ-
 ճան ունի :

Կը տեսնեմք եւս՝ որ բնութեան վրայ լաւ
 դիտողութիւններ ընող փիլիսոփայներն , իբրեւ
 առած , մեղ կ'աւանդեն՝ թէ բնութիւնը զուր
 տեղը բան չընէր բնաւ , եւ թէ շարունակաբար
 իւր վախճաններուն կը դիմէ խիստ համառօտ
 եւ ամենադիւրին միջոցներով : Բնութեան մէջ
 գտնուած արուեստը մինչեւ այն աստիճան կը
 տարածուի՝ որ նոյն իսկ մեր արուեստները զա-
 նոնք քաջ իմանալու եւ նմանեցնելու համար
 արուեստ կըսուին : Եւ մարդս որչափ բնութեան
 գաղանկաց խորը թափանցել ուզէ , այնչափ եւս
 առաւել այնպիսի ծածուկ չափակցութիւններ
 պիտի գտնէ անոր մէջ՝ որով ամէն իր կարգա-
 ւորեալ են , եւ խորախորհուրդ արուեստի եւ
 լիագոյն իմացականութեան նշանները կը կա-
 ցուցանեն :

Արդ՝ բնութիւն ըսելով կ'իմանամք այն խո-
 րին իմաստութիւնը՝ որ մեր աչքին երեւցած
 բոլոր տեսանելի շարժմանցը կարգ եւ կանոն
 դրած է :

Սակայն բնութեան գործոց մէջ արարչին
 նպատակը աւելի դեղեցիկ կերպով փայլեցնողը
 անտարակոյս մարդ էակն է : Եւ արդէն ամէն
 կարգի էակները ստեղծել ուղել մեծ ու բարձր
 խորհրդոյ գործ է : Էակներ՝ որ սոսկ տարածու-
 թիւն եւ անոր վերաբերեալ բաներն , ինչպէս ,
 ձեւ , շարժումն , դադարումն կամ հանդիստ եւ որ
 ինչ ասոնց չափակցութենէն կամ համեմատու-
 թենէն կախեալ են , դայն միայն ունին . էակ-
 ներ՝ որք իմացականութեան յատուկ եղած
 գործողութիւններն ունին , որպիսիք են իմաս-
 տութիւն , բան , կանխատեսութիւն , կամք , ա-
 զատութիւն եւ առաքինութիւն : Ինչպէս , է-
 ակներ՝ յորս ամէն բան գումարեալ է , եւ իմա-
 ցական հողին մարմնոյ հետ միացեալ կը գտնուի-

Մարդս այնպիսի նպատակաւ մը ստեղծուած
 կամ նախակարգեալ ըլլալով՝ կրնամք հողւոյ
 սահման մը տալ ու ըսել՝ թէ հողին է բանա-
 կան , եւ մարմնոյ մէջ ապրելոյ եւ սերտիւ ա-
 նոր հետ միանալու համար եղած իմացական
 գոյակ :

Այս սահմանին մէջ կատարելապէս կը բո-
 վանդակուի մարդ էակը՝ որ ինչպէս աղին ,
 նոյնպէս ալ զձուձ բաներ ունի վրան եւ՝ գրե-
 թէ այս երկու տեսակ իրերէն բաղադրութիւն
 մը եղած է :

Մարդը նկարագրող այս առաջին ծրա-
 դին պէս զարմանալի են մնացած ամեն բա-
 ներն ալ :

Ինչպէս տեսանք , հողւոյ եւ մարմնոյ
 միութեան համար՝ հարկ էր որ հողւոյն մէջ
 մարմնէն դէր ՚ի վերոյ իմացական գործողու-

թիւններէն զատ գտնուէին նաեւ այնպիսի զգայական գործողութիւններ՝ որք բնականաբար մարմնոյ հետ կապակցութիւն ունենային եւ անոր գործարանաց հպատակութեան տակ մըտնէին : Եւ արդէն սոյն զգայական գործողութիւնները հոգւոյ մէջ կան :

Սակայն իմացական գործողութիւններն ալ զգայականներէն պակաս հարկաւոր չէին հոգւոյ, որ իբրեւ ազնուագոյն մասն բաղադրութեան, կը պարտի դարմինը կառավարել եւ անոր տիրապետել : Եւ արդարեւ Աստուած այս իմացական գործողութիւնները տուած է մարդկային հոգւոյ, եւ հոգին ալ մարմնոյ վրայ իւր հրամանատարութեան գործը կը կատարէ :

Պէտք էր որ մեր հոգւոյն գործոց մէջ մասնաւոր նախանձընդդիմութիւն կամ մրցանք գտնուէր, եւ բանական մտքը, կամ հոգին զգայական մասէն օգուտներ քաղէր. եւ ստուգիւ իրերն այսպէս կանոնաւորեալ են : Կը տեսնեմք՝ որ հոգին զգացման ձեռք աղբեցութիւններ ընդունելով եւ գրգռուելով՝ իւր շուրջը անցած դարձած բաներուն ամէնն ալ կ'իմանայ եւ քննութեան կ'առնու, որպէս զի 'ի վերջոյ մարմնոյն պէտքերը հայթայթելու եւ բնութեան սքանչելեաց վրայ սոյն խորհրդածութիւնները կատարելու կարող ըլլայ : Թերեւէր ըսածնիս աւելի լաւ իմացուի՝ եթէ քիչ մ'աւելի բարձրէն առնեմք խօսելը սոյն նիւթոյն վրայ :

Իմացական բնութիւնը երջանիկ ըլլալու կը ցանկայ. երջանկութեան եւ թշուառութեան

զաղախարներն ունենալով՝ միոյն կը ձգտի ; եւ միւսէն կը խորշի : Իւր ամէն գործողութիւններն ասոր կը նային, եւ կ'երեւի թէ այս է իւր հիմը : Բայց ինչ բանի վրայ կընայ հիմնել երջանիկ կեանքը, եթէ ոչ ճշմարտութեան ծանօթութեան վրայ : Սակայն ոչ ոք երջանիկ կրնայ ըլլալ սոսկ ճշմարտութիւնը ճանչնալով. հարկ է նաեւ զայն սիրել եւ ձեռք բերելու կամք մ'ունենալ : Հակասութեան մէջ կ'իյնամք՝ եթէ ըսեմք՝ թէ առանց երջանկութիւնը եւ զայն պատրաստող բաները սիրելու երջանիկ կեանքի մ'արժանանալ կարելի է :

Ուրեմն կատարելապէս երջանիկ ըլլալու համար պէտք է զբարին եւ ճանչնալ եւ սիրել :

Իմացական բնութեան բարին ալ արդէն ճշմարտութիւնն է, այս է իւր գիւտեցուցիչն ու կենդանաբար պարզելը : Եթէ հիմայ լոկ իմացական բնութիւն մը յղանամ մտացս մէջ, ուրիշ բան չըպիտի յատկացնեմ անոր, եթէ ոչ ճշմարտութեան գիտութիւն եւ սէր, եւ սոսկ այսչափը բաւական պիտի ըլլայ զայն երջանիկ ընելու : Բայց որովհետեւ մարդը լոկ իմացական էակ մը չըկացուցաներ, այլ ինչպէս ըսինք, ընդ մարմնոյ միացեալ իմացական բնութիւն մ'է, ուստի տակաւին ուրիշ բանի մ'ալ կը կարօտի, որ է զգայաբանք : Եւ ասիկայ մի եւ նոյն սկզբունքէ յառաջ կուգայ. զի հոգին մարմնոյ հետ միացած ըլլալով՝ նորա բարեկարգ վիճակը բնականաբար իւր երջանկութեան մէկ մասը պիտի կազմէ, եւ որպէս զի այս միութիւնը կատարուի՝ հարկ է որ իմացական կամ գլխաւոր մասն ի-

րեն միացեալ մարմնոյն կամ ստորին մասին պէտքերը հողայ : Արդ ընդ մարմնոյ միացեալ հողւոյն ճանչնալիք ճշմարտութիւններէն մին է զիտեղ թէ ինչ եւ որոնք են մարմնոյ պիտոյքը , զորս եւ հայթայթելու ինչ միջոցներ կան : Ահա այս գործողութեան կը ծառայեն զգացմունք , ինչպէս ըսինք արդէն եւ հաստատեցինք : Եւ որովհետեւ մարդկային հողին այնպիսի բնութեան տէր գոյակ է , որոյ իմացական զաղափարները տիեզերական , վերացական եւ ամէն մասնաւոր նութերէ սրբեալ կամ աննիւթ են , ապա այս հողին մէկ ուրիշ բանի մը կը կարօտէր՝ որ թէ իրեն միացած մարմնոյն նկատմամբ տեղեկութիւն տար իրեն եւ թէ այն տեսակ մարմնոյ՝ որք կրնան մեր հողւոյն օգուտ մ՝ ընել կամ մխանել : Եւ , ինչպէս արդէն տեսանք , զգացմունք այս բանիս համար տրուած էին իրեն . հողին տեսանելեաց , լսելեաց եւ ուրիշ զգայարանաց ձեռօք զիտէ անթիւ առարկայներուն մէջէն որոշել իւր մարմնոյն օգտակար կամ մնասակար իրերը : Հաճոյք եւ վիշտ մեր հողւոյն ուշադրութիւնը իւր պիտոյից վրայ կը դարձունեն , եւ ոչ միայն զինքը կը յորդորեն՝ որ այն պէտքերը հայթայթէ , այլ եւ կ'ստիպեն իսկ :

Ահա իմացանք՝ թէ ինչ է հողին . ասով զիւրին է իմանալ թէ մարմինը ինչ տեսակ բան պէտք էր ըլլար :

Նախապէս՝ հարկ էր որ մարմինը զգացմանց նպաստելու եւ իւրաքանչիւր կողմերէ ազդեցութիւններ ընդունելու կարող ըլլար . որովհետեւ զգացմունք այս ազդեցութիւններէն

կախումն ունին :

Իսկ եթէ : մարմինը այնպիսի վիճակի մը ենթակայ եղած ըլլար՝ որ չը կարենար իւր շարժումները հողւոյն խորհրդոց յարմարցնել , այն ատեն որչափ ջանք ըներ՝ հողին զգացմանց ձեռօք չպիտի կրնար գիտնալ՝ թէ ինչ բանի պէտք է փափաքել եւ ինչ բանէ խուսափել :

Մարմինը՝ որ այսչափ ազդեցութիւններ ընդունելու յարմարութիւնն ունի , պէտք է , ուրեմն , որ բերաւոր ատրքեր շարժումներ կատարելու ընդունակութիւնն ալ ունենար :

Եւ որպէս զի այս ամեն շարժումները վայելուէ կատարէր , հարկ էր որ մարդկային մարմինը այնչափ յանհունա նուրբ մասունքներէ բաղկանար եւ միանգամայն այս ամէն մասերն այնպէս իրար միացած լինէին , որով կարող ըլլային իւրաքանչիւրն՝ ի բարին ամբողջ մարմնոյն ի միասին գործել :

Միով բանիւ , հողին պէտք էր որ գործարանաւոր մարմին մ'ունենար . Աստուած ալ այնպիսի մարմին մը շնորհած է իրեն՝ որ կրնայ թէ՛ ամենամեծ եւ թէ՛ ամենափոքր եւ ամենաճարտար շարժումներ կատարել :

Այսպէս բովանդակ մարդ էակը խորհուած նպատակաւ զարմանալի արուեստիւ ստեղծուած է : Եւ ինչպէս ստեղծողին իմաստութիւնը բովանդակ էութեան ամբողջութեան մէջ կը փայլի , նոյնպէս կը փայլի նաեւ երկաքանչիւր մասանց մէջ :

Տեսանք՝ որ մեր մարմինը առարկայից ազդեցութիւններն ընդունելու եւ անոնց համեմատ շարժումներ կատարելու յարմարաւոր շատ

մը գործարաններէ բաղկացած ըլլալ պէտք էր ձշգիւ ալ այսպէս եղած է : Մարդկային մարմնոյն ամէն մասերը սքանչելի արուեստիւ հոգացուած են , մարմնն ամէն մէկ առարկայի ազդեցութիւնն անմլաս կրնդունի , այնպիսի գործարաններ ունի՝ որով իրեն չարիք եւ խաթարմունք պատճառողներէն կը խուսէ , եւ նոյն իսկ փնտասկար մարմինք նորա վրայ իրենցմէ խորշուլու առիթն ալ կուտան : Չափազանց նուրբ են մասերը եւ անտեսանելի իսկ , բայց դորաւոր եւ պինդ են , յողուածները որչափ դիւրաթիւք , այնչափ ալ հաստատուն են . նա ինքն՝ որ արտաքին առարկայից ամենադոյզն շարժումները կ'զգայ , իւր սրտին բախիւնը չիմանար անգամ : Ծնչերակներն անընդհատ կը գործեն , արիւնը շրջան կ'առնու , կենսական զօրութիւնները կը հոսին , իւրաքանչիւր մասունքներ իրենց յատուկ սնունդը կ'առնուն մինչեւ քնոյ մէջ , եւ առանց խորհուրդնիս ցրտելու եւ դոյզն զգացումն արթնցնելու : Ձի Աստուած , արարիչն ամենայնի , այս աստիճան մեծամեծ շարժմանց մէջ կանոն , չափ , նրբութիւն եւ փափկութիւն դրած է :

Արդ՝ կրնամք վստահութեամբ ըսել թէ ամենէն աւելի կատարեալ եւ ստոյգ չափակցութիւն միայն գործարանաւոր մարմնոց մէջ կը դանուի :

Այս ամեն մասանց վայելուչ կարգաւորութիւնը եւ սահմանեալ պաշտամունքներ՝ կատարելու նկատմամբ սոցա յարմարութիւնը , ինչպէս են մարմնոյ խողովակներուն մէջ եղած թաղանթաց յօրինուածութիւնը , սրտին եւ շնչերակաց

բախիւնը , ուղեղին մասանց նրբութիւնը եւ իւր զանազան շարժումներն , արեան եւ կենսական զօրութեանց բաշխումը , շնչառութեան ազդի ազդի արդիւնքներն՝ որք մեր մարմնոյն մէջ մեծ պաշտօն ունին , այս ամէնը կ'ըսեմ , գեղեցիկ անտեսութեան կամ տեսչութեան գործ են , եւ եթէ կը ներուի այս բառը գործածել , այնպիսի սքանչելի մեքենայ մ'է՝ որուն վրայ կարելի չէ հայլ առանց հիանալու , եւ սորա կանոնները հաստատող իմաստութեան վրայ դարմանալու :

Մարմնոյն մէջ ամէն տեսակի գործք կամ մեքենայ կը գտնուի : Ար եւ է հեղուկ մը ծծելու համար շրթունքը խողովակի եւ լեղուն ալ ջրահանի միջին ձողի տեղ կը ծառայեն . թոքին կցուած է շնչափողը սրնդի նման , որ քիչ կամ շատ բացուելով՝ օդին այլայլութիւն կ'ուտայ , եւ զանազան ձայներ յառաջ կը բերէ : Կեղուն կտնդոց մ'է՝ որ ակռայներուն եւ քմաց բախուելով քաղցր ձայներ կը կաղմէ : Աչքն ունի իւր հեղուկն ու սառնակերպը , ճառագայթից բեկբեկումներն աւելի ճարտարութեամբ , կ'ուզան աչաց քան ամենողորկ ապակիներուն . ունի նաեւ բեր՝ որք կ'ընդլայնին եւ կը սեղմուին , իւր գունդը տեսութեան առանցքին համեմատ կերկարի եւ կը փափկանայ՝ դիտակի պէս հեռաւոր բաները դիտելու համար : Ականջն ունի իւր թմբուկը՝ որուն մէջի կակուղ եւ պրկկեալ մորթը 'ի խուն ինչ հողմոյ տարուբերող մուրճին շարժմամբ կը հնչէ . ականջն նաեւ կարծր ոսկորի մը մէջ այնպիսի խոռոչներ ունի , որոնք ձայներ հնչեցնելու կը ծառայեն ճիշդ այն կերպով՝ ինչպէս որ քարայրներուն եւ ար-

ձաղանդաց մէջ կը հնչէ : Վարմնոյ խողովակներուն մէջ՝ ամէն կողմ տարածուած խոռոչներ կամ պարուտակներ կան, ուկորներն ու զընդերք ճախարակներ ու լծակներ ունին . մարմնոյ մէջ հաւասարակշռութիւն պահող եւ կենդանական զօրութիւնները բաղմացնող չափակցութիւններն այնպիսի ուղղութիւն ունին մամոյն մէջ՝ ուր ամէն ինչ կատարեալ է : Բոլոր մեքենայները պարզ են, որոյ շարժումն այնչափ դիւրին եւ կազմութիւնն ալ այնչափ նուրբ է՝ որոյ հետ աշխարհի վրայ տեսնուած սուաջին կարգի մեքենայները բաղդատել անգամ կարելի չէ :

Մասունքներն 'ի մօտուտ նկատելով պիտի տեսնենք ամէն տեսակ անկուած, որուն հաւասար գեղեցիկ հիւօք եւ ճշդապէս իրար պրկած բան չեն կրնար դասել :

Աշխարհի վրայ չկայ քանդակագործի մը ճախարակ եւ վրձին՝ որ բնութեան չափ նուրբ դժէ եւ դարձունէ :

Հեղուկներն՝ իրենց խոռոչներ ու բաժանումը, արագութիւնը, մարտողութիւնը, խոտրումը եւ այլն, այնպիսի ճարտարութեամբ կրնան ընել՝ որոյ նկատմամբ ամենաճարտար կամօնրբաւոր բնալուծութիւնն բացարձակ ! տրիստութիւն է :

Տես, ուրեմն, թէ մարմնոյն մէջ դասուած բաներուն իւրաքանչիւրն ինչ նպատակաւ ըստեղծուած է, ինչ բանի համար է սիրտը, ինչու համար է ուղեղը, կենսական զօրութիւնը, մաղձ, արիւն եւ այլ ամէն հեղուկները : Արիւնը կենդանին սնուցանելու համար եղած է . ըս-

տամոքսը եւ սնոր խաղճմունքները վազած ջրերը մարսողութեան ձեռք արեան կազմութիւնը կը պատրաստեն, չնչերակներն ու երակներն այնպիսի եղանակաւ մը շինուած են՝ որ կրնան արիւնը իրենց մէջ բովանդակել, ամեն ուրեք տանել եւ շարունակ շրջեցունել . սիրտը այս շրջանին ցնցումն կուտայ . լեզու եւ շրթութունք իրենց սքանչելի շարժունութեամբ բլբլբաւոր աստիճանաւ ձայներ կը կազմեն . բերանը կերակուրները դէպ 'ի ստամոքսը փոխադրելու համար խիստ վաշիւուչ տեղ դետեղուած է, ատամունք կերակուրները մանրելու եւ դէպ 'ի որովայն մանելու պայմանին փոխելու նպատակաւ դրուած են բերնին մէջ, վրան հօսող ջրերը կերակուրներն կակղելու յատկութիւնն ունին, եւ որոշեալ ժամուն սոյն գործողութիւնը կատարելու համար հոն կուգան . գործարաններն եւ անոնց դիրքը հոգալու համար է՝ որ մեր բերանոյն այնպիսի ձեւ մը տրուած է՝ որով մէջը զըտնուած ամէն բան սնունդ առնելու եւ խօսելու կը ծառայէ . ով որ այս յարմարութիւնները կ'ուրանայ, աւելի դիւրաւ կուրանայ ուրեմն՝ թէ այս ինչ չէնքը բնակութեան համար շինուած չէ, կամ անոր ներս դուրս շինուած դասակները կենաց անձնդիւրութեան եւ կարեւոր պաշտօնները դիւրացնելու համար շինուած չեն . համառօտ ըսել, այսպիսին անմիտ մէկն պէտք է ըլլայ՝ որոյ հետ խօսիլ անգամ արժան չէ :

Թերեւս ըսուի՝ թէ մարդկային մարմինը ճարտարապետ չ'ունի, ճարտարապետն աչօք չտեսնուելուն համար, եւ թէ կարգաւորութեան մէջ այդքան պատճառներ եւ նպատակներ կե-

նալը միայն բաւական չէ իմանալու՝ թէ մարդուս մարմինը առանց պատճառի եւ առանց խորհրդոյ ստեղծուած չէ :

Դատյայանի կրտսնեմք՝ թէ մարդուս կազմակերպութեան մէջ քանի մեծ եւ խոր արուեստ կայ :

Գիտունք եւ տգէտք մարդկային մարմինը տեսած ժամանակնին հաւասարապէս զարմանքի կը բռնուին՝ միայն թէ ապուշ չ'ըլլան :

Ով որ մարմինը անձամբ զիտողութեան առնու՝ խիստ տկար եւ անարգ կը գտնէ իր զիտողութեան քով ուրիշներուն ըսածը . եւ սոսկ ակնարկ մը նետել իւր մարմնոյ վրայ՝ աւելի բան կը սորվեցնէ՝ մարդուս՝ քան ընդարձակագոյն ճառեր եւ գրքեր :

Բաւական ժամանակ է՝ որ մարդիկ հետաքրքրաբար մարդկային մարմինը կը դիտեն եւ անոր վրայ հմտութիւններ կ'ստանան . եւ թէպէտ այսչափ իմացած են՝ թէ մեր մարմնոյն մէջ ամէն բան պատճառ ունի , բայց տակաւին անոր խորը չեն կրցած թափանցել : Ո՛րչափ հետազօտութիւններ ընէ մարդ, այնչափ ալ աւելի նորանոր բաներ կը գտնէ եւ քան զառաջինս այնչափ աւելի գեղեցիկ բաներ՝ վրանին զարմանալու . եւ թէ եւ մինչեւ հիմայ գտնուածներուն թիւը խիստ չափ կը հասնի , սակայն այս ամէնը զրեւ թէ ոչնչի հաւասար են բաղդատմամբ անոնց՝ զորս դեռ որոնելու եւ գտնելու վրայ ենք :

Օրինակի համար, երբ տեսնեմք զնդերներն՝ որք որչափ զօրաւոր նոյնչափ ալ կակուղ են , եւ ՚ի միասին գործելու եւ մէկզմէկ չը խափանելու համար անանկ պինդ կապակցութիւն ունին եւ այնչափ դոյզն հեռաւորութիւն ունին իրարմէ ,

երբ տեսնեմք , կ'ըսեմ , մեր մարմնոյն այն մանրաթիւններն՝ որք իրենց շարժումները դիւրաւ կատարելու համար՝ անանկ ճարտարութեամբ եւ արուեստիւ հիւսուած եւ գալարուած են եւ միանգամայն այնպէս պրկեալ եւ պատշաճապէս ղետեղեալ եւ պէտք եղած տեղերն այնպիսի վայելչութեամբ ազուցեալ՝ որուն վրայ անհնար է չ'ապշիլ եւ այսպիսի մեծ ու գեղեցիկ տեսարանէ մը հեռանալ . եթէ ընդհակառակն չըզարմանանք՝ այսպիսի մեծ եւ սքանչելի գործ մը ինքնին կը խօսի զինքը չինող ճարտար հեղինակին վրայ : Եւ սակայն դեռ այս ամէնը ոչինչ է , քանի որ չենք տեսներ՝ թէ կենսական զօրութիւնք ուստի ՚ի ներքս կ'սպրդին , եւ ինչպէս յետս կը քաշուին , ինչպէս կը թուլանան , ինչ կերպով ուղեղը այս զօրութիւնները կը կազմէ եւ արագութեամբ պէտք եղած տեղերը կը ղրկէ : Ասոնք այնպիսի բաներ են՝ որոց գոյ ըլլալը զխտեմք , բայց իրենց գաղտնի պատճառը կամ վարիչը անծանօթ է :

Եւ հետաքրքիր անդամադննութեամբ կատարուած զիտողութեանց մէջ եթէ պատահած է երբեմն՝ որ սոյն ուսման պարապօրները այնպիսի բաղձանք ունեցեր են՝ որ դժուարութեանէ խուսելով իրենն ուրիշ ձեւակերպութիւն մ'ունենալը ուղեր են , սակայն այս փափաքն ալ ուրիշ բանէ յառաջ եկած չէ՝ միայն ամէն բան տեսնել չկարելնէն :

Եւ ցայսօր ոչ ոք կրցած է ըսել՝ թէ աւելի լաւ եւ վայելուչ էր՝ որ այս ինչ ոսկորը սակերպ ձեւն ունենար, որ չունի , կամ այն ինչ տեղը դրուած՝ որ աւելի յարմար ըլլար կամ

ուրիշ կողմ երկնցած լինէր՝ ոչ ոք կրցած է
 գնդերաց՝ որ ոսկորները կը պահեն, աւելի
 յարմար դիրք մը մտածել. վերջապէս չէ եղած
 մարդ մը՝ որ մարմնոյն զանդուածին մինչեւ ա-
 մենաջնչին մասերէն մեոյն համար ուղած ըլլայ՝
 որ այս ինչ մասը աւելի գեղեցիկ ըլլալու հա-
 մար այս կամ այն տեսակ կազմ կամ ձեւ ու-
 նենալու էր : ք

Ուրեմն այսպիսի գեղեցիկ մեքենայի մը հա-
 մար եթէ կը մնայ բաղձալի բան մը՝ այն ալ, սն-
 տարակոյս, այս պիտի ըլլայ՝ որ առանց խան-
 դարման եւ առանց վերջաւորութեան շարու-
 նակ տեւէր : Սակայն ուշիմ մարդը կրնայ դա-
 տել թէ ստեղծողը կրնար նաեւ միշտ հաստա-
 տուն պահել եւ կամ անմահ ընել իւր գործը ,
 եւ թէ մարդուս անմահութիւն պարգեւելու
 տէրն եւ իշխանը կուզէ որ գիտնամք թէ կըր-
 նայ անմահութիւն տալ մեզ իբրեւ շնորհք եւ
 վերստին ետ առնուլ իբրեւ չպատիժ, եւ իբ-
 րեւ վարձաբարութիւն վերստին շնորհել :
 Կրօնքը՝ որ այս տեղ վրայ կը հասնի, մեզ կ'ուսու-
 ցանէ՝ թէ յիշուի ճիշդ այս մտօք կը վարուի
 Աստուած, եւ կը պատուիրէ միանգամայն իրեն
 փառք տալ եւ երկնչիլ :

Մեզ խոստացուած անմահութեան ակն ունե-
 լով՝ ուրախութեամբ նայելու ենք այս սկզբ-
 բանց վրայ՝ որ զմեզ ընդ երկար կը պահեն ,
 եւ գիտնամք թէ մարմինը բաղկացուցանող
 այնքան մասունքները՝ յորս կոյր են խլրտու-
 մները՝ եւ ոչ մէկը կրնար պահուիլ, եթէ ի-
 բենց յօրինին եւ վարիչը իմաստուն պատճառ
 չ'ըլար :

Այս մասանց իրարու մատուցած փոփոխա-
 կի օգնականութիւնը, ինչպէս, երբ, օրի-
 նակի համար, ձեռքերնիս առանց մեր գիտնա-
 լուն գլուխնուս վրայ կ'իյնայ՝ որ պահպանէ հա-
 րուածէն, մարմնոյն մէկ կողմը հաւասարակը-
 ութեան մէջ կը բռնէ միւսը՝ որ չիյնայ, եւ
 մարմինը բնականաբար ինքզինքը կանգուն պա-
 հելու յարմար դիրքի մը մէջ կը գտնուի. այս
 եւ ուրիշ ասոնց նման շատ մը գործեր՝ որք
 մեր մարմինը պահպանելու համար են եւ առանց
 մեր անոր վրայ մտածելուն կը կատարուին, կը
 ցուցնեն՝ թէ գերագոյն բան մը, Աստուած, կայ՝
 որ կ'առաջնորդէ եւ կը վարէ :

Նոյն բանը կ'երեւի նաեւ այն սաստիկ զօ-
 րութեանց մէջ՝ որք սովորաբար տեղի կունե-
 նան մեծամեծ կրից մէջ :

Տեսանք թէ բարկութիւն եւ երկիւղ ինչ
 ազդեցութիւն կրնեն մարդուս վրայ, ինչպէս
 կը փոխեն, թէ ինչպէս բարկութիւնը կը քա-
 ջալերէ եւ կը ղինուորէ ընդդէմ շարժառթին,
 եւ թէ ինչպէս երկիւղը մարմիննիս փախչելու
 յարմար վիճակի կը բերէ. անշուշտ ընտրեան,
 Աստուծոյ, մեծ գաղտնիքն է այս՝ որ մարմնոյ
 զօրութիւնները սովորական պիտոյից կը յար-
 մարցունէ եւ արտաքոյ կարգի ստիպողական
 պէտքերու մէջ ալ զօրութիւնները կը կրկնա-
 պատկէ, եւ ուղեղը, սիրան ու արիւնը այնպէս
 մը կը ցնցէ՝ որ կենսական զօրութիւնները՝ յորոց
 կախումն ունին մեր մարմնոյն միւս բոլոր
 գործողութիւնները՝ մեծամեծ վտանգներու մէջ
 աւելի առատ եւ սաստիկ ըլլան, եւ մի եւ նոյն
 ժամանակ առանց մեր գիտութեան մեր մար-

մնոյն այն մտածանց մէջ կ'երթան, որոց պաշտօնըն է հզօրապէս պաշտպանել կամ արագութեամբ խուսափել . այս ալ անսահման իմաստութեան գործ է :

Սովորական զօրութեանց այս կրկնապատկութիւնը կը ցուցնէ՝ թէ կրքերն ըստ ինքեան կամ ըստ մտաց հաստատողին մեղի օգնելու համար եղած են . եւ եթէ այժմ, ինչպէս շատ անգամ կը տեսնենք, կիրքերը մեղ օգնելու տեղ կը վնասեն, պատճառն այն է՝ որ վերջէն անկարգութիւն եկած է կրից վրայ :

Եւ արդարեւ կը տեսնենք անասնոց վրայ՝ որ կրքերը նոցա մարմնոց մէջ այնպիսի պաշտօն կը վարեն, որ զիրենք չնեղելէ զատ իրենց վիճակին պահանջած բաներուն մէջ կ'օգնեն ալ . (մէկ դի կառնում քանի մը բացառութիւններ՝ որոց յատուկ պատճառը կայ .) նոյն բանը պիտի ըլլար մարդուս համար ալ՝ եթէ գործած յանցանօք ինկած չ'ըլլար սկզբնաբար :

Եթէ Աստուած մարմնոյն պահպանութեան համար այնչափ միջոցներ տալէն վերջը դարձեալ հարկ կայ որ ամեն մարդ մեռնի, տիեզերք ասով բան մը չ'կորսնցունէր իրմէ . որովհետեւ նոյն այն սկզբանց մէջ՝ որք այնչափ տարիներ զմարդ կը պահպանեն՝ կը գտնուի նաեւ այնպիսի սկիզբ՝ որով ուրիշներ ալ յանհունս յառաջ կուգան : Մարդս սնուցանողը նաեւ արգասաւոր կ'ընէ, եւ տեսակը կ'անմահացնէ . մէկ մարդը, մէկ տունկը, մէկ անասունը բոլոր աշխարհ լեցնելու բաւական է : Աստուծոյ խորհուրդը կամ նպատակը այն աստիճան կարգաւոր է՝ որ սերնդոց կամ տեսակաց

անհունութիւնը մէկ կանոնի շարունակեալ շարժամբ եւ առաջին խլրտմամբ բնութեան յաւիտեան կը պահէ, որ ճարտարապետ է, որ իր շինած քակտելի շէնքին մէջ այնպիսի սկզբունք կը դնէ՝ որ նոյն շինուածը կրնայ ինքիւրեն իւր աւերակաց վրայ միշտ նորոգուիլ եւ կանգնիլ : Եւ այն՝ որ այսպէս կարող է իւր գործն ընդհանրապէս անմահ պահել, միթէ չ'ըկրնար, եթէ ուղէ, իւր մէկ գործը մասնաւորապէս անմահացունել :

Եթէ բոյս մը քննութեան առնենք՝ պիտի տեսնենք որ մէջը հատիկ մը կը գտնուի՝ որմէն ուրիշ տունկ յառաջ կ'ուգայ, կ'ստիպուինք խոստովանելու՝ թէ այս հատին մէջ կարգաւորեալ ծածուկ սկզբունք մը կայ . ապա թէ ոչ՝ անկարելի էր որ սոյն հատին կանոնաւոր եղանակաւ ոստեր, տերեւներ, ծաղիկներ եւ սրտուղներ յերեւան գան ու զարգանան . անմիջապէս պիտի տեսնեմք՝ թէ խոր իմաստութիւն մը կայ՝ որ այնչափ մեծ տունկը այն փոքրը հատին մէջ կրցեր է բովանդակել եւ անկէց կանոնաւորապէս զայն բուսցունել :

Սակայն մեր մարմնոյն կազմակերպութիւնը ասկէց աւելի զարմանալի է . որովհետեւ անհամեմատ ուղղութիւն մը կայ մէջը, եւ բոլոր մասունքները զարմանալի յարաբերութիւններ ունին իրարու հետ :

Արդարեւ ամենամեծ գործ մը՝ որոյ չափազանց փոքրկութեան մէջ գոգցես ամէն բան ամփոփեալ է, իւր առաջին սկզբանց մէջ նկատելուն պէս սքանչելի բան չկայ :

Կը զարմանամք, եւ իրաւունք է զարմանա-

լը, կաղապարի մը դեղեցկութեան եւ ճարտարակ ձեւոյն վրայ, յորում չոր եւ է նիւթ թափու-
 ւելուն պէս ընականի նման պատկեր կամ ու-
 րիչ կանոնաւոր ձեւ մը կը կազմուի : Սակայն
 եւ այս նմանութիւնն ալ պիտակ է մեր մարմի-
 նը կազմակերպող սկզբնայն նկատմամբ, որոց մի-
 ջոցաւ այսքան գեղեցիկ շինուածք մը՝ որ 'ի
 սկզբան փոքր է, ամենադիւրին եղանակա-
 ինքզինք կը պահպանէ, իւր անկման մէջ կը
 նորոգի եւ անխփփօս օրէնքով կամ կանոնով կը
 յարատեւէ :

Տունկերն ու կենդանիք՝ ճիշդ մի եւ նոյն
 կերպով առանց իրենց դիտնալուն յարատեւե-
 լով՝ կը ցուցնեն թէ մէկ անպամով անխփփօս
 գիտաւորութեան եւ յաւիտենական գաղափարի
 վրայ շինուած եւ մնացած են :

Նոյնպէս մեր մարմինն ալ իւր կազմա-
 կերպութեան եւ պահպանողական վիճակ մը
 ունենալուն մէջ կը ցուցնէ՝ թէ յայտնի ճարտար-
 մըտութեամբ եւ խորհրդով շինուած է : Ամէն
 բան անոր մէջ պատճառ, վախճան, կարգ
 եւ կանոն ունի, եւ հետեւաբար ամենայն ինչ
 արուեստով եղած է :

Բայց ինչ բանի կ'ուզար հոգւոյն այս աստի-
 ճան իմաստութեամբ կազմակերպել մարմին ու-
 նենալը, եթէ ինք՝ որ զայն կառավարելու պաշտօն
 պիտի ունենայ, չըկարէր անոր պէտքերն իմանար
 Բայց այսպէս չէ, հոգին սքանչելապէս մարմնոյ
 պիտոյքը կ'իմանայ զգացման ձեռք՝ որով կը յաջո-
 զի ընտրել թէ՛ որոնք են այն առարկայները՝ որք
 կրնան իրեն միացեալ մարմինը բարեկարգութեան
 մէջ պահել, եւ որոնք են՝ որ կրնան մնասել :

Ոչ այսչափ, այլ եւ հարկ էր որ մարդկա-
 յին հոգին զօրաւոր միջոցով մը ստիպուէր մար-
 մնոյն խնամ տանելու . այս զօրաւոր միջոցն է
 հեշտութիւն եւ ցաւ, որք մեր մարմնոյն պիտո-
 յից եւ բարեկարգութիւնը պահելու համար
 հոգւոյն մէջ արթննալով կ'ստիպեն զինքը որ
 մարմնոյն պէտքերն 'ի ժամանակի հողայ :

Սակայն արդէն իսկ քններ եւ ցուցեր ենք
 թէ ինչ ուղիղ համեմատութիւն կամ չափակ-
 ցութիւն ունին ջիղք իրենց առժամանակեաց
 ցնցման եւ զգացմանց մէջ . ուղեղն իւր վրայ
 կատարուած հաստատուն ազդեցութեանց եւ
 տեւական ու փոփոխական երեւակայութեանց
 մէջ . վերջապէս առարկայէ հեռացնելու կամ
 անոր մերձեցնելու համար մարմինը շարժող
 դաղտնի տրամադրութիւնը այն բաղձանաց կամ
 ցանկութեանց հետ՝ որոց կը փարի հոգին կամ կը
 խորշի խորհրդածութեամբ :

Ասով սքանչելապէս կ'իմանամք այն կարող՝
 զոր զգացողութիւն, երեւակայութիւն եւ կիրք
 մէջերնին կը պահեն՝ աւելի իրենց քան իրենց
 ծագման պատճառ եղող առարկայից նկատմամբ :
 Եւ եթէ այսքան ուղիղ համեմատութեան մը
 գեղեցկութիւնը առաւելապէս ցուցնող բան մը
 կայ՝ այն ալ սա է որ մարմնոյն երեք տրամա-
 դրութեանց մէջ գտնուած կարող՝ կը գտնուի
 նաեւ հոգւոյն երեւակ տրամադրութեանց մէջ :
 Սա ըսելիւ զեմ՝ թէ ինչպէս որ մարդկային մար-
 մնոյ՝ կիրք ելլելու ատեն դէպ 'ի յառաջ կամ
 յետս կոյս մղուելու յօժարութիւնը կամ կար-
 գաւորութիւնը ուղեղին վրայ եղած ազդեցու-
 թեանն եւ ուղեղին ազդեցութիւնն ալ ջղաց

ցնցումէն կախումն ունին, այսպէս ալ բաղձանք եւ ցանկութիւն բնականաբար երեւակայութեանէ կախեալ են, ինչպէս՝ որ երեւակայութիւնն ալ սկզբնաբար զգացմանէ կախեալ է :

Բայց դնենք թէ հոգին զգացմանց եւ կրից ձեռօք առարկայից զանազանութիւնը եւ մարմնոյն պիտոյքը կ'իմանայ . սակայն այս ազդեցութիւններն իրեն օգուտ մը չը պիտի կրնային մատակարարել՝ եթէ խելքը կամ իմաստասիրութեան գաղտնի սկզբունքը չըլլար, որով հոգին իրաց իրարու հետ ունեցած յարաբերութիւնները կը գիտնայ, եւ անոնց իրեն հաղորդած տեղեկութեանց վրայ դատումն կը կատարէ :

Սոյն այս իմաստասիրութեան սկզբունքով հոգին մարմնէն վեր կը սրանայ, իւր հայեցուածքը բնութեան միւս իրաց վրայ տարածելու եւ բնութիւնը կացուցանող մասանց շարքը կամ կարգը իմանալու :

Այս ճանաչմանց կցորդ պէտք էր ըլլալ գործարանները, զգացումները եւ նոյն իսկ այս ճանաչմունքները բանականութեան պահանջման համեմատ գործածելու կարող իշխան կամքը :

Եւ որպէս զի տիրող մասը կամ հոգին հրպատակողին կամ մարմնոյն վրայ հարկաւորապէս իշխէր, մարմնոյն անդամներն այս կամքէն կախումն ունենալու էին :

Արդ, ինչպէս կը տեսնեմք, ճիշդ այսպէս է : Մեր դնդերներն կը գործեն, անդամները շարժումն կ'ընեն, եւ մարմնոյն ամբողջ զանգուածը տեղէ տեղ կը փոխադրուի ճիշդ այն վայրկեանին՝ երբ գործելու կամք կ'ունենամք : Այս տիրապետութիւնը աստուածեղէն բացար-

ձակ կարողութեան պատկերն է, Աստուծոյ՝ որ բովանդակ տիեզերքը կամօք կը շարժէ եւ իրեն հաճոյ եղածները անոր մէջ կ'ընէ :

Դարձեալ Աստուած այնպէս կամեցած է՝ որ մարմնոյն շարժումները կամաց հպատակին . մինչեւ իսկ յակամայս գործուած շարժումներն ալ, որոց միջոցաւ կը կատարուի կերակրոց եւ կենսական ղօրութեանց բաշխումը, բնականաբար մարմինը աւելի եւս հպատակեցնելու կը ձգտին . որովհետեւ մարմինը այն ատեն աւելի կը հպատակի՝ երբոր առողջ ըլլայ, այսինքն, ներքին եւ բնական շարժումներն ըստ օրինաց կատարուին :

Այսպէս ներքին բնական եւ հարկաւոր շարժումները արտաքին կամաւորները գիւրացընելու կը ծառայեն :

Սակայն Աստուած՝ որ արտաքին շարժումները կամաց հնազանդեցուցած է, երկու նըշաններ ալ ձգած է՝ որ կամքին ուրիշ կարողութենէ մը կախեալ ըլլալը կը ցուցնեն :

Առաջին նշանն է՝ թէ կամաց արդիւնքը կամ գործը կ'արդիւրուի՝ երբ մարմնոյն անդամները անկարգ ըլլան, եւ չկրնան հնազանդիլ : Երկրորդ՝ թէ մարմինը կը շարժի առանց շարժող զսպանակները մեր գիտնալուն, եւ բազում այն է՝ առանց շարժմանց մէջ ընարողութիւնը ընելու, ինչպէս կը տեսնուի գլխաւորաբար խօսակցութեան մէջ :

Ուրեմն մարմինը մեզնէ դուրս եղող կարողութեան ձեռօք ստեղծուած եւ կամաց հրպատակ ըլլալու գործիք մ'է . ուստի որ ատեն որ սոյն մարմինը գործածենք թէ խօսակցու-

թեան , թէ շնչատութեան եւ թէ որ եւ է կերպ շարժում մ'ընելու համար , պէտք է միշտ մտաբերենք՝ թէ Աստուած ներկայ է մեր մէջ :

Սակայն հոգին իւր արարողին բարձրացնողը աւելի հոգւոյն իւր յատուկ ճանաչմունքներն եւ այն բարձր գործերն են՝ որոց էմացւածն անուն տուած ենք :

Ինչպէս արդէն ըսած ենք , իմացողութեան ատարկայն յաւիտենական ճշմարտութիւնք են :

Այն չափական կանոնները՝ որով ամէն բան կը բաղդատեմք , յաւիտենական եւ անիոխոխ են :

Գիտեմք ստուգիւ՝ թէ տիեզերաց մէջ ամէն բան իրարու առնչական են , մեծը փոքրին , հըզօրը տկարին . գիտենք եւս թէ ասոնք յաւիտենական ճշմարտութեան սկզբունքներ են :

Ուսողութեան եւ ուրիշ նման գիտութեանց մէջ ապացուցուած ամէն բան յաւիտենական եւ անիոխոխ է , որովհետեւ ապացուցութեան արդիւնքն է ցուցնել՝ թէ բան մը արդէն ապացուցուածէն ուրիշ կերպ ըլլալ կարելի չէ :

Ուստի ինծի ծանօթ իրաց յատկութիւններն ու բնութիւնը՝ որպիսիք են , եռանկիւն , քառանկիւն , շրջանակ եւ կամ այս ձեւերուն չափակցութիւններն իմանալու համար հարկ չըկայ գիտնալու՝ թէ բնութեան մէջ ասոնց նըման ձեւեր կան , եւ ապահով ալ եմ որ ասոնք մտաց մէջ նկարած չեմ բնաւ եւ ոչ իսկ կատարելապէս տեսած : Նոյնպէս ալ շարժման եւ անոր գծերուն բնութիւնը , անոր հետեւանքներն եւ համեմատութիւններն՝ որոց համեմատ շարժումը կ'առաւելու կամ կը նուազի ծա-

նրր եւ գետին ձգուած բաներուն մէջ , այս ամէնը իմանալու համար պէտք է ունիմ մտածելու՝ թէ աշխարհի մէջ շարժումն կայ : Այս իրաց գաղափարները միանդամ մտաց մէջ արթըննալէն վերջը՝ իրենք թէ կենան եւ թէ չըկենան՝ գիտեմք որ այսպէս պէտք է ըլլան , եւ թէ անհնար է որ ասոնք ուրիշ բնութիւն եւ կամ կերպարանք մ' առնուն :

Իսկ մեզի հետ աւելի յարաբերութիւն ունեցող իրաց գալով , յաւիտենական ճշմարտութեան սկզբանց միջոցաւ կ'իմանամ՝ թէ երբ մարդէն զատ ուրիշ էակ մը , մինչեւ իսկ ես չըկենամ եւ կամ երբ Աստուած անդամ բնաւ էակ մը ստեղծել որոշած չ'ըլլար , դարձեալ դատման կամ իմաստասիրութիւն ընելու ընդունակ մարդ էակին բուն եւ գլխաւոր պարտքը ըստ բանականութեան ապրել եւ իւր հեղինակը փնտռել պիտի ըլլայ , զի մի գուցէ չը փնտռելով բոլորովին մոռնայ ու չգիտնայ :

Այս ճշմարտութիւնք եւ ասոնցմէ ուղիղ իմաստասիրութեամբ մը հանուած ուրիշ ամէնքը յառաջքան դամենայն յաւիտենա կան , որ ժամանակ որ մարդկային իմացականութիւն եղած մը տածեմ՝ ասոնք ալ գիտնալ պիտի ենթադրեմ սակայն ոչ թէ ճանչնալովը ճշմարիտ եղած չ'պիտի ըլլան , եւ կամ ոչ եթէ ինք ճշմարիտ պիտի ընէ , որովհետեւ հեղինակը մեր ճանաչումը չէ , այլ մեր ճանաչմանց ենթակայքն են : Արդ այս ճշմարտութիւնները միշտ դոյ են ամէն դարու մէջ եւ ամէն տեղ , ուր որ իմացականութիւն կեցեր է : Եթէ ամէն կանոնով կամ օրէնքով եղած գործողութիւն , այսինքն , ինչ որ բնութեան

մէջ կը տեսնեմ, ոչնչանայ ըաց ինձմէ, այս օրէնքները դարձեալ իմ մտացս մէջ պիտի կենան, եւ թէ եւ ալ ոչնչանամ եւ անոնց զօրութիւնը ըմբռնող ոչ մէկ անհատ մ'ալ կենայ, սակայն դարձեալ ասոնք պիտի կենան:

Եթէ վնասուեմ հիմայ թէ ուր եւ յորում կը կայանան այդ անփոփոխ եւ յաւիտենական ճշմարտութիւնները, ստիպուած եմ էակ մը խոստովանել՝ որ կեդրոն ըլլայ ճշմարտութեան 'ի յաւիտեան եւ նոյն ինքն ճշմարտութիւն եւ ըացարձակ ճշմարտութիւն, ուրիշ է կը բաշխի ճշմարտութիւնը անկէ դուս եզոզներուն:

Յաւիտենական ճշմարտութիւնները թէ եւ ինձի անիմանալի են, բայց Նորա կան, եւ զանոնք տեսնելը ուրիշ բան չէ, այլ դառնալ այն անփոփոխելի ճշմարտութեան եւ 'ի Նորա լոյսը վայելել:

Այս յաւիտենական առարկայն Աստուած է, որ յաւիտենականապէս գոյ, ճշմարիտ եւ նոյն ինքն յաւիտենական ճշմարտութիւնն է:

Մեզի ծանօթ յաւիտենական ճշմարտութեանց մէջ ամենէն ստոյգն ու հաստատունն այս է՝ թէ կայ աշխարհի մէջ էակ մը՝ որ ինքնիրէն գոյ եւ հետեւաբար յաւիտենական եւ անփոփոխ է:

Եթէ կենայ վայրկեան մը՝ յորում եւ ոչ մի ինչ գոյ լինի, յաւիտենականապէս ինչ ոչ պիտի կենայ: Այս ատկն ոչինչը բոլորովին ճշմարտութիւն եւ ոչնչութիւնը մի միայն ճշմարիտ պիտի ըլլայ. բայց անհեղեղ եւ հակառակման բան:

Կայ ուրեմն մին՝ որ յառաջ է քան զամե-

նայն ժամանակս եւ յաւիտեանս, յորում բովանդակեալ են յաւիտենական ճշմարտութիւնք:

Ասոր համար է՝ որ այս էակին մէջ կը տեսնեմ զանոնք, ինձի հետ բոլոր մարդիկ ալ զանոնք յաւիտենական կը գտնեն, ամէնքս ալ զանոնք միշտ մի եւ նոյնը եւ յառաջ անդր քան զմեզ կը տեսնեմք. որովհետեւ գիտեմք՝ թէ մեք սկիզբ մ'ունեցած ենք, եւ գիտենք ալ որ այս ճշմարտութիւնները միշտ եւ հանապաղ կան:

Այսպէս մեզնէ գեր 'ի վերոյ լուսոյ մէջ կը գտնեմք, եւ սովաւ է՝ որ կը տեսնեմք՝ թէ չար թէ բարի կը գործեմք, այսինքն, թէ մեր գոյութեան էական սկզբանց համեմատ կը գործենք՝ թէ ոչ:

Հոն կը տեսնեմք ուրեմն միւս ամէն ճշմարտութեանց. հետ մեր բարուց անփոփոխ կանոնները, կը տեսնեմք՝ թէ կան բաներ՝ զորս ընելը անհրաժեշտ պարտք է, եւ թէ այն իրաց մէջ՝ որ բնականաբար անխտիր կերեւին, մարդու ճշմարիտ պարտքն է մարդկային ընկերութեան օգտին կամ բարւոյն համար գործել:

Արդ, բարի մարդը յաջողութեանց եւ երկրի մը տեսչութեան օրէնք կարգել քաղաքական օրինաց կը թողու, ինչպէս խօսելու եւ հագնելու կերպը սովորութեան. սակայն կը տեսնէ իւր մէջ անընտարբելի օրէնք մը՝ որ կըսէ իրեն. ոչ ումեք անիրաւել, եւ թէ աւելի լաւ է ուրիշէն անիրաւել քան ուրիշին անիրաւել:

Պետութեան անդամն եզոզ հպատակը՝ այս

անխորհուս օրինաց մէջ կը տեսնէ՝ թէ ամբողջը կառավարելու հոգն ստանձնող իշխանին հպատակել պէտք է, ապա թէ ոչ աշխարհի խաղաղութիւնը կը վրդովի: Իշխանն ալ այս օրինաց միջոցաւ կ'զգայ՝ թէ բարւոք չկրնար կառավարել իր հպատակները՝ եթէ իւր հաճոյից եւ կրից հետեւի՝ քան խելքին եւ ժողովրդեան բարոյն:

Մարդ էակը՝ որ սոյն ճշմարտութիւնները կը տեսնէ, ասոնցմով ինք զինք կը դատէ, եւ կը դատապարտէ՝ երբոր մոլորի, կամ աւելի ճիշդը, կ'զգայ թէ այս ճշմարտութիւնները զինքը կը դատեն: որովհետեւ ոչ թէ ասոնք մարդկային դատմանց տակ կ'իյնան, այլ մարդոց դատաստաններն ասոնց:

Եւ մարդ այն ատեն միայն բանի մը վրայ ուզիլ դատուն կրնայ կատարել, երբ իւր դատմանց բնական փոփոխականութիւնը զիտնալով՝ անոնց կանոն կը ներկայացնէ այս յաւիտենական ճշմարտութիւնները:

Սոքա, որ ամէն մտաց յայտնի են եւ որով ամէն միտք կը կառավարին, Աստուծոյ յատուկ բաներ են, կամ նոյն է եւս ըսել՝ թէ նոյն ինքն Աստուած են:

Որովհետեւ սոցա ամենուն հիմն ալ Վրբթէ մի ճշմարտութիւն միայն է: Երաւցնէ երբոր մը տածեմ, կը տեսնեմ թէ սոյն ճշմարտութիւնները կանոն բռնուած են: Մի եւ նոյն ճշմարտութիւնը՝ որ կը ցուցնէ ինձ՝ թէ շարժումները հաստատուն օրէնքներ ունին, նոյնը կը ցուցնէ նաեւ թէ իմ կամքս ալ իւր գործոց կանոն եւ օրէնք ունենալու է: Եւ այս երկուքը կը տես-

նեմ այն ընդհանուր ճշմարտութեան մէջ՝ որ ինձի կըսէ՝ թէ ամէն բան օրէնք, կարգ ունին մէջերնին: Կարգ ճշմարտութիւնը ըստ ինքեան մէկ է. ազէան է՝ որ ճշմարտութեանց թիւը կը շատցունէ, իմաստունը գիտէ թէ չմի միայն է:

Ճշմարտութիւնը հարկաւ իմանալի ըլլալու էր, որուն ստոյգ ապացոյցն մարդ իւր մէջ կը տեսնէ:

Վասն զի մարդս՝ թէ ինքիրմով ճշմարտութիւնը քննէ, եւ թէ չըջապատի էակները դիտելով, դարձեալ կը տեսնէ՝ որ աշխարհի մէջ ամէն բան հաստատուն օրինաց եւ ճշմարիտ օւ անփոփոխ կանոնաց կը հպատակին: Մարդ այս օրէնքները թէ ոչ լրապէս՝ գէթ ըստ մասնեայ կ'իմանայ, ան՝ որ ոչ ինք զինքը եւ ոչ իսկ տիեզերաց ամենազոյզն մէկ մասը ստեղծած է, եւ սակայն քաջ գիտէ՝ թէ եւ ոչ մի էակ պիտի ստեղծուէր՝ եթէ այն օրէնքները կատարելապէս իմացող մը չըլլար: կը տեսնէ նաեւ՝ թէ հարկաւ յաւիտենական իմաստութիւն մը կենալու է՝ որմէն ամէն օրէնք, կարգ եւ կանոնք նախնապէս կը բղխին: Որովհետեւ շատ այլանդակ եւ յիմարական բան է՝ որ ճշմարտութիւնք կարգ ունենան, իրերն ալ կարգ եւ կանոն եւ անոնց միութեան կամ աշխարհի վրայ տեսչութիւն մը գտնուի, բայց եւ այս կարգը, կանոնը եւ տեսչութիւնը բնամէկը կատարեալ չգիտնայ: Իսկ մարդս որ բան մը ստեղծած չէ բնաւ, այս ճշմարտութիւնը թէ ոչ լիովին՝ գէթ ստուգիւ ճանչնալով իմաստասիրէ՝ թէ կայ էակ մը՝ որ սոցն ճշմարտութիւ-

նը կատարելապէս կը ճանչնայ, որ եւ ամենայն իրաց արարիչն է :

Ուրեմն իմանալու համար թէ մեք բարձրագոյն սկիզբնէ կը ծագինք, ուրիշ բան ընելու հարկ չկայ, բայց միայն մարդուս գործոց վրայ խորհրդածել :

Երբոր մարդս կ'զգայ՝ թէ իւր հոգին կամ միտքը բան կ'իմանայ, կը հաստատէ, կը ժխտէ, թէ շատ բաներ կան՝ որոց վրայ ինք գիտութիւն չունի, թէ յաճախ մոլորութեան մէջ կ'իյնայ եւ թէ շատ անգամ ալ չ'խաբուելու համար ստիպուած է դատումը կախ թողուլ եւ տարակուսիլ, անմիջապէս ալ կզգայ՝ թէ դեղեցիկ սկզբունք մը կայ իւր մէջ, սակայն կը տեսնէ նաեւ՝ որ այս ինքն անկատար է, կայ բարձր եւ գերադոյն իմաստութիւն մը՝ որմէն ստեղծուած է :

Արդարեւ կատարեալն յառաջ է քան զանկատարն, եւ եթէ կայ անկատար՝ կայ ուրեմն եւ կատարեալ, ինչպէս թէ կայ նուազը՝ կայ աւելին, եթէ կայ չարը՝ կայ եւ բարին . այսպէս ալ բնական բան մ'է որ քանի որ անկատարը կայ՝ կատարեալն ալ կայ, որմէն նա՝ այսպէս ըսենք, ինկած է, եւ եթէ անկատար իմաստութիւնը, ինչպէս մերը՝ որ կը տարակուսի, կը մոռնայ, կը մոլորի, գոյութիւն ունի, ապա որչափ եւս առաւել գոյութիւն ունի այն կատարեալ իմաստութիւնը՝ որուն ամենափոքրը կայծն է մարդկայինը :

Եթէ աշխարհի մէջ մարդ միայն իմացական ըլլար՝ իւր անկատար իմացականութեամբն աւելի արժէք պիտի ունենար քան այն ամէնքը՝

որ բոլորովին անարգ եւ թանձրամիտ են, եւ ոչ ոք պիտի կրնար իմանալ թէ այս բովանդակ անիմաստներուն մէջ ուսկից կուգայ իմացական մասը . վասն զի՞ իմացականութիւնը անարգ եւ անմիտ բանէ չ'կրնար յառաջ գալ . եւ հարկ պիտի ըլլար նոյն ատեն որ մարդկային հոգին իւր անկատար իմացականութեամբն ինքնին ստեղծուած ըլլար, եւ հետեւաբար յաւիտեանական եւ անկախ յայմէ ամենայնէ . ամենէն ապուշն եւ յիմարն ալ չ'համարձակիր ասիկայ մտածել . ապա հարկ է որ մարդ իւրմէ գերազանց կատարեալ իմացականութիւն մը ճանչնայ՝ ուրից ամէն ուրիշներն ընդունին իմանալոյ կարողութիւնն ու կանոնը :

Ուրեմն մենք մեղէն եւ մեզ յատուկ եղած անկատարութեամբ գիտեմք՝ թէ կայ անսահման իմաստութիւն մը՝ որ երբէք չ'խաբուիր, բնաւ բանի մը վրայ տարակոյս չունի, ամէն բան գիտէ . որովհետեւ ճշմարտութիւնը լրիւ կ'լիմանայ, կամ աւելի՞ճիշդը, նոյն ինքն ճշմարտութիւնն է :

Այս իմաստութիւնը ինք իրեն կանոն է, այնպէս որ անհար է որ կարենայ սխալիլ, եւ իրեն կիցնայ ամէն բան կանոնաւորել :

Մի եւ նոյն պատճառաւ գիտեմք՝ թէ կայ գերադոյն բարութիւն մը՝ որ կարելի բան չէ՝ որ չար գործէ, մինչդեռ մեր անկատար կամքը թէ եւ բարի կը գործէ, բայց չար ալ կը գործէ :

Ասկէց պէտք է եզրակացունեմք՝ թէ Աստուծոյ կատարելութիւնը անսահման է, որովհետեւ ամէն բան ունի յինքեան . իւր կարողութիւնն ալ անսահման է, որովհետեւ կամքը

միայն բաւական է ամէն ուղածն ընելու :

Վասն որոյ աշխարհս ստեղծելու համար՝ բնաւ նախագոյ նիւթոյ պէտք չ'ունէր : Ինչպէս իւր իմաստութեան մէջ անոր ծրագիրն ու պատկերն ունէր , եւ բարութեան մէջ ալ անոր ծագումը կամ յառաջագայութիւնը , այսպէս ալ դուրս հանելու համար ուրիշ բան հարկ չը կար , բայց իւր ամենակարող կամքը միայն :

Թէպէտեւ այսքան մեծամեծ բաներ կ'ստեղծէ , սակայն անոնցմէ եւ ոչ մէկուն պէտք ունի ինք , եւ երջանիկ է ինքն՝ ունելով զամենայն ինչ յինքեան :

Նոյն իսկ երջանկութեան գաղափարն ալ Աստուծոյ կը տանի մեր միտքը . որովհետեւ քանի որ երջանկութեան գաղափարն ունինք , բայց ճշմարիտ երջանկութիւնը չենք տեսներ , հարկաւ կը հետեւցունեմք՝ թէ այս գաղափարը այլուստեք եկած է մեզ , եւ կ'ըսեմք՝ թէ ուրիշ տեղ մը ճշմարտապէս երջանիկ բնութիւն կայ , եւ այս բնութիւնը քանի որ երջանիկ է , բողձալու բան մը չունի բնաւ , այլ կատարեալ է : Արդ , այս երջանիկ , կատարեալ եւ ամեն բարութեամբ բնութիւնը ո՞չ ապաքէն նոյն ինքն Աստուած է :

Աստուծմէ աւելի կենդանի եւ գոյ բան չը կայ . քանզի միշտ կայ եւ կեայ յաւիտեանս , անհնար է որ չէ լինի այն՝ որ էութեան լրութիւնն է կամ թէ ըսեմ նոյն ինքն ՚ն է . ինչպէս ըսած է իրեն համար Մովսիսի հետ խօսած ժամանակ . եւ ե՞ս Աստուծո՞ւ Որ էն . Որ էն ուրեքսն զն . ու յեղ (1) :

(1) Եւբ Գ. 14 .

Ասանկ մեծ եւ կատարեալ էակի մը հետ բաղդատութեամբ մարդկային հոգին գրեթէ ոչընչի հաւասար է . եւ եթէ իւր մէջ մեծարանաց արժանի բան մը կայ , այն ալ զԱստուած ճանչնալու եւ սիրելու կարող ըլլալն է :

Այս կարողութեամբ կ'զդայ հոգին՝ թէ Աստուծոյ համար ծնած է : Որովհետեւ եթէ իմացականութեան առարկայն ճշմարտութիւնն է եւ սիրոյ առարկայն ալ բարին , ապա առաջին ճշմարիտը մեր բոլոր իմաստութեան եւ գերագոյն բարին մեր սիրոյն վրայ տիրելու իրաւունք ունի :

Սակայն ոչ ոք ճանաչէ զԱստուած , բայց այն միայն զոր Աստուած կը լուսաւորէ , եւ այն միայն կը սիրէ զԱստուած՝ որու որ Աստուած իւր սէրը ներշնչած է , որովհետեւ նմա միայն է տալ իւր արարածոյն ամէն բարիք , եւ հետեւաբար գերադանոյն ամենայն բարեաց որ է զԱստուած ճանչնալ եւ սիրել :

Արդ այսպէս այն որ իւր բանական ստեղծուածոյն գոյութիւն տուաւ՝ բարի ըլլալու շքնորնք ալ տուաւ , եւ ինչպէս կեանք տուաւ՝ բարեոք կեանք ալ տուաւ , այսինքն արդար , սուրբ եւ երջանիկ ըլլալու կեանքը :

Արդ , ահաւասիկ , արարչիս հետ ունեցած յարաբերութեանս մէջ նկատելով ինքզինքս , կ'սկսիմ իմ անձիս վրայ այնպիսի լաւ ծանօթութիւն ունենալ՝ զոր մինչեւ ցարդ ունեցած չէի : Մովսէս՝ մարդ ըստ պատկերի եւ ըստ նրմանութեան Աստուծոյ արարաւ համառօտ խօսքն ընելով՝ աւելի ազէկ կ'ուսուցանէ մարդկային բնութիւնը՝ քան փիլիսոփայից բո-

լոր գրուածներն ու ճառերը :

Ես իմացումն ունիմ . Աստուած ալ ունի . Աստուած գիտէ՝ թէ գոյ է ինք , ես ալ գիտեմ թէ գոյ է , գիտեմ ալ՝ թէ ես ալ գոյ եմ : Տես , թէ ինչպէս Աստուծոյ նման եմք : Սակայն քննել արժան է հոս թէ Աստուծոյ եւ մարդուն իմացումն ունենալն իրարմէ ինչ տարբերութիւն ունին :

Աստուած նոյն ինքն ճշմարտութիւն եւ նոյն ինքն իմացականութիւն է . ճշմարտութիւն անսահման , իմացականութիւն անսահման :

Արդ՝ ճշմարտութիւն եւ իմացականութիւն դարձաբար կատարելապէս կան յԱստուած , որովհետեւ յանսահման իմացականութեան ճշմարտութիւն բովանդակի լիապէս , անսահման ճշմարտութիւն հաւասար է անսահման իմացականութեան :

Ուստի ճշմարտութիւն եւ իմացականութեան ոչ են երկու , այլ մի միայն , եւ կայ իմացականութիւն մը , այն ինքն է Աստուած՝ որ ինքն իսկ ճշմարտութիւն ըլլալով՝ նա ինքն է իւր առարկայն :

Բայց ուրիշ իմացական էակաց համար այսպէս չէ : Որովհետեւ գիտեմ սա ճշմարտութիւնը՝ թէ Աստուած կայ , սակայն այս ճշմարտութիւնը իմ իմացականութիւնս չէ բնաւ . ուստի իմացականութիւն եւ առարկայ երկու են յիս ինքքն , իսկ յԱստուած միշտ մի , զի Աստուած ինք զինք եւ ամէն բան յինքեան կ'իմանայ , ինչու որ թէ իրեն եւ իրմէ դուրս գտնուած ամէն իրաց պատճառն ինքն է միայն :

Սակայն իմացական պատճառ մ'է այս որ

ամէն ինչ բանիւ եւ արուեստիւ կը գործէ՞ , եւ հետեւաբար ամէն նախնադոյն պատճառն ու գաղափարը ունի իւր մէջ կամ թէ ըսեմ պատճառն ու գաղափարն իսկ նոյն ինքն է :

Իսկ իրմէ դուրս ամէն բան իրենց այսնախնադոյն եւ յաւիտենական գաղափարին հետ ունեցած յարաբերութեամբ միայն ունին գոյութիւնն եւ ճշմարտութիւն : Որովհետեւ արուեստական գործոց կատարեալ գոյութիւնն ու ճշմարտութիւնը՝ ճարտարապետին գաղափարին հետ ունեցած համեմատութեան մէջ կը կայանայ :

Ճարտարապետ մը իւր մտաց մէջ պալատ կամ տաճար կը գծագրէ , նոյն պալատին կամ տաճարին ստուերագիրն թղթի վրայ նկարելէ յառաջ , ճարտարապետին այս ներքին գաղափարը կամ խորհուրդը նոյն տաճարին կամ պալատին ճիշդ ծրագիրը կամ կաղապարն է :

Ճարտարապետին շինել ուղած պալատը կամ տաճարը ճշմարիտ պալատ կամ տաճար կըլլան , եթէ կատարելապէս համապատասխանեն անոր բուն նպատակին կամ գաղափարին : Եթէ իւր խորհրդոյն համաձայն չիգայ՝ ճարտարապետն պիտի ըսէ , իմ մտացս մէջ նկարած գործս չէր . իսկ երբ իրը ճշգրտապէս իւր ծրագրին համեմատ կատարած գտնէ , այն ատեն պիտի ըսէ , ահա այս է իմ ճշմարիտ նպատակս , ահաւասիկ բուն այս էր շինել ուղածս :

Արդ Աստուծոյ ամէն արարած ճշմարիտ է , վասն զի ամէն ինչ կը համապատասխանէ այն յաւիտենական ճարտարապետի գաղափարին՝ որ կրնայ զամենայն ինչ իւր կամեցածին պէս

ընել :

Այս պատճառաւ Մովսէս Աստուծոյ ստեղծած աշխարհիս պատմութիւնը ըրած ժամանակ կ'ըսէ՝ թէ Աստուած իւր գործերն բարի՝ այսինքն իւր խորհրդոյն համաձայն գտաւ , եւ իւր յաւիտենական դադափարին համեմատ բարի ճշմարիտ եւ կատարեալ տեսաւ :

Ասկայն այսպիսի գեղեցկայարդար եւ ամէն իմացական էակ գոհ ընելու կարող գործ մ' ըստեղծող Աստուածը կամեցաւ որ իւր գործոց մէջ գտնուի նաեւ այնպիսի մէկն ալ՝ որ գիտնայ իւր արարիչը եւ անոր գործը :

Ուրեմն իմացական բնութիւններ ստեղծած է՝ որոց կարգէն եմ ես ալ , որովհետեւ կ'իմանամ թէ՛ ես , Աստուած եւ ուրիշ շատ մ'իրքեր գոյութիւն ունինք , գիտեմ դարձեալ թէ՛ ես եւ ուրիշ էակներ գոյ չը պիտի ըլլայինք՝ եթէ Աստուած կամեցած չ'ըլլար որ ըլլայինք :

Երբ իրերն իմանամ այնպէս ինչպէս որ են , այն ատեն իմ խորհուրդս անոնց համաձայն եղած կ'ըլլայ , որովհետեւ զանոնք բուն իրենց էութեան մէջ մտածած կ'ըլլամ՝ եւ այս իրերն իմ խորհրդոյս համաձայնած կ'ըլլան . զի ճիշդ այնպէս են , ինչպէս որ ես կը մտածեմ :

Ահա այս է մարդուս բնութիւնը . ամեն բանի յարմարիլ , այսինքն , ճշմարտութեան ազդեցութիւնն ընդունելու կարող ըլլալ , մէկ խօսքով , ճշմարտութիւնն իմանալ :

Ձայս յԱստուած կը գտնեմ , որովհետեւ նա ամէն բան կ'իմանայ եւ ամէն ինչ գիտէ : Իրերն ճիշդ այնպէս են՝ ինչպէս որ Աստուած կը տեսնէ , բայց ոչ եթէ ինձի պէս՝ որ լաւ մտածե-

լու համար՝ կը սարափմ խորհուրդներս ինձմէ դուրս եղող իրաց վրայ տանիլ :

Աստուած երբէք իւր խորհուրդը իրմէ դուրս եղած իրաց չ'յարմարցունէր , մանաւանդ ընդհակառակն զանոնք իրեն յաւիտենական խորհրդոց կը յարմարցունէ :

Վերջապէս ինքն իսկ է կանոն , դրսէն ճշմարտութեան տպաւորութիւն չ'ընդունիր բընաւ , նոյն ինքն ճշմարտութիւնն է եւ այնպիսի ճշմարտութիւն մը՝ որ յինքեան լիով իմանի :

Այսուիկ կը ճանչնամք թէ մարդս Աստուծոյ պատկերին համեմատ ստեղծուած է , բայց չէ թէ նորա կատարեալ պատկերն է , որովհետեւ այն ատեն իրեն պէս նոյն ինքն ճշմարտութիւն պիտի ըլլար , այլ սոսկ իւր պատկերին համեմատ ստեղծուած է , այսինքն կարող է ճշմարտութեան ազդեցութիւնն ընդունելը Արդ , քանի որ սոյն ազդեցութիւնը իրապէս կ'ընդունիմ եւ իմ կարողութեանս չափով ճշմարտութիւնը կը ճանչնամ , ինչ եղած կ'ըլլամ , ոչ ապաքէն Աստուծմէ իրականապէս լուսաւորուած նման արարած :

Ուսկից կրնայ դալ ինձ ճշմարտութեան ազդեցութիւնը , միթէ նոյն ինքն առարկայներէն : Արեգակն է որ 'ի ներքս յիս կը տպաւորուի ինձի ճանչցունելու համար թէ ինչ տեսակ մարմին մ' է , այն՝ որ իր անսահման մեծութեան հակառակ այսքան փոքր կ'երեւի ինձ : Այս անտիճան մեծ ու ընդարձակ ծաւալ մը ունեցող արեգակը իւր ճառագայթներն սքանչելապէս յաշխարհ սփռած ատեն Չղացս մէջ թեթեւ ցնցում մը յարուցանելէն եւ ուղեղիս մէջ դոյղն

նշան մը թողլէն զատ ուրիշ ինչ կ'ազդէ : Մի-
թէ չեմ գիտեր՝ թէ այն զգացումն՝ որ յետոյ
կը զարթնու յիս , բան մը չը գուրցեր ինձ ոչ
արեգական եւ ոչ իմ մարմնոյս գործարանաց
վրայ , եւ եթէ կ'իմանամ որ արեգակը այսքան
մեծութիւն ունի , թէ իր ճառագայթներն խիստ
զգալի են եւ 'ի քթթել ական անհուն հեռաւորու-
թիւն կը թափանձեն , այս ամեն ճշմարտութիւն-
ները ներքին լուսոյ , այսինքն , բանականութեանս
մէջ կը տեսնեմ , որոյ ձեռօք կրնամ զգայարա-
նաց , անոնց գործարանաց ներկայացեալ ա-
ռարկայից վրայ դատումն ընել . ճշմարտու-
թեան այս յատուկ գաղափարն ուստի կը ծագի
մտացս մէջ , ուսկից կուգայ իրեն այս անսխ-
միտ կանոններն՝ որք իմաստասիրութիւնը կուղ-
ղեն եւ այն տեսակ սովորութիւններ կը կաղ-
մեն , որոց միջոցաւ իմաստասիրութիւնը՝ ձեւոց
եւ շարժմանց ծածկեալ համեմատութիւնները
կամ չափակցութիւնները յերեւան կը բերէ : Միով
բանիւ , ուսկից կուգայ իրեն այս յաւիտենա-
կան ճշմարտութիւնները՝ որոց վրայ շատ մը գի-
տողութիւնները բրած եմք : Թղթերու վրայ խո-
շոր խոշոր գծուած եռանկիւնները , քառան-
կիւնները ու չրջանակներն են , որ մտացս մէջ
կը դրոշմեն մէջերնին եղած համեմատութիւն-
ներն ու չափակցութիւններն , կամ թէ կան
ձեւեր , որոց կատարեալ ուղղութիւնը սոյն ար-
դիւնքն արտադրեն : Այս չրջանակները կամ
եռանկիւններն՝ որ իրենց մէջ ուղղութիւն կամ
ճշգրտութիւն ունին , ես ուր տեսեր եմ . ես որ
գիտեմ՝ թէ բնաւ կատարելագոյն կանոնաւոր ձեւ
մը տեսած չունիմ , բայց ճշգրտութեամբ կ'իմա-

նամ կանոնաւորութիւնը : Կանց այնպիսի տեղ
մը , կամ այս աշխարհիս մէջ եւ կամ արտաքոյ
քան զայս աշխարհ՝ ուր սոյն օրինակ կատարեալ
կարգաւորութիւն մ' ունեցող եռանկիւններ ու
չրջանակներ գտնուին եւ ուստի սոյն կանոնա-
ւորութիւնը մտացս մէջ եկած լինի : Նոյնպէս
ալ բանէ մը ուրիշ բան հետեցուելու կանոնը
կամ սովորութիւնը կանց ուրիշ տեղ , ուստի ին-
ձի հաղորդուի նոցա անսխմիտ ճշմարտութիւնը .
Ուրեմն , ամենուրեք չափ , կանոն կամ հա-
մեմատութիւն եւ նոյն իսկ ճշմարտութիւն տա-
րածողը չէ՝ որ այս կանոնաւորութեան ստոյգ
գաղափարը մտացս մէջ դրոշմած է :

Բայց ինչ է գաղափարը . ինքն իսկ է , որ
'ի ճշմարտութեան իւրում դամենայն ինչ որ կա-
մի ինձ կ'իմացունէ , թէ իրմէն ինձի եկած մի
մասն սպաւորութիւն է , եւ կամ այս երկո՞ւքն է :

Եւ ինչ պիտի ըլլայ այս սպաւորումը . ինչ,
մոմի վրայ դրոշմած կնքոյն ձգած հետոց պէս
բան մը . այլանդակ եւ կոշտ երեւակայութիւն,
որով հողին նիւթական , իսկ մոմը իմացական
կը լինի :

Հարկ է ուրեմն հաւատալ՝ թէ Աստուծոյ
պատկերին համեմատ ստեղծուած եւ ճշմարտու-
թիւնը կամ որ նոյն է զԱստուած ճանչնալու
ընդունակ հողին իրականագոյն դէպ 'ի իր նա-
խատիպն , այսինքն , առ Աստուած կը դառնայ,
որով ճշմարտութիւնը իրեն այնչափ 'կ'երեւի՝ որ-
չափ որ արարիչն ուղէ ցուցնել . Որովհետեւ տէր
է Աստուած ըստ կամի ինքզինք մարդուս ցու-
ցընել , եւ մարդ այն ատեն երջանիկ պիտի ըլ-
լա՞յ՞ երբ Աստուած զինքը լրիւ անոր ցուցնէ :

Չարմանալի բան կ'ըլլայ, եթէ մարդ այս-
քան ճշմարտութեանց վրայ ծանօթութիւն ու-
նենայ՝ եւ միանգամայն չ'իմանայ՝ թէ ամեն ճշ-
մարտութիւն յԱստուած է եւ կամ նոյն ինքն
Աստուած է : Ասոր պատճառն ուրիշ բան չէ,
այլ զի այսպիսին իւր խաբէական կրքերէն ու
զգայարանքներէն պաշարեալ կը նմանի այն մար-
դուն՝ որ սենեակ մը քաշուելով՝ հոն իր դոր-
ձերուն կ'զբազի, լոյսը իւր պէտքին կը դոր-
ձածէ առանց անգամ մտածելու՝ թէ այն լոյսը
ուսկից կուգայ իրեն :

Վերջապէս ստոյգ է՝ թէ տիեզերաց մէջ
գտնուած ամեն իրաց եւ ամեն կարգի էակաց
նախնական պատճառն յԱստուած է, թէ Աս-
տուած սկզբնական ճշմարտութիւնն է, եւ թէ
ամեն բան ճշմարիտ է իւր յաւիտենական դա-
դափարին նայելով, թէ՛ երբոր ճշմարտութիւն
կը փնտռենք՝ զԱստուած փնտռած կ'ըլլանք եւ
ճշմարտութիւնը գտնելով՝ զԱստուած գտած եւ
իրեն նմանած կ'ըլլամք :

Ինչպէս տեսանք, հոգին՝ որ զճշմարտու-
թիւնը յԱստուած կը փնտռէ եւ անոր մէջ կը
գտնէ՝ ընդունելու համար՝ ինքզինքն առ Աստու-
ած կը դարձունէ : Ի՞նչ է ուրեմն Աստուծոյ
դառնալը, մի թէ հոգին՝ մարմնոյ պէս շարժումն
ուի, եւ ուրիշ տեղ մը՝ դրաւելու համար իւր
առջի տեղը կը թողնու : Սակայն ստուգիւ այսպի-
սի շարժումն իմանալու չը նմանիր բնաւ : Յա-
ռաջուց չ'իմացած բանը իմանալու սկսելը մէկ
տեղէն միւսը փոխադրուիլ ըսել չէ : Իբրեւ 'ի
մարմին չենք մերձենար առ Աստուած, որ միշտ
եւ ամենուրեք անտեսաբար ներկայ է : Մեր

հոգին հանապաղ զԱստուած իւր մէջ կը կրէ,
որովհետեւ անով միայն գոյ է : Բայց բան մը
տեսնելու համար լուսոյ ներկայ ըլլալը բաւա-
կան չէ միայն, պէտք է՝ նաեւ լուսոյ դառնալ
եւ աչքերնիս բանալ : Հոգին ալ իւր առ Աստու-
ած՝ դառնալոյ կերպն ունի, եւ հոգւոյ լոյսը
Աստուած է, որովհետեւ ճշմարտութիւն է, եւ
սոյն լուսոյ կամ ճշմարտութեան դառնալն ու-
րիշ բան չէ, բայց եթէ համառօտ զուրցելով,
զայն իմանալու կամքը :

Հոգին երբ այս կամքն ունենայ՝ այն ատեն
ուղիղ կը խորհի, ինչու որ իւր բոլոր խորհրդ-
ոց կանոնին կապուած կ'ըլլայ՝ որ ոչ այլ ինչ
է, թէ ոչ նոյն ինքն ճշմարտութիւնը :

Հոս է որ դարձեալ հոգւոյն՝ Աստուծոյ նը-
ման ըլլալը կերեւի : Որովհետեւ ճշմարտութիւնն
իմանալ ուղղ հոգին կը սիրէ՝ այն ճշմարտու-
թիւնը՝ զոր եւ Աստուած յաւիտենականապէս
կը սիրէ : որոյ արդիւնքը պիտի ըլլայ անխնջ
եռանդութեամբ փնտռել, եւ զինքը ճանչնալ-
նուս պէս անփոփոխ կերպով անոր կապուիլ,
եւ մեր բոլոր բաղձանաց վրայ թագաւորեցնել :

Սակայն ճշմարտութիւն սիրել անհնար է
առանց ըստ մասնէ ճանչնալու : Ասոր համար
Աստուած՝ որ իւր պատկերին համեմատ, այ-
սինքն է ըստ օրինակի իւրում ճշմարտութիւնը
իմանալու եւ սիրելու նպատակաւ ստեղծած է
զմեզ, սոյն ճշմարտութեան ընդհանրական դա-
դափարն տուած է մարդուս, որով դիւրութիւն
կուտայ մեզ նորա լիով ստացումը փնտռելու,
ուր այնչափ յառաջ կ'երթանք՝ որչափ որ ճշ-
մարտութեան սէրը մեր ներքը յստակ եւ վառ

կըլայ :

Ամէն իրի ճշմարտութիւնն եւ բարի մի եւ նոյն բան են : Որովհետեւ գերադոյն բարին է այն ճշմարտութիւնը՝ որ կատարելապէս իմանանալի է եւ սիրելի : Ուրեմն Աստուած խոսելով որ ինքնին միշտ եւ հանապաղ իմանալի է եւ սիրելի՝ անտարակոյտ գերադոյն բարին է . կատարեալ է եւ ամէն բան ինքեամբ յինքեան ունենալուն համար երջանիկ :

Արդ՝ Աստուած երջանիկ է եւ կատարեալ, որովհետեւ անսահմանաբար կ'իմանայ եւ կը սիրէ բոլոր առարկայներուն ամենէն ազնիւը, այսինքն, ինքզինք :

Այն միայն ինք իրեն երջանկութիւնը կըրնայ ըլլալ՝ որ ըստ ինքեան դոյ է : Մարդս՝ ըստ ինքեան բան մը չ'ըլլալով՝ ըստ ինքեան բան մ'ալ չունի, իր երջանկութիւնն ու կատարելութիւնն է ջանալ իրեն հեղինակը ճանչնալ եւ սիրել :

Վայ այն անպտուղ գիտութեան՝ որ երբէք զԱստուած սիրելու չը դառնար եւ այնպէս ինքզինք կըխարէ :

Ապա ուրեմն իմ կրթութիւնս, կեանքս, կատարելութիւնս եւ բոլոր երջանկութիւնս է արարիչս ճանչնալ եւ սիրել : Ասով գիտեմ որ թէ եւ Աստուծոյ հետ բաղդատելով գրեթէ ոչ ինչ եմ, սակայն եւ այնպէս իւր պատկերին համեմատ ստեղծուած եմ, որովհետեւ իմ կատարելութիւնս ու երջանկութիւնս իրեն պէս մի եւ նոյն առարկայի, այսինքն է Նւր մէջ կը գտնեմ, ու դործս ալ դործոյն նման է, զինքը կը ճանչնամ եւ կը սիրեմ :

Ուրեմն ի դուր է երեւակայել թէ հողին ինչպէս ստեղծուած է եւ նիւթական ձեւոյ մը տակ մտածել : Հողին մարմնոյ սր եւ է նմանութիւն չունի բնաւ, որովհետեւ այնպիսի Աստուած մը կը ճանչնայ եւ սիրէ որ բոլորովին պարզ հողի է, այլ միայն Աստուծոյ կընրմանի :

Նթէ վնասել եւ իմանալ ուզեմ թէ ինչ բան կայ յիս՝ որով Աստուծոյ վրայ ծանօթութիւն կ'ունենամ, բանականութիւնս անմիջապէս կը պատասխանէ՝ թէ ասիկա պարզապէս բանը կամ իմացականութիւնն է՝ որ ոչ տարածութիւն ունի եւ ոչ ժամանակի մէջ կըբովանդակի Այն ատեն երբ նիւթական պատկեր մը ներկայանայ մտացս առջեւ՝ իսկոյն դայն կը թողում եւ վեր կը բարձրանամ : Ասով կը տեսնեմ թէ այն լաւագոյն մասը կամ հողին՝ որ զԱստուած ճանչնալու համար ստեղծուած է՝ սրչափ դեր ՚ի վերոյ է եղեր քան զմարմինը :

Ասով կ'իմանամ դարձեալ՝ թէ հողին մարմնոյ հետ միացեալ ըլլալուն համար պէտք էր որ հրամանատար ըլլայ մարմնոյն, ինչպէս որ Աստուած ըրած է . եւ ես ինձէն իմ մէջս մարմնէն գերադոյն կարողութիւն մը կը շխտեմ՝ որ կրնայ մարմնս ճնշել միտ չ'դնելով ճնշումէն յառաջ եկած ցաւն ու բռնութիւնը :

Նթէ այս մարմինը զօրաւոր կերպով կըծանրանայ հողոյս վրայ, իւր պիտոյքերը դիւ կը նեղեն ու կը չարչարեն, եթէ հեշտութիւն եւ ցաւ դիւ կը գերեն ու կը ծանրանան վրաս, եթէ մարմնական գործարաններէ կախումն ունեցող զգայարանք մեծ շիւրութեամբ բանէն

աւելի կը զօրանան , վերջապէս , եթէ իմ հրամանատարութեանս եւ կառավարութեան տակ գտնուած մարմինս վրաս կը տիրէ , կրօնքս կ'ուսուցանէ եւ բանականութիւնս ալ կը հաստատէ՝ թէ այս թշուառ վիճակը մարդուս սլատուհաս է առ 'ի պատիժ իւր դորձած մեղաց եւ անհնազանդութեանս :

Սակայն սոյն թշուառութեան մէջ կը ծընիմ , ծննդեանս առաջին վայրկեաններուն անդէտ մանկութեանս բոլոր ընթացքին մէջն է՝ որ զգայարանք իրենց բռնապետութիւնը ձեռք կ'առնուն . զոր ապաժաման եւ տկար բանականութիւնը վրայ գալով արդէն հաստատուած կը գտնէ : Ամէն մարդ ալ ինձի պէս այս գերութեան կամ ծառայութեան մէջ կը ծնանի եւ ասիկայ նիւթ մը կ'ըլլայ մեզ հաւատալու թէ՛ ընդհանրապէս ամբողջ մարդկային սեռին մէջ ասպականութիւն կայ . ասիկայ արդէն հաւատքն ալ կ'աւանդէ :

Նոյն խնդրութիւնը տուած է մեզ այս զգացումը , չեմ գիտեր ինչ բան տպաւորուած է մարդուս սրտին մէջ՝ որ կը ձանչցունէ իրեն սա արդարութիւնը՝ թէ հայրերն իրենց զաւակներով կը պատժուին իբրեւ անոնց մի մասը :

Վասն որոյ բանաստեղծները տեսնելով որ Հոովմ շատ մը քաղաքական պատերազմներու պատճառաւ աւերեցաւ , ըսին թէ Հոովմ Վալմէտէնի եւ Տրոյացւոց՝ որոցմէ սերած էին Հոովմայեցիք , ստերգմութեանց եւ իրեն առաջնորդ Հոովմուսի եղբայրասպանութեան համար պատժուեցաւ :

Բանաստեղծներն՝ որոց գործն է բնութեան նմանիլ , եւ նորա մարդկային սրտին խորը զը-

րոչմած զգացումները վնասել , իմացան թէ մարդիկ իրենց թշուառութեան պատճառներն բնականաբար իւրեանց նախահարց դորձած յանցանաց մէջ կը վնասուին : Եւ ասով զգացին այն վրէժինդիւր բարկութիւնը՝ որ առաջին մարդուն յանցանօք՝ նորա՝ բոլոր սերնդոց վրայ տարածուեցաւ :

Կը տեսնեմք՝ որ նոյն խնդրութեանս պատմիչն , նկատելով Աղեքսանդրի մահը՝ որ տեղի ունեցաւ իւր յաղթութեանց եւ ամենէն զեղեցիկ տարիներուն , եւ որ աւելի զարմանալին է Մակեդոնացւոց արիւնալից եւ դառն երկպառակութեան մէջ , որոց կատաղութիւնը Աղեքսանդրի եղբօր , քերց եւ որդւոց ազեատալի մահուան պատճառ եղաւ , այս ամեն թշուառութիւններն աստուածային վրէժինդրութեան կ'ընծայեն , յորում իբր թէ Ֆիլիսպոսի ստերգումն ու ամբարշտութիւնները իւր ընտանեաց վրայ կը պատժուէր :

Արդ այսպէս հայրերն իրենց որդւոց մէջ պատժող արդարութեան ազդեցութիւնը մարդուս սրտին խորը տպաւորուած է : Արդարեւ Աստուած՝ հեղինակ դոյութեան՝ ուղեւով սոյն դոյութիւնը 'ի ձեռն հարց իրենց որդւոց տալ՝ այս միջոցաւ որդիքն հարց իշխանութեան տակ դրած՝ եւ կամեցած է՝ որ որդիք թէ ծընընդեամբ եւ թէ իրենց առած կրթութեամբ՝ հայրերուն սեփական առաջին բարին ըլլան : Սոյն այս հիմամբ , ինչպէս կերեւի , հայրերն իրենց զաւակաց վրայ պատժել զանոնք իրենց իրական բարւոյն մէջ պատուհասել ըսել է , զանոնք պատժել է իրենց մասերէն միոյն մէջ՝ զոր բնութիւնը իրենց

բուն անդամներէն եւ նոյն իսկ իրենց կեանքէն աւելի սիրելի ըրած է անոնց, այնպէս որ ոչ նուազ արդարութիւն է մարդ մը իւր որդւոց վրայ պատժել քան իւր անդամոց եւ իւր անձին վրայ :

Այս արդարութեան հիմը հարկաւ բնութեան նախնական օրինաց մէջ կենալու է, որոյ կանոնն է որ՝ որդին գոյութիւնը հօրմէն առնու, հայրն ալ իւր որդւոյն մէջ կենդանանայ իբրեւ յայլու մի քան :

Քաղաքական օրէնքներն այս սկզբնական օրինաց հետեւած են, որովհետեւ իրենց օրինաց համեմատ՝ այն որ իր քաղաքացի ըլլալուն եւ ազնուականութեան ազատութիւնը եւ իրաւունքը կը կորսնցունէ՝ զայն իւր բոլոր ճիւղին նկատմամբ ալ կորսնցուցած կ'ըլլայ : այս աստիճան ուղիղ գտած են մարդիկ՝ թէ այս իրաւունքներն արեան հետ կը փոխադրուին եւ արեան հետ կը կորսուին :

Եւ ասիկա բնական օրինաց հետեւանք մը է, ընտանիքը մի մարմին նկատել կուտայ, եւ այս մարմնոյն գլուխը կը համարի հայրը, որ իրաւամբ կրնայ իր անդամոց վրայ պատժուիլ, ինչպէս նաեւ վարձատրուիլ : Աւելին կայ. որովհետեւ բնականաբար ընկերական ըլլալով՝ քաղաքական մարմիններ կը կազմեն, զորս թագաւորութիւններ եւ ազգեր կ'անուանեմք, եւ առաջնորդներ ու թագաւորներ կ'ըլլան, ուստի այս կերպով ամէն մարդիկ իրար միացած մէկ ամբողջ մը կը կացուցանեն, եւ Աստուած իւր արդարութեան յարմար կը դատէ թագաւորներն իրենց ժողովրդոց անձանց վրայ պատժել, եւ

գլխաւորին յանցանքը կամ մեղքը ամբողջ մարմնոյն համարել :

Որչափ եւս առաւել է այս միութիւնը այն ընտանեաց մէջ, ուր սոյն միութիւնը բնութեան վրայ հիմնուած է եւ բոլոր ընկերութեան հիմն եւ աղբււրն են :

Ուրեմն ճիշդ է այս արդարութիւնը՝ որ վերէ ժխնդրութեամբ հարց մեղքերը որդւոց վրայ կը պատժուի. եւ երկրպագինք այս արդար եւ հզօր Աստուծոյն՝ որ բնականաբար մեր սրտից մէջ այսպիսի սոսկալի վերէ ժխնդրութեան մղաղօտ դաղալիարը դրած, եւ գաղտնիքը իւր դրուածոց մէջ պարզած է :

Ողբերգու բանաստեղծ մը սոյն արդարութեան գաղտնի, այլ հզօր ազդեցութեամբ մէջ կը բերէ Թէսէոս անուն մէկը՝ որ խոռովելով այն եղերան համար, որով իւր որդին պատժապարտ կը լինէր, եւ իւր խղճմտանաց մէջ Աստուծոյ այն պատժոյն արժանի բան մը չգտնելով, որք պատուիրած էին իւր տունը նմանօրինակ ծանականօք անպատուել, մինչեւ իւր նախահայրերն կը բարձրանայ, եւ իմ հայրերէս սրբարեօք ինձի այսպիսի նախատինք մը հասցունելու արժանի յանցանք մը դորձած է կրսէ : Սակայն մենք որ ճշմարտութեան վրայ ծանօթութիւն առած ենք, մեր ծագման ամօթն ու թշուառութիւններն տեսնելով, չհարցունենք ընաւ թէ մեր հայրերէն սրբ մեղանչած է. այլ խոստովանիմք՝ թէ Աստուած՝ մարդկային ընկերութիւնը խիստ բնական հիման վրայ հաստատել ուղեւով աշխարհի մէջ գտնուած բոլոր մարդիքն միայն մէկ մարդէ մը յառաջ բերած է, որ երջանիկ

եւ արդար վիճակի մը մէջ ստեղծած է, բայց նա կամաւ իւր արարչին հետամ , եւ իւր հեղինակն ալ յետոյ իւր այս սոսկալի անհնազանդութիւնը պատժել ուզելով՝ թէ իրեն եւ թէ իր որդւոց վրէժխնդիր եղած է, որպէս զի մարդկային ազգը գիտնայ թէ ինչ պարտք ունի Աստուծոյ եւ թէ ինչ բանի արժանի են այն մարդիկը, որք Աստուծոյ ունեցած պարտքերնին չեն կատարեր .

Եւ անիրաւ բան չէ՝ որ Աստուած առ հասարակ մարդոց վրայ ձգած է, ոչ եթէ բոլոր հայրերուն (թէպէտ եւ այս ալ կարելի է) այլ միայն առաջին մարդուն յանցանքը, որ բոլոր մարդկային սերունդը իւր մէջ պարունակելով՝ ինչպէս իւր հանուր որդւոց համար կեանքը պարգեւ ընդուած էր, այսպէս ալ պէտք էր, որ ՚ի նոսա պատժուէր եւ վարձատրուէր :

Որովհետեւ, եթէ հաւատարիմ լինէր Աստուծոյ, իւր երջանկութիւնը որդւոցն ալ անցած պիտի տեսնէր, եւ նոքա ալ իրեն պէս սուրբ եւ երջանիկ ստեղծուած պիտի ըլլային :

Բայց այն վայրկենին, յորում այս նախամարդն անվայել եւ կամաւոր անհնազադութեամբ Աստուծոյ իրեն պարգեւած այս շնորհքը կորսնցուց, նոյն հետայն կորսնցուց նաեւ նոյնը թէ իրեն եւ թէ իւր բոլոր սերնդոց, այն է հանուր մարդկային ազգին համար ալ, որ գրեթէ իւր ծագման պատճառ եղող այս առաջին մարդոյն հետ արդարապէս անիծեալ՝ եւ նախահօր յանցանաց համար, բոլոր նախատանաց տակ ճնշեալ մի մարդ է :

Մեր վրայ ծանրացած թշուառութիւններն՝

եւ ներսերնիս զգացուած այսքան անարգ տկարութիւնները մարդկային բնութեան նախնական վիճակին արդիւնք չեն . որովհետեւ կը տեսնեմ սուրբ Գրոց մէջ՝ որ Աստուած մեր անմահական հոգւոյն հետ միացուցեր է երբեմն նաեւ անմահ մարմին, որ եւ այնպիսի ներդաշնակութիւն մ'ունէր հոգւոյն հետ՝ անանկ որ հոգին եւ ոչ մէկ պիտոյքի համար անհանգիստ կ'ըլլար, ցաւ բնաւ չէր զգար, եւ կիրք մը բնաւ վրան չէր բռնանար : Ասկայն մարդս, որովհետեւ իր հեղինակին հնազանդել չուզեց, արժան եւ իրաւ էր՝ որ այլ եւս ինքն իրեն տէր չըլլար, եւ իր կրքերն իւր բանականութեան հետտելով՝ զգացունէին իրեն այն անիրաւութիւնը՝ զոր ինքք Աստուծոյ դէմ ապստամբել ուզելով գործած էր :

Բոլոր ներքին զգացմունքներս զԱստուած ճանչնալու կը նպաստեն ինձի : Վրաս եղած զօրութիւնն ու կանոնաւորութիւնը արարչին իմաստութիւնը կը ցուցնեն, եւ տկարութիւնս ու անկարգութիւնս ալ նորա արդարութիւնը : Եթէ բազուկներս ու ոտքերս հոգւոյս հպատակին իւր ուզած ժամանակը, ասիկայ կանոնաւորութիւն մ'է եւ ցոյց կուտայ ինձ՝ թէ այսպիսի ազնիւ եւ դեղեցիկ գործոյն հեղինակը, կամ Աստուած, իմաստուն է : Իսկ երբ իմ կամաց համեմատ չը կարենամ կառավարել այս մարմինը, եւ անոր տրամադրութենէն յառաջ եկած բաղձանքները, կայ ուրեմն իմ մէջրս անկարգութիւն մը եւ կըցուցնէ ինձ՝ թէ գիտ պատժելու համար այսպիսի վիճակի ենթակայ բնող Աստուածը բացարձակապէս արդար է :

Հոգիս Աստուծոյ մեծութիւնը կը ճանչնայ,

Աստուած ճանչնալով հոգւոյս արժէքը կը հասկընամ . եթէ հողիս բարձրութիւն մ'ունի , այն ալ իւր արարողին շնորհաց օգնականութեամբ նորա հետ միանալու կարողութեամբն է միայն :

Ուրեմն պարտական եմ նախ քան զամենայն պատուել եւ խնամել իմ մէջս գտնուած աստուածային հոգեւորական մասը , որ կրնայ զԱստուած ժառանգել . պարտական եմ անկեղծ սիրով հողիս բոլոր հոգւոց շօր , այսինքն , Աստուծոյ , կապել անտիտիտ կերպով : Պարտական եմ նաեւ 'ի սէր Աստուծոյն սիրել այն ամէնը՝ որոց ինձի պէս հողի մը տուած եւ ինձի պէս զինքը ճանչնալու եւ սիրելու ընդունակ ըրած է :

Մարդկանց մէջ հաստատուած ընկերակաշնութեան ամենէն աւելի ամրապինդ կապը այս է՝ որ առ հասարակ ամենքն ալ կրնան մի եւ նոյն բարին՝ այն է զԱստուած ժառանգել :

Պէտք է դարձեալ նկատեմ կամ մտածեմ՝ թէ ինձի պէս ուրիշներն ալ տկար եւ բիւրասւոր պիտոյից եւ աշխատանաց ենթակայ մարմին ունին , որով կը բռնադատուիմ անոնց թշուառութեանց եւ աղետից կարեկից ըլլալ :

Ահա այսպէս զիս իւր պատկերին նման ըստեղծող Աստուծոյն պէս կըլլամ՝ երբ իւր բարութեանը նմանել ուզեմ : Այս բանիս աւելի իշխանները պարտական են , որոնք իբրեւ Աստուծոյ ներկայացուցիչ հաստատուած ըլլալով աշխարհի վրայ , անպատճառ յաւուր միում հաշիւ պիտի տան այն ամէն մարդկան համար՝ զորս Աստուած իրենց յանձներ էր :

ԳԼՈՒԽ Ե.

ՅԱԳԱԳՍ

ՏԱՐԲԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴ ՄԱՐԴ ԵՒ ԱՆԱՍՈՒՆ

Ենչպէս որ տեսանք , բանական հողին մեղօք ապականելով՝ բողբոլին մարմնոց տրամադրութեանց ենթակայ , եւ զգայական կենաց կապուելով մարմնոց եւ նիւթական առարկայներուն ձեռքը գերի ինկած էր՝ որոնցմէ՝ կուգան իրեն հեշտութիւնք եւ վիշաք : Այս հողին կը կարծէ թէ իւր գործն է մի միայն մարմնոց յարիւ եւ կամ անոնցմէ խորշիւ կամ , այսպէս բսենք , իւր բոլոր խորհուրդները մարմնոց վրայ կը դառնան , եւ այնչափ կըխառնուի այն մարմնոց հետ՝ որոյ կենդանութիւն պարզեւողն ինքն է , որ վերջէն բաժնուելու մեծ դժուարութիւն կը կրէ . վերջապէս , ինքզինք կը մոռնայ չճանչնար բնաւ : Եւ իւր տղիտութիւնը այն աստիճան մեծ եւ անհարթն է՝ որ չզիտէր թէ ինքն սրչափ գերազանց է կենդանիներէն , Կենդանեաց վրայ իւր մարմնոյն նման մարմին , նման գործարաններ եւ շարժումներ կը նկատէ , կը տեսնէ՝ որ կենդանիք ալ խիստ քիչ տարբերութեամբ մարդոց

պէս կ'ապրին , կը մեռնին , կը հիւանդանան եւ կ'առողջանան , կուտեն , կը խմեն , մարմնոյ պիտոյից պահանջման համեմատ կ'երթան , կ'ուզան , վտանգներէ խոյս կ'ուտան , հանգիստ կը վնտոեն , մարդու երեւակայածէն առաւել ճարտարութեամբ կը կուտին , եւ իրենք զիրենք կը պաշտպանեն , կը խորամանդեն , եւ որ աւելին է՝ խորամանգութեանց իսկ առաջը կ'առնուն , ինչպէս կը տեսնուի միշտ որսերդութեանց մէջ , ուր գոգցես կենդանիք մեծ ճարտարութիւն կը ցուցնեն :

Ասկէց զատ կրթութիւն կ'ընդունին , զիրար ալ կը կրթեն . թուշուները մարց թուշտելը տեսնելով իրենք ալ անոնց նման թուշել կը սորվին : Պապկայներուն խօսիլ եւ կենդանեաց շատերուն բիւրաւոր բաներ կ'ուսուցանենք՝ որ բնութիւնը չէր տուած :

Կենդանիք մինչեւ իսկ իրարու հետ կը խօսին . հաւը՝ որ տխմար եւ ապուշ կենդանի մը կը կարծես՝ իւր կորուսած կամ ցրուած ձագերը իրեն կը կանչէ , եւ մասնաւոր աղաղակաւ իմաց կ'ուտայ անոնց երբ ցորենի հատ գտնէ . շունը կը քծնի՝ երբոր անօթի ըլլայ , եւ ուտելիք տուած չըլլանք , եւ կարծես թէ մեր մոռացու մը կերպով մը երեսնիս կը զարնէ , դէմերնին փակուած դուռը կը քերեն , եւ այնպիսի եղանակաւ կը մնջեն ու կ'աղաղակեն , որով կրնան իրենց պէտքը մեղ իմացնել , եւ այս մինչեւ այն աստիճան՝ որ կարծես թէ անասունք ալ իրենց յատուկ լեզու մ'ունին : Մարդոց եւ անասնոց գործերն իրարու հետ նմանութիւն ունենալուն համար մարդիկ կը խա-

բուին , որով ընդդէմ բոլոր առարկութեանց կը պնդեն թէ անասունք ալ դատողութիւն ունին , եւ կ'ըսեն՝ թէ սա միայն կայ երկուքին մէջ՝ որ մարդոց բանականութիւնը անասնոց ունեցածէն քիչ մը գերադանց է :

Մարդիկ ալ կան՝ որ կըսեն՝ թէ մարդոց անասուններէն ունեցած գերազանցութիւնը ուրիշ բանի չը ծառայեր , այլ զիրենք աւելի անհանգիստ եւ թշուառ ընելու : Մարդիկ , կըսեն , աւելի հանգիստ եւ աւելի երջանիկ կեանք պիտի ունենային՝ եթէ անասնոց պէս ըլլային : Ասոր բուն պատճառն այն է՝ որ մարդիկ սովորաբար իրենց երջանկութիւնը մարմին փայտայող եւ զգայարանք շլացնող իրաց մէջ կը կարծեն , եւ ասոր համար է որ զիրենք բոլորովին մարմնոյ կապած են , ուստի կախումն ունին զգացմունք : Աուզին հաւատալ թէ լոկ մարմիններ են , անասնոց վիճակին վրայ կը նախանձին , տեսնելով որ անոնք իրենց մարմինէն զատ ուրիշ բանի հոգ չունին : Վերջապէս այսպիսիները կենդանեաց իրենց հաւասար բարձրութիւն մ'ընծայել կուզեն , որպէս զի , դարձաբար իրենք ալ անասնոց խոնարհին , եւ նոցանման կեանք վարեն :

Այսպէս մտածողները իրենց համամիտ փիլիսոփայներ ալ ունին : Պուտարքոս՝ որ ուրիշ շատ մը պարագայներու մէջ խիստ զգօն մէկը կ'երեւի , անասնոց բանականութիւն ունենալուն վրայ ընդարձակ ճառեր գրած , եւ քիչ մտացած է զանոնք մարդիկներէն գեր 'ի վերոյ ցուցնելու : Ծիծաղաշարժ բան մ'էր տեսնել՝ որ Մօնթէյները ալ իւր սաղին դատումն կ'ուտայ . որպէս թէ սա դանլիճին մէջ ճեմած ժամանակ

կըսէ եղեր ինքնիրեն թէ՛ ամէն բան իրեն հա-
մար ստեղծուած է , իրեն համար արեղակը
առաւօտուն կը ծագի եւ երեկոյն կը մտնէ . եր-
կիրը իրեն համար պտուղներ յառաջ կը բերէ ,
տունը իւր բնակութեան համար շինուած է ,
մարդիկ զինքը խնամելու համար աշխարհք ե-
կած են , եւ թէպէտ վերջէն մարդիկ սագերը կը
մորթեն, բայց իրենց նման մարդիկ ալ կըմորթեն :

Մօնթէյնը իւր այս հրաշալի խօսքերով կը
ծաղրէ մարդիկ՝ որ աշխարհի մէջ ամեն բան ի-
րենց համար եղած կը կարծեն : Աելսոս՝ որ ընդ-
դէմ քրիստոնէութեան շատ մը բաներ դրած
ունի , Մօնթէյնի նման շատ մը իմաստասիրու-
թիւններ ունի : Գորտերն ու մուկերը , կ'ըսէ
այս փիլիսոփայն , իրենց ճահիճներուն ու ծա-
կերուն մէջ կը ճառեն , ըսելով՝ թէ Աստուած
ամեն բան իրենց համար ստեղծած է , եւ իրենց
օգնելու համար անձամբ յաշխարհ եկած է : Ո-
րով անմիան ըսել կուզէ՝ թէ մարդիկ Աստուծոյ
առջեւ մուկեր ու գորտեր են , եւ թէ սոցա
մէջ եղած տարբերութիւնը շատ ոչինչ բան է :

Այս իմաստասիրութիւնները նոր ըլլալուն
համար հաճելի կուգան . մարդ այսնիւթին վրայ
քննութիւններ ըլլալը կը սիրէ , եւ հաճոյ կու-
գայ իրեն անասնոց համար իրեն դէմ խօսուելը :

Այս կերպ ծաղր տանելի կ'ըլլար՝ եթէ մէ-
ջը ուրիշ բաներ ալ չը մտնէր : Կայց , ինչպէս ը-
սինք , մարդ այս ծաղրին մէջ իւր զգայական
հեշտութեանց կամ բաղձանաց չքմեղութիւնը
կը փնտռէ . ուստի կը նմանի այն աղնուական
տոնմէ սերած մարդուն՝ որ ինքը վատ ըլլալով ,
չուզեր բնաւ իւր տոնմին աւագութիւնը յիշել :

վախնալով՝ որ մի գուցէ ստիպուի այնպէս պա-
րիլ աշխարհի վրայ , ինչպէս որ կը պահանջէ իր
աղնուատոնմութիւնը :

Ասոր համար է՝ որ կըսէ Դաւիթ . Մարդ 'ե
պարտէ էր եւ ոչ իճացաւ , հաստարեցաւ անասնոց
աբանից եւ նմանեցաւ նոցա(1) :

Անասնոց նկատմամբ կատարուած այս ա-
մեն իմաստասիրութիւնները սա երկուքն են .
առաջին՝ կենդանիք իրենց ամեն գործողութիւն-
ները վայելուչ կը կատարեն , եւ գրեթէ մար-
դիկներէ աւելի գեղեցիկ . ուրեմն կենդանիք
ալ մարդոց նման կը խորհին եւ կը դատեն : Նրկ-
րորդ՝ կենդանիք արտաքուստ մարդոց նման են
թէ գործարաններով եւ թէ շատ գործերով . ու-
րեմն կենդանիք ալ մարդոց պէս մի եւ նոյն ար-
տաքին սկզբունքով կը գործեն եւ բանականու-
թիւն ունին :

Առաջին ձևոնարկութիւնը յայտնադէս սը-
խալ է . զի այլ է ամեն բան ըստ պատշաճի
գործել , եւ այլ է սոյն պատշաճութիւնը ճանչ-
նալ : Առաջինը՝ ոչ միայն կենդանեաց , այլ եւ
տիեզերաց մէջ գտնուած բոլոր իրաց կը պատ-
կանի , իսկ միւսը իմացականութեան եւ իմաս-
տասիրութեան ճշմարիտ արդիւնքն է :

Քանի որ համօրէն աշխարհ բանիւ կամ ի-
մաստութեամբ ստեղծուել է , հարկաւ իւր մէջ
ամեն բան համեմատութիւն կամ պատշաճու-
թիւն պիտի ունենան մէջերնին . որովհետեւ ի-
մացական պատճառի բուն յատկութիւնն է՝ իր

(1) Սաղմոս ԽԸ . 21 .

ամեն դործոց մէջ կարգ եւ համեմատութիւն դնել :

Մենք արդէն սորվեցանք թէ մեր տկար եւ քանի մը առարկայներու միայն ձեռնհաս բանականութենէն դեր 'ի վերոյ առաջին եւ բայարձակ բանականութիւնը կայ՝ որ ամեն բան յառաջ քան զստեղծելն զիտէր , զամենայն յոչընչութենէ գոյացուց , զամենայն յիւրեանց ըսկըզբան դասաւորեց , մի եւ նոյն գաղափարի տակ կազմեց եւ բոլորը մրցման մէջ դրաւ . այս բանականութիւնը յԱստուած է , կամ նոյն ինքն Աստուած է , որ յոչ իմեքէ բռնադատեալ է , իւր նիւթոյն տէր է , եւ ուզածին պէս կը դարձունէ : Գիտուածը բաժին չունի տիեզերաց դործոյն մէջ , որ եւ իցէ հարկի ազդեցութեան տակ չէ , վերջապէս իւր իմաստութիւնն է իրեն օրէնքը : Վասն որոյ իր ստեղծած ամեն բաներն ալ կանոնաւոր են եւ յամենայն իւր իմաստութիւնը կը փայլի :

Բան կամ իմաստութիւն մը կայ՝ որ բոլոր պատճառներն իրարու ստորադասած է . ասոր համար է որ ծանր բանը իրմէ թեթեւը վեր կը հանէ , քարն աւելի ջուրին մէջ կ'ընկղմի քան փայտը . ծառն առաւել այս քան այն կողմը կ'ածի , եւ իւրաքանչիւր ծառ երկրիս ծոցը զըտնուած շատ մը սննդոց մէջէն զինքը սնուցանելու յատուկ եղածը միայն կ'առնու : Բայց այս բանը կամ իմաստութիւնը՝ ոչ թէ այս բաներուն մէջն է , այլ ստեղծողին եւ կարգաւորողին մէջ :

Ծառերն իրենց արմատները, կ'արձակեն այնչափ , որչափ որ հարկաւոր է զիրենք հաստատուն բռնելու համար . իրենց ստերուն տարածու-

թիւնը համեմատութիւն մ' ունի իւր մէջ , կեղեւով ծածկուած են , որով օդին դժողակութենէն կը սլաշտպանուին : Որթը , բաղեղն եւ ուրիշ տունկեր՝ որք խոշոր ծառերն ու խոտոչները պատելու համար են , դարմանալի կերպով խոտոչները կ'ընտրեն , ուր զիրենք բռնակեցունելու կարող տեղերուն վրայ կը գալարին : Ամեն կարգի անկոց տերեւներն ու պրտուղները կանոնաւոր ձեւ մ'ունին , եւ իրենց ձեւոյն հետ ճաշակի եւ անկոց բնութեան հետեւանքն եղող ուրիշ հանդամանքները կ'ստանան :

Այս ամէնը պատճառաւ մը կ'ըլլան . բայց պատճառը ծառոց մէջ չէ : Ծիծռան եւ մեղուաց ճարտարութեանը վրայ զարմանալու հարկ չըկայ՝ երբոր տեսնեմք թէ մին գեղեցիկ եւ վայելուչ կերպով կը շինէ իւր բոյնը , միւսն ալ ճիշդ չափակցութեամբ իւր բջիջը կը կազմէ . նոան հատիկներն ասոնցմէ վար չեն մնար իրենց գեղեցիկ շարքին մէջ , եւ սակայն ոչ ոք կը համարձակի ըսելու թէ նոներն բանականութիւն ունին :

Անասնոց մէջ ամէն բան վայելչապէս կը կատարուի կըսեն . ես կրնամ ցոյց տալ թէ տրեւոյ մէջ աւելի կանոնաւորութիւն կայ : Տունկերըն իրենց փափուկ ու զիրգ ծաղիկներն 'ի ձրմերանի իբրեւ 'ի փոքրիկ ստեւի ծածկելով՝ գեղեցիկ եղանակի մէջ կը պարզուին . տերեւները կը պահպանեն զիրենք , որոչեալ ժամանակին պտուղներն երեւան կուգան , պտուղներն ալ պատեան կ'ըլլան այն հատիկներուն՝ որոնցմէ վերջը ուրիշ նոր բոյսեր յառաջ պիտի գան : Ա-

մէն մէկ ծառ իւր նմանը սերելու յատուկ սերմը կը պահէ իւր մէջ, այնպէս որ կնճնիէն շարունակ կնճնի եւ կաղնիէն միշտ կաղնի յառաջ կուգայ :

Բնութիւնը յայտն անվրէպ կը դործէ , եւ իր արդիւնքները կը ցուցնէ միշտ մի եւ նոյն կերպով : Սերմերը մինչեւ որ հասունանան ծառոց վերայ կախուած կը մնան . հասունալուծն պէս իրենց ծառոյն տակ կ'իջնան, տերեւներն ալ անոնց վրայ : Մնճրեւ կուգայ , տերեւները կը փտտին , հողոյ հետ կը խառնուին , հողը վրան եկած անձրեւներով կակղելով՝ ծոցը կը բանայ եւ սերմը ներս կ'ընդունի , սերմն ալ արեղական ջերմութենէն եւ հողոյն խոնաւութենէն ի ժամանակի կը բուսնի :

Կան ծառեր՝ ինչպէս են կնճնիներն եւ ուրիշ շատեր՝ որոնց սերմերն այնչափ փոքր են որ թեթեւ հողմ մը աստ անդ կը ցանէ կը ցրուէ . այս կերպով ամեն ուրեք սերմը կ'երթայ , եւ մտրձակայ լեռները ծառերով կը զարդարին : Աւրեմըն կենդանեաց մէջ ամէն բանի կանոնաւորութիւն տեսնելով զարմանալու հարկ չըկայ , զի բնութեան հաստատած կանոնն է այն . մէկ քանի կենդանեաց շարժմանց մէջ աւելի կարգ պատշաճութիւն եւ խելք կենալն ասպցուցանելն անօգուտ է , որովհետեւ սա միայն բաւական է ամէն ձեռնարկութիւն տապալելու՝ թէ կենդանիք իրենց մէջ եղած կարգն ու պատշաճութիւնը դիտն՞ն թէ ոչ . եւ թէ սոյն պատճառը կենդանեաց մէջն է թէ իրենց արարչին :

Անոնք՝ որ կենդանեաց անդեան եւ առողջութեան հարկաւոր միջոցները դործածելը տեսնելով՝ անոնց բանականութիւն կ'ընծայեն , պէտք

է ուրեմն ընդունին՝ թէ ստամորսն ալ խելք ունի , որ ընտրելու սկզբունքով կղկղանքը սննդական մասերէն կը դատէ , եւ մինչեւ իսկ շատ անգամ իրեն ատելի կերակուրները դուրս կը նետէ եւ սիրածը կ'առնու :

Մէկ խօսքով , բնութիւնը լի է մէջերնին համաձայնութիւն եւ անհամաձայնութիւն պահող իրերով , որոց ոմանք պատշաճութիւն եւ կարգ կը ցուցնեն մէջերնին , ոմանք ալ՝ անպատշաճութիւն եւ անկարգութիւն : Ասիկայ կը ցուցնեն՝ թէ ստուգիւ ամէնքն իմացականութենէ մը յառաջ եկած են , բայց ամէն ինչ իմացական չէ :

Աշխարհի վրայ չկայ կենդանի մ'որ այնքան վայելչապէս բանի մը հետ պատշաճի՝ որչափ մագնիսը՝ երկու բեւեռներուն , որ մէկ բեւեռին կողմը կը դառնայ եւ միւսէն կը խուսափէ : Ծովու կարակնի սլաքը՝ մագնիսին մէկ կողմէն կը վախչի եւ միւս կողմին կը յարի , եւ այս այնպիսի տենչանօք՝ որոյ նմանը չը տեսնուիր անասնոց վրայ իրենց սնունդին համար : Այս ամէնը անտարակոյս գաղտնի համաձայնութեան կամ անհամաձայնութեան մը վրայ հիմնուած է : Ծածուկ պատճառ մը կայ՝ որ այս ամէն շարժումները կ'ուղղէ : Այս պատճառը յԱստուած միայն է , կամ որ նոյն է ըսել , նոյն ինքն Աստուած է , որ բոլորովին բան եւ պատճառ պատճառաց ըլլալով՝ կարելի բան չէ որ անկանոն եւ անկարգ բան կարենայ ընել :

Վասն որոյ Սուրբն Թովմաս կենդանեաց ճարտարութիւնները տեսնելով՝ իրաւունք ունէր ժամացոյցներու եւ ուրիշ ճարտարութեամբ շինուած գործիքներու հետ բաղդատելու զանոնք ,

որոց մէջ իրաւցնէ ճարտարութիւն կայ, բայց այն ոչ թէ գործոյն այլ արուեստագիտին մէջ :

Որովհետեւ, վերջապէս կենդանիք իրենց գործոց մէջ որչափ ալ ճարտարութիւն ցուցնեն, բնաւ չը հաւասարի իրենց ձեւակերպութեան մէջ երեւցածին, ուր Աստուծոյ բանը միայն կը գործէ : Կրնա՞ք մտածել թէ սոյն այս Աստուածը՝ որ սերմերը կազմած եւ կարգաւորութեան դաղտնի սկզբունքը դրած է, ուստի խիստ կանոնաւոր շարժումներով դուրս կ'ելլեն կենդանւոյն կազմիչ մասունքները, նոյնին մէջ այն սկզբունքն ալ դրած է՝ որ զկենդանին իւր բնական պիտոյից համեմատ կը շարժէ :

Ասկայն, տես, թէ ինչ կ'առարկեն. կը տեսնեմք, կ'ըսեն, որ կենդանիները մեզի պէս մի քանի առարկայներէ կը շարժին եւ անոնց կը դիմեն գրեթէ այնպիսի վայելչութեամբ՝ ինչպէս մարդը, ուրիմն անպատեհ է անանոց գործերը անկող եւ ուրիշ մարմնոց գործերուն նմանցունելը, որք չէ թէ առարկայներէ ազդեցութիւն մ'ընդունելով կը գործեն՝ այլ լոկ բնական պատճառներէ շարժեալ. որոնց արդիւնքը բանի՛ մը վրայ ծանօթութիւն ունենալէ կախումն չունի :

Բայց դիտել հարկ է՝ որ առարկայներն ալ ըստ ինքեան բնական պատճառներ են, ուրիշ բաներու պէս իրենց արդիւնքը կը կատարեն վայելչապէս :

Որովհետեւ ինչ են առարկայները. — դմեզ չըրջապատող մարմիններ, որոց համար բնութիւնը կենդանեաց մէջ այնպիսի նուրբ գործարաններ դրած է, որոնցմէ արտաքուստ եկած դոյզն ինչ ազդեցութիւնը կամ շարժումն մինչեւ ուղեղը

կը հասնին. —

Արդէն ըսած ենք՝ թէ ծածանեալ օդը՝ աւանշաց, հոտաւէտ մարմնոց գոլորշիները՝ ողնգայ, արեգական ճառագայթներն՝ աչաց վրայ եւ այլն ազդեցութիւն կընեն. նոյնպէս կրակը բնականաբար ջրոյ վրայ կը գործէ եւ անոր իրական ազդեցութիւն կ'ուսայ :

Արդ ցցնելու համար թէ՛ սրչափ մեծ տարբերութիւն կայ առարկայից ազդեցութեամբ եւ բանականութեան ձեռօք գործելուն մէջ, պէտք է քննել մեր մէջ տեղի ունեցած բաները :

Այս քննութիւնը ցոյց պիտի տայ մեզ նախ՝ առարկայից մեր մարմնաւոր գործարանաց վրայ կատարած ազդեցութիւնը. երկրորդ սոյն ազդեցութեանց անմիջական հետեւանքն եղող զգացողութիւնքն, եւ երրորդ՝ առարկայից վերայ ըրած իմաստասիրութիւնն իս ու երկու բանի մէջ ըրած ընտրութիւնն իս :

Առաջին երկու իրողութիւնները տեղի կուրենան 'ի մեզ տակաւին. երրորդը, այսինքն, իմաստասիրութիւնը չը կատարուած : Մեր մարմնոյն վրայ հարուած ընդունելուս պէս ցաւ կ'զգամք՝ պատահած բանին վրայ խորհրդածելէ եւ դատելէ առաջ. այսպէս պէտք է իմանալ միւս ամեն առարկայից համար ալ : Թէպէտ մեր բանականութիւնը չը խառնուիր գործարանաց նիւթական այլալուծեան եւ անոնց այլալուծեանէն վերջը կատարուած զգացողութեանց մէջ, սակայն այս երկու իրողութիւնք ալ խիստ վայելուչ եղանակաւ կը կատարուին ամեն բան կառավարող գերագոյն բանին ձեռօք : Գիցուք թէ այսպէս չըլլայ. երբ սոսկ 'ի

նկատի առնուով լուսոյ եւ ծածանեալ օդոյն մեր աչաց եւ ականջաց վրայ կատարած ազդեցութիւններն , երբ դիտենք՝ թէ ինչպէս շարժումը արտաքուստ մինչեւ 'ի ներքս 'ի մեզ կը հաղորդուի , պիտի տեսնենք որ ասկէց աւելի վայելուչ եւ կանոնաւոր բան չկայ բնաւ :

Տեսանք որ արտաքին առարկայները մեր մարմինն այնպիսի դիրքի մէջ կը դնէին՝ որ հարկաւոր է մարդկային մարմնոյն իր պիտոյից համեմատ նոյն առարկայից յարելու եւ կամ անոնցմէ խուսափելու : Պատճառն որ մարդ բարկութեան մէջ խիստ զօրաւոր , եւ երկիւղի մէջ արագաբայլ կ'ըլլայ . բան մը՝ որ ստուգիւ իւր պատճառն ունի , պատճառ մը՝ որ մեր մէջ չէ :

Զարմանալի է այն օգնականութիւնը՝ զոր երկիւղը կը մատուցանէ տկարութեան . որովհետեւ երկիւղը՝ փախուստը երազելէն զատ՝ կենդանին կը պահուրացնէ եւ կը ծածկէ , եւ ասիկայ հալածման մէջ դանուող տկարութեան համար խիստ վայելուչ պահպանողական դիրք մ'է : Շատ անգամ ալ կենդանին տկարութեան մէջ իյնալով՝ մեծ օգուտ կը տեսնէ , որովհետեւ թալուկը ձայնը կ'ընդհատէ , մասամբ իւրիք շնչառութիւնն ալ կը խափանուի եւ կարողելու այն շարժումներն ընելէ՝ որոնք զթշնամբն իրեն պիտի ձգէին :

Ընդհանրապէս կը պատմուի՝ թէ կենդանիներէն ոմանք մեռնիլ կը կեղծեն՝ ուրիշներէն չսպաննուելու նպատակաւ . ասոր պատճառն այն է՝ որ երկիւղը զանոնք կը թալկացունէ , Կենդանեաց ստորոգուած այս ճարտարութիւնը չափազանց երկիւղի բնական հետեւանքն է , բայց տկար կենդանուոյ մը պիտոյից եւ վերահաս վը-

տանդէն դինքը ազատելու խիստ վայելուչ հետեւանքը : Երկիւղի մէջ տկար կենդանեաց այս աստիճան օգնականութիւն կարկառող բնութիւնն ուրիշներուն ալ տուած է բարկութեան կիրքը , որուն մէջ դրած է նաեւ ինքզինք պաշտպանելու եւ զայլս սաստկապէս հարուածելու հարկաւոր բաները , եւ սակայն ասոր մէջ դատման հարկ չը տեսնուիր բնաւ :

Ասիկայ մենք մեղէն կրնանք իմանալ բարկութեան առաջին շարժմանց մէջ . որովհետեւ նոյն իսկ սաստիկ բարկութիւն մը՝ մեղնէ ամէն խորհուրդ վերցուցած ատեն անգամ , այնպիսի լաւ դիրքի մէջ կը բռնուի զմեզ՝ որ շատ անգամ զայրացած ատենն իսկ ալ անանկ ուղիղ հարուած մը կուտանք մեր հակառակորդին , որպէս թէ անոր վրայ յատուկ խորհրդածութիւն մը կատարած ըլլայինք :

Ընդհանրապէս երբ մեր մարմինը կանդուն մնալու խիստ յարմար դիրք կուսենայ , երբ գետին ինկած ժամանակն իսկ բնականաբար պըլու իննիս կը հեռացունենք եւ ձեռքով հարուածոյն սաստկութիւնը կը մեղմացունենք , երբ առանց խորհրդածութեան զմեզ շրջապատող մարմնոց հետ այնպիսի վայելուչ եղանակաւ կը պատշաճինք՝ որով կարող կը լլանք դիւրաւ նոյն մարմնոց մեզ պատճառելիք վէրքերէն ազատ մնալ , այս ամէն վայելուչ գործողութիւնները պատճառ մը կենթադրեն . ոտկայն , ինչպէս կըրտեսնեմք , այս պատճառը կամ բանը մերը չէ :

Գատուում չկայ բնաւ այն գործողութեան մէջ՝ որով կաթնակեր տղայն շրթանց ու լեզուին այնպիսի պատշաճ դիրք մը կուտայ , որով դիւրաւ

աստանց մէջէն կաթը կը ծծէ : այս բանիս մէջ
այն աստիճան քիչ ընտրողութիւն կայ , որ ե-
րախայն նոյն չարժուժը պիտի կատարէր նաեւ
իր բերնին մէջ դրուած մատին վրայ , մատին
ձեւը ծծերուն հետ ամենամերձ նմանութիւն ու-
նենալուն պատճառաւ : Առանց դատման եւ խոր-
հըրդոյ է՝ որ մարդուս աչաց բերը կը տարածուին՝
երբ հեռաւոր առարկայներ տեսնել հարկ ըլլայ .
ընդ հակառակն մերձաւոր առարկայից համար ալ
կը սեղմուին : Գարձեալ խորհրդածութիւն չը
մտներ բնաւ երբ մեր չրթանց եւ լեզուին դա-
նազան շարժմանց պատճառաւ տարբեր տարբեր
ձայնի եզանակներ յառաջ կուգան , որոց վրայ
ընդերկար խորհրդածութենէ վերջը միայն ծանո-
թութիւն կ'ունենամք : Ա՛րքնապէս սոյն շար-
ժումները ճանչցողներն ալ պէտք չունին երբէք
այս ծանօթութեան՝ զանոնք յառաջ բերելու հա-
մար , մանաւանդ թէ այս ծանօթութիւնը շատ
անգամ մարդուս շարժումները կը խտրանէ :

Այս եւ ասոնց նման ուրիշ բիւրաւոր գոր-
ծողութիւններ այնպիսի իմաստութեամբ կը կա-
տարուին , որոց պատճառը մեր կարողութենէն
վեր է եւ մարդկային հնարագիտութենէ գերա-
զանց :

Խօսակցութեան վրայ քիչ մ'աւելի զուրցնելու
իրաւ է որ խօսիլ եւ մեր խորհուրդները բա-
ցատրել ուզել բանականութեան ձեռօք կ'ըլլայ .
բայց անկէց վերջն եկած խօսքերն 'ի բանէ կա-
խումն չունին բնաւ , այլ սոսկ գործարանաց
կարգադրութեան բնական հետեւանքն են :
Ի բերան ուսած բաներնիս միանգամ զուրցել
սկսելնէս վերջը կը տեսնեմք որ մեր լեզուն

ինքնին զանոնք կրտէ կը լմնցունէ , թէ եւ նոյն
իրաց վրայ կատարած խորհրդածութիւնս բոլոր-
րովին դադարած եւ վրան շատ ժամանակ ան-
ցած է . մանաւանդ թէ խորհրդածութիւնը վը-
րայ գալով՝ ուրիշ բան չընէր կ'ընէր ոչ զմեզ
կ'ընդմիջէ եւ չը թողուր որ զանոնք ճշդապէս
արտասանենք :

Այս արդիւնքը արտադրելու համար քանի
չարժումներ պէտք է որ իրար դան : Բորովհետեւ
սոյն գործողութեան մէջ կը մտնեն ուղեղին ,
թոքին , շնչափողին , լեզուին , չրթանց եւ ծա-
մելեաց շարժումները՝ որ բաւ պատշաճի այնչափ
անգամ կը բացուին , կը գոցուին : Մեր ծննդեան
առաջին վայրկեաններուն մէջ այս բաներն ը-
նելու յաջողակութիւնը չենք ունենար . ասիկայ
կը կատարուի մեր ուղեղին եւ անով մեր մար-
մնոյն միւս մասանց մէջ յաճախակի զարնուող
առարկայէն կատարուած խոր տպաւորութեան
միջոցաւ . եւ մեր մէջ կատարուած այս ամէն
բաներն այնպիսի անիմանալի ուղղութիւն մը
ունին իրենց մէջ՝ յորում բանականութիւնը մաս
չունի բնաւ :

Միանգամ գիր գրել սովորելնէս վերջն՝
այնուհետեւ՝ շարունակ կը գրենք առանց ինչ-
պէսը գիտնալու . ասոր գիտութիւնը մատներուն
մէջ է . յաճախակի մեր հայեցուածոց առարկայն
եղող գրերն ալ ուղեղին վրայ այնպիսի ազդե-
ցութիւն ներգործած են՝ որ անոնց ձեւը թղթի
վրայ կը նկարուին՝ առանց անոնց վրայ ուշա-
դրութիւն ընծայելու հարկ տեսնուելու :

Ոմանց քնոյ մէջ բրած զարմանալի բաները
յայտնի կը ցուցնեն մեզ՝ թէ մարմնոյն արամա-

դրութիւնն ինչ արդիւնքներ կ'արտադրէ առանց խորհրդածութեան եւ դատման :

Արդ արտաքին առարկայից մեր մարմնոյն վրայ կատարած ազդեցութենէն կախումն ունեցող զգացողութիւնները քննելով՝ տեսանք որ այս ամէնը ինքնին վայելչութիւն մ'ունին : Որովհետեւ խիստ ճշմարիտ է՝ թէ հաճոյքը մեր մարմնոյն օգտակար եւ վիշտն ալ՝ անոր վնասակար առարկայներէն կախումն ունին : Բայց այս իրերն այս աստիճան վայելչապէս իրար պատշաճեցնողը մեր բանականութիւնը չէ, այլ մերինէն աւելի բարձր եւ աւելի գերազանց բանականութիւն մը :

Այս գերագոյն բանականութեան ձեռօք է որ մեր մարմնոյն վրայ կատարուած ազդեցութիւններն առարկայից հետ կը պատշաճին, Այս բանականութիւնն է որ մեր բնական ցանկութիւնները մեր մարմնոյն պիտոյից հետ միացուցած է, ի ձեռն հաճոյից եւ վշտաց սնունդ զբտնելու կ'ստիպէ զմեզ՝ առանց որոյ մեր մարմինը պիտի ոչնչանար, կերակրոց մէջ այնպիսի զօրութիւն մը դրած է՝ որով ուտելու կ'ստիպուինք : Փայտը հացին պէս մեր ցանկութիւնը չի դրդուեր, ուրիշ առարկայներ ալ շատ անգամ մեզի՝ չափազանց առեւտրութիւն կը պատճառեն : այս ամէնը մեր մէջ կը կատարուին ծածկեալ համեմատութեան եւ անհամեմատութեան միջոցաւ, եւ բանականութիւնը մաս չունի բնաւ առարկայից եւ անոնց ներկայութենէն մեր մէջ տեղի ունեցած արամադրութեան մէջ :

Ենթադրենք թէ՝ բնութիւնը՝ անասնոց իրենց պահպանութեան հարկաւոր ամէն, օգտա-

կար բաներն ընել կուտայ : Այս բանիս համար բնութիւնը անոնց բանականութիւնտալէ յառաջ՝ երկու բան ըրած է . առաջին՝ առարկայներուն եւ գործարանաց մէջ համաձայնութիւն դրած, երկրորդ՝ առարկայներէն ծագումն առած շարժումները բնականաբար գործարանաց մէջ տեղի ունեցած շարժմանց հետ համաձայնեցուցած է : Այս խառնուրդին հետեւանքը սքանչելի ներդաշնակութիւն մ'է, եւ ասով իւրաքանչիւր կենդանի իւր առարկային կը կապուի ճիշդ այն կերպով՝ ինչպէս որ մագնիսը իւր բեւեռին կապուած է : Կենդանեաց մէջ տեսնուած այս ամեն ճարտարութիւն ու ընտրողութիւն՝ ըստ ինքեան ամբողջ մեքենայն յօրինողին մեծ արուեստին եւ գերագոյն իմաստութեան գործն է :

Եթէ առարկեն որ զգացումներէն ոմանք առարկայից ազդեցութենէն կախումն ունին, բաւական է մտածելը՝ թէ բնութիւնը հաճոյք եւ վիշտ պատշաճ եւ անպատշաճ իրաց կապած է . ցանկութիւնք անպատճառ տեղի պիտի ունենան, կենդանեաց մէջ ամեն ինչ ըստ պատշաճի պիտի ըլլայ՝ բնութիւնը առանց անոնց բանականութիւն տալու :

Այս երկու միջոցները՝ զորս ենթադրեցինք որ բնութիւնը կրնայ իրեն համար գործածել ուղած ատեն, ըստ հաճոյս հնարուած բաներ չեն երբէք . որովհետեւ նոյն իսկ ի մեզ կը գրտնեմք զանոնք : Մեր մէջ առարկայից հետ բնականաբար պատշաճող շարժումներ կը գտնեմք . կը գտնեմք դարձեալ մեր մէջ որ հաճոյք եւ վիշտ բնականաբար հաճոյ կամ անհաճոյ առարկայից հետ կապուած են . ոչ թէ մարդուս բա-

նականութիւնն է այս համաձայնութիւններն ընտրող , այլ զանոնք աւելի զերազոյն եւ աւելի բարձր բանականութենէ մ'եղած գտած է . մեր այս կենդանական մասին մէջ ինչ որ կը գտնեմք , եթէ զայն անասնոց ալ ստորողենք՝ չենք խաբուիր :

Ուրեմն կենդանեաց վրայ ուղիղ դատումն կատարելու ամենէն լաւագոյն միջոցն է՝ նախ մեր անձին վրայ ծանօթութիւն ստանալ . զի եթէ կենդանիէն գեր 'ի վերոյ բան մ'ունենամք ալ՝ դարձեալ կենդանի եմք , եւ գիտեմք ալ թէ ինչ կընէ 'ի մեզ կենդանական զօրութիւնն եւ ինչ՝ իմաստասիրութիւնն եւ խորհրդածութիւնը : Ապա մեր անձին զիտութեամբ եւ մեր զգացած իրաց վրայ զիտողութիւն ընելով է՝ որ կրնամք օրինաւորապէս դատումն կատարել այն ամէն բաներուն վրայ՝ որոնք արտաքոյ են քան զմեզ եւ որոց վրայ արդէն տեղեկութիւն չ'ունիմք : Եւ երբ կենդանական զօրութիւն անուանածնիս կենդանեաց մէջ ալ գտնենք , ասկէց չը հետեւիր թէ մեր մէջ եղած գեր 'ի վերոյ բանն անոնց ալ ստորողել պէտք է :

Արդ կենդանական զօրութիւնը մի քանի առարկայներէ շարժեալ՝ բնականաբար եւ առանց խորհրդածութեան խիստ վայելուչ բաներ կ'ընէ 'ի մեզ . ուրեմն պէտք է մեր անձին փորձովը համոզուինք՝ թէ այս պատշաճ գործողութիւնները իմաստասիրութեան ապացոյց չեն :

Սակայն հոս այն գծուարութիւնն ալ լուծելու է՝ որ բանականութեան մեր մէջ գործած իրաց վրայ լաւ չը մտածելէ յառաջ կ'ուզայ : Ոմանք կըսեն՝ թէ մարդու մէջ առանց իմաս-

տասիրութեան գործող այս մասը սոսկ իրերը կ'սկսի , իսկ բանականութիւնն է զանոնք կատարելագործողը . օրինակի համար , ներկայ առարկայն կամ ուտելու եւ կամ վրէժխնդրութեան ցանկութիւնը կը գրգռէ մեր մէջ . բայց այս կիրքն իմաստասիրութեան միջոցաւ կը գործադրենք . եւ ասիկայ այնչափ ճշմարիտ է՝ որ նոյն իսկ մեր բնական ցանկութեանց եւ մեր մարմնոյն եւ գործարանաց ամենէն աւելի զօրաւոր արամադրութեանց կրնամք դիմակադել : Ասկէց կըհետեւի ուրեմն , կըսեն , որ բանականութիւնը կենդանական գործողութեանց ալ կըմիջամտէ , առանց որոյ սոյն գործողութիւններն անկատար սկիզբ մը պիտի ունենային :

Բայց այս գծուարութիւնը իսկոյն կը վերնայ՝ երբ զիտողութեան առնումը ինչ որ տեղի կուտննայ 'ի մեզայն առաջին շարժմանց մէջ՝ որք յառաջ են քան զխորհրդածութիւն . տեսանք որ ինչպէս բարկութիւնը ճիշդ հարուածներ տալ կուտայ մեզ . ամենօրեայ փորձով կը տեսնեմք թէ յանկարծական հարուած մ'ինչ կերպով անմիջապէս մեր մարմինը մէկ կողմ դարձունել կուտայ դեռ այն հարուածին վրայ չը խորհած : Ո՞վ կրնայ աչքերը չը փակել եւ կամ զլուխը չը դարձունել՝ երբ մեր մարմինը հարուածել կեղծեն : Եթէ այսպիսի պարագայի մէջ մեր բանականութիւնը զօրութիւն ունենար , մեր բարեկամին ընդ խաղ շարժմանց դէմ պիտի ապահովէր ըզմեզ . սակայն կամայ ակամայ հարկ է աչքերնիս գոցել եւ զլուխնիս դալիք հարուածէն հեռացնել . սոսկ առարկայից ազդեցութեամբ կը կատարուի 'ի մեզ սոյն գործողութիւնը : Մի եւ

նոյն պատճառաւ՝ եթէ իյնանք, անմիջապէս ձեռքերնիս գլուխնուս առջեւ կը բռնեմք : ձարտար լարախաղաց մը որչափ ձեռքերը շարժէ առանց վրան խորհրածելու՝ այնչափ ալ աւելի լաւ կը խաղայ : Հանապազօրեայ փորձերով գիտենք՝ թէ կենդանական, այսինքն, առարկայներէ կախումն ունեցող գործողութիւնները սոսկ նոյն առարկայից գործութեամբ կը կատարուին, այնպէս որ կրնամ համոզմամբ ըսել թէ այս գործողութիւնները պիտի չը կատարուին, եթէ խորհրդագծութեամբ ընել ուղենք զանոնք :

Պիտի ըսեն՝ թէ այս ամեն իրաց մէջ ծածկեալ իմաստութիւն մը կայ անտարակոյս . բայց ոչ թէ մերը, այլ ամեն բան ստեղծողին իմաստութիւնը կամ մանաւանդ իմացականութիւնն է :

Աստուծոյ նախախնամութենէն է՝ որ բնութիւնը ինքն իրեն կ'օգնէ առանց մեր խիստ յամբ եւ տարակուսական խորհրդոց սպասելու՝ որք հարուածէն կ'արթնան մեր մէջ :

Պէտք է ուրեմն մտածել՝ թէ առարկայներէն եւ գործարանաց արամադրութենէն կախումն ունեցող գործողութիւնք բնականաբար ինքն իրենցմով պիտի կատարուէին 'ի մեզ' եւ թէ Աստուած հաճած չըլլար ալ տալ մեզ այնպիսի բան մը՝ որ գեր 'ի վերոյ է քան զմարմինը եւ անոր շարժմանց կ'իշխէ :

Ուստի հարկ էր՝ որ բանական մասը մարմնական շարժումները սահմանիջմը մէջ բովանդակելու, եւ պէտք եղած ժամանակ զանոնք 'ի գործ գնելու կարող ըլլար :

Ասոր համար է որ սաստիկ բարկութեան մէջ բանականութիւնը կը սանձէ մարմինը՝ որ կեն-

սական զօրութեանց արագ արագ շարժմամբ բուրովին կազմ եւ պատրաստ է հարուած տալու :

Վերցուր իմաստասիրութիւնը, այսինքն, մէկզի ըրէ արգելքը, այն ատեն առարկայն ըզմեզ իրեն պիտի ձգէ եւ հարկանել պիտի տայ մեզ :

Նոյն բանը պիտի պատահէր նաեւ միւս ամէն շարժմանց համար ալ, եթէ բանական մասը մարմինը կասեցունելու մասին ունեցած կարողութիւնը 'ի գործ չգնէր :

Արդ, ոչ միայն բանականութիւնը չէ գործողութիւն կատարողը, այլ որպէս զի առարկայն գործողութիւնը կատարելու դրդէ, բաւական է որ բանականութիւնը մէկ զի ընենք :

Չեմ ուրանար որ բանականութիւնը շատ անգամ այնպիսի ճարտարութեամբ շարժումն կուտայ մեր մարմնոյն՝ որչափ մարմինը ինքնին առանձին մնալով պիտի չկրնայ ընել. սակայն եւ այնպէս կան յանկարծական շարժումներ ալ՝ որոնք յանկարծական ըլլալով հանդերձ ճիշդ են, եւ խորհրդագծութիւնը այն շարժմանց աւելի խոչընդոտն պիտի ըլլար :

Ասոնք այնպիսի շարժումներ են՝ զորս կենդանեաց կ'ընծայեմք . իսկ պատճառը թէ կենդանիք իրենց գործողութեանց շատերուն մէջ մարդոցմէ աւելի ճշդութիւն եւ ճարտարութիւն կը բանեցունեն՝ այն է որ չեն իմաստասիրեր, այսինքն, ոչ եթէ մարդոց նման մասնաւոր, յամբ եւ խաբէական բանականութեամբ կը գործեն, այլ տիեզերական բանականութեան միջոցաւ :

Արդ՝ կենդանեաց իմաստասիրելը ցուցնելու

համար՝ բաւական չէ սպառնուցանելը անոնց մի քանի առարկայից նկատմամբ իմաստութեամբ շարժելնին, քանի որ այս պատշաճութիւնը ամենէն անարդ ու անբան շարժմանց մէջ անդամ կը դառնուի. այլ հաստատել պէտք է՝ թէ այս պատշաճութիւնը կ'իմանան, եւ թէ իրենք իրենցմով կ'ընտրեն զայն: Նոյնպէս կարելի ուրանալ ասիկա, պիտի ըսեն ոմանք. չեմք տեսներ ամեն օր որ կենդանեաց բանականութիւն կ'ընծայուի: Անասունք ալ մարդոց նման կըրթութիւն առնելու ընդունակ են, անոնց վարձք եւ պատիժ կը տրուին, կրնան յիշել, եւ մեզ պէս անոնց ալ կ'առաջնորդեն: Թո՛ղ ըսածնուս վկայ ըլլան շուները՝ զորս կը կրթեն մարդիկ ծեծելով եւ անոնց որսամասն տալով՝ զանոնք որսորդութեան կը քաջալերեն:

Կրսեն ալ թէ անասունք մէկմէկու նշաններ ալ կուտան եւ մարդոցմէ նշաններ կ'ընդունին, մեր լեզուն կը հասկնան եւ իրենցը մեզի կը հասկցունեն. վկայ այն ազաղակները՝ զորս շանց եւ ձիոց կ'ուղղենք զանոնք գրգռելու համար, վկայ իրենց հետ ըրած խօսքերնիս եւ անոնց առեւտած անուաններնիս՝ որոց կը պատասխանեն իրենց յատուկ եղանակաւ մարդոցմէ աւելի արագ:

Այս իրողութեանց խորը թախանցելու եւ երեւութէն չխարուելու համար հարկ է զանազանութիւններ ընել՝ որոնք թէ եւ պայծառ եւ իմանալի, այլ սովորաբար դիտողութեան առնուած չեն:

Օրինակի համար, անասնոց ստորոգուած կրթութեան եւ հրահանգաց վրայ խօսելով ու-

րիչ բան է ուսանիլ եւ ուրիշ՝ իւր նախնական սրամազրութեանց հակառակ մի քանի գործեր ընելու ստիպուիլ:

Ստամոքսը՝ որ իրաւցնէ կերակուրները մարսելու ժամանակ չ'իմաստասիրէր, սովորութեամբ յառաջուց իրեն ատելի թուած կերակրոց կը վարժուի եւ կ'սկսի զանոնք մարսել միւսներուն պէս: Մեր մարմնոյն մէջ գտնուած ամէն տեսակ զսպանակներն իրարու հետ կը պատշաճին եւ կրթութեամբ իրենց շարժումը կը դիւրացնեն. մինչդեռ երբ զանոնք չգործածենք՝ կ'ըն դարմանան եւ կը ծուլանան: Չուրն իւր անցքը կը դիւրացունէ եւ հոսման զօրութեամբ՝ իւր բնութեան խիստ վայելուչ եղանակաւ լնք իւր ընթացքը կ'ուղղէ:

Պայտը առ փոքր փոքր կը ծռի եւ ինչ ձեւ տալ որ ուղենք իրեն՝ նոյն ձեւը կ'առնու: Երկաթն անգամ կրակին մէջ մտնելով եւ մուրճին տակ դրուելով կը կակղանայ եւ իւր բնական կարծրութիւնը կը կորսնցունէ: Ընդհանրապէս ամէն մարմին բնութեան իրեն տուած ազդեցութեան հակառակ ազդեցութիւններ կրնայ ընդունիլ:

Վերին է արդ իմանալ թէ ուղեղը 'ի բնէ կակղութենէ եւ պնդութենէ խառն գոյացութիւն ըլլալով՝ կրնայ շատ ձեւերու մէջ մտնել եւ հետեւաբար ջրաց եւ զնդերաց հետ ունեցած յարաբերութեամբն իրարմէ տարբեր բիւրաւոր շարժումներ յառաջ բերել:

Մեր մարմնոյն միւս մասերն ալ այս եղանակաւ մի քանի բաներու կը վարժուին եւ իրենց յաճախ կատարած շարժմանց դիւրութիւ-

նը կ'ստանան :

Եւ որովհետեւ ամէն առարկայ ուղեղին վրայ մեծ ազդեցութիւն կ'ընէ , ապա դիւրաւ կ'իմանամք՝ թէ առարկայները կենդանեաց մէջ փոփոխութիւն կրած ատեն՝ բնականաբար իրենց ազդեցութիւններն ալ կըփոփոխին , եւ որչափ որ մի եւ նոյն առարկայները յաճախ անոնց ներկայանան , այնչափ ալ այն առարկայից ազդեցութիւնները զօրաւոր եւ տեւական կ'ըլլան :

Կենսական զօրութեանց ընթացքը յառաջ կուգայ այն պատճառաց համար՝ զորս իրենց տեղերը զուրցեցինք . եւ ինչպէս ջուրը շարունակ հոսելով իւր ընթացքը կը դիւրացնէ , այսպէս ալ կենսական զօրութիւնները մի եւ նոյն եղանակաւ հեշտին մուտքեր կուենան , այնպէս որ յառաջուց շատ դժուարին երեւցած բանը՝ յետոյ բոլորովին կը դիւրանայ :

Քանի որ ասիկայ մեր մէջ կ'ըզանք՝ ՚ի հարկէ պիտի համոզուինք որ կենդանիք ալ կ'ըզան :

Այս կերպով կը հաստատուին սովորութիւնները , որոց վարժութեան մէջ բանականութիւնը այն աստիճան փոքրիկ մաս ունի՝ որ բանիւ եւ սովորութեամբ կատարուած դործսուութիւնները կրնամք իրարմէ զանազանել :

Այս կերպով է որ ձեռքը կը ծռի գրեկու եւ կամ նուաղարան զարնելու համար , եւ ընդարմացեալ մատները կը շարժին :

Այս դիւրակորութիւնը ՚ի բնէ չուենինք . բընականաբար չը կային մեր ուղեղին մէջ այն ստանաւորները՝ զորս առանց վրայնին մտածելու կ'արտասանուէր : Այն ստանաւորները հետզհետէ մեր ուղեղին մէջ կը տպաւորեմք զանոնք միշտ

կրկնելով . կ'ըզամք որ այս տպաւորութիւնը կատարելու մասին մեծապէս կը նպաստէ բարձրաձայն խօսելը , որովհետեւ մեր ականջը այս ձայներէն բախուելով՝ աւելի զօրաւոր ազդեցութիւն կը տանի ուղեղին :

Եթէ քնոյ մէջ ազդեցութեանց կայանն եղող ուղեղին մասը կամ թանձր գոլորշիներէ եւ կամ կենսական զօրութիւններէն սաստկապէս ցնցուի՝ շատ անգամ կը պատահի որ դոց գիտցած բաներնիս բարձր ձայնով կ'արտասանեմք :

Որովհետեւ անասունք ալ մեր ուղեղին նըման ուղեղ եւ մեր արեան պէս կենսական զօրութիւններով լի արիւն եւ մի եւ նոյն գնդերներն ունին , ապա հարկ է որ մի եւ նոյն ազդեցութիւններն ընդունելու ալ կարող ըլլան :

Կենդանիներուն՝ ծնած ժամանակնին ունեցած ազդեցութիւնները սովորութեամբ կը դօրանան . անոնցմէ ուրիշ ազդեցութիւններ ալ կը ծագին նորանոր առարկայից միջոցաւ :

Ասանկով կենդանեաց մէջ տեսակ մը յիշուութիւն կը տեսնեմք , որ ուրիշ բան չէ՝ եթէ ոչ առարկայից տեւական ազդեցութիւնը եւ ուղեղին այն տրամադրութիւնը՝ որով ուղեղն կարող կ'ըլլայ շարունակ իրեն բախուած առարկայից ներկայութենէն արթննալ :

Ասոր համար է՝ որ շներուն տրուած սրամասը որսորդութեան մասին ունեցած տրամադրութիւննին բնականաբար կը զօրացունէ , և որսորդութեան ատեն եթէ շուները հարուածենք զիրենք զրգոզ մի քանի առարկայներուն ներկայութեան՝ միշտ անշարժ կը մնան այն առարկայները տեսած ատեննին :

Որովհետեւ անդամադննութեամբ տեսանք որ հարուածներն ուղեղին կերթային կը հաղորդուէին, ուստի անասունք սր ատեն որ մի քանի առարկայից ներկայութեան հարուածներք՝ սոյն հարուածին աղդեցութիւնը առարկային պատճառած տղաւորութեան հետ ուղեղին մէջ կը միանայ, եւ ասով անոր տրամադրութիւնը կը փոխուի:

Չոր օրինակ, երբ շուն մը հարուածներք այն կաքաւին առջեւ՝ զոր պիտի ուտէր, սոյն կաքաւին բնականաբար կատարած ազդեցութենէն զատ ուրիշ ազդեցութիւն մ'ալ կ'ըլլայ շան ուղեղին մէջ: Որովհետեւ ուղեղն այնպիսի կազմակերպութիւն մ'ունի՝ որ իւր վրայ միահաղոյն գործող մարմիններէն՝ ինչպէս կաքաւ եւ գաւազան, մէկ ազդեցութիւն միայն կ'ընդունի՝ որ իւր մասնաւոր հանգամանքն եւ հետեւաբար իւր յատուկ ազդեցութիւնն ունի, ուսկից յառաջ կուզան պատշաճ գործողութիւնք:

Ասոր համար է որ կենդանիներն առանց պատուճն ընելու՝ հարուածոց միջոցաւ կը սանձուին եւ ետ կը քաշուին: մի եւ նոյն պատճառաւ ալ մասնաւոր ձայներու եւ բարբառներու կը սովորին, քանզի ձայնը իւր հարկանելու կերպն ունի եւ իւր ազդեցութիւնը ականջին եւ անով մինչեւ ուղեղին կը հասցունէ:

Չը կայ մէկը՝ որ ըսէ թէ այս կերպ սորվելու կամ լեզու հասկնալու համար իմացականութիւն հարկաւոր է: չը տեսնուիր բնաւ կենդանեաց մէջ այնպիսի բան մը՝ որով ստիպուինք անոնց մէջ աւելի գերազանց իր մը ճանչնա-

լու:

Աւելին կայ. երբ քննութեան առնուժք եւ իմանամք թէ ինչ է ուսանելը՝ կենդանիներն անընդունակ պիտի դանտը այսմ:

Ուսանելը գիտնալ կ'ենթադրէ, գիտնալն ալ տիեզերական սկզբունքներ եւ ընդհանրական գաղափարներ ունենալու կարող ըլլալն է՝ զորս միանգամ լաւ իմանալով՝ շարունակ նըմանօրինակ հետեւութիւններ կը հանեմք անոնցմէ:

Ժամացուցի եւ կամ ուրիշ գործիքի գաղափարն ունիմ մտացս մէջ. զայն շինելու համար այս կամ այն նիւթը չեմ ընարեր, կրնամ թէ վաչտէ, թէ փղոսկրէ, թէ պղինձէ եւ թէ արծաթէ շինել: Ահա տիեզերական գաղափարը սածնիս ասիկայ է, որ մասնաւոր նիւթոյ մը մէջ ամխփուած չէ:

Ժամացոյց շինելու համար ես իմ կանոններըս ունիմ, ամեն տեսակ նիւթէ ալ կրնամ շինել. սյսօր, վազը, տասը տարի վերջն ալ զայն մի եւ նոյն կերպով պիտի շինեմ: Յայսմ կը կայանայ տիեզերական սկզբունք ունենալը, զոր կրնամ ամէն մասնաւոր իրաց պատշաճեցնել, որովհետեւ սոյն սկզբունքէն շարունակ միակերպ հետեւութիւններ կրնամ հանել:

Շատ անգամ այնպիսի գործիք մը կ'երեւակայեմ՝ զոր շինելու համար անոր յատուկ նիւթը չունիմ. բոլոր բնութիւնը քննութեան կատնում, արուեստին բոլոր հնարագիտութիւնները կը յուզեմ տեսնելու համար՝ թէ պիտի կարենամ ուղած նիւթս գտնել:

Տեսնենք թէ կենդանիք ալ նմանօրինակ

բան մ'ունին, եւ թէ իրենց գործողութեանց մէջ եղած նամանութիւնը մէկ եւ մի եւ նոյն օրինակը ներքսպէս քննելէ եւ իմանալէ յառաջ կուգայ :

Ասոր հակառակը կը տեսնեմք յայտնապէս . ամեն անգամ նոյն եւ մի ազդեցութիւններն ընդունելով , մի եւ նոյն բանը կատարել՝ ասիկա չէ մեր փնտռածը :

Որչափ անգամ ալ որ նայիմ մի եւ նոյն առարկային , այնչափ անգամին ալ մի եւ նոյն արդիւնքը պիտի ներդործէ աչացս : Այս մըշտընջենաւոր միակերպութիւնը ներքին գաղափարէ մը չգար ինձ , այլ այս է պատճառը որ շարունակ մի եւ նոյն նիւթական առարկայէն կը բխուիմ , գործարանս միշտ միապէս կը շարժի , եւ թէ բնութիւնը այս շարժման այնպիսի զգացողութիւն մը միացուցած է՝ որոյ արդիւնքը խափանել մեր ձեռքը չէ :

Այսպէս պէտք է հասկնալ նաեւ կենաց օգտակար կամ վնասակար իրաց համար ալ , Կնութեան մէջ դանուած իւրաքանչիւր իրերն մասնաւոր յատկութիւն մ'ունին՝ որ մեր մարմնոյն վրայ ազդեցութիւննին կը կատարեն : Ասկէց կախեալ են բնականաբար հեշտութիւն եւ վիշտ , ցանկութիւն եւ ատելութիւն :

Արդ ինձ այնպէս կը թուի՝ որ անասունը մի միայն ազդեցութեանց ընդունակ են : Ստոյգ է թէ՛ ի ձեռն ազդեցութեանց միայն կրնամք կենդանեաց գլխուն մէջ բան մը տպաւորել : Մարդ էակը կրնայ աննիւթ գաղափարներ ունենալ , ինչպէս , ճշմարտութեան , առաքինութեան , կարգի , շարժակցութեան եւ ասոնք

կացուցանող անխօփօս կանոնաց , որոնք ստուգիւ աննիւթ իրեր են : Ընդ հակառակն , երբ շուն մը կը թեկ ուզենք , նախ պէտք է որ հաց ցցունեմք անոր , ձեռքերնիս գաւազան առնեմք , կամ այսպէս զուրցենք , հարկ է որ անոր բոլոր գործարանաց վրայ նիւթական առարկայներ շարժենք եւ զայն գաւազանի հարուածով ուղղենք , ինչպէս երկաթը մուրճի հարուածով կը բարակցուենք :

Թէ ինչ ըսել է ճշմարտապէս ուսանիլ եւ թէ ինչ տարբերութիւն կայ մարդ կը թեկու եւ անասուն ուղղելու մէջ , ասիկա իմանալ ու գողը պէտք է մտածէ՝ թէ այս երկու սեռի էակաց համար ինչ գործիքներ կը գործածուին :

Մարդուն համար խօսք կը գործածուի , որոյ գորութիւնը նիւթական ազդեցութենէ կախումն չունի բնաւ . որովհետեւ սոյն ազդեցութեան միջոցաւ չէ որ մարդ ուրիշ մարդու խօսքը կը հասկնայ : Եթէ մարդ ուրիշին ըսածը չը գիտնայ , չը հասկընայ , մէկ խօսքով , եթէ լեզուն չըհասկնայ , խօսքը իրեն բան մը չազդեր , եւ ընդ հակառակն եթէ տասը տեսակ լեզուէ տեղեկութիւն ունենայ , այսպիսոյն ուղեղին եւ ականջաց վրայ կատարուած այս տասը կերպ ազդեցութիւնները մէկ գաղափար մը միայն պիտի յարուցանեն իւր մէջ , եւ ինչ որ մէկը անոր կը բացատրէ այսքան լեզուներով , կրնայ նաեւ նոյնը բացատրել այնչափ գրերով : Խօսքին եւ գրոյն վրայ կրնամք յաւելուլ ուրիշ բիւրաւոր նշաններ ալ . որովհետեւ բնութեան մէջ դանուած մը բանը իրրեւ նշան չը ծառայեր մեզ : Համառօտ ըսել , մարդս ա-

մեն բան կրնայ հատկնալ, բաւական է որ այլոց նշանը, ձայնը կամ աղաղակն իրեն իմանալի ըլլայ : Իսկ անասնոյն որուն հետ խօսելով բան հասկցունելն անհնար է, սոսկ նիւթական եւ իրական ազդեցութիւններ, ինչպէս, հարուած եւ գաւազան հարկաւոր են : Եւ եթէ անասնոյն համար խօսք ալ գործածենք, այս խօսքերն՝ դորս շարունակ անասնոյն ականջին կը յեղյեղենք՝ լոկ ձայն են եւ ոչ նշան : որովհետեւ անասնոյն ոչ թէ մեր խօսքերն իմացունել, այլ միայն զանիկա ուղղել եւ ընտելացունել կուզենք :

Մարդու մը հետ խօսելու եւ կամ անոր բան մ' ուսուցանելու զբաղած ժամանակնիս, մինչեւ որ զիմացիննիս մեր խորհրդոց խորը չը թախանցէ՝ խօսելէ չենք դադրիր : Անասնոց համար այսպէս չէ . զի ճիշդը զուրցելով, անասուններն իբրեւ գերի կը գործածենք . ինչպէս, շունը՝ իբրեւ որսորդութեան գործի, ձին՝ ըզմեզ բառնալու եւ սլատերազմի մէջ մեզի ծառայեցունելու համար եւ այլն : Ինչպէս երբ նուազարան մը զարնել ուղենք՝ անոր թելերը առաջուց կը շտկենք՝ մինչեւ որ զայն մեր ուղած աստիճանը հասցունենք, այսպէս ալ որսորդութեան վարժեցնել ուղած շուներնիս կը մորձենք՝ մինչեւ որ ուղածնիս կատարէ . բայց ջանք չենք ըներ որ շունը մեր խորհուրդը գիտնայ, ինչպէս նաեւ նուազարանին թելն ալ . որովհետեւ անասունք մեր մտածութեանց եւ խորհրդոց համապատասխանող մտածութիւն եւ խորհուրդ չունին :

Եթէ անասունք մարդոցմէ բան մը չեն կըր-

նար սովորիլ, հասլա որչափ եւս առաւել իրաւամբ պէտք է հաւատամք թէ մէկ մէկէ ալ չեն սովորիր :

Իրաւ է որ անասունք նորանոր ազդեցութիւններ եւ տրամադրութիւններ կ'ընդունին մէկ մէկէ, բայց եթէ ասիկայ ուսանել է, այն ատեն բոլոր ընութիւնը ուսանելու ընդունակ եղած պիտի ըլլային, եւ ամէն բանէ աւելի հրնազանդ կնքամոմը պիտի ըլլար, որ իւր վրայ դրուած կնքոյն բոլոր դժերը վրան կտռու :

Այս կերպով է որ թռչելի մը իւր մօրը թռչելուն ազդեցութիւնը ուղեղին մէջ կ'ընդունի, այս ազդեցութիւնն ալ իւր մօրը ազդեցութեան նման ըլլալով հարկաւորաբար մի եւ նոյն գործողութիւնը պիտի կատարէ :

Մարդիկ այս բանս ուսանել կ'անուանեն, որովհետեւ բան մը սորված ատեննին՝ նմանօրինակ բան մը կըլլայ իրենց մէջ, զի անասնոց նման ուղեղ ունին, եւ մեծ դիւրութեամբ այլոց վրայ տեսած շարժումները կը կատարեն . որովհետեւ իրենց ուղեղը սոյն շարժմանց տպաւորութիւնն ընդունելով պատրաստ կըլլայ անոնց նման ուրիշ շարժումներ ալ արտադրելու : Բայց ասիկա ուսանել չէ, այլ սոսկ ազդեցութիւն ընդունիլ, որոյ սլատձառը չեմք գիտեր :

Ասիկայ յայտնապէս երգերու եւ խօսակցութեանց մէջ ալ կը տեսնեմք : Մարդս ճիշդ այն ձայնով կը խօսի, որ ձայնով որ ուրիշ մը իրեն հետ կը խօսի . արձաղանդին ըրածն ալ բուն ասիկայ է . Երբ վինի մը երկու թելերն իրար միացունենք՝ մին շօշափած ատեննիս, միւս թելը

Ճայն կը հանէ : Ասոր նման բան մ'ալ 'ի մեզ տեղի կուեննայ , սր ատեն առաջին անգամ ըսկըսուած եղանակաւ երգենք : Երաժշտութեան դասատուն զայս ընել կուտայ մեզ , բայց այս բանս մեզ սովեցունողը ինքը չէ , բնութիւնը իրմէ առաջ արդէն զայն ուսուցած է մեզ : Ճայն կազմող շնչափողին եւ նոյն ճայնը ընդունող ականջին մէջ մեծ եւ վայելուչ համեմատութիւն մը հաստատելով : Անդամաղնութեան վրայ հըմտութիւն ունեցողներն այս համեմատութիւնը յառաջ բերող ջղաց եւ դնդերաց վրայ գիտութիւն ունին , եւ սակայն այս համեմատութիւնը իմաստասիրութենէ կախումն չունի :

Ասով է որ սոխակները մէկ մէկու պատասխան կուտան , տարմահաւք եւ պապկայք լսած ձայներնին կը կրկնեն : Գրեթէ արձագանդի պէս են ասոնք , կամ լաւ եւս ըսել , մի եւ նոյն աստիճանի վրայ յարդարուած լարեր՝ որք հարկաւորաբար միմեանց կը համապատասխանեն :

Մեք միայն մեր լսած ձայներնուս եղանակաւ չենք երգեր , այլ նաեւ մեր ամբողջ մարմինը կանոնաւոր շարժամբ կը տարուբերի , հերիք է որ լաւ ականջ ունենամք , եւ ասիկայ այնչափ քիչ կախումն ունի մեր ընտրողութենէն՝ որ պէտք է զմեզ ստիպեն՝ ուրիշ կերպ ընելու համար . այս աստիճան համեմատութիւն կայ ականջին եւ մեր մարմնոյն միւս մասերուն շարժմանց մէջ :

Հիմա դիւրին է իմանալ արուեստիւ ուսանելուն եւ ընականաբար նմանելուն մէջ եղած տարբերութիւնը : Երբ ուրիշէ մը վերջը մենք ալ երգենք , բնականաբար անոր կը նը-

մանինք , բայց երգել սովորած կ'ըլլամք , սր ժամանակ ուշադրութիւն ընծայենք նոյն արուեստին կանոնաց , չափերուն , ձայներուն տեւողութեան , զանազանութեան , ներդաշնակութեան եւ ուրիշ ասոնց նման իրաց :

Մինչեւ հիմակուան զուրցուածները սա հետագայ երկու բանին մէջ ամիոփելով ըսենք՝ թէ կրթութեան կամ ուսման մէջ կայ բան մը՝ որ գործարանաց կազմակերպութենէն կախումն ունի , եւ այս բանիս անասունք ալ մարդոց պէս ընդունակ են : Կայ մէկ ուրիշ բան մ'ալ՝ որ խորհրդածութենէ եւ արուեստէ կախեալ է , որոյ հետքն անգամ չը տեսնուիր անասնոց մէջ :

Ասով կը բացատրուի անասնոց լեզուին վրայ բոլոր խօսածնիս : Ուրիշ բան է՝ օղը ծածանող եւ սպա մեր ականջաց եւ ուղեղին ցընցումն տուող ձայնէն կամ խօսքէն ազդեցութիւն ընդունիլ , եւ ուրիշ՝ զայն իբրեւ նշան համարել , որ մարդոց միայն յատուկ է , եւ նոյն խօսքին նշանակութիւնները միտք պահել եւ յիշել : Այս վերջինն է լեզու իմանալը կամ հասկընալը , որոյ հետքն անգամ չկայ անասնոց մէջ :

Գարձեալ սուտ կամ ցնորական երեւակայութեան արդիւնք է հաւատալ՝ թէ անասունք մեզի նշաններ կ'ընեն . զի այլ է բան մ'իմացնել ուղեղով նշան ընել , եւ այլ՝ այնպիսի եղանակաւ շարժում ընել , որ դիմացինը կարող ըլլայ իւր դիտաւորութիւնն իմանալ :

Ծուխը կրակին նշանն է եւ հրդեհ պատահելը կիմացունէ մեզ . ժամացոյցի սլաքին շարժումները ժամերը կը ցուցնեն եւ մեր օրերը կը սահմանեն . դիմաց կարմրութիւնը եւ աչաց կը-

րակ կտրիր՝ բարկութեան նշաններ են , փայլակը կիմացունէ մեզ կայծակէն խուսափել : Տղու մը աղաղակներն իւր ցաւ զգալուն նշաններն են , եւ յանգէտս զինքը սիրոփելու կը հրաւիրէ զմեզ . բայց որոնք որ կ'ըսեն՝ թէ կըրակը կամ ժամացոյցը , սղան եւ կամ նոյն իսկ բարկութեան մէջ եղող մարդը՝ նոյն նշանները կընեն մեզի բան մ' իմացունելու համար՝ չարաչար կը սխալին :

Սակայն այս գոյզն նմանողութեանց մէջ մարդիկ անասնոց հաւասար կը համարին ինքզինքնին : Կը տեսնեն՝ որ անասունք ալ իրենց նման մարմին ունին եւ իրենց պէս մարմնական շարժումներ կը կատարեն : Դարձեալ մարդիկ իրենց զգայարանաց եւ անոնցմով իրենց մարմնոյն կապուած են : Մարդիկ իրենց արժանապատուութիւնը կը մոռնան , եւ թէ իրենց եւ թէ անասնոց հասարակ եղած բաներով գոհ ըլլալով բոլորովին անասնական կեանք կը վարեն :

Տարօրինակ բան , որ մարդիկ զիրենք անասնոց հաւասար համարին : Մարդ՝ կենդանի հրապարտ, որ ամեն ընտիր եւ գերազանց բաներն իրեն սեփականել կը կամի եւ իւր նմանեաց առջեւ խոնարհել չ'ուզեր բնաւ , կը ջանայ ապացուցանելու՝ թէ անասուններն իրեն հաւասար են , եւ իւր ու անասնոց մէջ քիչ տարբերութիւն միայն կայ :

Այս աստիճան տարօրինակ ապականութիւն մը՝ որ մէկ կողմանէ կը ցցունէ մարդուն թէ որչափ հպարտ եւ միւս կողմանէ ալ իւր զգայախիրութեամբն որչափ անարգ եւ ստորին մէկըն է , այս ապականութիւնը , կ'ըսեմ , ուրիշ բա-

նով չկրնար բժշկուիլ , բայց միայն մարդկային բնութեան ունեցած առաւելութեանց վրայ ճիշդ դիտողութիւն ընելով : Ահաւաստիկ մեր բնութեան ունեցած մեծ իրերը՝ որոց երեւոյթն անգամ չենք տեսներ անասնոց մէջ :

Մարդկային բնութիւնը զԱստուած կը ճանչնայ . ահա սոսկ այս բառով կ'իմացուի որ անասունք յանհունս ստորին , անարգ եւ խոտան են քան զմարդ : Արովհետեւ կայ այն աստիճան յիմար մէկը՝ որ յանդգնի ըսել թէ անասունք ամեն բան ստեղծող այս դերագոյն բնութեան վրայ խիստ քիչ գաղափար ունին , եւ թէ մարդոց այս ծանօթութիւնը իրենց անասուններէն ունեցած տարբերութեանց ամենէն մեծը չէ :

Մարդկային բնութիւնը զԱստուած ճանչնալով՝ բարւոյն եւ ճշմարտին , անասնման իմաստութեան , բացարձակ կարողութեան , անսխալ արդարութեան , միով բանիւ , կատարելութեան գաղափարներն ունի :

Մարդկային բնութիւնը անփոփոխականութիւն եւ յաւիտենականութիւն կը ճանչնայ , զիտէ ալ թէ նա՝ որ միշտ գոյ է եւ միշտ նոյն , հարկ է որ ամեն փոփոխական բաներէ յառաջ ըլլայ , եւ թէ՛ փոփոխական բան մը բաղդատութեամբ մշտագոյին՝ էակաց կարգն անգամ գատուելու արժանի չէ :

Մարդկային բնութիւնը յաւիտենական ճշմարտութիւնները կը ճանչնայ եւ բոլոր փոփոխական իրաց մէջ անդադար զանոնք կը վնասէ , որովհետեւ իր իմաստութիւնը բոլոր փոփոխութիւնները անփոփոխ կանոնաց վերածելուն վրայ է : Զի զիտէ թէ տիեզերաց մէջ տեսնո՞

ւած ամէն փոփոխութիւններն իրենց մէջ կարող եւ ծածկեալ չափակցութիւններ ունին, այնպէս որ գործը իւր ամբողջութեանը մէջ նկատելով՝ բնաւ անկանոն բան մը չենք գտներ անոր մէջ:

Հոս է որ կ'իմանայ կամ կը տեսնէ աշխարհի կարգը, աստեղաց անհամեմատ գեղեցկութիւնն եւ իրենց շարժմանց կանոնաւորութիւնը, արեգական ընթացից մեծամեծ արդասիքներն՝ որով տարւոյն զանազան եղանակները յառաջ կուգան եւ երկիրս ազգի ազգի զարդարանքներով կը պծնի: Մեր բանականութիւնը Աստուծոց բոլոր գործերը կը նկատէ, յորս թէ ամբողջին եւ թէ մասանց մէջ տեսնելով՝ մէկ կողմանէ այնչափ փայլուն եւ պայծառ, եւ միւս կողմանէ խորին եւ ծածկեալ իմաստութիւն մը, կ'զմայլի եւ այս նկատողութեան մէջ ինքզինք կը կորսնցունէ:

Այն ատեն այս կեանքէն դուրս ուրիշ կեանքի մը գեղեցիկ եւ ճշմարիտ գաղափարը կ'երեւի իրեն, կեանքի մը՝ որ ճշմարտութիւնը ակն յանդիման նկատելու վրայ կը կայանայ, եւ կը տեսնէ՝ թէ ճշմարտութիւնը, ինքնին յաւիտեանական, այսպիսի կեանք մը իւր յատուկ յաւիտենականութեամբը չափած է:

Մարդկային բնութիւնը կը ճանչնայ՝ թէ դիպուած ըսուածը տգիտութեամբ հնարուած անուն մ'է եւ աշխարհի մէջ դոյութիւն չունի. որովհետեւ գիտէ թէ բանականութիւնը դիպուածի ետեւէ չերթար, եւ թէ որչափ աւելի բանականութիւն կայ ձեռնարկութեան կամ գործոյ մէջ, այնչափ աւելի քիչ դիպուած կայ, այնպէս որ ուր որ անսահման բանականու-

թիւնը գահերէց կը բազմի, հոն դիպուածը չը կրնար տեղի ունենալ:

Մարդկային բնութիւնը կը ճանչնայ՝ թէ ամեն մարմնոց տէր եւ զանոնք իւր կամաց համեմատ շարժող Աստուածը չը կրնար մարմին մ'ըլլալ. ապա թէ ոչ՝ փոփոխական, յողբողը, այլայլելի եւ հետեւաբար ամեն բան ստեղծող անփոփոխ եւ յաւիտենական Աստուածը պիտի չըլլար:

Մարդկային բնութիւնը կը ճանչնայ բանականութեան զօրութիւնը, դիտէ ալ թէ բան մը մէկ ուրիշ բանէ ինչպէս կը հետեւի. Ննք իւր մէջ կը տեսնէ բանականութեան այս անյադթելի զօրութիւնը. կը ճանչնայ այն ստոյգ կանոններն՝ որոցմով իւր խորհրդոց մէջ կարգ կը դնէ. բոլոր ուղիղ իմաստասիրութեանց մէջ ճշմարտութեան յաւիտենական լոյս մը կը տեսնէ, եւ շղթայաբար իրար անդամ ճշմարտութեանց շարքին մէջ կը տեսնէ թէ ըստ ինքեան մի ճշմարտութիւն միայն կայ՝ յորում ամփոփուած են միւս ամեն ճշմարտութիւնները:

Մեր բանականութիւնը կը տեսնէ՝ թէ այս մի ճշմարտութիւնը իմանալու համար՝ բնականաբար միայն մէկ խորհրդածութիւն բաւական է, եւ 'ի յինքեան ծագումն առած խորհրդոց բազմութեան մէջ կ'զգայ նաեւ թէ ինքը դոյզն ինչ հոսումն է անոր՝ որ ամեն ճշմարտութիւն մի խորհրդոյ մէջ ամփոփելով՝ յաւիտենականապէս ալ մի եւ նոյն բանը կը մտածէ:

Նոյնպէս կը ճանչնայ մեր բանականութիւնը թէ ինք այս առաջին բանականութեան մէկ կայծը եւ պատկերն է, եւ կը պարտի անոր նը-

մանիլ եւ անոր համար միայն ապրիլ : Ար տեսնէ՝ թէ չարունակ մի եւ նոյն բանը մտածող էակիրն պարզութեան նմանելու համար կը պարտի իր խորհուրդները 'ի մի ամիտիել , այսինքն , հաւատարմաբար ծառայել այն Աստուծոյն՝ ուրոյ պատկերն է :

Ար մտածէ նաեւ թէ 'ի սէր իւր արարչին պարտական է սիրել այն ամենը՝ որք այս աստուածային նմանութեամբ պատուեալ են , այսինքն , բոլոր մարդիկ :

Հոս կը գտնէ արդարութեան , վայելչութեան , ընկերութեան , կամ լաւ եւս ըսել , մարդկային եղբայրութեան կանոններն ու օրէնքները , եւ՝ դիտնալով թէ բոլոր աշխարհի մէջ անվայել բան չըկայ բնաւ , որովհետեւ բանականութեամբ ստեղծուած է , կ'զգայ թէ ինք՝ որ կ'իմանայ այս բանականութիւնը , կը պարտի վայելչութեան օրէնքներով ինքզինք կառավարել : Գիտէ՝ թէ այս օրէնքներէն կամաւ խոտորողն արժանի է ամենակարող իշխանութեան ձեռօք սանձուելու եւ պատժուելու , եւ թէ չարիք ընողը պէտք է որ չարիք կրէ : Գիտէ՝ թէ պատիժը անիրաւութեամբ ապակասեալ աշխարհի կարգը կը վերանորոգէ , եւ թէ անիրաւ գործ ընողն երբ չզգաստանայ , հարկ է դաջն պատժով զգաստացունել :

Ար տեսնէ ուրեմն որ աշխարհի մէջ գտնուած ամեն բան օրինաւոր է , եւ թէ հետեւաբար ամեն ինչ գեղեցիկութիւն ունի իւր մէջ , որովհետեւ ուղղութենէն եւ արդարութենէն աւելի գեղեցիկ բան չկայ :

Այս կանոններով կը ճանչնայ թէ այս կեանքը՝

յորում այնչափ չարիք եւ անկարգութիւնք կան՝ պատժական վիճակ է , զոր պիտի յաջորդէ այնպ' սի վիճակ մը , յորում առաքինութիւնը՝ յատենական երջանկութեան , մոլութիւնն ալ մշտնջենաւոր տանջանաց արժանի պիտի ըլլան :

Ճշմարիտ սկզբունքներով դիտէ թէ ինչ ըսել են վարձք եւ պատիժ , դիտէ նաեւ թէ ինք իւր եւ այլոց հետ ինչպէս պէտք է վարուի :

Գիտէ՝ թէ ընկերութիւնք եւ հասարակապետութիւնք ինչ հիման վրայ կը հաստատուին , եւ թէ անգթութիւնն ու բարբարոսութիւնն անհետացունելու կերպերը որոնք են :

Ըսել թէ կենդանիք ալ այս ամեն իրաց վրայ դոյզն ինչ դաղափար ունին , կամաւ կուրանալ եւ ուղիղ տրամաբանութեան հակառակել է :

Այս ամեն ըսուածներէն եղբակացունենք ու ըսենք՝ թէ մարդ ինքզինք անասնոց եւ կամ զանասունս իրեն հաւասարցնելով , անհնարին տգիտութեան եւ մոլորութեան մէջ ընկըմամ կը լլայ :

Այս մոլորութիւնն ալ մեր մէջ եղած բանականութիւնը կամ իմացականութիւնը մը չակելու ինամ չտանելէ յառաջ կուգայ : Աթէ մտածենք թէ կենդանիք աշխարհի ստեղծմանէն 'ի վեր բան մը հնարած չեն բնաւ , եւ անգամ մ'ալ մտքերնիս բերենք այն բազմաթիւ հնարքներն , արուեստներն ու մեքենայները՝ որոց ձեռօք մարդկային բնութիւնը երկրիս երեսը կերպարանափոխ ըրած է , պիտի տեսնենք ու անմիջապէս իմանամք՝ թէ անասունք 'որչափ

ստորին , եւ մարդիկ անասուններէն որչափ դե-
րագանց եւ հնարագէտ են :

Անասնոց այնչափ ճարտարութիւնն ստորուող-
ները պիտի չը զարմանան արդեօք տեսնելով որ
այս անասունները ցայսօր տակաւին բան մը հը-
նարած չեն , ո՛չ իրենք զիրենք պահպանելու
համար դէնք , ո՛չ ալ զիրենք թակարդը ճգող
մարդոց դէմ միաբանելու եւ կոռելու համար
ազդանշան : Եթէ կը մտածեն , եթէ կը դատեն
եւ եթէ կը խորհին , ինչպէս կըլլայ որ մինչեւ
ցայսօր իրարու միտք հասկնալու համար փոք-
րիկ նշան մը հնարած չեն : Խուլք եւ համերք
մասներով իրարու հետ խօսելու հնարքը գտած
են : Ամենէն տխմար ու ապուշ մարդիկներն
անդամ իրարու միտք հասկնալու հնարք կրնան
դտնել : Արդ տեսնելով որ անասունք այս բա-
նիս անկարող են , կրնամք հետեւցունել թէ
որչափ տխմար , անարգ եւ խոտան են , եւ թէ
անոնք բանական են ըսելը՝ բանականութիւնը
ուրանալ եւ չը ճանչնալ ըսել է :

Մօնթայները ըսած է՝ թէ այս եւ այն մար-
դուն մէջ այնչափ տարբերութիւն կայ՝ որչափ
այս ոք մարդոյն եւ այն ոք անասնոյն . մէջ ջը-
կայ : Ա՛րդդահատիմք Մօնթայնի այսչափ ցած
հանճարին վրայ՝ թէպէտ եւ այսպիսի խօսք մը
կատակի համար ըսած ըլլայ կամ չըլլայ :

Կայ այնչափ ապուշ մարդ՝ որ գտնէ իւր
միտքն ուրիշին իմացնելու համար նշան չը հնա-
րէ : Կայ այնչափ վարպետ անասուն մը՝ որ բան
մը հնարած ըլլայ , եւ ո՞վ չգիտեր թէ ամենէն չըն
չին հնարքն՝ անկէ յառաջ եկած ուրիշ հնարք-
ներէն աւելի դերագանց կը համարուի :

Ապուշ մարդիկներն անասնոց հետ հաւա-
սար դասող իմաստասիրութեան դալով՝ դիտո-
ղութեան արժանի երկու բան կայ . նախ՝ թէ
ամենէն տխմար մարդիկն անասնոց ամենէն կա-
տարեալ երեւցածէն աւելի դերագոյն կարդի
բաներ ունին . երկրորդ՝ որ ամէն մարդիկ նոյն
եւ մի բնութեան տէր ըլլալով՝ մարդկային հո-
գւոյ կատարելութիւնը հարկ է մարդկային սեռի
ամբողջութեան կամ ընդհանուրին կարողու-
թեան մէջ նկատել . ընդ հակառակն անասունե-
րէն միոյն մէջ չը տեսնուած իրը՝ իրենց ամ-
բողջ սեռին մէջ ալ չը տեսնուիր :

Եւ որովհետեւ անասնոց կոյր ուժգնութե-
նէ մը միայն մղուելնուն ամենէն հաւանական
նշանն իրենց գործողութեանց միակերպութիւնն
է , ուստի այս խնդրոյն վրայ խօսինք , եւ
մարդկային կենաց մէջ մարդոց իրարմէ տար-
բերելնուն պատճառները վնասուիմք :

Մարմիններն իրենց տրամադրութեանց հա-
մեմատ նոյն եւ մի դծի վրայէ կը քալեն : Քանի
որ մեր մարմինը նոյն եւ մի տրամադրութիւ-
նն ունի , հարկաւորաբար իւր շարժումներն
ալ միշտ մի եւ նոյն կ'ըլլան :

Նոյն բանը պէտք է զուրցել նաեւ զգացու-
ղութեանց համար ալ՝ որք , ինչպէս ըսինք ,
մարմնական գործարանաց տրամադրութեանէն
կախուան ունին :

Որովհետեւ թէպէտ իմացանք որ մեր զգա-
ցողութիւնները հարկաւորաբար մարմնէն որոշ
սկզբունք մը , այսինքն , հողի մը կը պահանջեն ,
բայց իմացանք նաեւ որ այս հողին որչափ
ատեն որ զգայ՝ մարմնոց հպատակ է , այնպէս որ

զգացողութիւնք մարմնոյն շարժումներէն յառաջ կուգան :

Ուրեմն զգացողութեան ձեռք բան մը պիտի չր կարենանք հնարել , զգացողութեանց որք միշտ մարմնական շարժմանց հետեւանքն են եւ երբէք այս դժէն չեն շեղիր :

Ինչ որ ըսինք զգացողութեանց համար, նոյնը պէտք է զուրցել երեւակայութեան համար ալ , որ զգացողութեանց շարունակութիւնը կամ տեւականութիւնն է :

Հնարադիտութիւններն երեւակայութեան ստորոգելուս պատճառն այս է՝ որ խորհրդածութիւն եւ իմաստասիրութիւն երեւակայութեան հետ կը խառնուին , ինչպէս քիչ մը վերջը պիտի տեսնեմք : Բայց ըստ ինքեան՝ երեւակայութիւնը բան մը չկրնար յարդիւնս ածել , որովհետեւ երեւակայութիւն ըսուած կարողութիւնը զգացողութեանց վրայ տեւականութիւն միայն կրնայ յաւելուլ :

Այսպէս են նաեւ այն բնական ցանկութիւններն ու ատելութիւններն՝ զորս կիրք կ'անուանեմք : Վասն զի այս կրքերը զգացողութեանց եւ գլխաւորաբար հաճոյից եւ վշտաց հետեւանքներն են :

Արդ , ուրեմն եթէ սոսկ մարմին , զգացողութիւն եւ ասոնցմէ յառաջ եկած բաներն ունենար մարդս՝ հնարադիւտ պիտի չըլլար . սակայն երկու բանէ , այսինքն , մեր խորհրդածութիւններէն եւ մեր ազատութենէն կը ծնին դիւտք կամ հնարք :

Որովհետեւ զգացողութիւններէ , երեւակայութիւններէ եւ բնական ցանկութիւններէ դեր

'ի վերոյ բան մը , խորհրդածութիւնը կ'սկսի բարձրանալ մեր մէջ , այսինքն , թէ մեր զգացողութիւնները կը դիտենք , դանոնք իրենց առարկայից հետ կը բաղդատենք եւ թէ 'ի մեզ եւ թէ արտաքոյ քան զմեզ կատարուած իրողութեանց պատճառները կը վնասենք . միով բանիւ , կ'իմանամք եւ կ'իմաստասիրեմք , այսինքն , ճշմարտութիւնը կը ճանչնամք եւ մէկ ճշմարտութենէն միւսը կ'անցնինք :

Ասով ուրեմն կ'սկսինք մարմնական դորձարանաց արամադրութենէն դեր 'ի վերոյ բարձրանալ . եւ դիտել պէտք է թէ երբ անդամ մը այս ճամբուն մէջ առաջին քայլն առնենք , ալ այնուհետեւ մեր յառաջադիմութիւնները չափ եւ սահման չեն ունենար . որովհետեւ խորհրդածութեանց յատկանիշը անընդհատ եւ շարունակ խորհրդածութիւն յառաջ բերել է , այնպէս որ յանձունս մեր խորհրդածութեանց վրայ կը խորհինք : Սակայն մեր վրայ ըրած անդրադարձութեանց վրայ խօսած ժամանակնիս հարկ չըկայ ըսելու թէ ասիկա մարմնոց անդրադարձութեան նման չէ : Խորհիլ՝ չըջանաւոր շարժում կատարել ըսել չէ , ապա թէ ոչ ամեն չըջան ունեցող մարմին թէ իրեն եւ թէ իւր շարժմանց վրայ տեղեկութիւն պիտի ունենար : Խորհիլ՝ մարմնական շարժումներէ եւ զգացողութիւններէ դեր 'ի վերոյ այնպիսի լոյս մը ընդունիլ է՝ որով կրնայ մարդ ճշմարտութիւնը մինչեւ իր ծագման մէջ վնասել :

Վասն որոյ համառօտիւ զորցելով կըմոլորին այն մարդիկ՝ որք անասնոց իմաստասիրութիւն կ'ընծայեն , բայց կ'ըսեն ալ թէ անոնց իմաս-

տասիրութիւնը սահմանափակ է : Որովհետեւ ընդ հակառակն , մէկ խորհրդածութենէն ուրիշ մը յառաջ կուգայ , եւ անամոց բնութիւնը միանգամ ուղիղ դձէն չեղելով՝ պիտի կրնայ այն ատեն ամեն բան ալ հասկնալ :

Այսպէս , հետազոտութիւն հետազոտութեան վրայ կատարուելով՝ մարդկային հնարքները հետզհետէ կատարելագործուած են : Մարդ , ճշմարտութեան ուշադիր , ճանչցած է՝ թէ ինչ բան իւր նպատակաց կը յարմարի եւ ինչ բան չը յարմարի , եւ զգացողութեանց միջոցաւ իւր երեւակայութիւնը անհուն պատկերներով լեցուած դտած է : Խորհրդածելու կարողութեամբը զանոնք իրարու միացուցած եւ իրարմէ բաժնած է , եւ այսպէսով՝ նպատակներ կազմած , եւ այն նպատակները յաջողելու համար ալ յարմար նիւթեր փնտռած է : Տեսած է՝ որ միանգամ հիմը դնելէն վերջը կրնայ շինուածքին վերին մասն ալ կանգնել , օդոյն մէջ ընդարձակ միջոցներ բռնելով՝ իւր բնակարանը եւ ուրիշ մեծամեծ շէնքեր կանգնեցուցած է : Բնութիւնը ուսանելով՝ անոր նորանոր ձեւեր տալու միջոցներ գտած է : Գործիքներ եւ զ'նքեր շինած եւ ջուրերը վեր բարձրացուցած է , որովհետեւ զանոնք իրեն պէտքին գործածելու համար պիտի չը կրնար մինչեւ անոնց խորը խնել , ամբողջ երկրիս երեսը կերպարանափոխ ըրած , անոր խորերը փորած , քննած եւ այն տեղերէն իրեն համար նորանոր օդնութիւններ գտած է , ինչ բանի որ չէ կրցած հասնիլ՝ զայն հեռուէն տեսնելով՝ իրեն պէտքին ծառայեցուցած է : Այսպէս մարդիկ աստղերու միջոցաւ իրենց նա-

ւարկութիւններն ու ճանապարհորդութիւններն ուղղութեամբ կը կատարեն , անոնցմով կրնան նշանակել տարւոյն զանազան եղանակներն ու ժամերը : Մարդկային հանձարը վեց հազար տարիներէ՝ ի վեր հետազոտութիւններ կ'ընէ եւ տակաւին յոգնած ու սպառած չէ , կը փնտռէ եւ կը գտնէ տակաւին , որպէս զի ճանչնայ թէ կըրնայ մինչեւ յանհունս դանել , եւ թէ ծովութեամբ իւր ծանօթութեանց եւ հնարագիտութեանց չափ ու սահման դնել :

Թող ցցունեն հիմայ ինձ թէ անասունք աշխարհի սկիզբէն ի վեր , բնութեան իրենց տուածին վրայ բան մը աւելցուցած են , որպէս զի ես ալ դիտնամ կամ ըսեմ թէ անոնց մէջ խորհրդածութիւն եւ հնարագիտութիւն կայ : Իսկ եթէ ջրոց եւ ծառոց պէս շարունակ մի եւ նոյն դժին վրայ կ'ընթանան , յիմարութիւն է տալ իրենց այնպիսի սկզբունք մը՝ որոյ եւ ոչ մէկ արդիւնքը կը տեսնուի իրենց մէջ :

Գիտել պէտք է՝ թէ մեր ամենէն հանձարեղ երեւակայած կենդանիները չեն աւելի ճարտար գործ կատարողները : Անեղանեաց մէջ տեսնուած ամենէն աւելի ճարտարութիւններն են՝ մըջիւններուն շտեմարանները՝ եթէ ստոյգ են այս շտեմարաններուն վրայ եղած գիտողութիւններն ու ըսուածները : սարդերուն ոստայններն եւ իւրենց՝ ճանձերուն համար լարած թակարդները , մեղուաց խորիսխները , չերամի որդան պատեանը , խղունջի եւ ասոր նման կենդանիներու պատեաններն , որոց լորձուքներն իրենց շուրջը խիստ զարդարուն եւ խիստ հանձարեղ

ճարտարապետութեան նման շէնքեր կը շինեն :
Եւ սակայն այս կենդանեաց վրայ բնաւ իմա-
ցականութեան նշան չը նշմարուիր . ըսել՝ թէ
այս անասունները մըռններէն կը դերազանցեն
իրենց ճարտար դործերով , որովհետեւ դերա-
զոյն սկզբունք ունին , մեծ մուրրութիւն է :

Արդ բանականութիւնը կը համոզէ զմեզ՝ թէ
անասնոց մէջ երեւցած ճարտարութիւնը ծառոց
եւ ծաղկանց մէջ տեսնուած ճարտարութեան
նման է . այսինքն , թէ անոնց ճարտարութիւնը
յիրաւի արուեստով մը կ'ըլլայ , սակայն այս
արուեստը Աստուծոյ կողմէն է եւ ոչ թէ՛ ՚ի բնէ
կենդանեաց մէջ կայ :

Բայց մարդոց մէջ դործող խորհրդածու-
թեան սկզբունքէն ուրիշ բան մ'ալ կը ծագի ,
այսինքն , ազատութիւնը , որ մարդոց զանազան
իրեր դործելու եւ նոցա հնարապետութեանց
նոր սկզբունք մ'է : Որովհետեւ հոգին խորհրդա-
ծութեան միջոցաւ մարմինէն ու առարկայներէն
վեր բարձրացած՝ անոնց ազդեցութեանց ետե-
ւէն չերթար բնաւ , այլ իր ազատութեամբ տէր
է թէ առարկայից եւ թէ ինք իրեն : Ասանկով
իրեն հաճոյ երեւցած բանին կը յարի , ուզած
բանը միայն կը դիտէ՝ զայն իւր նպատակաց
համեմատ իրեն ծառայեցնելու համար :

Այս ազատութիւնը այն աստիճան հեռի
կը տարածուի՝ որ երբ հոգին բոլորովին անոր
անձնատուր ըլլայ , շատ անգամ բանականու-
թեան իրեն ցցուցած սահմաններէն կ'անցնի ,
ուսկից յառաջ կուզան մուրրութիւններն ու վը-
րիպանքները մարդկային կենաց մէջ : Ուստի
բիւրաւոր հնարք , օրէնք , կը թութիւնք , վարձք ,

պատիժ եւ ուրիշ միջոցներ հնարուած են մար-
րեալ ազատութիւնը ուղղելու եւ ՚ի չափու-
ունենալու համար :

Կենդանիք մարդոց յատուկ եղած կերպով
չը մուրրելնուն համար զանոնք բնաւ չենք պար-
սաւեր : Զանոնք շատ անգամ կը ծեծենք , բայց
ճիշդ այն կերպով՝ ինչպէս որ նուազարանին
ուզած ձայներնուս աստիճանը տալու համար
յաճախ իւր թելերը կը խառնենք : Իսկ անասուն-
ները պարսաւել եւ անոնց դէմ դայրանալ՝ չը
գրող գրիչը բարկութեամբ կ'օտարելնուս , կամ
չը կարող դանակը ձեռքերնէս դետին զարնել-
նուս կը նմանի ճիշդ :

Արդ մարդկային բնութիւնը ՚ի բարին եւ ՚ի
չարն զիմելու հակամիտութիւնն ալ ունի՝ զոր
կենդանեաց բնութեան մէջ չենք տեսներ բնաւ .
ուստի կենդանեաց մէջ երեւցած կրից արդիւնքը
խիստ պարզ եւ որոշ է : Իսկ մարդուս կրքերը
խորհրդածութիւններով կը գոյանան , եւ փոփո-
խակի զիրար կը շփոթեն : Օրինակի համար , իրար-
մէ տարբեր իրաց վրայ խորհած ատեննիս՝ երկիւ-
ղը բարկութեան , օրամութիւնն ալ՝ ուրախու-
թեան հետ կը շփոթենք եւ իրար կը խառնենք :
Սակայն որովհետեւ կենդանիք խորհրդածու-
թիւն չունին՝ նիւթական առարկայներու միայն
կ'զբաղին , եւ հետեւաբար իրենց շարժմունքները
քիչ անկանոն կ'ըլլան :

Աւելին կայ . հոգին իւր ազատութեամբ
կարող է կրից զիմադրել այնպիսի զօրու-
թեամբ՝ որ կրից արդիւնքը կ'արգելու : Ասիկայ
մարդոց բանական ըլլալու մէկ նշանն է . եւ որով-
հետեւ անասունք այս բանս չեն կրնար ընել ,

ուրեմն կը հետեւի՝ թէ բանականութիւն չունին։
Որովհետեւ ուր որ կիրքը անարգել կ'իշխէ ,
հոն մարմինը եւ իւր շարժումներն ամէն բան
կրնան ընել , յորս բնաւ բանականութիւնը չը
կրնար գործել :

Կամաց մարմնոյ վրայ ունեցած ամենէն մեծ
ժշխանութիւնը սա՝ սքանչելի արդեան մէջ կը
կայանայ՝ թէ մարդ իւր մարմնոյն այն աստիճան
է՛րիշխէ՝ որ մինչեւ անգամ կրնայ զայն մեծ բարի-
քի մը համար զոհել : Հարուածուիլ եւ սաստիկ
յուզելով եւ բորբոքելով այլ յայլմէ ըլլալ , ինչպէս
կը պատահի կենդանեաց , ասիկայ մարմինէն գեր
'ի վերոյ բան մը չը ցուցնէր . որովհետեւ ապա-
կի՛ մ'ալ եթէ իւր ծանրութեամբ բարձր տեղէ
մը վար իյնայ՝ կը խորտակի : Բայց գիտակցու-
թեամբ մահը յանձն առնուլ հակառակ մարմնոյն
տրամադրութեան՝ որ սոյն նպատակին կ'ընդդիմա
նայ , ասիկայ մարմինէն գերագոյն սկզբունք մը
կը ցուցնէ , եւ բոլոր կենդանեաց մէջէն միայն
մարդ էակը այս սկզբունքն ունի :

Արիստոտէլ խիստ գեղեցիկ խորհրդածու-
թեամբ կըսէ՝ թէ մարդս միայն բանականութիւն
ունի , որովհետեւ նա միայն կրնայ թէ՛ բնութեան
եւ թէ՛ սովորութեան յաղթահարել :

Մինչեւ հիմակուան զուրրցուածներէն յայտ-
նի կ'երեւի թէ կենդանեաց մէջ ո՛չ արուեստ ,
ո՛չ խորհրդածութիւն , ո՛չ հնարագիտութիւն եւ
ո՛չ իսկ ազատութիւն կայ : Անասունք բանակա-
նութիւն չունին , բայց զիրենք ստեղծողը բու-
րորովին բանականութիւն է :

Արդարեւ սքանչելի արուեստի արդիւնք է
այնպիսի ճարտարութեամբ կազմել նիւթը՝ ո-

րոյ համար մինչեւ անգամ կարծուի՝ թէ նոյն
Նիւթը ինքիրմով եւ իւր յատուկ ճարտարու-
թեամբ կը գործէ :

Քանդակագործք եւ նկարիչք , կարծես՝ թէ
քարերը կը կենդանացունեն եւ գունոց խօսիլ
կուտան . այն աստիճան կենդանի կերպով կը
ներկայացնեն արտաքին գործողութիւնները՝ որք
գիտես՝ թէ կեանք ունին : Գրեթէ մի եւ նոյն
խմաստով կրնամը ըսել թէ Աստուած կենդա-
նեաց իմաստասիրել կուտայ . որովհետեւ անոնց
գործոց մէջ բանականութեան այնպիսի զգա-
ցումն կամ կենդանի պատկեր մը լը դրոշմէ , մինչ
զի՛ ի սկզբան կ'երեւի թէ կենդանիք կ'իմաս-
տասիրեն :

Արդարեւ կ'երեւի թէ Աստուած կենդա-
նեաց մէջ իմաստասիրութեան եւ հնարագիտու-
թեան պատկեր դրոշմած է , ինչպէս նաեւ առա-
քինութեան եւ մջութեան , անոնց՝ ձագերնին
հողայու մասին գթութեան , կանխատեսութեան ,
հաւատարմութեան , կեղծաւորութեան , նա-
խանձու , հպարտութեան , անգթութեան , ամբար-
տաւանութեան եւ արիութեան պատկերներ :

Կենդանիք մեզի համար այնպիսի տեսա-
բան մ'են՝ յորում մեր պարտքերն ու պակասու-
թիւնները նկարուած կը տեսնեմք : Իւրաքան-
չիւր կենդանի իւր մասնաւոր յատկութիւնն ունի ,
եւ զայն պատկերի պէս կը ցուցնէ . բայց անոր
վրայ բան մը չը կրնար յաւելուլ . ինչպէս որ
պատկերն ալ իւր զծերուն վրայ իւր հեղինա-
կին՝ իրեն տուած հնարագիտութեանէն զատ ու-
րիշ հնարագիտութիւն չունի . կենդանին ստեղ-
ծուած է՝ ոչ թէ իւր մասնաւոր յատկութեամբը

վարուելու կամ գործելու, ինչպէս որ կը կարծենք, այլ այն յատկութեան յիշատակը մեր մէջ արթնցնելու համար:

Չարմանամբ ուրիմն, ոչ եթէ կենդանեաց հնարագիտութեան վրայ, որովհետեւ չկայ բնաւ ճարտարութիւն՝ յորում հնարագիտութիւն չկենայ, այլ այն իմաստութեան վրայ՝ որ զանոնք այնպիսի արուեստով մը ստեղծեր է, որ կարծես արուեստով կը գործեն:

Սակայն Աստուած չէ ուզած որ մարդիկ կենդանեաց վրայ տեսնուած իմաստասիրութեան երեւոյթէն խաբուին. ընդ հակառակն ուզած է որ կենդանիներն իրրեւ գործիք ծառայեցնենք մեր պիտոյից:

Ամենէն հզօր կենդանիներն անգամ մեզ կը հպատակեցնենք եւ ամենէն հնարագէտ կարծուածները կը նուաճենք. Գիտողութեան արժանի է՝ որ ամենէն շինական մարդիկները կենդանեաց հովիւ կ'ընտրենք. ասիկա կը ցցունէ՝ թէ կենդանիք քանի՞ զուրկ են իմաստասիրութենէ. որովհետեւ բանական էակներէն ամենէն քիչ խելք ունեցողն անգամ կրնայ զանոնք ուղղածին պէս հովուել:

Կայ ուրիշ բան մ'ալ՝ որ կը ցցունէ նոյնպէս՝ թէ կենդանիք որչափ հեռի են իմաստասիրելէ, քանզի չէ տեսնուած ընաւ կենդանի մը՝ որ իրեն ներկայացած առարկայից գեղեցկութենէն, ներդաշնակութեանց քաղցրութենէն, ոչ ալ նմանօրինակ իրերէ զգածուած ըլլայ, որոց մէջ չափ եւ համեմատութիւն կայ. ըսել կուզեմ՝ թէ անասունք նոյն իսկ իմաստասիրութեան այն կերպն ալ չունին, որ միշտ ըզ-

կացողութեան զուգընթաց եւ խորհրդածութեան առաջին արդիւնքն է:

Այս ամէն զուրջուածները լաւ գիտողութեան առնողը գիւրաւ պիտի իմանայ թէ կենդանիներն ու մարդիկ իրար չլիտիլ եւ այս երկու սեռի էակաց մէջ խուն ինչ տարբերութիւն դնել՝ անհնարին տղիտութեան եւ կամ քիչ խորհրդածութեան արդիւնք է. որովհետեւ կան շատ առարկայներ՝ որոց վրայ կենդանիք տեղեկութիւն չունին, եւ թէ անհնար է՝ որ որ եւ է առարկայի ընութիւնն եւ համեմատութիւններն իմանան:

Ո՛վ որ գործարանաց նմանութենէն ներքին սկզբան նմանութիւնն ապացուցանել կը կարծէ՝ երկու կերպով կը սխալի: Նախ՝ որովհետեւ կը կարծէ՝ թէ իմացականութիւնը բացարձակապէս մարմնական գործարանաց կապուած է. տեսանք որ ասիկայ բոլորովն սուտ է: Կենդանեաց իմացականութիւն ընծայողները ինչ սկզբունք որ կը գործածեն իրենց կարծիքը պաշտպանելու համար, մի եւ նոյն սկզբունքէն իրենց հանած հետեւութեան բոլորովն ներհակն ալ կ'ելլէ. կ'ըսեն՝ թէ մարդոց եւ անասնոց գործարանաց մէջ տարբերութիւն չը կայ. լաւ. բայց սա եւս ճշմարիտ է՝ թէ մարդիկ այնպիսի առարկայներ կ'իմանան՝ որոց վրայ անասունք ամենադոյզն գաղափար չունին. ապա ուրիմն հետեւցնել պէտք է՝ թէ մարդոց այն առարկայներն իմանալը ընաւ գործարանաց կապուած չէ, այլ ուրիշ սկզբունքէ մը կախումն ունի:

Երկրորդ՝ կը խաբուի ո՛վ որ կ'ըսէ թէ մարդոց եւ անասնոց գործարանաց մէջ տարբերու-

թիւն չկայ, Վասն զի գործարանք մեր տեսած ու շօշափած խոշոր կոյտը չեն : Գործարանները նուրբ եւ անզգալի մասանց կարգաւորութենէն կախումն ունին, որոց վրայ լաւ խորհրդածութիւն ընելով բան մը կրնանք իմանալ :

Արդ, ոչ ոք կրնայ իմանալ ուղեղին մասանց այս նրբութեան աստիճանը : Սա չափ միայն կ'ըսուի՝ թէ մարդ իւր մեծութեան չափով ամեն անասունէ աւելի ուղեղ կը պարունակէ իւր գլուխուն մէջ :

Մեր ուղեղին մասանց նրբութիւնը մեր լեզուին նրբութենէն կրնանք հետեւեցնել . որովհետեւ կենդանեաց շատերուն լեզուն իւր արտաքին զանգուածին մէջ որչափ ալ որ մերինին նմանի, դարձեալ արտասանելու անկարող է : Արդ, մարդու լեզուին այնչափ տարբեր ձայներ ու հնչմունքներ կարենալ հանելէն՝ կրնանք եզրակացնել՝ թէ խիստ մանր եւ նուրբ զնդերքներէ բաղկացած է :

Յայտնի է որ ուղեղին գործարանաւորութիւնը նուրբ եւ փափուկ պէտք է ըլլայ, որ պէս զի կարենայ շատ մը առարկայից իւր վրայ կատարած ազդեցութիւններն ընդունիլ :

Բայց բոլորովին գործարաններէ հանուած այս իմաստասիրութիւնը յոռի ապացոյց մ'է . որովհետեւ, ինչպէս արդէն տեսանք, անհնար է որ իմաստասիրութիւնը գործարաններէ կախումն ունենայ եւ անոնց ենթակայ ըլլայ : Մարդը իմաստասիրութեան կարող ընողը ոչ թէ գործարանաց կարգաւորութիւնը՝ այլ աստուածային բանին ճառագայթը կամ պատկերն է . ազդեցութիւն մը՝ որ առարկայներէն չգար,

այլ՝ այն յաւիտենական ճշմարտութիւններէն՝ որք են յՊատուած իբրեւ իրենց ական մէջ . աբովիտեւ կարծել թէ գործարանաց մէջ իմաստասիրութեան նշաններ կան՝ հողին մարմնաց մէջ ամփոփել ուղեղ է :

Եւ յիբաւի, ուղիղ բանի հակառակ է հետեւեցնելը՝ թէ որովիտեւ Սատուած մարդոց կենդանեաց նման մարմին տուած է, ուրեմն անասուններէն աւելի գերազանց բան մը տուած չէ : Սակայն Սատուած կարող է մի եւ նոյն երեւութից տակ զանազան զանձեր թագուցանել . ուստի հարկ է հաւատալ թէ երեւութէն տարբեր բան մը կայ :

Իրաւցնէ մեր գործարանաց կարգաւորութեան միջոցաւ չէ որ մեր իմացականութեան վրայ ծանօթութիւն ունիմք, այլ խորհրդածեցոյ կարող ըլլալնէս . կը ճանչնանք դարձեալ որ մեր նմանեաց մէջ ալ նմանօրինակ ձիրք կա . զի բիւրաւոր փորձերով եւ մանաւանդ անոնց խօսելու կարողութեամբ կը տեսնեմք որ մեզ նման կը մտածեն եւ կը խորհին . եւ որովհետեւ կենդանեաց մէջ խորհրդածութեան նրջան չենք տեսներ, կը հետեւեցնենք ուրեմն թէ անոնց մէջ իմացականութեան կայծն անգամ չկայ :

Չեմ ուղեր, հարկ մ' ալ չըկայ երկարօրէն ձառելու մարդկային կերպարանաց անասնոց կերպարանքէն աւելի չքնաղ, ազնիւ, գեղեցիկ եւ վայելուչ ըլլալուն վրայ . մարդակազմութեան հմտութիւն ունեցողները կրնան դիւրացեցնել զայն . մարդուն եւ անասնոց մէջ եղած այս տարբերութիւնը բացատրել չէ միտքս :

Անասնոց իմաստութեամբ չը գործելն ապացուցանելնէս վերջը, քննենք այժմ թէ ինչ ըսկըզբունքով կը գործեն : Վասն զի հարկ է որ Աստուած այնպիսի բան մը գրած ըլլայ անասնոց մէջ, որով վայելչապէս կատարեն իրենց գործողութիւնները, ինչպէս որ կրնեն եւ իրենց վախճաններուն կը դիմեն : Սովորաբար քննադրուածն կը կոչուի այս . բայց նախ պէտք է լուսանալ թէ ինչ կը նշանակէ քննադրուածն :

Բնազգումն բառը ընդհանրապէս թելագրութիւն ըսել է : Ընտրողութեան հակառակն է, ուստի իրաւունք ունինք ըսելու թէ կենդանիք աւելի թելագրութեամբ կը գործեն քան ընտրողութեամբ : Բայց ինչ կը նշանակէ թելագրութիւն, եւ ինչ՝ բնազգումն . ասոր վրայ երկու կարծիք կայ : շորոց վրայ պատշաճ կը համարուիք համառօտիւ խօսիլ :

Առաջին կարծեաց ջատագովներն անասնոց բնազգումը զգացումն կը համարին . իսկ երկրորդին ջատագովները՝ անասնոց բնազգումը ժամացոյցի եւ կամ ուրիշ գործիքներու շարժման պէս կը նկատեն :

Այս վերջին կարծիքը գրեթէ մեր օրերուն ծագումն առած է : Որովհետեւ թէպէտ Ղիորդինէս Շնակիան ընդդէմ Պլուտարքոսի կ'ըսէր թէ անասունք իրենց գործարանաց խոշորութեան պատճառաւ չեն զգար, բայց իրեն հետեւող չունեցաւ : Անցեալ դարուն մէջ Սպանիացի բժիշկ(1) մ'ալ նոյն վարդապետութիւնը սով-

րեցուցած է, սակայն ասոր ալ հետեւողներ չը գտնուեցան : Բիշ մը վերջը Պ. Տէքարթ այս կարծիքը պաշտպանեց՝ եւ աւելի դեղեցիկ ըսկըզբունքներով բացատրեց :

Առաջին կարծեաց ջատագովներն՝ այն է բնազգումը զգացում համարողները՝ կ'ըսեն նախ՝ թէ մեր հոգին երկու մաս ունի, զգայական եւ բանական . երկրորդ՝ թէ որովհետեւ այս երկու մասանց գործողութիւններն իրարմէ յանդուստարբեր են, ապա կրնամք զանոնք բոլորովին մէկ մէկէ որոշել . այսինքն թէ ինչպէս որ բոլորովին իմացական գոյացութիւններ կան, ինչպէս են հրեշտակները, նոյնպէս ալ բոլորովին զգայական գոյացութիւններ կան, ինչպէս են անասունք : Ուրեմն ասոնք մեր մէջ գտնուած այն բաները՝ որ չեն իմաստասիրեր, այսինքն, ոչ միայն մարմին եւ գործարանք, այլ նաեւ զգացողութիւնք, երեւակայութիւնք, կիրք, վերջապէս մարմնոց տրամադրութիւններնէն կախումն ունեցող եւ առարկայից իշխանութեան տակ գտնուող բաներն անասնոց կուտան : Բայց որովհետեւ մեր երեւակայութեան եւ կրից մէջ շատ անգամ չփոթ իմաստասիրութիւն կը մտնէ, անոր համար ասոնք անասուններէն վերցունելով, միայն խորհրդածութեամբ չը կատարուած բաները անոնց կ'ընծայեն : Արդ, առաջին կարծեաց մէջ բնազգման ինչ նշանակելն հասկըցանք, այսինքն է, մարդոց մէջ եղած ամեն զգայական բաներն անասնոց տալով, անոնց կ'ընծայեն հետեւաբար հաճոյք եւ վիշտ, եւ ասոնց հետեւանքն եղող ցանկութիւն եւ ատելութիւն, ինչու որ ասոնք ամենն ալ իմաստասիրութենէ

(1) Կօմէզիուս Պէլէրա :

կախումն չունին բնաւ :

Ուրեմն անասնոց բնազդու մը ուրիշ բան չէ՝ եթէ ոչ հաճոյք եւ վիշտ, զորս բնութիւնը ինչպէս մեր մէջ՝ նոյնպէս ալ անոնց մէջ քանի մը առարկայից եւ այն առարկաներուն մարմնոյ վրայ կատարած ազդեցութեանց միացուցած է: Կերելի թէ բանաստեղծն ասելոյ կը բացատրէ ըսելով թէ՝ մեղուները հաճոյքէ մղեալ իրենց ձաղերը կը խնամեն :

Ապա ուրեմն Աստուած 'ի ձեռն հաճոյից եւ վշտաց անասուններն իրենց վախճանին կը մղէ կը գրգէ: Որովհետեւ հաճոյական ցանկութիւնները բնականաբար այս երկու զգացողութիւններէն կախումն ունին :

Այս ցանկութեանց միացած պիտի ըլլան, բնութեան մէկ օրէնքով, արտաքին գործողութիւնները, ինչպէս մերձենալու եւ հեռանալու գործողութիւնները. ասով է որ կ'ըսեն, սաստիկ ցաւոյ զգացումէն մղեալ յանկարծ եւ առանց խորհրդածութեան ձեռքերնիս կրակէն կը հեռացունենք: Եւ եթէ բնութիւնը կրցած է մարմնոյ արտաքին շարժումները բնական կամեցողութեան կապել, կրցած է նաեւ զանոնք սոյն անասնական ցանկութեանց միացունել:

Բնազդման համար եղած առաջին կարծիքն այս է: Այս կարծիքն աւելի հաւանական է, անասնոց զգացումն եւ անկէ հետեւած բաներ կուտայ, չիտար անոնց այնպիսի բան մը՝ որոք վրայ մարդիկ ծանօթութիւն չունենան. մարդկային արժանապատուութիւնը կը ճանչնայ՝ իմաստասիրութիւնը միայն մարդուն վերապահելով: Սակայն ինչպէս բոլոր մարդկացին կարծիք,

այսպէս ալ սոյն կարծիքը՝ իւր անտեղութիւններն ունի: Առաջին անտեղութիւնն այն է որ զգացողութիւնը մարմնոյ մէկ յօժարութիւնը չը կրնար ըլլալ, ինչպէս մինչեւ ցարդ խօսուածներէն յայտնի կ'երեւի:

Իրաւցունէ կրնամք մարմինները նրբացունել, մանրել, 'ի դոլորչի եւ 'ի կենդանական ոգի լուծանել, եւ այս գործողութիւններով ասոնք աւելի արագ, աւելի կենդանի եւ աւելի յանկուցիչ կ'ըլլան, բայց չեն զգար:

Բոլոր դպրոցն ասոր վրայ կը միաբանի. կենդանեաց զգացողութիւն տալով մարմինէն բոլորովին որիչ զգայական հոգի մը տուած կ'ըլլայ: Դպրոցը այնպէս կ'ենթադրէ թէ այս հոգին բնաւ տարածութիւն չ'ունի, ապա թէ ոչ, կ'ըսէ, պիտի չը կրնար ամբողջ մարմնոյն մէջ թափանցել, ոչ ալ անոր հետ միանալ:

Ըստ սրբոյն Թովմայի, այս հոգին անբաժանելի է, թէ բոլոր մարմնոյն եւ թէ անոր իւրաքանչիւր մասանց մէջ ամբողջ կը գտնուի: Բոլոր դպրոցն այս կարծիքը կ'ընդունի գէթ աւելի կատարեալ անասնոց համար. որովհետեւ սողնոց եւ միջատներուն համար՝ որոց մասունքներն իրարմէ զատուելնէն վերջն ալ տակաւին կենդանի կը մնան, մեծ դժուարութիւն ծագած է, որոյ վրայ նոյն իսկ դպրոցը տարբեր տարբեր կարծիքներու բաժնուած է. մենք ասոր վրայ պիտի չը խօսինք:

Եթէ անասնոց տրուած հոգին իրենց մարմինէն բոլորովին զատ է, եթէ այս հոգին տարածութիւն չ'ունի եւ անբաժանելի է, ուրեմն զայն հոգեւոր համարելու է:

Ասկէց ալ ուրիշ անտեղութիւն մը յառաջ կուգայ : Արտօնեաւ թէ որ այս հոգին մարմինն զատ է , թէ որ մասնաւոր էութիւն մ'ուսնի , մարմնոց քայքայումը կարող չպիտի ըլլայ զայն ոչնչացնելու , եւ ասով Պղատոնականաց մտորութեան մէջ կ'իյնամք՝ որոնք թէ մարդոց եւ թէ անասնոց հոգիները անմահ կը համարէին :

Ահաւասիկ երկու ամենամեծ անտեղութիւններ , եւ տեսնենք թէ այս անտեղութիւններն ուսկից ծագումն առած են :

Նախ՝ Սուրբն Թովմաս եւ ուրիշ դպրոցական վարպետներ չեն հաւատար թէ հոգին բոլորովին պէտք է հոգեւոր ըլլայ մարմինէն զատ եւ անբաժանելի ըլլալու համար :

Պէտք է լաւ գիտնալ թէ ինչ է բուն հոգեւոր ըսածնիս :

Հոգեւոր՝ աննիւթ ըսել է : Ս. Թովմաս աննիւթ կ'անուանէ ոչ միայն այն ամէնը՝ որ նիւթ չէ , այլ նաեւ այն՝ որ ըստ ինքեան 'ի նիւթոյ անկախ է :

Նոյն իսկ ասիկայ իւր ըսածին համեմատ իմացական է . գի' իմացականութիւնը միայն արտաքոյ նիւթոյ է եւ բոլորովին անկախ որ եւ է մարմնական գործարանէ :

Ուրեմն ճիշդը խօսելով մեր գործողութիւններէն անոնք միայն հոգեւոր են՝ որ իմացական են : Զգայական գործողութիւնք այս անունը չեն կրնար առնուլ բնաւ . որովհետեւ , ինչպէս տեսանք , այս գործողութիւններն իրապէս նիւթոյ եւ մարմնոյ հպատակ են : Ասոնք հոգեւոր մասին կը ծառայեն , բայց իրենք հոգեւոր

չեն . չեմ ճանչնար բնաւ փիլիսոփայութեան հեղինակ մը՝ որ այս գործողութեանց սոյն անունը տուած ըլլայ :

Բոլոր փիլիսոփայք , նոյն իսկ հեթանոս փիլիսոփայներն երկու մաս դրած են մարդուն մէջ . մին բանական , եւ ասոր անունը դրեր են հոգի , իմացականութիւն(1) , միւսը գիշայական եւ անբան :

Հեթանոս փիլիսոփայից բանական եւ իմացական անուանած մասին է որ սուրբ Հայրերը հոգեւոր անունը տուած են , այնպէս որ իրենց խօսքերուն մէջ հոգեւոր բնութիւն , իմացական բնութիւն նոյն եւ մի նշանակութիւնն ունին :

Արդ , այսպէս բոլոր հոգեւոր կամ իմացականութեանց առաջինն Աստուած է . բացարձակ իմացական :

Հոգեւոր արարածն է այն էակը՝ որ այս Աստուծոյն պատկերին համեմատ ստեղծուած է , որ ծնած է իւր բոլոր զօրութեամբ զԱստուած ճանչնալու համար :

Այն որ իմացական չէ , ոչ Աստուծոյ պատկեր է , եւ ոչ զԱստուած ճանչնալու կարող , հետեւաբար այսպիսին հոգեւոր ալ չէ :

Ըստ այսմ իմացական եւ հոգեւոր մի եւ նոյն բանն է :

Հոգի ըսած բաներնիս ըստ մեզ իմացական բան մ'է . եւ յունարէն ψυχή բառը բացատրելու համար հոգի բառէն աւելի պատշաճ բառ մը

(1) Յնր . ψυχή . Աստ . mens . հոգի . իմացականութիւն :

չունինք :

Հոգի եւ հոգեւոր թառերուն բացատրած գաղափարն սուրբ Գրոց համեմատ կը հասկնամք, յորում ամեն հոգի անուանուած բաներն իմացահան են , եւ ուր հոգեւոր կոչուած գործողութիւններն իմացականներն են միայն : Այս իմաստով է որ սուրբն Պօղոս զԱստուած Հայր հոգւոց կը կոչէ , այսինքն , Հայր ամենայն իմացական արարածոց , որոնք կրնան իրեն հետ միանալ :

Հոգի է Աստուած , կ'ըսէ Փրկիչն մեր , եւ երկրագործաց նորա պարտ է հոգեւոր է ճշմարտութեանք երկրագործակէլ . այսինքն , թէ այս գերագոյն իմացականութիւնը պէտք է որ մի միայն իմացականութենէ երկրպագուի :

Այս իմաստով զգայարանք հոգւոյ չեն վերաբերիր :

Երբ առաքեալը կենդանական մարդը հոգեւոր մարդէն կը տարբերէ , զգայարանքներով գործողն իմացականութեամբ գործող եւ Աստուծոյ հետ միանալու կարող եղողէն կ'որոշէ :

Մի եւ նոյն առաքեալը Մարմին հակառակ զայ հոգւոյ, եւ հոգի հակառակ մարմնոյ, ըսելով իմացական մասը զգայականին հետ կը կոուի ըսել կուզէ , այսինքն , Աստուծոյ հետ միանալու կարող հոգին մարմնոյ տրամադրութեանց կաւորուած զգայական հեշտութեանց հետ կը կոուի :

Նոյն առաքեալը հոգւոյ եւ մարմնոյ գործերը կամ արդիւքներն իրարմէ զանազանած ժամանակ , առջիններով կ'իմանայ իմացական առաքինութիւններն եւ երկրորդով կը հասկընայ այն մոլութիւնները որք զմարդիկ զգայա-

բանաց եւ անոնց առարկայից կը կապեն :

Եւ թէպէտ մարմնոյ գործոց կամ արդասեաց կարգը կը դասէ շատ մը մոլութիւններ , որոնք գրեթէ հոգւոյն կը վերաբերին , ինչպէս են հպարտութիւն եւ նախանձ , բայց պէտք է գիտնալ որ այս յոռի զգացումները զլրատուութեամբ այն հեշտական զգացումներէն յառաջ կուգան , զորս կը փափաքինք ունենալ , այլոց ալ կը կամենամք . այս պատճառաւ մոլութեանց կարգը կը դասենք այն զգացումները՝ որք զգալի առարկայներէն կը ծագին :

Ուրեմն զգացողութիւնք ինքնին առանձին հոգեւոր բնութեան մասը չեն կազմեր , ինչու որ իրաւցնէ այս զգացողութիւնները բոլորովին նիւթական առարկայներէ ձեւ մարմնոյ տրամադրութենէն կախումն ունին :

Արդ հոգեւորականութիւնը մարդուն մէջ այն ատեն կ'սկսի՝ երբ իմացականութեան եւ խորհրդածութեան լոյսը կ'սկսի ծագել, եւ ահա այն ատեն է որ հոգին մարմինէն գեր 'ի վերոյ կը բարձրանայ, եւ ոչ միայն գեր 'ի վերոյ կը թարձրանայ , այլ նաեւ անոր կ'իշխէ եւ բոլորովին հոգեղէն եւ ամեն առարկայներէ աւելի կատարեալին , Աստուծոյ կը կապուի :

Ուրեմն այս կերպով կենդանեաց զգացողութիւն տուած ժամանակնիս կարծեմ թէ անոնց հոգեւոր բան մ' ընծայած չեմք ըլլար : Իրենց հոգին մի եւ նոյն բնութիւնը պիտի ունենայ ինչ որ գործողութիւններն ունին , որոնք նոյն իսկ մօր մէջ թէպէտ եւ անմարմին սկզբունքէ մը ծագումն կ'առնուն , սակայն բոլորովին մարմնաց տրամադրութեանց , ենթակայ ըլլալուն համար

կը կարծենք թէ մարմնական բաներ են :

Ըստ այսմ անասնոց զգացողութիւնն եւ զանոնք արտադրելու կարող հոգի մը յատկացնողներուն թէ որ հարցնելու ըլլանք՝ թէ այս հոգին հոգի է թէ մարմին , պիտի պատասխանեն՝ թէ ոչ մին եւ ոչ միւսն է : Ասիկայ միջին բնութիւն մ'է , բոլորովին մարմինն չէ , որովհետեւ երկայնութիւն , լայնութիւն , խորութիւն եւ տարածութիւն չունի . հոգի ալ չէ , որովհետեւ իմացական չէ , եւ զԱստուած ժառանգելու եւ աւնով երջանիկ ըլլալու ալ անբաւական կամ անկարող :

Մի եւ նոյն սկզբամբ պիտի լուծեն անմահութեան դէմ եղած առարկութիւնն ալ : Գիցուք թէ անասնոց հոգին մարմինէն որիչ ըլլայ, բայց այս հոգին իւր մարմնոյն բաժնուելէն վերջը չկրնար ապրիլ , որովհետեւ իւր բոլոր գործողութիւնները սոսկ նիւթական եւ մարմնական են : Պղատոնականաց ամենէն աւելի անհեթեթ կարծիքը սա է՝ որ բացարձակապէս ամեն բանի մէջ մարմնոյ իշխանութեան ներքեւ գտնուող անասնոց հոգին հաւասար կը համարին մարդկային հոգեոյ , յորում այնպիսի սկզբունք մը կը տեսնենք , որ մարմինէն դեր 'ի վերայ կը բարձրանայ , որ մինչեւ անգամ իմացականութիւնը գոհ ընելու համար մարմինը կը կործանէ , եւ մինչեւ ամենէն բարձր ճշմարտութեան , այն է Աստուծոյ կը բարձրանայ :

Տեսնեք թէ առաջին կարծիքը մեր նշանակած անտեղութիւններէն կը ծագի . երկրորդ կարծիքն առաջինէն աւելի խելքի յարմար է . ամենեւին դժուարութիւն չը կրեր բացատրելու

թէ անասնոց հոգին ոչ հոգեւոր է եւ ոչ անմահ , ինչու որ անոնց հոգին արիւնն եւ կենդանական ուղիները կը համարի :

Այս երկրորդ կարծիքն ունեցողը կ'ըսէ՝ թէ անասնոց շարժումները զգացողութեանց միջոցաւ չէ , եւ ասոնց կատարման համար մարմնոյ մասանց գործարանաւորութիւնը , առարկայներէն ուղեղին վրայ կատարուած ազդեցութիւններն եւ զնդերաց շարժումն տալու համար ալ կենսական զօրութեանց ուղղութիւնը միայն բաւական են :

Այս կարծեաց համեմատ բնազդումն ըսածնիս այս գործողութեանց մէջ կը կայանայ . ուրեմն այս բնազդումն է այն շարժիչ զօրութիւնը՝ որոյ ձեռք զնդերք կը ցնցուին եւ կը շարժին :

Սակայն այս կարծիքէն եղողները կ'ըսեն՝ թէ կենդանական ուղիք իրենց բնութիւնը կը յիտեն զանազան պատճառներով : Որչափ աւելի մտղձ խառնուի արեան մէջ , այնչափ ալ այս կենսական զօրութիւնները սաստիկ կ'ըլլան . ուրիշ հեղուկներու խառնմամբ ալ կը բարեխառնին : Ուրիշ են կուշտ կամ պարարտ կենդանւոյն մէջ գտնուած կենդանական ուղիներն եւ ուրիշ՝ քաղցեալ կենդանւոյն : Գարձեալ խիստ ուժեղ կենդանւոյն եւ խոնջ ու պարտասելոյն կենսական զօրութեանց մէջ տարբերութիւն կայ : Կենսական ուղիք կրնան նուազ կամ առաւել առատ , քիչ կամ շատ ուժգին եւ աւելի խոշոր ու աւելի նուազ ըլլալ : Այս փիլիսոփայները կը պնդեն ու կ'ըսեն՝ թէ կենդանեաց գործողութիւններն եւ ասոնց զանազան փիճակները բացատրելոյ համար ասկէց աւելին հարկ

չքկայ :

Այս կարծիքը մինչեւ ցարդ խիստ քիչերն հասկցած են . հակառակորդները զայն ուղիղ բանի հակառակ կը դռնեն . պաշտպանողներն ալ կ'ըսեն՝ թէ խիստ քիչերն իրենց մէջ բերած պատճառներն ու ապացոյցները կը հասկնան , որովհետեւ խիչ քիչերը կրնան մանկութեան աստե՛նի եւ զգայարանաց նախադաշարմունքնե-րէն զերծ մնալ :

Այս զուրցուածքներէն դիւրաւ կ'իմանամք որ այս վերջինները դպրոցին հետ կը համաձայնին ըսելով թէ ոչ միայն խմաստաօրութիւնն , այլ նաեւ զգացողութիւնը մարմինէն յառաջ չեն կրնալ գալ բնաւ . բայց զգացողութիւնը ճիշդ խմաստաօրութիւնը դրած տեղերնին կը դնեն . օրովհետեւ , կ'ըսեն , զգացողութիւնը՝ որ ըստ ինքեան չկրնար ճշմարտութիւնը ճանչնալ , միայն ճշմարտութիւնը ճանչցող մասը կը գրգռէ :

Կ'ըսեն ալ թէ զգացողութիւնք մարմնական շարժումներ կատարել չեն տար , քանզի այս շարժմանց պատճառը զգացողութիւնք չըլլալէն զատ , իրենք ալ անոնցմէ յառաջ կուգան . այնպէս որ ուղիղ դատած ըլլալու համար պէտք է ըսել . այս ինչ շարժումը կայ , ուրեմն այն ինչ զգացողութիւնն ալ յառաջ պիտի գայ , եւ ոչ թէ , այս ինչ զգացողութիւնը կայ , ապա այն ինչ շարժումն ալ պիտի կատարուի :

Առոնց սկզբան նայելով մարդկային հողուոյ անմահութիւնը՝ բնաւ դժուարութիւն չունի : Դպրոցին հետ ընդունելէն վերջը՝ թէ հողին մարմինէն բոլորովին տարբեր է , որովհետեւ կ'զգայ , կ'իմանայ , կը կամի , միով լ բանի ,

կը խորհի , կ'ըսեն թէ Աստուած իւր գործերը կը սիրէ , եւ ընդհանրապէս իւրաքանչիւր էակի՛ տուած էութիւնը կը պահպանէ : Ծարմինները կը քայքայուին եւ կը լուծուին , իրենց մասունքները մէկմէկէ՛ կը բաժնուին եւ աստ անդ կը ցրուին եւ կը նետուին , սակայն ասով ոչնչացած չեն ըլլար : Ուրեմն հողին՝ որ մարմինէն բալորովին զատ գոյացութիւն մ'է , ալ աւելի պէտք է օր Աստուած անօր էութիւնը պահպանէ . այս հողին աննիւթ ըլլալով՝ յաւիտենականապէս գոյ պիտի ըլլայ իւր բոլոր ամբողջութեամբը :

Ահաւաստիկ անասնոց նկատմամբ ծագած երկու կարծիքները , զորոնք քննելով իմացանք թէ խիստ անհեղեղ է անասնոց իմաստաօրութիւն , եւ նիւթոյն զգացումն տալը : Ասակայն մէկգլխի թողով կարծիքները՝ յիշենք ինչ որ բոնական հողուոյն մէջ գտանք եւ դիտեցինք :

Նախ զգայական գործողութիւններէն զատ , օրք նիւթոյ եւ մարմնոյ : մէջ ամփոփուած են , մարդկային հողուոյն մէջ իմացական գործողութիւններ կան , որոնք այնչափ գեր 'ի վերոյ են քան զմարմինը (եւ այնչափ քիչ իւր օրամագրութեանէն կախումն օւնին՝ որ մարմնոյն վրայ կ'իշխեն , զայն իրենց կը հնազանդեցունեն , մահուան դիմելու կ'օտիպեն եւ կը զոհեն :

Տեսանք դարձեալ՝ որ մարդ իւր իմացականութեան միջոցաւ յաւիտենական , պայծառ եւ աներկբայելի ճշմարտութիւններ կ'իմանայ : Գիտեմք թէ այս ճշմարտութիւնները միշտ մի եւ նոյն են , միշտ անոնց գեղեցկութեան վերայ կ'սքանչանամք եւ անոնց ստուգութիւնը կը ճանչնամք . ասիկայ նշան է՝ թէ մեր հողին

անփոփոխ իրաց համար ստեղծուած է եւ իւր մէջ անփոփոխ սկզբունք մ' ունի :

Այս յաւիտենական ճշմարտութիւնները մարդկային իմացողութեան բնական առարկայներն են : Այս ճշմարտութեանց միջոցաւ է՝ որ մեր իմացողութիւնը բոլոր մարդկային գործողութիւնները իրենց կանոնաց , բոլոր իմաստասիրութիւնները՝ ինքնին ծանօթ , առաջին , անփոփոխ եւ յաւիտենական սկզբանց , բնութեան եւ արուեստի բոլոր գործերը , ձեւերն ու շարժումները , ասոնք գեղեցկացունող եւ զօրացունող ծածկեալ չափակցութեանց , վերջապէս ամեն իր Աստուծոյ իմաստութեան վրձնոց , եւ այն իրերը կարգադրող անփոփոխ կարգին կը բերէ :

Քանի որ այս յաւիտենական ճշմարտութիւնները մարդկային իմացողութեան բնական առարկայներն են , ապա առարկայից եւ դանոնք արտադրող զօրութեանց մէջ եղած համեմատութենէն կ'երեւի թէ ինչ է մեր իմացողութեան բնութիւնը . անփոփոխ իրաց պէս ստեղծուած ըլլալով՝ իւր մէջ անմահ կենաց սկզբունքն ունի :

Մեր իմացողութեան բնական առարկայն եղող այս յաւիտենական ճշմարտութեանց ամենէն առաջինը՝ յորում միւսները ամփոփուած են , սն է թէ կայ առաջին էակ մը՝ որ ամեն բան ճշմարտապէս կ'իմանայ : Ուզածը կ'ընէ , ինք իւր կանոնն է , որոյ կամքը մեր օրէնքն , եւ իւր ճշմարտութիւնը մեր կեանքն է :

Գիտեմք՝ թէ այս ճշմարտութեանց հակառակէն աւելի անկարելի բան չըկայ . առանց

ուղիղ բանի հակառակած ըլլալու չեմք կրնար ենթադրել՝ թէ առաջին էակը գոյութիւն չունի , կամ փոփոխման ենթակայ է , եւ թէ իւր իմացական արարածները զինքը սիրելու եւ իմանալու համար ստեղծած չէ :

Մեր հոգին զԱստուած սիրելու եւ իմանալու համար է՝ որ իւր հեղինակին պատկերին համեմատ ստեղծուած է , եւ այս նմանութենէն գիտեմք որ աստուածային եւ անմահ ըսկզբունք ունիմք : Որովհետեւ եթէ արարածոց մէջ կայ բան մը՝ որ արժանի ըլլայ յաւիտենական տեւողութիւն ունենալու , այն ալ անսարակոյս Աստուծոյ ծանօթութիւնն ու սէրն է , եւ այն՝ որ այս աստուածային գործողութիւնները կատարելու համար ստեղծուած է :

Այս գործողութիւնները կատարողը դանոնք այնչափ ուղիղ եւ կատարեալ կը գտնէ՝ որ յաւիտեան ընել կ'ուզէ . այս գործողութեանց կատարման մէջ է՝ որ երջանիկ եւ յաւիտենական կենաց գաղափարն ունի մարդ :

Հին եւ նոր պատմութիւնք կ'ստուգեն՝ թէ այս անմահ կենաց գաղափարը չիփոխ կերպով կը գտնուի բոլորովին ազէտ եւ անբան չեղող ազգաց մէջ . իսկ Աստուծոյ վրայ լաւ ծանօթութիւն ունեցողներն այս գաղափարն աւելի յըստակ եւ որոշ կ'իմանան : Որովհետեւ կը տեսնեն թէ բնական արարածը կրնայ մշտնջենապէս երջանիկ ապրիլ Աստուծոյ մեծութեան , իմաստութեան եւ իւր գործոց գեղեցկութեան վրայ օքանչանալով :

Այս կենաց վրայ քիչ ու շատ տեղեկութիւն կ'ունենամք երբ մեծ ճշմարտութիւն մը

յայանուի մեզ, եւ յոր ատեն բնութիւնը քննու-
թեան աննյով ամեն բան այսպիսի գեղեցիկ
կարգի մէջ ստեղծող Աստուծոյ իմաստութեան
վրայ սքանչանանք :

Այս կենաց մէջ այնպիսի հաճոյք կը վայե-
լենք՝ որոյ բաղդատմամբ միւս բոլոր հաճոյքնե-
րը ոչինչ են : Ֆիլիսոփայք այս հաճոյքին վրայ
ափշած զմայլած, մաղթած են՝ որ բնութիւ-
նը զգայական հեշտութիւններ առած չ'ըլլար
մարդոց, որովհետեւ այս հեշտութիւնները բո-
լորովին զուտ ճշմարտութիւնը ճաշակելու հա-
ճոյքը կը խռովեն 'ի մեզ :

Երբ յիշենք՝ որ Պիւթագորաս եռանկեան
կողմերուն քառակուսիները՝ իւր խարսխին քա-
ռակուօրին հետ հաւասար ըլլալն ապացուցանե-
լով յանհունս կը հրճուի եւ շատուածոց հարիւր
եզն կը գոհէ . Արկիմիդէս նոր գիւտի ետեւէ իյ-
նալով՝ ուտել խմելը կը մոռնայ, Պղատոն եր-
ջանիկ կը համարի գեղեցիկն ու բարին նախ՝
արուեստից, երկրորդ՝ բնութեան, եւ վերջա-
պէս ասոնց աղբիւրին ու սկզբան, այսինքն, Աս-
տուծոյ մէջ փնտառողները . Արիստոտել կը գովէ
այն երջանիկ վայրկեանները՝ յորում հոգին ճըշ-
մարտութեան իմացականութիւնը միայն կը դի-
տէ, եւ այսպիսի կեանք մը միայն յաւիտենա-
կան եւ աստուածային կեանք ըլլալու արժանի
կը դատէ . երբ յիշենք որ սուրբերը կը հիանան
կ'սքանչանան զԱստուած ճանչնալով, սիրելով,
ու փառաբանելով, բնաւ իրմէ չեն հեռանար
եւ իրենց կենաց ընթացքին մէջ իրեն ծառայե-
լու համար զգայական հեշտութիւններն կը
չ'իջուցանեն, երբ յիշենք, կ'ըսեմ, այս ամեն

բաները, կը տեսնենք թէ իմացական գործողու-
թեանց մէջ յաւիտենականապէս երջանիկ կե-
նաց սկզբունքը կայ :

Այսպիսի կենաց բաղձանքը այնչափ կը վա-
ռուի եւ կը զորանայ մեր մէջ՝ որչափ որ զգայական
կեանքն արհամարհենք, եւ մեծ խնամօք իմա-
ցականութեան կեանքը մշակենք :

Մարդկային հոգին՝ որ այս կեանքը գիտէ
եւ անոր կը բաղձայ, չկրնար ըսել՝ թէ այս դա-
ղափարը իրեն տուող եւ սոյն բաղձանքը իրեն
ներշնչող Աստուածը զինքը ուրիշ վախճանի մը
համար ստեղծած է :

Պէտք չէ երեւակայել որ հոգին մարմինը
կորսնցնելով՝ այս կեանքն ալ կը կորսնցունէ .
որովհետեւ, ինչպէս արդէն տեսանք, իմացական
գործողութիւնք զգացողութեանց պէս մարմնա-
կան գործարաններէ կախումն չունին : Եւ թէ-
պէտ հոգւոյն գործողութեանց մէջ եղած հա-
ղորդակցութեամբ իմացականութիւնը զգայա-
բանքներ եւ զգալի պատկերներ կը գործածէ,
բայց ոչ թէ ասոնցմով, այլ մի միայն դէպ 'ի
յաւիտենական ճշմարտութիւն դառնալով կըր-
նայ ճշմարտութիւնն իմանալ :

Զգայարանը ճշմարտութեան ծանօթութիւ-
նը չեն տար հոգւոյն . միայն զայն կը դրդեն,
կ'արթնցնեն եւ մի՛ քանի արդիւնք կը ցուցնեն
անոր, Հոգին պատճառը փնտառել եւ իմանալ
կ'ուզէ . բայց պատճառները, ասոնց կապակ-
ցութիւններն եւ ամէն բան շարժող սկզբունքնե-
րը միայն գերագոյն լուծող մը մէջ կրնայ գտնել՝ որ
Աստուծմէ կուգայ, կամ որ նոյն ինքն Աս-
տուած է :

Ուրեմն Աստուած ճշմարտութիւն է . ճշմարտութիւնը միշտ ներկայ բոլոր հոգիներուն մէջ , եւ իմացականութեան ճշմարիտ աղբիւրն է . ուստի միշտ գոյ է , կը շնչէ եւ կ'ապրի :

Արդ որչափ որ Աստուած հոգւոյն հետ կապուած ըլլայ , (Աստուած իրեն համար ստեղծողները շարունակ կը խնամէ եւ իւր բարերար լոյսը իրմէ կամաւ հեռացողներուն միայն կը զլանայ ,) որչափ որ , կ'ըսեմ , Աստուած հոգւոյն հետ կապուած ըլլայ , այնչափ ալ մեր իմացականութիւնը կ'ապրի , եւ ինչ ալ որ հանդիպի մեր զգայարանաց եւ մարմնոյն՝ մեր բանականութեան կեանքը միշտ յատկանշուի կայ :

Հոգին մարմնոյ հետ միանալու համար ըստեղծուած է : Նախախնամութեան օրէնքը կուղէ որ հոգին մարմնոյ վրայ իշխէ եւ անկէ դեր 'ի վերոյ ըլլայ . եւ Աստուած վերստին պիտի պարզեւէ հոգւոյն իւր անմահ մարմինը եւ ըզհոգին անկատար վիճակի մէջ պիտի չը թողու :

Համառօտենք խօսքերնիս : Հոգին մի միայն անփոփոխ ճշմարտութիւններն եւ զԱստուած՝ յորում ամփոփուած են բոլոր ճշմարտութիւնք , նկատելու համար ստեղծուած ըլլալով՝ յաւիտեան պիտի ապրի :

Հոգին զԱստուած ճանչնալով եւ սիրելով այնպիսի գործողութիւններ կը կատարէ՝ որք յաւիտեան տեւելու արժանի են :

Այս գործողութեանց մէջ հոգին յաւիտեանականապէս երջանիկ կենաց դադափարն ունի եւ անոր կը բաղձայ , իմացականութեան ճշմարիտ սկզբունքն եղող Աստուծոյն կը միանայ . մարմինը կորսնցունելով այն ճշմարիտ սկզբ-

բունքը կորսնցնելու երկիւղ չունի : Եթէ հոգին իւր բնական կատարելութեան մէջ ապրելու համար մարմնոյ մը կը կարօտի , Աստուած իւր առաջին մարմինը պիտի տայ իրեն , եւ պիտի չը թողու որ հոգւոյն իմացականութիւնը այս պակասութեամբ նուազի :

Այնպէսով հոգին գիտէ՝ թէ յաւիտեանականապէս ապրելու համար ստեղծուած է , գիտէ ալ թէ՛ եթէ այս յաւիտեանական երջանկութեանէն հրաժարի , յաւիտեանական թշուառութիւն պիտի ըլլայ իւր պատիժը :

Ուրեմն հոգւոյն համար ոչնչութիւն չը կայ , քանի որ իւր հեղինակը զինքը յոչնչէ յինչ ածած է՝ իւր ճշմարտութիւնն ու բարութիւնը վայելել տալու համար : Որովհետեւ ինչպէս այս ճշմարտութեան ու բարութեան կապուողը արժանի է որ յաւիտեանական ճշմարտութեան ու բարութեան մէջ ապրի , այնպէս ալ ասոնցմէ զրկուողն ու հեռացողը արժանի է որ յաւիտեանականապէս իւր պատիժը կրէ :

Որոնք որ այս խօսքերուն խորը կը թափանցեն՝ պիտի համոզուին թէ ճշմարիտ են . քրիստոնեայն այս խօսքերուն հաւատալու ուրիշ վրկայութիւններ ալ ունի , այսինքն , Աստուծոյ խօսքը եւ իւր անփոփոխ խոստումները , որոնք իւր յուսոյն ճշմարիտ հիմն են : Աստուած զինքը պաշտողներուն յաւիտեանական [կեանք կը խոստանայ , իրեն անհնազանդներն ալ յաւիտեանական տանջանաց կը դատապարտէ : Իւր խօսքին հաւատարիմ է . իւր Որդւոյն եւ Եկեղեցւոյն բոլոր խոստացածները կատարած է . այս խոստմանց կատարումը հանդերձեալ կենաց


ճշմարտութիւնը կ'ապահովէ մեզ: Ուրեմն այս
յուսով ապրինք, աշխարհի մէջ կեանք վարենք
առանց անոր կապուելու. ոչ թէ տեսանելի ի-
րերն, այլ անտեսանելիները նկատենք, որով-
հետեւ, ինչպէս կ'ըսէ Առաքեալը, տեսնուած
իբն անցաւոր, իսկ անտեսանելին անանց է:


Վ Ե Ր Զ



Յ Ա Ն Կ

	ԵՐԵՍ
ԳԼՈՒԽ Ա. Հոգի	3
ԳԼՈՒԽ Բ. Մարմին	74
ԳԼՈՒԽ Գ. Միութիւն Հոգւոյ եւ	
	Մարմնոյ 127
ԳԼՈՒԽ Դ. Յաղագս Աստուծոյ՝ որ Հո- գւոյ եւ Մարմնոյ շարաիջ եւ նոցա կենաց տէրն է	227
ԳԼՈՒԽ Ե. Յաղագս տարբերութեան . ընդ մարդ եւ անասուն	275





«Ազգային գրադարան»



NL0157797

